

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍԻՆ



ԱՐՅԱԽԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ



“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

TAMARA MINASYAN

**SCRIPTORIA
OF ARTS՝ԱԿՈ**

“NAIRI” Publishing House – Yerevan – 2015

“МАТЕНАДАРАН”
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА

ТАМАРА МИНАСЯН

**СКРИПТОРИИ
АРЦАХА**

Издательство “НАИРИ” – Ереван – 2015

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ
ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ**

*Տպագրվում է
Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագիր՝ Կարեն Մաթևոսյան
պատմական գիտությունների դոկտոր

Արցախի գրչության կենտրոնները: Ալբոմ-ուսումնասիրություն: Եր. «Նաիրի» հրատ., 220 էջ, 2015:

Գիրքը նվիրված է Արցախի, ինչպես նաև հարակից այն շրջանների միջնադարյան գրչության կենտրոններին, որոնք տարբեր ժամանակաշրջաններում ընդգրկված են եղել Արցախի պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական տարածքում: Արցախ աշխարհը հայ գրավոր մշակույթի ու գրչության հնագույն կենտրոններից է: Նրա գրչատներում ստեղծվել են հազարավոր ձեռագիր մատյաններ, որոնց մի փոքր մասն է պահպանվել: Դրանց հիշատակարանները պատմական հարուստ նյութեր և ուշագրավ տեղեկություններ են պարունակում Արցախի պատմության ու հոգևոր կյանքի վերաբերյալ, իսկ այստեղ նկարագարված ձեռագրերը ոճական առանձնահատկություններով վկայում են մանրանկարչական ուրույն դպրոցի ու նրա բարձր զարգացածության մասին:

Գիրքը նախատեսված է հայագետների, ինչպես նաև պատմությամբ և մշակույթով հետաքրքրվող լայն հասարակայնության համար:

ISBN 978-5-550-01771-5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց մշակութային ժառանգության մեջ կարևորագույն տեղ է գրավում ձեռագիր գիրքը: Միջնադարում ձեռագիր մատյանները ստեղծվում էին հիմնականում խոշոր վանքերին կից գործող գրչատներում, սակայն գրչության գործի ծավալմանը զուգահեռ գիրքը դառնում էր ժողովրդի լայն շրջանակներին հասանելի, և ձեռագրերի ընդօրինակման ու հարակից գործեր (թղթի կոկում, նորոգում, կազմում և այլն) կատարվում էին նաև զանազան բնակավայրերում՝ քաղաքներում, ամրոցներում, գյուղերում: Գրչության կենտրոնները ոչ միայն ձեռագրաստեղծման վայրեր էին, այլև հոգևոր մշակույթի ստեղծման ու պահպանման կենտրոններ: Դրա շնորհիվ է, որ չնայած անցյալում տեղի ունեցած հսկայական ձեռագրական կորուստներին, մեր օրերն են հասել տասնյակ հազարավոր հայերեն միջնադարյան մատյաններ:

Գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը, որպես հայագիտության մի ուղղություն, զարգացում է սպրել հիմնականում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, որտեղ նախորդ տասնամյակներին գրվել են մի շարք գրչության կենտրոնների նվիրված ուսումնասիրություններ, կազմվել են դրանց քարտեզները: «Գրչության կենտրոնի պատմությունը ձեռագրի ստեղծման ու նրա ստեղծողների պատմությունն է, գրչության արվեստի կիրառության, զարգացման պատմությունը տվյալ կենտրոնում»,– գրում է ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը¹:

Հայկական ձեռագրական մշակույթի պատմության ուսումնասիրության ընդունված եղանակ է դրանց խմբավորումն ու հետազոտությունն ըստ ստեղծման վայրերի՝ գրչության կենտրոնների: Խոսքը վերաբերում է ինչպես առանձին գրչատների պատմությանը, այնպես էլ տարածքային ավելի մեծ միավորներում (գավառ, երկրամաս) ընդգրկված գրչատների ձեռագրական ժառանգության միասնական ներկայացմանը: Այդ ճանապարհով հնարավոր է դառնում գրչության կենտրոնների պատմությունն ուսումնասիրել համակարգված՝ բացահայտելով

նույն տեղում ստեղծված ձեռագրերի գրչական ու մանրանկարչական ընդհանրությունները, ամբողջացնել հայտնի գրիչների ու ծաղկողների ձեռագրական վաստակը, և այդ ամենը ներկայացնել տվյալ տարածքի պատմության և հոգևոր-մշակութային իրողությունների համապատկերում:

Հայկական գրչության կենտրոնների պատմության մեջ առանձնակի տեղ ունի **Արցախ աշխարհը**, որտեղ հայ գրավոր մշակույթը դարերի ընթացքում զարգացել է ողջ երկրի մշակութային կյանքին ներդաշնակ: Այստեղ ևս գրչատներ են գործել խոշոր վանքերին կից և զանազան բնակավայրերում, ստեղծվել՝ գրվել, պատկերազարդվել, կազմվել, նորոգվել են հազարավոր մատյաններ, որոնց միայն մի մասն է հասել մեր օրերը: Դժգոհելով գրավոր սկզբնաղբյուրների սակավությունից՝ Մովսես Կաղանկատվացին ցավով է արձանագրում, որ այդ երևույթի պատճառը անօրենների կողմից մատյանների հրկիզումն է, ինչպես նաև նրանց գտնվելու վայրի անհայտ լինելը. «Հրկեզ եղեալ են յանաւրինաց եւ կտակարանք, եւ սպասք, եւ տեղիք կալոյ նոցա՝ մեզ անյայտք»²:

Արցախը, սակայն, իր անառիկ դիրքի և տնական ժամանակ պահպանած հայկական իշխանությունների շնորհիվ հայտնի է ոչ միայն որպես ձեռագրաստեղծման, այլև Հայաստանի տարբեր անկյուններում ստեղծված բազմաթիվ մեծարժեք ձեռագրերի պահպանման, փրկության վայր: Այսօր մեր հնագույն ձեռագիր մատյաններից շատերի հարատևության գաղտնիքներից մեկն էլ սա պետք է համարենք: Հայ ձեռագրագիտության պատմության մեջ բացառիկ արժեք ունեցող մատյաններ՝ «Վեհամոր» (ՄՄ ձեռ. 10680) և «Վեհափառի» (ՄՄ ձեռ. 10780), «Հաղբատի» (ՄՄ ձեռ. 6288), «Թարգմանչաց» (ՄՄ ձեռ. 2743), «Մեծշենի» (ՄՄ ձեռ. 6202) անվանված Ավետարանները, «Բեգյունց» Ավետարանի մասունքները (ՄՄ ձեռ. 10099), Ռաֆայել Սթոռայի սեփականությունը եղած մագաղաթյա

¹ Ա. Մաթևոսյան, Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ-ԺԵ դդ.), Սբ. Էջմիածին, 1997, էջ 13:

² Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, առաջաբանը՝ Պ. Հովհաննիսեանի, բնագիրը՝ Գ. Գասպարեանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, Երևան, 2011, էջ 421, այսուհետև՝ Մովսես Կաղանկատուացի:

Ավետարանը (Չիկագո, ձեռ. 949), «Կարնո կամ Թեոդոպոսի» Ավետարանը (Վենետիկ, ձեռ. 129), Կոզմա գրչի՝ 1166 թվականի Ավետարանը (ՄՄ ձեռ. 7347), «Կեռանի և Հեթումի» Ավետարանը (ՄՄ ձեռ. 6764), Երզնկայի Ավագ վանքում 1227 թվականին Ներսես գրչի ձեռամբ օրինակված Տոնականները (ՄՄ ձեռ. 6196 և 3779) և էլի շատ ու շատ ձեռագիր մատյաններ պահվել են Արցախի եկեղեցիներում ու անհատ մարդկանց մոտ՝ այսպես վերապրելով իրենց երկրորդ կյանքը: Իր «Արցախի մանրանկարչական արվեստը» պատկերագրքում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Հակոբյանը ամբողջական կերպով ներկայացնում է Արցախում նկարագարված ձեռագրերի մանրանկարների կատարման-ոճական առանձնահատկությունները, ընդ որում նրանցից մի մասին հեղինակն անդրադառնում է առաջին անգամ³:

Արցախ աշխարհի մասին առաջին գրավոր տեղեկությունները հաղորդում է Մովսես Կաղանկատվացին, որի «Պատմութիւն Աղուանից աշխարհի»⁴ երկը գլխավոր սկզբնաղբյուրն է, իսկ նրա հեղինակը՝ Աղվանից երկրի առաջին պատմիչը: Կաղանկատվացու հաղորդած տեղեկությունները Աղվանից աշխարհի վաղ շրջանի գրի, գրականության, մշակույթի մասին կարևոր են, որովհետև այդ շրջանից մեզ ոչ մի ձեռագիր մատյան չի հասել, և տեղեկություններ չունենք վաղագույն շրջանում գործած գրչության կենտրոնների վերաբերյալ: Այս տեսանկյունից Կաղանկատվացու աղբյուրը դառնում է ոչ միայն կարևոր, այլև առաջնային: Կաղանկատվացին խոսում է այրված, ոչնչացված, թալանված գրականության մասին: Նրա Պատմության միջոցով մեզ են ավանդվել դավանաբանական գրականությանը վերաբերող դրվագներ՝ Աղվանից Վաչագան Երկրորդ թագավորին ուղղված Գյուտ կաթողիկոսի թղթերը 5-րդ դարից, որոնք նաև գեղարվեստականի լավագույն օրինակներ են, Երուսաղեմի Պանդա վանքում ստեղծված Թովմա Աղվանեցի վարդապետի թուղթը՝ 6-րդ դարում Աղվանքում քաղկեդոնականությունն տարածելու վերաբերյալ, սպա Աբաս կաթողիկոսի պատասխան թուղթը, Վաչագան Երրորդի կանոնները: Կաղանկատվացին խոսում է նաև Աղվանքում ստեղծված գեղարվեստական գրականության մասին: Արվեստավոր խոսքի նմուշ է 7-րդ դարում Ջևանշիր իշխանի «Տէ՛ր իմ, Տէ՛ր, որովհետև եղեր անյիշաչար ծառայի քում բազմամեղի» սկզբնատողով աղոթքը, որը նա ասել է Գարդման գավառում իր կառուցած եկեղեցում պատարագի ժամանակ⁵, մի գրական գոհար է Ջևանշիր իշխանի ողբը, որի հեղինակը տաղաչափական արվեստում շնորհալի աշխարհիկ բանաստեղծ Դավթակ Քերթոզն է: Գեղարվեստական խոսքի կատարյալ օրինակ է 9-րդ դարում Եսայի Աբու Մուսեի պատասխանը արաբ ուտիկան Բուդային: Բացառիկ տեղ են գրավում Առանշահիկ տոհմի իշխաններից մեկի՝ Համամ Արևելցու գործերը, որի «Համամ» աքրոստիկոսով շարականը⁶, մեկնողական և քերականական աշխատանքները 9-րդ դարի գրականության լավագույն գործերից են: Ավելին, Համամ Արևելցու ստեղծագործությամբ է սկզբնավորվում Արցախ աշխարհի դասական գրականության նոր փուլը⁷: Ինչպես Հայաստանի մյուս գավառներում, այնպես էլ Հայոց Արևելից կողմում դպրոցների ծրագրերում միշտ էլ կարևոր են եղել Դիոնիսիոս Թրակացու Քերականությունը և նրա մեկնությունները: 9-րդ դարում Համամ Արևելցին տալիս է Դիոնիսիոսի՝ սեփական մեկնությունը⁸:

նույն ժամանակահատվածում, որքան էլ սակավաթիվ են պատմիչի հաղորդած տվյալները, դրանք մասունքներ են, որ խոսում են Արցախ աշխարհում վաղագույն ժամանակներից գոյություն ունեցած գրականության մասին: Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ Վաչագան թագավորը լուսավորչական մեծ գործունեություն է ծավալել և կառուցել է տվել 365 եկեղեցիներ⁹, պարզ կդառնա, թե որքան դպրատներ ու գրչության կենտրոններ են եղել Արցախում, որտեղ, անշուշտ, օրինակվել են նաև ձեռագիր մատյաններ: Արցախի մշակութային կյանքի կյանքի հետ են առնչվել Դավիթ Ալավկաորդին, Հովհաննես

նույն ժամանակահատվածում, որքան էլ սակավաթիվ են պատմիչի հաղորդած տվյալները, դրանք մասունքներ են, որ խոսում են Արցախ աշխարհում վաղագույն ժամանակներից գոյություն ունեցած գրականության մասին: Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ Վաչագան թագավորը լուսավորչական մեծ գործունեություն է ծավալել և կառուցել է տվել 365 եկեղեցիներ⁹, պարզ կդառնա, թե որքան դպրատներ ու գրչության կենտրոններ են եղել Արցախում, որտեղ, անշուշտ, օրինակվել են նաև ձեռագիր մատյաններ: Արցախի մշակութային կյանքի կյանքի հետ են առնչվել Դավիթ Ալավկաորդին, Հովհաննես

³ Հ. Հակոբյան, Արցախի մանրանկարչական արվեստը, այբոմ, Երևան, 2014:

⁴ Ուտիք նահանգի հետ միասին Արցախը կոչվել է «Աղվանք», «Արևելից կողմանք», «Խորին աշխարհն Հայոց»:

⁵ Մովսես Կաղանկատուացի, էջ 244:

⁶ Ս. Ամատունի, Հին ու նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 163-164:

⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, Երևան, 1966:

⁸ Դիոնիսիոսի Քերականության՝ Համամ Արևելցու մեկնությունը մեջբերումներով օգտագործվել է Հովհաննես Երզնկացու Քերականության մեջ, որտեղից էլ Ն. Ադոնցը կազմել է նրա բնագիրը: Տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, ст. 251-285: 1182 թ. ընդօրինակությամբ Դիոնիսիոսի Քերականության մեկ այլ մեկնություն պահպանվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 6362 ձեռագրում (թերթ 1ա-45բ):

⁹ Մովսես Կաղանկատուացի, էջ 417:

Սարկավագ Իմաստասերը, Մխիթար Գոշը, Վանական վարդապետը, Վարդան Արևելցին, պատմիչ Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ: Մատենագիրների այս բույր ժամանակի հայ դպրության փառքն էր:

Միջնադարյան Արցախում զարգանում էր նարտարապետությունը, կառուցվում են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ՝ Հավապտուկը (1163թ.), Խաղավանքը (1204թ.), Խորանաշատը (1211-1222թթ.), Դաղիվանքը (1214թ.), Գանձասարի վանքը (1216-1238թթ.), Գուշավանքը (1241թ.), Ծարա Սբ. Աստվածածինը (1301թ.): Եկեղեցաշինության այս վերելքի պայմաններում ու սրան զուգահեռ զարգանում էին նաև գրչության արվեստը և մատենագրությունը, ստեղծվում էին գրչության կենտրոններ՝ իրենց դպրատներով, բարունապետներով, մատենադարաններով ու ձեռագրերի հարուստ հավաքածուներով: Արցախի գրչության կենտրոնների դպրատների, բարունապետների, գիտնական վարդապետների, շնորհալի գրիչների ու ծաղկողների, ինչպես նաև ստացողների ու նվիրատուների վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում եկեղեցիների որմերին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններն ու ձեռագիր հիշատակարանները:

Ձեռագրերի ընդօրինակմանը զուգահեռ Արցախում զարգանում էին նաև մշակույթի այլ բնագավառներ՝ քանդակագործությունը, որմնանկարչությունը, խաչքարային և դեկորատիվ-կիրառական արվեստները¹⁰: Դեկորատիվ-կիրառական արվեստում հատկապես առանձնանում էր կազմարարությունը, ստեղծվում էին ձեռագիր մատյանների կաշվե և մետաղյա կազմերը: Կազմարարական նշանավոր արհեստանոց է ունեցել Գանձակի Քարահատ գյուղի գրչակենտրոնը, որտեղ գրիչներն ու ծաղկողները ճանաչված էին ոչ միայն գրչության արվեստում, այլև վարպետ կազմարարներ էին: Նրանք մատյանները զարդարել են արծաթյա, ոսկեզօծ կրկնակազմերով, որոնցից ամեն մեկը արվեստի լավա-

գույն օրինակ է և հիացնում է իր գեղարվեստական հարդարանքով ու զարդամոտիվների բազմազանությամբ:

Արաբական, սելջուկ-թուրքերի և մոնղոլական աշխարհավեր արշավանքներն ու պատերազմները կործանեցին Հայոց երկիրը, քանդվեցին, ավերվեցին և թալանվեցին նաև վանքերն ու եկեղեցիները, հրկիզվեցին անգին ձեռագրեր ու հինավուրց գրքեր: Չնայած քաղաքական ծանր պայմաններին, երբ վիթխարի քանակությամբ մշակութային ժառանգությունն ոչնչացավ, մշակութային կյանքը, սակայն, շարունակվեց, ինչի վկայությունն են Արցախից և հարակից շրջաններից մեզ հասած այն հարյուրավոր ձեռագիր մատյանները, որոնք հիմնականում 13-18-րդ դարերի ընդօրինակություններ են: Դրանց մեծ մասը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, մյուսները սփռված են աշխարհով մեկ, շատերի ճակատագրերն էլ դեռ անհայտ են:

Ստորև մենք ըստ զավառների ներկայացնում ենք Արցախի և հարակից այն շրջանների գրչության կենտրոնների պատմությունը, որոնք տարբեր ժամանակաշրջաններում ընդգրկված են եղել Արցախի պատմաաշխարհագրական և վարչաքաղաքական տարածքում եւ միասնական են ձեռագրական մշակույթի տեսանկյունից: Այս զավառներում ևս գործել են նշանավոր գրչության կենտրոններ: Բուն Արցախում զավառաբաժանումը, իհարկե, պայմանական է, որովհետև պատմաքաղաքական անցուղարձերի պատճառով այն մեծ փոփոխությունների է ենթարկվել: Դարերի ընթացքում փոխվել են ոչ միայն զավառների սահմանները, այլև անունները: Հայտնի են միայն նրանց մոտավոր տեղադրությունները, ինչը ամենանրբանկատ հետազոտողին անգամ կանգնեցնում է պատասխանատվության ու մեծ դժվարությունների առաջ:

Հիմնականում ձեռագրական նյութի, նաև մատենագրական ու վիմագրական աղբյուրների հիման վրա սույն գրքում ներկայացվում են Արցախ նահանգի և նրա մշակութային ազդեցության ոլորտում գտնվող հարակից հյուսիսային և արևմտյան տարածքների՝ Ուտիքի և Բուն Աղվանքի (Փառիսոս, Գանձակ, Չակամ, Ծամխոր, Ծամախի և այլն) գրչության կենտրոնները՝ ձեռագրագիտական և հիշատակարանային բազմաթիվ տվյալների հրապարակմամբ, որոնք օգտակար կլինեն հայ ժողովրդի պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող մասնագետներին:

¹⁰ Կիրառական-դեկորատիվ արվեստը լայն տարածում է ունեցել արցախցիների մոտ և արտահայտվել է ինչպես եկեղեցական սպասքի, այնպես էլ կենցաղային բազմազան իրերի, կանացի գլխազարդերի ու գոտիների, գանազան գործվածքների վրա: Կիրառական արվեստի եզակի նմուշ է Հասան-Չալալ Դոլա իշխանի դաշույնի նեֆրիտե բռնակը, որը պահվում է Էրմիտաժում: Արաբական աղբյուրները հիացմունքով են խոսում նաև արցախյան գորգերի, ասեղնագործ վարագույրների ու ծածկոցների մասին, որոնցով զբաղվել են և՛ գեղջկուհիները, և՛ իշխանուհիները: Տե՛ս **И. А. Орбели**, *Избранные труды*, Ереван, 1963, ст. 135-174.

ԱՐՑԱԽԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Արցախի աշխարհը վաղ միջնադարում հաճախ Խաչեն անունով է կոչվել¹¹: 10-րդ դարի բյուզանդական կայսր և պատմիչ Կոստանդին Ծիրանածինի վկայությամբ բյուզանդական արքունիքը նամակագրություն է ունեցել Խաչենի իշխանության հետ՝ որպես Հայաստանի վարչական միավորի: Համաձայն նույն աղբյուրի՝ այդ գրագրությունները հղվել են «Խաչենի իշխանին՝ Հայաստան» հասցեով¹²: Ավելի ուշ փոխվում է երկրամասի վարչաքաղաքական տարածքը, և Խաչեն է կոչվում Մեծ Հայքի Արցախ աշխարհի այն գավառը, որն ընդգրկում է Սևանա լճի արևելյան ափերը, Ղարաբաղյան լեռնաշղթայի լանջերով և Հազարի գետի հոսանքով հասնում Մռավի լեռներին, արևելքում ընդգրկում Մուխանքի արևմտյան մասը¹³:

Խաչենը, որպես խոշոր գավառներից մեկը, մեծ դեր է ունեցել Արցախի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում: Մելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում Խաչենը ծանր կորուստներ է կրում: Մխիթար Գոշը վկայում է, որ «պարսիկ» Չոլի զորապետը 1143 թվականին ավերեց Խաչենը. «Էռոզ գամենայն ամրոցս նոցա, քակեաց գեկեղեցիսն և այրեաց զվանորեայսն, կոտորեաց զազատսն և գերեաց զգորականսն, պէսպէս իսպառ մաշեաց գամենեսեան առհասարակ ի սուր և ի գերութիւնս»¹⁴: Մամուլէ Անեցու շարունակողն այդ նույն թվա-

կանի դեպքերի շարքում գրում է. «Չոլի առնու զամուրսն Խաչենոյ խաբէութեամբ և երդմամբ յինքն յանկուցանելով զսիրտս իշխանացն և մաշեաց... սովով և սրով և գերութեամբ, ընդ որս քահանայք և սուրբ կտակարանք և կրոնաւորք առ ոտս ընկան անօրինաց»¹⁵: Այստեղ ուշագրավ է ձեռագրերի (սուրբ կտակարանք) գերեվարման մասին նշումը: Իսկ այս դեպքերին նախորդել էր 1139 թվականի երկրաշարժը¹⁶:

Մելջուկ-թուրքերի դեմ մղած մարտերի և Չաքարյանների ձեռնարկած ռազմաքաղաքական միջոցառումների հետևանքով Խաչենի իշխանությունը 12-րդ դարի երկրորդ կեսից բաժանվեց երեք նոր ճյուղավորումների՝ Ներքին Խաչեն, Կենտրոնական Խաչեն կամ Հաթերք, Վերին Խաչեն կամ Ծար՝ համապատասխան Խոխանաբերդ, Հաթերք, Հանդաբերդ իշխանանիստ կենտրոններով:

Հատկանշական է, որ այս և հետագա շրջանում Խաչենի իշխանների հովանավորությամբ ու անմիջական աջակցությամբ մեծ վանքերին կից ստեղծվեցին գրչության կենտրոններ՝ իրենց գրչատներով, մատենադարաններով, դպրոցներով, գրվեցին ու ծաղկազարդվեցին բազմաթիվ մատյաններ: Այդ մատենադարանները հարստացան նաև այլ վայրերից բերված ձեռագրերով: Երկրամասի նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոններն էին Գանձասարը Ներքին Խաչենում, Դադի կամ Խուրթա վանքը՝ Հաթերքում, Խաղավանքը՝ Վերին Խաչենում: Չնայած Մոնղոլական տիրապետության շրջանը ծանր ազդեցություն ունեցավ Խաչենի իշխանության քաղաքական ու մշակութային կյանքի վրա, սակայն գրչական գործի ու ձեռագրական մշակութի տեսանկյունից շարունակականությունը պահպանվեց: Հաթերքի Վախթանգ իշխանի մահից հետո՝ 13-րդ դարի առաջին կեսին, այս իշխանությունը վերացավ, և նրա տիրույթներն անցան Ներքին Խաչենի Հասան-Չալալյաններին ու Վերին Խաչենի Դոփյաններին:

¹¹ Խաչեն անվան առաջին գրավոր վկայությունը տալիս է Մովսես Կաղանկատվացին՝ կոչելով «բերդն Խաչենոյ» (**Մովսես Կաղանկատուացի**, էջ 432), Մխիթար Գոշը գիտի «բերդն Խաչենոյ», «աշխարհ Խաչենոյ» (Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 71), Կիրակոս Գանձակեցին՝ հիշում է «աշխարհ Խաչենոյ», «գավառ Խաչենոյ» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ՝ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, 1961, էջ 209, այսուհետև՝ **Կիրակոս Գանձակեցի**):

¹² **Կոստանդին Ծիրանածին**, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք Բ, գլ. 48: Տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ **Հ. Բարթիկյանի**, Երևան, 1970, էջ 151:

¹³ **Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 665:

¹⁴ **Մխիթար Գոշ**, Ժամանակագրութիւն: Տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Ի, գիրք Բ, Երևան, 2014, էջ 608:

¹⁵ **Մամուլէ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ՝ **Կ. Մաթևոսյանի**, Երևան, 2014, էջ 213, տե՛ս նաև **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1890, էջ 63:

¹⁶ **Մխիթար Գոշ**, Ժամանակագրութիւն, էջ 607:

Ստորև ներկայացվում են Արցախի գրչության կենտրոններն ըստ գավառների՝ սկսելով ամենախոշոր Խաչեն գավառից և նրա հոգևոր կենտրոն Գանձասարից, այնուհետև հաջորդաբար՝ Մեծառանաց (Մեծիրանաց) Մր. Հակոբավանքի, Խաղաղվանքի, Դաղիվանքի, Դիզակ գավառի ու Գոչավանքի, Վարանդա և Ջրաբերդ գավառների գրչության կենտրոնները:

ԳԱՆՁԱՍԱՐ

Ներքին Խաչենը համապատասխանում էր Մեծ Հայքի Արցախ աշխարհի Մեծառանք¹⁷ կամ Մեծիրանք գավառին¹⁸, որը տարածվում էր Խաչենագետի վերին ավազանում, Կարկառ գետից մինչև Թարթառ, Զիրսի լեռնաշղթայից մինչև Մարտակերտի հարթավայրերը: Աղբյուրներում գավառը հայտնի է նաև Մեծ Առանք, Մեծ Արանք, Արանք Մեծ, Մարասպան, Մեծիրան, Մեծերանք, Մեսրան, Մեծարանիք անուններով¹⁹: Մովսես Կաղանկատվացին շատ անգամ է հիշատակում Մեծիրանքը որպես գավառ, վիճակ, սահման, եպիսկոպոսություն: Ներքին Խաչենի իշխաններն իրենց տիրապետությունը նշում էին բերդի անունով՝ «տեր Խոխանաբերդոյ», այսինքն՝ Ներքին Խաչենի իշխան²⁰:

Ներքին Խաչենի հոգևոր կենտրոնն էր Գանձասարը²¹: Այս անունով կա և՛ լեռ, և՛ գյուղ,

և՛ վանք: Ասում են՝ գյուղն ու վանքը իրենց անունն ստացել են լեռան անունից, որ տեղացիների պատմելով Գանձասար է կոչվել արծաթի, պղնձի և այլ հանքեր ունենալու պատճառով: Հ. Ոսկյանը սխալմամբ նույնացնում է Գանձասարի և Գլխո վանքերը: Վերջինս Հռոեկա վանքն է²²:

Թեև աղբյուրները հաճախ են հիշատակում Գանձասարը, բայց նրա հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: 9-10-րդ դարերում Գանձասարի հինավուրց եկեղեցին արդեն քաղաքական և կրոնական հավաքատեղի էր Արցախի և շրջակա գավառների համար: Գանձասարի մասին առաջին գրավոր տեղեկությունը հայտնում է Անանիա Ա Մոկացի (946-968) կաթողիկոսը: 949 թվականին հայ-քաղկեդոնական վեճերը հարթելու նպատակով այստեղ է գալիս Հայոց հայրապետը: Գանձասարում Արդախ կոչված վայրում, նրան դիմավորում է Խաչենի գահերեց իշխան Գրիգորը: Այստեղ Անանիա Մոկացի կաթողիկոսը ժողով է հրավիրում Ուտիքի և Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի մասնակցությամբ, որոնց մեջ էր նաև Գանձասարի հայր Սարգիս վանականը²³: Իր Պատմության մեջ Ստեփանոս Օրբելյանը նույնպես հիշում է «Սարգիս Գանձասարոյ վանականին» նրան կո-

¹⁷ Մեծառանք տեղանունն առաջացել է Առանք անունից, որն առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին: Անվան ծագումը կապվում է Հայաստանի հյուսիսարևելյան գավառների կուսակալ Սիսակյան Առան իշխանի անվան հետ, որից էլ ծագել է Առանշահիկ տոհմը: Տե՛ս **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, առաջաբանը՝ **Պ. Մուրադեանի, Կ. Իզբաշեանի**, Անթիլիաս, 2003, էջ 1859:

¹⁸ **Վարդան Վարդապետ**, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 144:

¹⁹ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 769, **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 31, **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 66, **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 24 (այսուհետև՝ Արցախ):

²⁰ **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը..., էջ 135-136:

²¹ Գանձասար տեղանվան տարբեր մեկնաբանություններ կան: Ղ. Ինճիճյանը կարծում է, որ Գանձասար անունն առաջացել է «Գանձակ» և «սար» բառերից, «որպես թե Գանձակասար, զի ըստ որում ցուցանել այժմեան դիրք նորին ի մենաստան ի վերա լերին ոչ այնչափ տարակաց ի Գանձակայ, իսկ զլեռն աշխարհիկ բարբառ մեր կոչել

սար» (**Յովհ. եպս. Ծախիաթունեանց**, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 314): Ս. Ջալալյանցը հավանական է համարում, որ Գանձասար է կոչվել արծաթի հանքեր ունենալու պատճառով (**Ս. արք. Ջալալեանց**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տիֆլիս, 1842, էջ 182): Գանձասարի ծագման վերաբերյալ պահպանվել է նաև մի գեղեցիկ ավանդազրույց, ըստ որի՝ Հայոց Արտավազդ թագավորը Բաղաց աշխարհի լեռներում կառուցել է տալիս մի բերդ, որպեսզի հռոմեական զորքերից թաքցնի իր գանձերը: Այստեղ մի խումբ հայ զինվորների ու հռոմեական զորքի միջև տեղի է ունենում արյունահեղ մարտ: Թշնամին գրավում է բերդը, սակայն չի կարողանում գտնել գանձերը: Հետո ուրիշ նվաճողներ էլ են գալիս, բայց ոչ մեկին չի հաջողվում տիրել գանձերին: Այդ թաքցված գանձերի պատճառով լեռը կոչվում է Գանձասար (**Ա.Ղանալանյան**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 14):

²² **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 52, (այսուհետև՝ Արցախի վանքերը): **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Երևան, 1986, էջ 787:

²³ Տե՛ս **Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի** Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, «Արարատ», Էջմիածին, 1896, էջ 42:

չելով եկեղեցապան: Մյուսյաց պատմիչը հաղորդում է, որ գիշերային արարողության ժամանակ Գանձասարի եկեղեցապանը բերում է իրենց եկեղեցական գրքերից և հանձնում հայրապետին: Անանիա Մոկացի կաթողիկոսն էլ բացում է գիրքը և գտնում իր որոնածը: Դա «Աղվանքի պատմությունն» էր²⁴:

Հաջորդ տեղեկությունը հաղորդում է Մխիթար Գոշը: 1140 թվականին սելջուկների դեմ պատերազմում զոհված Գրիգոր իշխանի աճյունը բերվել ու թաղվել է Գանձասարում, որն, ըստ Մխիթար Գոշի, Խաչենի իշխանների տոհմական տապանատունն էր. «Սպանին և գԳրիգոր, և ընդ նմին այլ եւս ազատս, որ և թաղեալ անդ քրիստոնէից գաւառին, և զկնի ամի միոյ առեալ բերին ի վանքն անուանեալ Գանձասար, որ է տապանատուն նախնեաց նորա, և անդ թաղեցին զնա»²⁵:

Եկեղեցու բակում պահպանված 1174, 1181, 1202 թվագրությամբ խաչքարերը, որ կանգնեցվել են Հասան Մեծի և Վախթանգ-Տանգիկի կողմից, նույնպես վկայում են Գանձասարում ավելի վաղ գոյություն ունեցած վանական կյանքի մասին²⁶:

1216-1238 թվականներին Ներքին Խաչենի տեր և իշխանաց իշխան Հասան-Չալալ Դոլան իր բարեպաշտ հոր՝ իշխան Վախթանգ-Տանգիկի կտակի համաձայն՝ Գանձասար կոչված վայրում Խոխանաբերդի դիմաց, կառուցել է տալիս մի չքնաղ կոթող՝ գեղեցկագարդ հորինվածքով մի եկեղեցի²⁷: Հասան-Չալալ իշխանը, որ աստվածապաշտ, աղոթասեր ու աղքատասեր մարդ էր, ըստ ավանդության, մեծ դժվարությամբ բերել և Գանձասարում էր ամփոփել Հովհաննես Մկրտչի գլուխը²⁸: Սրբատաշ տորոնագույն քարից կառուցված եկեղեցին հիմնվում է հենց հին եկեղեցու տեղում և նվիրվում Հովհաննես Մկրտչին:

Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է պատմում Գանձասարի վանքի շինարարության մասին. «Ծինեաց եկեղեցի մի գեղեցկագարդ յօրինուածով զմբեթարդ երկնանման տաճար փառացն Աստուծոյ, ուր հանապազ պատարագի Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ի վանքն, որ կոչի Գանձասար՝ հանդէպ Խօխանաբերդոյ՝ ի տեղի շիրմի իւրեաց և յովով ամս աշխատ եղեա ի նմա»²⁹: Համաձայն եկեղեցու վիմագիր արձանագրության՝ վանքի նավակատիքն ու օծումը տեղի են ունեցել 1240 թվականի հուլիսի 22-ին՝ Վարդավառի տոնին³⁰: Այդ օրը Հասան-Չալալ իշխանը բացման մեծահանդես տոն էր կազմակերպել, որին, ըստ ականատես Կիրակոս պատմիչի, ներկա էին Աղվանից Ներսես կաթողիկոսը, բազմաթիվ եպիսկոպոսներ ու իշխաններ, Վանական վարդապետը՝ բազմաթիվ ուսուցիչներով, շատ վանքերի առաջնորդներ, Խաչենի Գրիգորիս և Եղիա վարդապետները և 700 քահանա: Եկեղեցու օծման առիթով Հասան-Չալալ իշխանը ճաշկերույթ էր կազմակերպել. ինքն էր իր ձեռքով մատուցում, յուրաքանչյուրին իր պատվին համապատասխան առատությամբ նվերներ տալիս³¹: Հասան-Չալալ Դոլան կառուցել էր իր տեսակի մեջ նմանը չունեցող, եզակի կառույց: «Տաճարի շինության վրա տաճարապետը թափել է իր բոլոր հմտությունը, զարդարել է նրան, նախշել, սարքել»,– հիացմունքով գրում է Լեոն³²:

Սբ. Հովհաննես Մկրտչի տաճարը ժամանակի համար բացառիկ կառույց էր իր գեղարվեստական հարդարանքով, զարդամոտիվների բազմազանությամբ: Այն համարվել է 13-րդ դարի հայ ճարտարապետության մարգարիտ³³: Ա. Յակոբսոնի կարծիքով Գանձասարի վանքը ոչ միայն «ինքնատիպ է և իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է, մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այսպիսի հուշարձան Հայաս-

²⁴ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910, էջ 278-279:

²⁵ Մխիթար Գոշ, Ժամանակագրութիւն, էջ 610:

²⁶ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, կազմ.՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 67:

²⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 269-270, Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 36:

²⁸ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի ձեռ. 81, թ. 9: Տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 282:

²⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 269:

³⁰ Նույն տեղում, էջ 270:

³¹ Նույն տեղում, էջ 269:

³² Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, էջ 365:

³³ Բ. Ուլուբաբեան, Ս. Հասարթեան, Գանձասարի վանքը, «Հայկազեան հայագիտական հանդես», հ. Ե, Բեյրութ, 1974, էջ 91-122:

տանի հողի վրա»³⁴: Իսկ Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, նշանավոր բյուզանդագետ Շարլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարում է Գանձասարը՝ Աղթամարի և Հռիփսիմեի տաճարներից հետո՝ չորրորդ և հինգերորդ տեղերը հատկացնելով Հաղբատի վանքին և Անիի մայր տաճարին³⁵:

Տաճարի արևմտյան կողմում գավիթն է³⁶, որն ըստ արձանագրության՝ 1261-1266 թվականներին կառուցել են Հասան-Ջալալ Դոլա իշխանը, իշխանուհի Մամքանը և նրանց որդին՝ Աթաբակը: Համաձայն նույն արձանագրության՝ Աթաբակը վանքին է ընծայել նաև մի ոսկետուփ Ավետարան և հարավկողմյան Բյուրն իր սահմաններով. «Դարձեալ ես՝ Աթաբակս ընծայեցի յաւժարութեամբ ոսկետուփ Աւետարան եւ պատուական սուրբ նշան գԵրիստափորն եւ զմեր հայրենի հարաւակուռն գԲրին իւր սահմանովն»³⁷: Գավիթը Հասան-Ջալալյանների տոհմական դամբանատունն էր, ուր հանգչում են այդ տոհմի հոգևոր ու աշխարհիկ այրերը: Վանքի բակում են ամփոփված նաև վանքի առաջնորդների ու գիտնական վարդապետների անյունները: Վանական համալիրն ամբողջացնում են եռադարպաս շրջապարիսպը, միաբանների խցերն ու օժանդակ շինությունները: Պարսպից դուրս հին գերեզմանատունն է: Այստեղ պահպանվել է թաղածածկ մի ընդարձակ դահլիճ, որը ուխտավորների համար ծառայել է որպես իջևանատուն:

Հոր մահից հետո վանքի շինարարության և բարեկարգման հարցերով զբաղվել է Աթաբակը: Գանձասարի նկատմամբ ցուցաբերած սիրո և հոգատարության համար Գանձակեցին նրան անվանում է «այր սրբասնունդ, պարկեշտ և խո-

նարհամիտ և աղօթական, որպէս զմի ի սուրբ միայնակեաց, զի ծնողքն նորա այսպէս սնուցին զնա»³⁸:

Ըստ Մխիթար Գոշի՝ Գանձասարը 12-13-րդ դարերում եղել է եպիսկոպոսանիստ և Խաչենի իշխանների տոհմական դամբարանը: 11-12-րդ դարերում այստեղ հայտնի են եղել Սարգիս և վանքի առաջնորդ Վարդան եպիսկոպոսները³⁹: Վարդանն աջակցել է եկեղեցու շինարարությանը: Հետագա դարերում վանքի առաջնորդներ են եղել Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթեոս վարդապետը, Հովհաննես, Եղիա, Ներսես վարդապետները, Դուկաս Լոռեցին, Ստեփաննոս վարդապետ Ծիրակունին և ուրիշներ⁴⁰:

14-րդ դարում վանքը դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը, որին ժառանգաբար տիրել են Հասան-Ջալալյանները: Այս տոհմի իշխանների հովանավորությամբ էլ հռչակավոր վանքը երկար դարեր եղել է ոչ միայն հոգևոր, այլ նաև հզոր մշակութային կենտրոն: Որպես այդպիսին՝ այն իր բարձրակետին հասավ Հասան-Ջալալ Դոլայի իշխանության տարիներին: Իշխանն իր ծնողների՝ Վախթանգի և Խորիշահի հետ կառուցել ու ծաղկեցրել է Գանձասարի, Մեծառանից Սբ. Հակոբա, Վանառ գյուղի Սբ. Ստեփաննոս, Վաղուհասի, Մայրաքաղաք և Կոճղոտ գյուղերի վանքերը՝ իրենց գավիթներով, կացարաններով ու ուսումնական կենտրոններով:

Գանձասարը գլխավոր ուսումնավայրն էր և հայ գրչության արվեստի նշանավոր կենտրոններից մեկը: Այն Արցախի առավել խոշոր մշակութային կենտրոնն էր: Այս գրչատան լաբուրնապետների, գիտնական վարդապետների, գրիչների, ծաղկողների, ստացողների, կազմողների, նորոգողների վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում եկեղեցու որմերին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններից և ձեռագիր հիշատակարաններից: Վանքն ուներ իր մատենադարանը և ձեռագրերի հարուստ հավաքածուն: Այստեղ գրվել, ծաղկագարդվել, ինչպես նաև պահպան-

³⁴ А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). Исследования по истории культуры народов Востока, сборник в честь И. А. Орбели, М.-Л., 1960, ст.151. Տե՛ս նաև Ծ. Մկրտչյան, Լեռնային Դարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 9-15:

³⁵ Թ. Թորամանյան, Հայկական Ճարտարապետության փոխազդեցության շուրջ: Տե՛ս Նյութեր հայկական նարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 1948, էջ 25:

³⁶ Գավիթն իր հորինվածքով կրկնում է Հաղբատի վանքի և Մշկավանքի գավիթների ձևերը (Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 191):

³⁷ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 41:

³⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 392:

³⁹ Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 194:

⁴⁰ Յովհ. եպս. Ծահխաթունեանց, Ստորագրութիւն..., հ. Բ, էջ 571-577, Ս. արք Չալալեանց, Ճանապարհորդութիւն..., հ. Ա, էջ 186-192, Արցախ, էջ 177-178:

վել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Ցավոք, այդ գրչագիր մատյանների շատ քիչ մասն է հասել մեզ: Գանձասարի առաջնորդ Մատթեոս մոնոգոնը 1417 թվականի իր օրինակած Ժողովածուի հիշատակարանում խոր վշտով գրում է, թե ինչպես թշնամին թալանել ու տարել է Գանձասարի վանքի ողջ հարստությունը (ՄՄ ձեռ. 8689, թերթ 89բ): Չնայած այն բանին, որ երկիրը ենթարկվել է բարբարոսների արշավանքներին, և ձեռագրական արժեքների կորուստն անսահման է, մշակութային կյանքը շարունակվել է: Գանձասարից մեզ են հասել տասներեք ձեռագիր մատյաններ, որոնք 13-18-րդ դարերի ընդօրինակություններ են: Այդ գրչագրերից մեկը պահպանվում է Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի գրատանը, իսկ տասներկուսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Գանձասարում պահպանված ձեռագրերը 19-րդ դարում տեսել ու արձանագրել են Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը⁴¹, Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը⁴², Հակոբ Թովմյանը⁴³: Ընդհանուր թվով նրանք արձանագրել են երեսունութ ձեռագիր մատյան և երկու պատառիկ: Այս ցանկին Օ. Եզանյանը ավելացրել է Մաշտոցյան Մատենադարանում պահվող ևս հինգ գրչագիր մատյան: Գանձասարի ձեռագրատան արձանագրված 43 գրչագրերից 22 ձեռագիր և 2 պատառիկ (Պ869 և Պ1017)⁴⁴ այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Մյուսների գտնվելու վայրն անհայտ է: Այս ցանկին ավելանում են ևս երկու՝ ՄՄ 5794 և Թավրիզի 22 ձեռագրերը: Ընդհանուր հաշվով այժմ ունենք Գանձասարում գրված 13 և պահպանված 24 ձեռագիր ու 2 պատառիկ: Գանձասարում արժաթյա ոսկեգոծ աջերի և մասնատուփերի մեջ պահվել են նաև Հովհաննես Մկրտչից, Հակոբոս առաքյալից, Գրիգորիս Ա կաթողիկոսից, Չաքարիա մարգարեից, Պանդալեոնից մասունքներ ու նշխարներ⁴⁵:

Մակար եպիսկոպոսը Գանձասարի, Ծարա, Դադի, Մայրաքաղաքի, Ջրվշտիկ Եղիշե առաքյալի դպրատների ձեռագրերի մասին անչափ ցավալի փաստ է արձանագրել: Բարբարոսներից փրկելու համար Խաչենի հայրենասեր մեղիքները այս վանքերի ձեռագրերը կանխավ խնամքով երեք մասի են բաժանել ու թաքցրել մի մասը Գանձասարի ու Դադի վանքերի մեջտեղում՝ մի քարայրի մեջ, ու բերանը ամրացրել քարուկրով, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մոտակայքում՝ մի ստորերկրյա տեղում, իսկ երրորդ մասը՝ Գյուլիստան գավառի Հռոնկա վանքի տարածքում: Այս ձեռագրերի՝ միայն Գանձասարում պահված մասն է հայտնաբերվել Բաղդասար մետրոպոլիտի օրոք⁴⁶: Մյուսների ճակատագրերն անհայտ են:

Վաղեմությանը ամենափոքր մատյանը, որ մեզ է հասել Գանձասարից, Թորոս գրչի ընդօրինակած Ավետարանն է (Մատենադարան, ձեռ. թիվ 378, այսուհետև՝ ՄՄ): Մատյանը մագաղաթյա է՝ գրված բոլորագիծ երկաթագրով, գրությունը՝ երկայուն, ունի 311 թերթ (34 × 24,5), տողերի քանակը՝ 17, դրոշմագարդ շագանակագույն կաշվե կազմով: Այն իշխանական պատվեր է, գրվել է Խոթիսանաբերդի իշխան Վախթանգ-Տանգիկի և նրա կնոջ՝ Խորիշահի պատվերով, որոնք այդ մասին 308թ թերթին թողել են հիշատակարան. «Ես՝ Վախտանգ և զուգակից իմ Խորիշահ ցանկացող եղանք սրբոյ Ավետարանիս»: Ի պատիվ պատվիրատուի՝ մատյանը հայտնի է նաև Վախթանգ-Տանգիկի Ավետարան անունով:

Գեղեցիկ ու վարժ է գրչությունը: Նկարագարդունը բարձր արվեստով ու ճաշակով կատարել է գրիչը, ով մի քանի էջերին (թերթ 2ա, 3ա, 258բ) և 9բ թերթի գլխագարդի վրա թողած հիշատակարաններում խնդրում է հիշել իրեն՝ «նվաստ գրչին ու նկարչին»: Մատյանն ունի տասը խորաններ, կիսախորաններ, Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ավետարանիչների անվանաթերթերը, երկու ավետարանիչի դիմանկարներ, որոնք ուրվագծային են ու առանց գունազարդման (թերթ 6բ), բազմաթիվ գեղեցիկ

⁴¹ Մ. արք. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, Տփլիսի, 1904, էջ 125-126, Ի Գանձասարայ ի 1868 ամի ցուցակի:

⁴² Արցախ, էջ 172-180:

⁴³ Յ. Թովմեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 44-45:

⁴⁴ Օ. Եզանեան, Գանձասարի հայերէն ձեռագրերի հաւաքածուն: Տե՛ս Օ. Եզանեան, Աշխատութիւններ, Երեւան, 2014, էջ 62-65:

⁴⁵ Արցախ, էջ 175-176:

⁴⁶ Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 197:

գարդամոտիվներ, բուսական և կենդանական լուսանցազարդեր, սկզբնագրերը հանգուցագիր են, առաջին տողերը գրված են ոսկով: Իշխող գույներն են մուգ կապույտը, կանաչը, կարմիրը, ոսկին, որոնց հետ Թորոսը նրբորեն համադրել է բաց դեղին, վարդագույն ու մանուշակագույն երանգները: Ավետարանն ունի նաև ձեռագրի գեղարվեստական հարդարանից տարբերվող մեկ տերունական պատկեր. Աստվածամայրը գրկել է մանկանը, աջ կողմում Գաբրիել հրեշտակն է թևերը բացած, իսկ ներքևում երկու ավետարանիչները՝ կրծքներին սեղմած Սուրբ գիրքը (թերթ 5ա): Այս նկարը տարբերվում է Թորոսի նկարազարդումից, այն հետագայի լրացում է, որը հավանաբար կատարել է նրա աշակերտը: Գլխավոր հիշատակարանում Վախթանգ իշխանը հիշում է իր պապին՝ Վախթանգ Մեծին, հորը՝ Հասան Մեծին և աներոջը՝ Սարգիս Մեծ սպարապետին. «Աստանոր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այտորիկ սրբոյ Աւետարանիս հրամանաւ և ծախիւք բարեւեր և աստուածահաճոյ առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա և քրիստոսասէր ամուսնու նորա՝ Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի» (թերթ 308ա):

Գլխավոր հիշատակարանը թվական չունի: Գ. Հովսեփյանը ձեռագրի գրության տարին դնում է 1212-1216 թվականների միջև՝ նկատի ունենալով, որ Խորիշահը 1212 թվականին մի եկեղեցի է կառուցել տվել, իսկ Գանձասարի վանքի մի արձանագրության համաձայն՝ Վախթանգ իշխանը մահացել է 1216 թվականից առաջ⁴⁷: Ա. Մաթևոսյանը ձեռագրի հիշատակարանը դրել է 1216 թվականի հիշատակարանների շարքում⁴⁸: Բ. Ուլուբաբյանը համարում է 1212-ին գրված⁴⁹: Ա. Սվիրինը գտնում է, որ ձեռագիրը ընդօրինակվել է 12-րդ դարի վերջին կամ 13-րդ դարի սկզբին⁵⁰: Աս. Մնացականյանը այս Ավետարանը նույնպես համարում է 12-13-րդ դարերում

գրված⁵¹: Իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակի հեղինակները ձեռագրի ստեղծման համար ավելի երկար ժամանակահատված են սահմանել՝ 1261-ից առաջ, 13-րդ դար՝ հավանաբար նկատի ունենալով այն, որ ձեռագրում վերջին՝ Հասան-Չալալ Դոլայի հիշատակարանը 1261 թվականից է⁵²:

Ձեռագիրը նկարագրել է Գ. Հովսեփյանը⁵³: Ավետարանի գլխավոր հիշատակարանին են անդրադարձել Մ. Բարխուդարյանցը⁵⁴, Հ. Օրբելին⁵⁵, Բ. Ուլուբաբյանը⁵⁶, իսկ նկարազարդմանը՝ Ա. Սվիրինը⁵⁷, Վ. Լազարևը⁵⁸, Լ. Դուռնովոն⁵⁹, Հ. Հակոբյանը⁶⁰:

Գլխավոր հիշատակարանում հիշվում է Խորիշահի կառուցած եկեղեցին. «Բազում փափագանաւք եւ յաւժարութեամբ սրտիս մերոց շինեցաք գեկեղեցին և երևելի սպասիւք զարդարեալ ներքոյ եւ արտաքոյ եւ հաստահեղուն հաւրինուածովք» (թերթ 308ա): Եկեղեցին կառուցելուց ու բարեկարգելուց հետո իշխանն ու Խորիշահը գրել ու ծաղկազարդելու են տվել Ավետարանը. «Մեք կամեցաք գրել զանուանս մեր ի գիրն կենդանի՝ վստահ եղեալ ի մարդասիրութիւն Աստուծոյ: Չկենդանարար եւ զցանկալի զսուրբս զայս Աւետարան ետուք գրել բազում եւ զանազան դեղովք զհամաբարբառս եւ ոսկեղեղ գրով զառաջս աւետարաներոյս զարդարեալ եւ իշատակ յախտենից լինել ի տան Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ» (թերթ 308բ):

⁴⁷ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 761-764:
⁴⁸ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 94-95:
⁴⁹ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 142-144:
⁵⁰ А. Н. Свирин, Миниатюра древней Армении, М., 1939, с. 82.

⁵¹ Աս. Մնացականյան, Հայկական գարդարվեստ, Երևան, 1955, էջ 620:
⁵² Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Չեթունյան, Փ. Անթաթյան, հ. Ա, Երևան, 1965, էջ 309:
⁵³ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 761-764:
⁵⁴ Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Ադուանից, հ. Ա, էջ 142:
⁵⁵ И. А. Орбели, Избранные труды, ст. 148.
⁵⁶ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 142-144:
⁵⁷ А. Н. Свирин, ук. соч., ст. 82.
⁵⁸ В. Н. Лазарев, История византийской живописи, М. 1947, ст. 186-188.
⁵⁹ Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, ст. 248.
⁶⁰ Հ. Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., Երևան, 1989, էջ 38-50: Նույնի՝ Արցախի մանրանկարչական արվեստը, այրում, Երևան, 2014, էջ 12:

Ավետարանի հիշատակարանում նշվող եկեղեցին Մեծառանից Սբ. Հակոբն է, որ 1212 թվականին վերակառուցել է Խորիշահը, ինչը հաստատվում է նաև վանքի դռան վերևի արձանագրությամբ. «ՈԿԱ (1212) թիւ ես՝ Խորիշահ՝ ամուսին Վախտանգա՝ տէր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսի, քույր Չաքարի եւ Իւանոյ, վերստին շինեցի գեկեղեցին Մեծառանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղոթս յիշեցեք»⁶¹: Այս թվականին աղբյուրները չեն հիշում իշխանուհու կողմից կառուցված մեկ ուրիշ եկեղեցի:

Ըստ Վարդան պատմիչի՝ Վախթանգը մահացել է 1214 թվականին⁶², իսկ Խորիշահը, 1216 թվականից սկսած, մասնակցել է Գանձասարի վանքի շինարարությանը, ապա ճգնելու է գնացել Երուսաղեմ և այնտեղ էլ մահացել⁶³: Խորիշահը մահացել է մինչև 1240 թվականը⁶⁴: Բերված փաստերից երևում է, որ ձեռագիրը գրվել է 1212 թվականից հետո և ավարտվել 1214 թվականի ընթացքում:

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը (թերթ 308աբ) երեք ուրիշ թերթերի հետ (թերթ 305-308) պահպանակ է դարձել 1497 թվականին գրված մի Հայսմավուրքի (ՄՄ ձեռ. 1508): Մահակ վարդապետ Ամատունին գտել է այն և զետեղել իր տեղում⁶⁵:

Ձեռագրի 8բ էջում Հասան-Չալալ Դոլայի հիշատակարանն է: 1261 թվականին, երբ իշխանը վերադարձել է Մանգու խանի արքունիք կատարած ուղևորությունից և կնոջը՝ Մամքանին գտել արդեն վախճանված, խորը վշտի մեջ թողել է այս հիշատակարանը. «Եւ ես եկեալ գտի զպայծառ տուն իմ յի սգով արտասուաւք անմխիթարելի, զի նա էր ամենայն զաւրաց եւ հեծելոց, նաև եկեղեցոյ եւ քահանայից սփոփիչ եւ մխիթարութիւն: Արդ, ի թվին Հայոց ՉԺ (1261) [ետու] գուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածասէր տիկնոջն [Մամքանայ]... Արդ, աղաչեմ զձեզ, սուրբ հայրք եւ ընթերցողք, որ զյիշատակս կարդայք, յի բերանով ասասչիք. Զրիստոս Աստուած, նորոգէ և միաւորէ զաս-

տուածասէրն Մամքան եւ դասէ ի դասս ընտրելոց քոց...»: Նույն թվականին էլ Արդուն խանի կողմից դաժանաբար սպանվում է Հասանը⁶⁶: Աթաբակը նահատակված հոր մատուցները բերում է հայրենիք և ամփոփում իրենց տոհմական գերեզմանատանը⁶⁷:

Ավետարանը դարձել է խոխանաբերդցիների տոհմական սեփականությունը և պահվել Գանձասարում: Սակայն «ի դառն և ի նեղ ժամանակիս» վանքի հարստության հետ գերի է տարվել նաև այս մատյանը և գերության մեջ մնացել մինչև 1589 թվականը: Այս թվականին Մեհրաբ Բեկի որդի իշխան Չալալը փրկագնել է գերված ձեռագիրը և նորից վերադարձրել խոխանաբերդցիներին. «Առա սուրբ Աւետարանս ի հալալ ինչից իմոց ի դառն և ի նեղ ժամանակիս, որ դրեցաւ աւամանլուն ի տեղիս, որ կոչի Խաչեն» (թերթ 7ա):

Գանձասարից հայտնի երկրորդ գրիչը վանքի առաջնորդ Մատթեոս մոնոզոնն է, որը 1417 թվականին Մանուել քահանայի համար տաղերի և ներբողների մի ժողովածու է օրինակել. «...գծագրութեան սորա եղև ի սուրբ ուխտս Գանձասարայ՝ յերկիրս Արցախական, որ այժմ կոչի Խաչեն՝ ընդ հովանեաւ սուրբ նշխարաց Յովհաննու Կարապետին» (ՄՄ ձեռ. 8689, թերթ 89աբ)⁶⁸: Մատթեոս վարդապետը դառնացած ավելացնում է, որ մատյանը գրվել է նեղության մեջ ու անապահով օրերում. «Յայսպիսի դառն և ի նեղութեանց միջի գծագրեալ եղև գիրքս իմով ձեռամբ՝ նուստ և յետինս բանասիրաց, սապդար ծնունդս եկեղեցւոյ Մատթեոս Մոնոզոնս, որ ի ծերացեալ արգանդէ ծնայ տեսանել զայս ամենայն վիշտս և այս բազում ցաւս, զոր որ գրելի» (թերթ 89բ), իսկ Բ հիշատակարանի սկզբում գրում է. «Այս գրոյս չէ, այլ աշխարհի զբաղմանցս, զինչ անց անցեալ է, գրեալ է ի վերայ իւրայնոցն» (թերթ 17բ):

Նախագաղափար հիշատակարանը, որից պահպանվել է գլխավոր հիշատակարանի սկիզբը և Բ հիշատակարանն ամբողջությամբ, մեզ է

⁶¹ Արցախ, էջ 171, Գիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 12:

⁶² Վարդան վարդապետ, էջ 140:

⁶³ Կիրակոս Գանձակեցի, էջ 268:

⁶⁴ Արցախ, էջ 173:

⁶⁵ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 762:

⁶⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 391, Վարդան վարդապետ, էջ 152, Մխիթար Այրիվանեցի, էջ 68, Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ 43:

⁶⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 392:

⁶⁸ ՄՄ. ձեռ. 8689, թերթ՝ 227, նյութ՝ թուղթ, 15 × 10,8, գիր՝ բոլորգիր, տող՝ 20-45:

հասել 17-րդ դարի ընդօրինակությամբ⁶⁹: Ըստ Լ. Խաչիկյանի՝ Բ հիշատակարանը, որը չափածո է, գրվել է գլխավոր հիշատակարանից վաղ, հավանաբար՝ 1415 թվականին⁷⁰: Գլխավոր հիշատակարանը բավականին շատ տեղեկություններ է հաղորդում ժամանակի իրադարձությունների մասին: Սկզբում Մատթեոս վարդապետը պատմում է Սյունյաց աշխարհին պատուհասած աղետի մասին. 1417 թվականին սաստիկ երաշտից չորանում է ամեն ինչ, ջրերը ցամաքում են: Այս պատմում է Վրաստանում՝ օտարության մեջ վախճանված Սմբատ Բուրթեյանց իշխանի մասին: Իսկ իշխանի երկու որդիները եկել էին հայրենիք և տեր չդառնալով իրենց իշխանությանը՝ այն անցել էր անօրենների ձեռքը: Գրիչը հիշում է նաև Խաչենի իշխանագուհիներից մեկին՝ արդեն վախճանված բարեպաշտ այր Չազային, գերության մեջ գտնվող նրա որդիներին ու ազգակիցներին. «Մնացեալքն յազգէ սորին՝ Չալալն և որդին նորին, և որդիքն Չազային՝ Արդութէն և Չալալադալէն, և եղբարք նոցին՝ Էլեգումն և Էլեգանն են ի ներքոյ ձեռքին անօրինացն և այսպէս պակասեալ է իշխանութիւն տանս Հայկազեան» (թերթ 88բ): Իշխան Չազային հիշում է նաև Թովմա Սյունեցի գրիչը Ծարա Գետամիջի վանքում օրինակած Ճաշոցի հիշատակարանում⁷¹:

Բնական աղետին ավելացել էին նաև պատերազմի հետևանքով առաջացած տառապանքները: Հաղթելով իր բոլոր թշնամիներին՝ Կարա Կոյունլու քոչվորական ցեղերի առաջնորդ Յուսուֆն իր տիրապետությունն է հաստատում Մերձավոր Արևելքում⁷²: Մոնոզոնը խոր ցավով ու կսկիծով է խոսում Յուսուֆի գործած անօրինությունների մասին. «Դառնացաւ ժամանակս և թագաւորեաց ոմն թուրքման՝ անունն Ուսուֆ» (թերթ 89ա): Չար է անվանում նրան գրիչը և դառնացած պատմում, թե ինչպէս նրա վայրենացած զինվորները անգթաբար կո-

ղոպտել են Գանձասարի վանքը, ավերել, թալանել և տարել են վանքի ողջ հարստությունը: «Չի վայրենացեալ զինվորք նորա ուր և հասանէին, ոչ զընտանիսն զիտեն և ոչ զօտարսն, թալանեն և կռիեն զձեռնահասն ի տեանց, թէ ի ճանապարհի, թէ ի տան, թէ առանձին, թէ ի զքաղաքի, և այսպէս ոչ գոգր թիւ աղաղակի մերոյ» (թերթ 89ա): Որպէս բարեպաշտ քրիստոնյա՝ գրիչը ավելացնում է, որ երկրին պատուհասած այդ դաժան չարիքը եղավ գործած մեղքերի պատճառով, և դեռ չգիտեն՝ առաջիկայում ինչ է սպասվում իրենց:

Տեր Սարգիսը Գանձասարում 1420 թվականին «ի հալալ արդեանց» խնդրել ու ստացել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», «զի սմա կան պատասխանիք ընդդէմ հերձուածողաց ու հեթանոսաց եւ կակնումն ուղղափառաց եւ առաջնորդ ճշմարտութեան» (ՄՄ ձեռ. 4004, թերթ 452բ)⁷³: Խոնավությունից ձեռագիրը վնասվել է, բորբոսնել ու քայքայվել, և գլխավոր հիշատակարանի շատ հատվածներ դարձել են անընթեռնելի: Մատյանն օրինակել է Ռստակես գրիչը: Նույն թվականին էլ Գեղարքունիքում Առաքել արեղան կազմել է այն: Ըստ հիշատակարանի՝ տեր Սարգիսը մատյանը նվիրել է իր ծնողների՝ Ծնորիքի և Սիրամարգի հիշատակին, հիշում է նաև իր երկու եղբայրներին՝ Անտոն արեղային և Մուղտասուն: Երկու դար հետո՝ 1624 թվականին, մատյանը գաղափար օրինակ է դարձել մեկ ուրիշ ձեռագրի համար. Ռստակես անունով մեկ ուրիշ գրիչ դրանից օրինակել է տվել մեկ այլ ձեռագիր⁷⁴:

Գանձասարում 1551 թ. Հայրապետ արեղան «դառն եւ ի նեղ ժամանակիս» Ղազար քահանայի պատվերով արտագրել է մի Ավետարան «ի յերկիրս յԱրցախ, որ է Խաչէն կոչի, ի տեղիս Մեծարանիս, որ է դուռն Գանձասարայ, որ գլուխն կա Սուրբ Յովհաննէս Մկրտչին» (ՄՄ ձեռ. 6513, թերթ 280բ)⁷⁵: Նկատենք, որ սա առայժմ

⁶⁹ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1955, էջ 193-197:

⁷⁰ Նույն տեղում, էջ 197:

⁷¹ Գ. Փիրղալեմեան, Նօտարք հայոց, Կ. Պոլիս, 1878, էջ 39-40, Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 122:

⁷² Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, Առաջաբան, էջ X-XII:

⁷³ ՄՄ ձեռ. 4004, թերթ՝ 452, նյութ՝ թուղթ, 18 × 13, գիր՝ բոլորգիր, սող՝ 31:

⁷⁴ «Թվին ՌՀԳ (1624) Մովսես վարդապետն գնաց Ասպահան, բազմաբարոթիւնս հաստատեաց, եւ ես նուսատ Ռստակես անապատին սեղանատուն շինեցի և գիրքս արիւնակել տուի», (թերթ 1բ):

⁷⁵ ՄՄ ձեռ. 6513, թերթ՝ 289, նյութ՝ թուղթ, 23 × 15, գիր՝ բոլորգիր, սող՝ 22:

հայտնի՝ Գանձասարում գրված միակ ձեռագիրն է, որտեղ Գանձասարի գտնվելու վայրն այսքան հստակ է նշվում: Մատյանը նկարագարող է անհայտ մի նկարիչ: Նա նկարել է ավետարանիչների դիմանկարները, անվանաթերթերը՝ կիսախորաններով, բազմաթիվ զարդագրեր⁷⁶: Ղազարը ձեռագիրը նվիրել է իր ծնողների՝ Պողոսի և Դեղիի հիշատակին: Ստացողը չի մոռանում նաև իր եղբայրներ Պետրոսին, Արապին, Վարդումին, Մարտիրոսին, Օհանին, Սիմեոնին և Մարկոսին, ինչպես նաև իր ուսուցիչ և հոգևոր հայր Հովհաննես սրբասեր կրոնավորին և գյուղի «բարիհաւաստ» տանուտեր Թորոսին: Ավետարանը գրվել ու ավարտվել է Սարգիս Աղվանից կաթողիկոսի կողմից Գանձասարի վերանորոգման թվականին. «Եղև զձագրութիւն սորա ի թվականութիւն հայ տումարիս Ռ (1551) աւարտեցաւ ի հայրապետութիւն յԱղուանից տեառն Սարգսի Մեծի, որ ետ նորոգել ի մեծայ հանդէս եկեղեցիս Գանձասար» (թերթ 280բ): Այս փաստը հաստատող անթվական մի փոքր արձանագրություն կա նաև եկեղեցու պատին: Հիշատակարանի այս հատվածում Հայրապետ գրիչը հիշում է նաև վանքի միաբաններից փակակալ Իսրայել եպիսկոպոսին, Կոստանդին եպիսկոպոսին, սրբակրոն տեր Հովհաննեսին, տեր Մկրտչին, տեր Թումային: Վերջում գրիչը տեղ է գտնում նաև իր անվան հիշատակման համար՝ «մեղապարտ գրչիս Հայրապետ սուտանուն, որ եմ անարժան, եւ ետ սակաւ մի ժամու ձեռս հողանա, եւ մաղթանքն իմ առ ձեզ մնա», իսկ թերությունների համար խնդրում է անմեղադիր լինել. «Պակասութեան եւ խոշորութեան եւ սխալանաց գրոյս անմեղադիր լերուք, զի այսչափ է կարողութիւն մեր, յաւելի, քան զկարն մեր մի պահանջէք» (թերթ 281ա):

17-րդ դարում Ավետարանը դարձել է խոջա Բունիաթի ընտանեկան սեփականությունը: Վերջինս կնոջ՝ Սուլթանաթի, և որդու՝ Դավթի հետ 1645 թվականին Ջալալի որդի Հակոբ երեցից գնել է Ավետարանը և ընծայել Դուխունաց Սր. Սարգիս եկեղեցուն: Սուլթանաթը սկեսրոջ և մյուս որդու՝ Շատուրի հետ հոգացել է ձեռա-

գրի նորոգման գործը՝ այն հանձնարարելով Բունիաթի եղբայր Գասբարին: Գասբար երեցն էլ կազմել է մատյանը, նորոգել խաչերն ու նոր կոստղեր է դրել: Հիշատակարանի վերջում Գասբարը նշում է բոլոր նրանց, ովքեր կփորձեն գողանալ կամ վաճառել Ավետարանը: Այսպես՝ Ավետարանի հոգաձության խնդրով զբաղվել է ողջ ընտանիքը: Այս ձեռագիրը նույնպես գողացվել ու գերի է տարվել, ինչը երևում է վերջին ստացողի հիշատակարանից: Արևի և Նիգարի որդի խոջա Միանսարը 18-րդ դարում գերությունից փրկել է մատյանը և կրկին նվիրել Գանձասարի վանքին: «Աստուած ողորմի ասացե՛ք խօջայ Միանսարին, որ ազատեաց գուրբ Աւետարանս ի ձեռաց յայլագեաց եւ վերստին ետ ի դումն Սր. յարթոռոյն Գանձասարայ՝ յանջինջ յիշատակ իւր եւ՝ ծնողաց իւրոց, եւ պահպան յորդոցն իւրոյց» (թերթ 284ա):

ՄՄ 1923 Ժողովածուն բովանդակում է Եպիփան Կիպրացու «Պատճառս երգոց Սաղմոսարանին», Հովհաննես Գառնեցու «Վասն Դաւթեան սաղմոսի» երկերը, Սաղմոսարան, Նարեկից մի հատված և Ներսես Ծնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը⁷⁷: Մատյանը 1576 թվականին Աղվանից Հովհաննես կաթողիկոսի խնդրանքով բոլորգրով օրինակել է Կարապետ գրիչը, իսկ Աթանաս ծաղկողը նկարագարող է լուսանցագարդերով ու զարդագրերով: Մատյանն ունի նաև մեկ թեմատիկ նկար՝ գահին նստած է Դավիթ սաղմոսերգուն և սազ է նվագում (թերթ 7բ): Գրիչը չափածո հիշատակարանում խորհուրդ է տալիս սաղմոս ասելով լվանալ «մեղաց աղտը»: Նա հորդորում է, որ անասն իր խրատը և անպայման կատարեն, քանզի սաղմոսը զանձ է և անմահության աղբյուր. «Գնա՛յ յատեան, բա՛ց եւ ասա՛յ / Եւ զքո մեղաց աղտըն լուա՛յ: / Եղբա՛յր, լսե՛, զբանս ի սմա / Եւ զխրատս կատարեա՛յ, / Սաղմոսն զանձ է, հաց չկայ՝ / Անմահութեան աղբիւր է սայ» (թերթ 173բ):

Ձեռագիրն ունի բազմաթիվ հետազայի հիշատակություններ: Ու չնայած խոնավությունից շատ բառեր եղծվել ու անընթեռնելի են դարձել՝ կարդացվում են հատուկենտ անուններ՝ «Ուհա-

⁷⁶ Ա. Գեորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ, Գահիրե, 2005, էջ 299:

⁷⁷ ՄՄ ձեռ.1923, թերթ՝ 178, նյութ՝ թուղթ, 28,5 × 20, գիր՝ բոլորգիր, սող՝ 22:

նէս կաթողիկոս թվին Ռ-ԽԶ (1597)», «Գրիգոր Եպիսկոպոս», «ԻԸ (28) Եպիսկոպոս, թվին Ռ-Կ (1611)», «Մարքիս սարքավակ»: Հետագայի՝ 1604 թվականի մի հիշատակարան հիշեցնում է դառն ու անապահով ժամանակների մասին. «Աստուած ողորմեայ Սիմէոն կաթողիկոսին, թվին Ռ-ԾԳ (1604) Գենջոյ դուլն երես Թեռէտ (Շ), ամա՛ն, խիստ կոտորեց, դառն ժամանակ եղաւ» (թերթ 45բ): Ձեռագրի վերջին ստացող տեր Խաչատուրը 1661 թվականին «այսր անդր ցրուեալ մատեանս» ժողովել ու նորոգել է տվել իր ծնողների՝ Ղուկնանի և Պեկաղնի հիշատակին:

Արցախի դպրատներում հոգևոր առարկաներին զուգահեռ դասավանդվել են նաև քերականություն ու տրամաբանություն, որը ենթադրում էր նոր ձեռագրերի ու նոր երկերի ստեղծման անհրաժեշտություն: Եվ դա արվում էր խնամքով ու հոգածությամբ: Հատուկ տեղ էր հատկացվում հատկապես քերականությանը, որը բխում էր գրագետ գրիչներ պատրաստելու, ձեռագրերը ճիշտ ու անխալ արտագրելու, ուղղագրությունը կայունացնելու պահանջներից: Այս նպատակով այլ վայրերից հրավիրվում էին մասնագետներ, որոնք և՛ ուսուցանում էին, և՛ անհրաժեշտության դեպքում նաև օրինակում ձեռագրեր:

Այսպես՝ 1659 թվականին Հովհաննես Ապահունցի երեցը «ի գեղջէն Ապահինու» եկել է «Մուրբ աթոռն Գանձասար»՝ քերականություն ուսուցանելու եւ իր ցանկությամբ օրինակել է քերականական նյութերի մի ժողովածու («Քերականութիւն Թումայի Իտալացոյ» (թերթ 1ա-153բ), «Յաղագս քերականութեան» (թերթ 155ա-234բ)⁷⁸: Եվ որովհետև գրիչը ձեռքի տակ ստույգ և ընտիր օրինակ չի ունեցել, գրել է սխալներով ու թերացումներով, ինչի համար թողություն է խնդրում. «Աղերսեմ զձեզ, ով որ, որ հանդիպիք սմա վերծանելով կամ օրինակելով, թողութիւն շնորհեցէք սակս վրիպմանացս կամ խոշոր եւ վատ գրոցս, քանզի կար մեր այս էր» (թերթ 154ա):

⁷⁸ ՄՄ ձեռ. 2277, թերթ՝ 235, նյութ՝ թուղթ, 13 × 9, գիր՝ բուրգի, նոտրգիր, տող՝ 19-20:

Մկրտիչ արեղան 1660 թվականին նույն նպատակով Գանձասար էր եկել Կաֆայից: Այստեղ նա 1667-ին ավարտել է նաև 1654 թվականին Կաֆայում սկսած մատյանը, որ տարբերությամբ բովանդակությամբ Ժողովածու է (Տոնացույց, աղոթքներ, Հայսմավուրքի ցանկ, Պատճեն տոմարի, աստղաբաշխական և տոմարական աղյուսակներ, Պարգատոմար, Հմայագիր, հայատառ թուրքերեն տաղեր)⁷⁹: Հիշատակարաններից մեկում (թերթ 219ա) գրիչը արձանագրել է նաև պատմական կարևոր փաստեր: Նա ժամանակագրական կարգով տալիս է 1603-1654 թվականներին տեղի ունեցած դեպքերը՝ սկսած Ծահ-Աբաս Ա-ի կողմից Երևանի բերդի գրավումից մինչև 1654 թվականի արեգակի խավարումը⁸⁰: Ժամանակագրության ցանկն ավարտում է իրեն վերաբերող մի քանի կենսագրական տվյալներով. 1656 թվականին Մկրտիչն օժվել է քահանա, 1660-ին եկել է Գանձասար, 1665-ին «առել իշխանություն», հավանաբար եղել է առաջնորդ, 1667-ին արդեն Եպիսկոպոս էր:

Ավելի ուշ Պողոս Ներսիսյանը (1842 թ.), Հովհաննես Մախմուրյանը (1846 թ.), Հարություն Մելքոնյանը (1851 թ.), Նահապետ Հովհաննիսյանը (1852 թ.), Հովսեփ Արցախեցին (ԺԹ դ.) քերականական բնույթի ձեռագրեր էին ստեղծում Արցախի տարբեր վանքերի գրչատներում:

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը» Բարսեղ արքեպիսկոպոսի խնդրանքով 1664 թվականին օրինակել է Սիմոն գրիչը⁸¹: Գլխավոր հիշատակարանում գրիչը ակնածանքով է հիշում Պետրոս Աղվանից կաթողիկոսին և մեծարանքի խոսքեր է ասում նրա մասին: «Երջանկափառ և խոհեմաբան» հայրապետը, որ աշակերտն էր «սրբափայլ և ուղիվաճեմ» Ղուկաս րարունապետի, «ուսաւորեաց գաշխա-

⁷⁹ ՄՄ ձեռ. 8504, թերթ՝ 220, նյութ՝ թուղթ, 14,5 × 10, գիր՝ նոտրգիր, տող՝ 13-21: Գրիչը Կաֆայում գրել է ձեռագրի մի մասը՝ Տոնացույցը և Հայսմավուրքի ցանկը, որի մասին թողել է հիշատակարան. «Արդ, գրի Տոնացոյցս և ցանկ Այսմաւորաց կարգին համառօտաբար ի թվականիս Հայկազան սեռի Ռ-ԾԳ(1654)»: Ձեռագրի մնացած մասը շարունակել և ավարտել է Գանձասարում:

⁸⁰ Հմմտ. Առաքել Գավրիժեցի, Պատմութիւն, Երևան, 1988, էջ 496-506:

⁸¹ ՄՄ ձեռ. 2561, թերթ՝ 264, նյութ՝ թուղթ, 17 × 13,5, գիր՝ բուրգի, տող՝ 23:

տեպ և զնսեմացեալ բոլոր տունս Աղուանից, զոր ի բազում ամանակաց կայր խախտեալ և խանգարեալ ի կարգաց և ի կրօնից վանորայք և յամենայն եկեղեցիք» (թերթ 260ա): Ավեր ու անմարդարնակ Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասի վանքը Պետրոս կաթողիկոսը «ժողովեաց ի զթեմ և զվինակ երկիրս Հաբանդ կոչեցեալ, զոր այժմ աստ Վարանդա» և առաջնորդ է նշանակում Բարսեղ արքեպիսկոպոսին. «Կացոյց առաջնորդ զհարազատ և զմիածին գաշակերտն իւր՝ զպարոնտեր Բարսեղն, որ է ստացոյ տառիս»: Բարսեղը նորոգում է Ամարասը «պարսպօք եւ բազմածախ սենեկօք եւ տամբք եւ փառս Արարչին և ընտրելոյն իւրոյ սրբոյ Գրիգորի» (թերթ 260բ): Այս հայրապետը միաբանության ամառանոց Հերիեր գյուղում հիմնարկում է Սբ. Աստվածածին եկեղեցին և դարձյալ հանձնում Բարսեղին: Բարսեղը կառուցում է վանքը՝ «կամարակապ ձևով և գեղեցկանիստ դրամբք», ու պարսպապատում: Ստացողի անունից գրիչը խնդրում է հիշել «կորովամիտ և հանճարապատում» Բարսեղ արքեպիսկոպոսին, որ «ստացոյ եղև զայս ներբողունակ մատենիս», նրա արյունակից մերձավորներին՝ հորը՝ Աղանին և մորը՝ Գուլագին, հարազատ եղբայրներին՝ Բաղդասարին և Մարտիրոսին, եղբորորդիներ Գասպարին և մանուկ հասակում մահացած Մաղթուվանին, քույրերին՝ Փերիին, Խանումին, Հուրիին, Թամարին, Միրեսանին, ինչպես նաև վանքի միաբաններին՝ պարոնտեր Ովանեսին, տեր Գրիգորին, Սկրտիչին, Ոսկանին և արդեն վախճանված Մարտիրոս, Ալեքսան, Եղիա պարոնտերերին:

ՄՄ 38 ձեռագիրը աղոթքների ժողովածու է, ուր ամփոփված են Բենիկ վարդապետ Աղվանից կաթողիկոսի, Գրիգոր Հեսացու կամ Մարաղացու և Գրիգոր Վանեցու աղոթքները⁸²: Գրիգոր Սկևռացու «Բարեբանեալ ես, ամենասրբուհի՛ Աստուածածին» աղոթքը (55ա-61բ) սխալմամբ դրված է Մարաղացու աղոթքների շարքում: «Ի շահ և ի յօգուտ ընթերցողաց և առ ժամանակաւ սրբասէր վայելողաց»՝ մատյանը 1760 թվականին նոտրգրով օրինակվել է ձեռամբ Դա-

վիթ վարդապետ Թիֆլիզեցու, ով հիշատակարան է թողել ձեռագրի մի քանի էջերում (1ա, 104բ): Գրիչը գաղտնագրով հիշատակարան է թողել նաև մատյանի սկզբի թղթե պահպանակին (Ա). «Ի վայելումն Թագուհի կուսին, ի թվին Հայոց ՌՄԹ (1760) և ի մարտի 25, առ դրան Սրբոյ աթոռոյն Գանձասարայ ձեռամբ մեղապարտ գրչի՝ Դաւիթ վարդապետի գրեցաց»⁸³: Ստացողը գրիչն է: Մատյանը կազմել է տեր Ղազարը և իր անունը փակագրով դրոշմել կազմին: Աստառին վրացերենով կա մի գրություն այն մասին, որ մատյանն ստեղծվել է Գանձասարում. «Գրուեց այս Աղօթագիրքը Գանձասարում մարտի 15-ին: Ո՛վ մեծ սուրբ Գէորգ»⁸⁴: Ձեռագրի նորոգությունը հոգացել է «մահտեսի նորընծա» Մխիթար արեղան:

Աբրահամ Շաքեցի արքեպիսկոպոսը Աղվանից Հովհաննես կաթողիկոսի համար 1766-ին ստույգ և ընտիր օրինակից արտագրել է մի Մաշտոց⁸⁵: Աբրահամ գրիչը խնդրում է նախ հիշել «երիցս երանեալ եւ երջանիկ» հայրապետին և նրա ծնողներին, ապա իրեն՝ «գանայիտան գծողին»: Վերջում գրիչը խնդրում է, որ սխալների համար չմեղադրեն իրեն, որովհետև անսխալական մարդ չկա. «Եթէ գտանիցի առ սա սխալանս ի բառս եւ կամ ի տառս, խնդրեմ ոչ եպերել, քանզի ոչ եթէ կամաւ եղեալ են, այլ ի մոռացմանէ դիպեալ վարկջիք, ըստ որում մարդ եմ, որոյ վասն ասեն ի գիրս թէ. Միտ մարդկային գոլով տկար սխալի, զի անսխալ մինն միայն գտանի» (թերթ 37ա): Ձեռագրի հետագայի՝ 1888 թվականի հիշատակարանը հաղորդում է, որ Գանձասարի վանքի վանահայրն այդ ժամանակ Ստեփաննոս վարդապետ Շիրակունին էր:

Անհայտ գրչի օրինակած մատյանը, որ օրենքների ժողովածու է (Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք» (թերթ 1բ-76բ), Մովսիսական (թերթ 77ա-86ա, 163ա-4բ), քաղաքական (թերթ 114ա-9բ, 178ա) և զինվորական օրենքներ (թերթ 114ա-9բ, 178ա), 1778 թվականին շղա-

⁸³ Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անունան Մատենադարանի, կազմ.՝ **Օ. Եգանյան, Ա. Չեթունյան, Փ. Անթաբյան**, հ. Ա, Երևան, 1984, էջ 134:

⁸⁴ Նույն տեղում, թրգմ.՝ **Պ. Մուրադյանի**:

⁸⁵ ՄՄ ձեռ. 3971, թերթ՝ 37, նյութ՝ թուղթ, 17,5 × 13, գիր՝ նոտրգիր, տող՝ 23:

⁸² ՄՄ ձեռ. 38, թերթ՝ 104, նյութ՝ թուղթ, 17,2 × 10,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 28-32:

գրով թերին լրացրել է Հովհաննես Աղվանեցի կաթողիկոսը (թերթ 20ա-32բ, 242ա-54բ)⁸⁶ և հիշատակարանում հիշել իր՝ Վախթանգ-Սակառյան իշխանական տոհմից սերված լինելը. «Իմ սերեալ ի յագգէ և ի տոհմէ իշխանաց իշխան Վախտանգ Սակառեանի նաև Ջալալ Դօլայ Հասան Վախտանգեանի» (թերթ 254բ)⁸⁷:

ՄՄ 9923 ձեռագիրը Եսայի Հասան-Ջալալյանի Վիմական արձանագրությունների Տետրակն է⁸⁸: 1718 թվականին Եսայի Աղվանից կաթողիկոսը խնամքով հավաքել ու ամբողջացրել է Գանձասարի, Խաղապանքի, Դադի և Գոչա վանքերի ու շրջակա տարածքի վանքերի ու խաչքարերի արձանագրությունները: Եսայի կաթողիկոսի այս ձեռագրին անդրադարձել են Ս. Ջալալյանը⁸⁹, Հ. Շահխաթունյանը⁹⁰, Խ. Դադյանը⁹¹, Կարապետ եպիսկոպոսը⁹²: Բնօրինակի գտնվելու վայրն անհայտ է: Մատենադարանում են պահվում բնօրինակից կատարված երկու ընդօրինակություններ՝ 7821 և 9923 ձեռագրերը: Առաջինի ընդօրինակող գրիչը և գրչության վայրը հայտնի չեն: Պ. Հակոբյանի կարծիքով այն եղել է Հովհաննես Շահխաթունյանցի անձնական հավաքածուի մեջ, իսկ 1938 թվականին բերվել է Մատենադարան Ախալցխայից բերված մի շարք ձեռագրերի հետ⁹³: Երկրորդը՝ 9923 ձեռագիրն ընդօրինակվել է 1822-ին:

1821-1822 թթ. Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը շրջագայում էր Հայաստանի հյուսիսարևելյան նահանգներում: 1822 թվականի հունիսին կաթողիկոսը լինում է Գանձասարում⁹⁴:

Վեհարանի գրագիր Հովհաննես եպիսկոպոս Դրիմեցին, որ նույնպես մասնակցում էր այդ շրջագայությանը, հայրապետի պատվերով նույն թվականին Գանձասարի վանքում հենց 1718 թվականի հեղինակային օրինակից արտագրում է Եսայի կաթողիկոսի տետրակը, որի մասին Հովհաննես Դրիմեցին հիշատակարան է թողել⁹⁵:

Երուսաղեմի Սր. Հակոբյանց վանքի թիվ 2273 ձեռագիրը Խորհրդատետր է⁹⁶, որը 1657 թվականին Պետրոս կաթողիկոսի պատվերով օրինակել է Գրիգոր երեցը. «Գրեցաւ եւ աւարտեցաւ ոսկիագարդ եւ ծաղկափթիթ Տետրս խորհրդեան... ի խնդրոյ երիցս երանեալ եւ երջանիկ հայրապետի եւ սրբազան կաթողիկոսի Տեառն տէր Պետրոսի վերադիտողի Սրբոյ յաթոռն Գանձասարայ»: Հայրապետը Գրիգորին պատվիրել է նաև ծաղկագարդել մատյանը, ինչը սիրով կատարել է գրիչը⁹⁷: Մատյանը գրված է վայելուչ բոլորգրով: Գրիչը գեղեցիկ ու ճաշակով է նկարագարողել այն, սկզբնատողերը, սկզբնատառերը և տերունական անունները ոսկեգույն են, թերթերն առնված են զարդարուն շրջագծերի մեջ, գունավոր զարդագիր է գլխավոր հատվածների սկիզբը, ունի բազմաթիվ լուսանցազարդեր: Ձեռագիրը բարվոք վիճակում չէ: Վնասված են նաև նկարները և հանդիպակաց էջերը՝ ներկերը դիմացի թերթերին անցնելու պատճառով:

1632 թվականին Գանձասարում գրված մի Ավետարան է կազմել Պողոս Վանեցին, որը

⁸⁶ ՄՄ ձեռ. 3497, թերթ՝ 268, նյութ՝ թուղթ, 18 × 11, գիր՝ շղագիր, նոտրգիր, տող՝ 15-27:

⁸⁷ Վախթանգ-Սակառյան տոհմի մասին տե՛ս **Վարդան վարդապետ**, էջ 140:

⁸⁸ ՄՄ ձեռ. 9923, թերթ՝ 12, նյութ՝ թուղթ, 24,2 × 18, գիր՝ նոտրգիր, տող՝ 24:

⁸⁹ **Ս. արք. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն..., հ. Ա, էջ 200:

⁹⁰ **Յովհ. եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն..., հ. Բ, էջ 356-358:

⁹¹ **Յ. Թոփճեան**, Յուցակ ձեռագրաց, Խաչիկ վ. Դադեան, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 89:

⁹² **Կարապետ եպիսկոպոս**, Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Նիւթեր հայ մելիքութեան մասին, պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 48:

⁹³ **Պ. Հակոբյան**, Հայկական վիմագրերը և Խաչատուր Աբովյանը, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, թ. 2, էջ 45:

⁹⁴ **Յովհ. Դրիմեցի**, Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ նշանին, Վիեննա, 1965, էջ 135-136: **Ալ. Երիցեանց**, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կով-

կասի հայք ԺԹ դարում, մասն Ա (1800-1832), Թիֆլիս, 1894, էջ 189-192:

⁹⁵ «Յամի Տեառն 1822 յամսեանն յուլիսի մեկին ընդ սրբազան Եփրեմ կաթողիկոսին մինչ էաք ի Գանձասար հրաշալի վանս, տեսի զբազում վանորէից, եկեղեցեաց և խաչից հնագույն արձանաց օրինակս ժողովեալս ի միում հին տետր ձեռամբ Եսայի կաթողիկոսին Աղուանից ի թուականութեան հայոց ՌՃԿԷ (1718), գոր և օրինակեցի կրկին իմով ձեռամբ: Խ. ծ. Յոհաննէս եպիսկոպոս երբեմն գրագիր Սրբոյ Էջմիածնի» (ՄՄ ձեռ. 9923, 2ա):

⁹⁶ Երուսաղեմի Սր. Հակոբյանց վանքի ձեռ. 2273, թերթ՝ 40, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 23-27, տե՛ս **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղեմ, 1974, էջ 366:

⁹⁷ «Ես նւաստ եւ յետնեալս ամենայնէ՛ Գրիգոր բազմամեղ երէցս, գրեցի և ծաղկեցի գաւ բազում աշխատութեամբ... ոչ թէ վասն ինչ իրաց եւ վարձու աշխատեցաւ, այլ վասն հայրական գոթոյն եւ խնամոյն, գոր ունի առ անարժան ծառայս իւր»: Նույն տեղում:

պահվել է Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցում: Իսկ 1713 թվականին Հակոբ երեցը արտագրել է աղոթքների և տաղերի ժողովածու, որը եղել է Գալուստ Շարմազանյանի անձնական հավաքածուի մեջ: Վերջին երկու ձեռագրերի տեղը հայտնի չէ⁹⁸:

Վանքի մատենադարանը հարստացել է նաև նվիրատվություններով և այլ վայրերից այստեղ բերված ձեռագիր մատյաններով, որոնցից շատ քիչ մասն է պահպանվել: 1477 թվականին Աղթամարում Հովհաննեսի ձեռքով գրված մի Ավետարան «ի դառն և ի նեղ ժամանակի խուժադուժ նետողաց ազգից» փրկվել ու Արցախ է բերվել: Իսկ այստեղ 1502 թվականին ձեռագիրը ՉՌ (6000) դահեկանով գնել ու Գանձասարի վանքին է նվիրել մի քահանա⁹⁹: Ձեռագրի գտնվելու վայրն անհայտ է:

Թավրիզի թիվ 22 մատյանը պարունակում է Մովսես Խորենացու և Եղիշեի պատմությունները, գրվել է 1689 թվականից առաջ: Գրիչն ու գրչության վայրն անհայտ են: Ձեռագիրը 1689 թվականին բերվել է Գանձասար և պահվել վանքի ձեռագրատանը¹⁰⁰:

Գանձասարում է պահվել ժամանակին Ռաֆայել Սթոռային սեփականությունը եղած երկաթագիր մագաղաթյա Կարմիր Ավետարանը, որն այժմ գտնվում է Չիկագոյի համալսարանի մատենադարանում և կրում է 949 թվահամարը: Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տալիս է Գ. Հովսեփյանը¹⁰¹: 1237 թվականին Ավետարանն ստացել են Գերգ Փառաշի և Շահանդուխտի որդիներ Գրիգոր և Վարդան եղբայրները: Ո՛վ է մատյանի գրիչը, հայտնի չէ: Հայտնի չեն նաև գրչության վայրը և առաջին ստացողը: Ձեռագիրը ծաղկել են տարբեր նկարիչներ՝ Աբասը, Իգնատիոս Հոռոմոսցին, նրա աշակերտ Հովսեփը և, ենթադրում ենք, նաև մի անանուն ծաղկող, ով իր մասին ոչ մի հիշատակություն չի

թողել: Մատյանը անբարվոք վիճակում է, վատ են պահպանվել մանավանդ մանրանկարները: Ձեռագիրը մի ամբողջություն չէ: Վաղեմույթյանը ամենահինը բնագիրն է, որի մագաղաթը տարբերվում է ստացողների հիշատակարանի և ձեռագրի սկզբում դրված տերունական պատկերների յոթ թերթ մագաղաթից: Նրանց գրերը նույնպես տարբեր են: Բնագրի սկզբնագարդերն ու լուսանցագարդերն արվեստով ու ոճով տարբերվում են Աբասի, Իգնատիոսի և Հովսեփի ծաղկագարդման արվեստից: Հավանաբար, սա անանուն նկարչի ձեռքի աշխատանքն է: Չի բացառվում, որ նա կարող էր նաև գրիչը լինել: Իգնատիոսն ու Հովսեփը ծաղկել են խորանները, որոնց գույներն ու գրերը տարբերվում են Աբասի և բնագրի նկարագարդումից: Դուկասի նկարի տակ (թերթ 199բ) և 4ա էջում Աբասը թողել է իր ինքնագիրը. «Յիշեա՛ գԱբաս նկարիչ տրուպ երեց»։ Աբաս նկարիչն իր անունը գրում է ոչ միայն հայերենով, այլև վրացերենով և հունարենով, ինչը հատուկ է Հաղբատի դպրոցի ծաղկողներին: Խորանների ներքին գերաններին (թերթ 8բ, 13ա, 15ա) անթվական հիշատակարաններ են թողել Իգնատիոսը և Հովսեփը. «Յիշեա՛, Տէ՛ր Աստված, զԻգնատիոս և զՅովսեփ», «Տէ՛ր Աստուած, ողորմեա բազմամեղիս»։ 1236 թվականի մի Ավետարանում Իգնատիոսը հիշվում է իր աշակերտ Հովսեփի հետ¹⁰²: Իսկ Աբաս նկարչին Գ. Հովսեփյանը տանում է ավելի վաղ, քան երկրորդ ստացողների 1237 թվականն է: Աբասը ծաղկել է բնագրի սկզբում դրված յոթ տերունական պատկերները, ինչպես նաև ավետարանիչների նկարները (թերթ 16բ, 84բ, 139բ): Գ. Հովսեփյանը կարծում է, որ ձեռագիրն ավելի վաղ է գրվել, քան ստացողների թվականն է: Նա Ավետարանը համարում է նույն դպրոցի և նույն ժամանակաշրջանի արդյունք, ինչ Հաղբատի Ավետարանն է, այսինքն՝ 13-րդ դարի առաջին տասնամյակի գործ: Իսկ Կ. Մաթևոսյանը հավանական է համարում, որ Իգնատիոսն ու Հովսեփը նկարել են խորանները և 1237 թվականին վաճառել արցախեցի եղբայրներ Վարդանին և

⁹⁸ Օ. Եզանեան, Աշխատություններ, էջ 62:

⁹⁹ Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 112:

¹⁰⁰ Հ. Աճառեան, Յուրակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 20:

¹⁰¹ Գ. Յովսեփեան, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 919-928, նույնի՝ Մի ձեռագիր Ավետարան, տե՛ս Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, 1987, էջ 108-115: Տե՛ս նաև Կ. Մաթևոսյան, Անի, Էջմիածին, 1997, էջ 299-303:

¹⁰² Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, էջ 108-115, Կ. Մաթևոսյան, Անի, էջ 271-283:

Գրիգորին¹⁰³, որոնք էլ ստանալով մատյանը՝ թողել են հիշատակարան. «Մեք՝ Գրիգոր և Վարդան հարազատք՝ տրուպ եւ նուաստ քահանայք, ըստ ձեւ տեսակի կրաւնաւորք գոլով, ստացար... գտորք Աւետարանս, բագում խերեւելիք ըստ կարեաց մերում, յորս եմք տեղեակեալ ի գլուխ սահմանաց Խաչենոյ, ի սուրբ ուխտէն] Գանձասար մենաստանէ, որ [է հանդէպ] դղեկիս Մխսաղան Հ[աւքա]խաղաց, առաջնորդութեամբ սուրբ ուխտիս տեառն Յովհաննիսի անյաղ]թ վար[դապետի... Յիշեսչիք զվերագրեալքս ի Տէր, նաեւ զանուանս զհարազատքս ուշիմս, եւ կարկառք մնամք աղաւթից ձերոց, եւ զծնողս մեր զԳերգ Փառաշ եւ Շահանդուխտ, եւ զայլ եղբարսս եւ զքորս, եւ զագագինս մեր, քան զի մեք Գրիգոր և Վարդան, որպէս զվտիտ և զընգար ամոլք ընգալաք զարաւրս մշակին երկնաւորի աւգնականութեամբն Քրիստոսի առ ի հերկեալ զակաւս սրտից աստուածայնոցդ եւ սերմանելոյ զընդիր ցորեանս, որ յագելլոցդ էք ի Քրիստոսի շահական պտղոյս... թվին ՌՁՁ (1237)»¹⁰⁴:

Հետագայում ձեռագիրն անցել է ձեռքից ձեռք: «Ի դառն և ի վիշտ ժամանակիս, յորում ամի շարժեալ էր ի վերայ ազգիս Հայոց անհնարին բարկութիւնն, եւս առաւել սով և սրածուրծիւնք, մէկ ս[ո]մ[ա]ր պիրն ի Է. (7) խում[ուշ] ելալ ի Կարս քաղաք», խարբերոցի աստվածասեր և հյուրընկալ մի մարդ՝ խոջա Մավար անունով, որ թանկացման, սովի ու սրածուրծան այդ դժվար օրերում տնանկ էր դարձել, արդար վաստակով ձեռք է բերում այս չքնաղ Ավետարանը՝ որպէս հիշատակ իրենց ընտանիքի¹⁰⁵:

Իսկ վերջին ստացողի՝ տեր Եղիայի անունից բոլորգրով հիշատակ է թողել Պարսամի որդի Սարգիս եպիսկոպոսը: Տեր Եղիան գերության մեջ եղող Ավետարանը գնել ու նվիրել է իր ծնողների՝ Մարտիրոսի և Ջումայի, Վարդան սարկավագի, Հայրական արեղայի, իր եղբայրների և Պարսամի հիշատակին: Վերջում Սարգիս եպիսկոպոսը խնդրում է հիշել նաև իրեն¹⁰⁶:

¹⁰³ Կ. Մաթևոսյան, Անի, էջ 281, 303:

¹⁰⁴ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 199-200, Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 919-928:

¹⁰⁵ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 925:

¹⁰⁶ Նույն տեղում:

Գանձասարում են պահվել նաև այժմ Մատենադարանում գտնվող մի շարք ձեռագրեր¹⁰⁷: Դրանցից հետաքրքրական են հատկապես հետևյալ ձեռագրերը:

1314 թվականին Ակներից Գլաձոր եկած Եսայի Նչեցու աշակերտ Պողոսը Տարսայիճ Օրբելյանի թոռ Տարսայիճի համար բոլորգրով օրինակել է մի Ավետարան, որը հետո դարձել է Գանձասարի վանքի սեփականությունը: Պահպանվել է ձեռագրի միայն հիշատակարանը (ՄՄ ձեռ. 9150):

1599 թվականին Վասպուրականի Ավանց գյուղում Կարապետ գրչի օրինակած և Չաքարիա Ավանցու ծաղկած ու կազմած Ավետարանը 1606 թվականին «ի հայրապետութիւն տեառն տէր Յոհաննէս կաթողիկոսի ի յաթոռս Աղվանից Սուրբ Գանձասարայ» ստացել է Մեհրաբ-Բեկի ավագ որդի Չալալը՝ «ի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց» (ՄՄ ձեռ. 5794): Չալալը հիշատակարանում հիշում է հորը՝ Մեհրաբ-Բեկին, մորը՝ Շահում աղին, հանգուցյալ եղբայրներին՝ Գրիգոր և Հովհաննէս Աղվանից կաթողիկոսներին, Բաղտասար բեկին և նրա որդի Դավիթ կաթողիկոսին, իր որդիներին և դուստրերին:

ՄՄ 3196 մագաղաթյա Ավետարանը 1655 թվականից առաջ «յոյժ փափագմամբ» Դուկաս վարդապետը Քարահատում գրել է տվել Ավետիս քաջ քարտուղարին: Ավետարանը գրիչը պետք է նաև զարդարեր ոսկով ու երփնափայլ գույներով, բայց վերջինիս մահվան պատճառով այն կիսատ է մնում: 1655 թվականին Պետրոս կաթողիկոսի պատվերով ծաղկազարդումն ավարտում է Գրիգոր քահանան:

¹⁰⁷ ՄՄ 4176 (1652 թ., գրչ. վայրը՝ Վարանդա գավառ, գյուղ Լիզներ, գրիչ՝ Առաքել և Պետրոս երեցք), ՄՄ 4185 (13-րդ դ., գրչ. վայրը՝ անհայտ, գրիչ՝ Դանիել, ստացող՝ Թամանի, կազմող՝ Դավիթ Շնողնեցի), ՄՄ 7767 (15-րդ դ., գրիչ՝ տեր Մաղաթիա, ծաղկող՝ Գրիգոր Մալեզկերեցի, ստացող՝ Վրթանես քին.) Ավետարանները, ՄՄ 2825 (1351-52 թթ., գրչ. վայրը՝ Սուրդաթ, գրիչ՝ Գրիգոր քին.), ՄՄ 3606 (1303թ., գրչ. վայրը՝ Նոնոնից վանք, Գայիձոր, գրիչ՝ Թադեոս քին., Մխիթար վրդ., ստացող՝ Հովհաննէս վրդ.), ՄՄ 4411 (1406 թ., գրչ. վայրը՝ Տաթև, գրիչ՝ Միմոն բանասեր), ՄՄ 3140 (16-րդ դ., գրիչ՝ Աթանես և Մաղաթել արդ., ստացող՝ Հովհաննէս կաթողիկոս), ՄՄ 3468 (1665-69 թթ., գրչ. վայրը՝ Աստապատ, գրիչ՝ Ներսես քին., Գրիգոր երեց, ստացող՝ Մարիամ և Միքայել արդ.), ՄՄ 3696 (17-րդ դ.) Ժողովածուները, ՄՄ 2449 մագաղաթյա Աղոթագիրքը (1690 թ., գրիչ՝ Արիստակես), ՄՄ 3555 Գանձարանը (1431 թ., ստացող՝ Տիրավագի եղբայր Մանուել):

1656 թվականին Ասպահանում Խոջայմալի խնդրանքով մագաղաթյա մի Ավետարան է գրել Գասպար երեցը (ՄՄ ձեռ. 2399): Այն 1658-ին Գանձասարում ստացել է Մինաս պարոնտերը:

Գանձասարի ձեռագրատան հավաքածուի մեջ են մտել նաև Սարգիս Ծնորհալու (ՄՄ ձեռ. 3780, 14-րդ դ., գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ տեր Գրիգոր), Գրիգոր Տաթևացու (ՄՄ ձեռ. 4055, 1655 թ.) մեկնությունները և Գևորգ Սկևռացու Գրիգոր Նարեկացու լուծմունքը (ՄՄ ձեռ. 4383, 17-րդ դ.), Դիոնիսիոս Արիոպագացու (ՄՄ ձեռ. 3829, 1664թ., գրիչ, կազմող՝ Բարսեղ կրոնավոր) և Պետրոս Արագոնացու (ՄՄ ձեռ. 4048, 1680թ., ստացող՝ Մովսես վրդ.) մատենագրությունները, Հովհաննես Աղվանից կաթողիկոսին ընծայված Մաշտոց ձեռնադրությանը (ՄՄ ձեռ. 4051): Իսկ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (ՄՄ ձեռ. 3616), որ նույնպես եղել է վանքի սեփականությունը, արժեքավոր է նրանով, որ այն Տաթևացու ինքնագիրն է, գրվել է 1387-ին, Շահապոնք ամրոցում:

ՄԵԾԱՌԱՆԱՑ (ՄԵԾԻՐԱՆԱՑ) ՍՔ. ՀԱԿՈՐԱ ՎԱՆՔ

Մեծառանաց Սք. Հակոբը, որն իր անունն ստացել է Հակոբ Մծբնա հայրապետի մասունքներն այստեղ պահվելու համար, գավառի երկրորդ առաջնորդանիստն էր. 14-15-րդ դարերում Հասան-Չալայյան կաթողիկոսները նստում էին և՛ Գանձասարում, և՛ Սք. Հակոբա վանքում: Սք. Հակոբը միաժամանակ նաև Խոխանաբերդի հոգևոր մշակույթի, ուսման և դպրության կարևոր կենտրոններից էր: Աղբյուրները վանքի հիմնադրման ստույգ ժամանակը չեն պահպանել. ենթադրվում է, որ այն կառուցվել է 9-րդ դարից առաջ: Մեզ հասած ամենահին աղբյուրը մի խաչքարի պատվանդանին պահպանված 853 թվականի արձանագրությունն է, որը հետագայում օգտագործվել է պատի մեջ որպես շինաքար: Այս արձանագրության մեջ հիշվում են Սահլ Սմբատյանի որդին՝ Աղվանից Հովհաննես իշխանը և խաչքարը կանգնեցնող Սողոմոն Մեծառանաց եպիսկոպոսը. «ՅԲ (853) թուականութեան Հայոց ի ժամանակ Յոհանիսի Աղուանից իշխանի ես՝ Սողոմոն Մեծարանաց եպիսկոպոս

կանգնեցի գտուրք խաչս»¹⁰⁸: Վանական համալիրն ամբողջացնում են իրար կից եկեղեցիները, միաբանների խցերը, օժանդակ շինություններն ու շրջապարիսպը: Գլխավոր եկեղեցին վերակառուցվել է 1212 թվականին Խաչենի Վախթանգ իշխանի ու նրա կնոջ՝ Խորիշահի կողմից¹⁰⁹: Երկրորդ անգամ վանքը նորոգվել է 1691 թվականին՝ Գրիգոր եպիսկոպոսի ջանքերով: Այդ մասին պահպանվել է արձանագրություն այն պահարանի դռան վրա, որտեղ խնամքով պահվել է Հակոբ հայրապետի աջը¹¹⁰: Մրահի հարավային պատի արձանագրության համաձայն 1241 թվականին՝ «յառաջնորդութեանս տէր Սարգսի եւ տէր Վարդանի» Սմբատի որդի Գրիգորը վանքին է նվիրել հողատարածքներ, Ավետարան ու սուրբ նշան¹¹¹: Սա ամենավաղ վկայությունն է այս եկեղեցուն ձեռագրի նվիրատվության վերաբերյալ: Ժամանակին «գերահռչակ, անուանի և մեծ» ճանաչված գրչության նշանավոր այս կենտրոնից և շրջակայից մեզ սակավ ձեռագրեր են հասել, այն էլ հետագա դարերից: Սք. Հակոբա վանքի միաբան Գրիգոր քահանայի խնդրանքով Հովհաննես գրիչը, որ 1297 թվականին «ի գերահռչակ մայրաքաղաքիս Եղեգեաց» Սք. Աստվածածին եկեղեցում Ավետարան է օրինակել, հիշատակարանում պատմում է, թե ինչպես թշնամու արշավանքներից ավերվել ու քանդվել, դատարկվել ու ամայացել են գավառի եկեղեցիները և «դառն սուգ առեալ զմահ անձանց ըղձանացեալք և բազումք թողեալ զմենաստանս և զանապատ խառնճանաչ շրջելով տարադեմ եղեալ աւտար աշխարհիկ փախստական լինէին, լալով ու կոծելով ի մեծէ մինչև ի փոքունս» (ՄՄ ձեռ. 7482, թերթ՝ 245ա)¹¹²: Գրիգոր քահանան խնդրել է հիշել իր հանգուցյալ հորեղբայրներ, նույնպես ուխտի միաբաններ «սուրբ և երջանիկ» Հովհանին և «անյաղթ փիլիսոփա» Հակոբին:

Վկայություն ունենք, որ 1383 թվականին այստեղ կազմվել է մի Ավետարան¹¹³:

¹⁰⁸ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 12:

¹⁰⁹ Նույն տեղում:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 11:

¹¹¹ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 13, Արցախի վանքերը, էջ 84:

¹¹² Տե՛ս նաև՝ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 798, Արցախի վանքերը, էջ 90:

¹¹³ Արցախ, էջ 263, Արցախի վանքերը, էջ 90:

Սաղաթել արեղան վանքի միաբան Սիմեոն արքեպիսկոպոսի խնդրանքով 1577 թվականին «ի գերահռչակ եւ անուանի մեծ եւ փառաւոր Սր. ուխտիս Յակոբայ վանք ու ընդ հովանեաւ Սր. Աստուածածինս... ի յերկիրս Խաչեան ի հայրապետութեան տեսոն Յոհաննէս կաթողիկոսին» օրինակել է Ավետարան¹¹⁴: Թուղթը տրամադել է Բարսեղ մահդապին, իսկ արտագրության ընթացքում գրչին օգնել են իր ընկերներ տեր Ունանը և Ավանիս արեղան: Գլխավոր հիշատակարանից տեղեկություններ ենք ստանում վանքի միաբանների մասին: Այստեղ հիշվում են Բարսեղ եպիսկոպոսը, տեր Եղիշեն, տեր Ոսկանը, տեր Բարսեղը, տեր Սարգիսը, նորընծա սարկավագներ Ուլուն և Բասբարը, վերջում՝ վանքի տնտեսական աշխատողներ Գոհարը և Մարիան: Գրիչը հիշում է նաև իր հանգուցյալ հորեղբայրներ Սիմավոն և Վարդան եպիսկոպոսներին: Մատյանը վերջին ստացող բարեպաշտ և աստվածասեր ուստա Կարապետի խնդրանքով 1594 թվականին Վասպուրականի Ավանց գյուղում ծաղկագարդել է Չաքարիա Ավանցին, ով ձեռագրի մի քանի էջերում թողած հիշատակագրություններում (թերթ 14բ, 17ա, 21ա, 231բ) իրեն անվանում է նկարող: Չաքարան նկարել է տերունական նկարները, համապատասխան էջերին՝ ավետարանիչների պատկերները՝ իրենց անվանաթերթերով, խորաններով ու կիսախորաններով: Գեղագրական հարդարանքն ամբողջացնում են գեղեցիկ ու խնամքով արված լուսանցագարդերն ու զարդագրերը: Հետագայի՝ Հովհաննես քահանայի որդի Մելքեսեթի հիշատակարանից էլ տեղեկանում ենք 1595 թվականին պատուհասած աղետի մասին. «Յայսմ ամի վասն ծովացեալ մեղաց մարդկան խաշնամահ եղև, որ գոմեշ, եզն և սև տաւար սակավ մնաց» (թերթ 232ա):

Աղբյուրները այնուհետև մինչև 19-րդ դարն այս զրջակենտրոնի գործունեությանը վերաբերող տեղեկություններ չեն հաղորդում: 19-րդ դարում Սր. Հակոբա վանքում իր մանկավարժական ու գիտական գործունեությամբ հայտնի էր Հովսեփ Արցախեցի (Տեր-Ավագյան) վարդա-

պետը (ծննդ. թիվ՝ անհայտ - 1847): Նա ծնվել է Շուշիում, որտեղ էլ կրթություն է ստացել, հետագայում հիմնել դպրոց և կրթել բազմաթիվ աշակերտների¹¹⁵: Հիշատակարաններում իրեն բանասեր անվանող Հովսեփ վարդապետը քերականական ու փիլիսոփայական մի շարք գործերի հեղինակ է: Նա գավառի կրթարաններում դասավանդել է հայոց լեզու, աստվածաբանություն, տրամաբանություն և փիլիսոփայություն: Սր. Հակոբա վանքում Հովսեփ վարդապետը գրում է «Գիրք տեսական փիլիսոփայության» աշխատությունը՝ բաղկացած չորս գրքից՝ «Յաղագս տրամաբանութեան», «Յաղագս բնաբանութեան», «Յաղագս համարնաբանութեան», «Յաղագս բարոյականի»¹¹⁶: 1816 թվականին Հովսեփ Արցախեցու և նրա աշակերտի համատեղ ընդօրինակությամբ ստեղծվում է այս աշխատության երկրորդ օրինակը¹¹⁷: 1835 թվականին երկու օրինակ հեղինակն ինքն է անձամբ արտագրում Բաղդասար արքեպիսկոպոսի խնդրանքով¹¹⁸, հաջորդ օրինակը թվագրված է 19-րդ դարով¹¹⁹:

Արցախեցին 1839-ին գրում է «Քերականութիւն Հայկազեան լեզուի» աշխատությունը¹²⁰: Հայտնի է նաև քերականությանը վերաբերող նրա մեկ այլ աշխատանք¹²¹: Հովսեփ վարդապետը 1817 թվականին օրինակում է Հովհան Ոսկերեանի Մատթեոսի Ավետարանի մեկնությունը¹²²: 1830 և 1840 թվականներին տպագրվում են նրա երկու՝ «Համառօտ բառգիրք ի գրաբարե յաշխարհաբար» և «Առաջին մասն փոքր քերա-

¹¹⁵ Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 222:

¹¹⁶ ՄՄ ձեռ. 2828, թերթ՝ 129, նյութ՝ թուղթ, 23 × 17,5, գիր՝ շղագիր, տող՝ 23:

¹¹⁷ ՄՄ ձեռ. 2525, թերթ՝ 183, նյութ՝ թուղթ, 17,5 × 11,2, գիր՝ նոտրգիր, տող՝ 26-29:

¹¹⁸ ՄՄ ձեռ. 3619, թերթ՝ 203, նյութ՝ թուղթ, 18 × 11, գիր՝ նոտրգիր, տող՝ 19-22: ՄՄ ձեռ. 2990, թերթ՝ 123, նյութ՝ թուղթ, 21,3 × 17, գիր՝ նոտրգիր, տող՝ 25:

¹¹⁹ ՄՄ ձեռ. 4038, թերթ՝ 169, նյութ՝ թուղթ, 19,5 × 15, գիր՝ շղագիր, տող՝ 19-22:

¹²⁰ ՄՄ ձեռ. 2563, թերթ՝ 116, նյութ՝ թուղթ, 16,9 × 10,6, գիր՝ նոտրգիր, տող՝ 17-24:

¹²¹ ՄՄ ձեռ. 3620, թղ. 263ա-419ա, թերթ՝ 123, նյութ՝ թուղթ, 17,5 × 12, գիր՝ նոտրգիր, տող՝ 21-24: Տիտղոսաթերթին հրատարակության թվականի տեղում նշված է 19-րդ դար:

¹²² ՄՄ ձեռ. 3618, թերթ՝ 281, նյութ՝ թուղթ, 17,5 × 11, գիր՝ նոտրգիր, տող՝ 25-28: ՄՄ ձեռ. 3620, թղ. 2ա-261բ:

¹¹⁴ ՄՄ ձեռ. 5507, թերթ՝ 233, նյութ՝ թուղթ, 30 × 21, գիր՝ բոտրգիր, տող՝ 27: Ե. Լալայանը գրչության վայրը սխալմամբ համարել է Կապուտկողի Սր. Հակոբա վանքը: Տե՛ս Ե. Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 687:

կանութեան գրաքառ լեզուի ի հայոց»¹²³ աշխատությունները: Այս երկու երկերն էլ օգտագործվել են որպես դասագրքեր:

Ձեռագրեր են գրվել վանքի շրջակայքի **Խանձք** գյուղում: 1560 թվականին Հովհաննես արեղան Մաշտոց է օրինակել «ի դուռն Սր. աթոռոյս Յակոբայ վանից եւ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնի՝ ի երկիրս Խաչէն՝ ի գիւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսին արեւայիսկոպոսին Առշատակէսին և իշխանաւոր տեղոյս Մեհրապ պէկին աշխարհակալ շահ Դահմանին»¹²⁴: 1560 թվականին Հովհաննես արեղան Խանձքում օրինակած Ավետարանի հիշատակարանում դարձյալ հիշում է «իշխանաւոր տեղոյս» Մեհրաբ բեկ Հասան-Չալայանցին, ապա Գրիգորիս կաթողիկոսին¹²⁵: Գրիգորիս կաթողիկոսը Մեհրաբ բեկի որդին է, որոնց նորից է հիշում Հովհաննեսը Սր. Հակոբա վանքում 1569 թվականին գրված Ավետարանի հիշատակարանում. «...արժանի արար զանարժան գրչիս Յոհաննէս... հասանել ի վերջին գիծ սրբոյ Աւետարանիս ի թուարանութեան հայկազեան տումարիս ՌԺԸ (1569) ի սուրբ և գերահռչակ ուխտիս, որ կոչի Յակոբայ վանք... ի երկիրս Խաչեան ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի՝ որդի Մեհրապ պէկին»¹²⁶: Հովհաննես կրոնավորը նույն թվին «յերկիրս Խաչեան ի վանս Ամենափրկիչ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնի» արտագրել է մեկ ուրիշ Ավետարան, ևս մեկը՝ 1571 թվականին¹²⁷:

1566 թվականին Առատակես երեցը Մաշտոց է օրինակել դարձեալ «ի յերկիրս Խաչեան ի գաւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան Գրիգորիսին և իշխանավոր տեղոյս Մեհրապ պէկին, աշխարհակալութեան շահ Թահմազին» (ՄՄ ձեռ. 3427, թերթ 158բ)¹²⁸: 1721 թվականի հետագայի հիշատակարանը հաղորդում է գա-

վառում տիրող տնտեսական ճգնաժամի՝ թանկացման և անասուններին ու այգիներին պատուհասած դաժան աղետի մասին:

Գետիկա վանքում 1232 թվականին իշխան Չաջուռի դուստր Վանենին իր հոր հիշատակին գրիչ Ստեփանոսից խնդրել ու ստացել է երկաթագիր մագաղաթյա Ավետարան (գտնվելու վայրն անհայտ է) և նվիրել **Հավապտուկ** վանքին, որը Չաջուռյանց տոհմական դամբանատունն էր¹²⁹:

Խաչենի **Կոշիկ անապատը** իշխանագունների դամբանավայրն էր: Համաձայն գավթի արձանագրության՝ Վասակ իշխանի որդի Պոռոշը 1244 թվականին անապատին է նվիրել Ավետարան, Տոնապատճառ և մեկ խաչ¹³⁰: 1493 թվականին այստեղ Սարգիս գրիչը Եփրեմ Խուրիի ընտիր օրինակից Ավետարան է ընդօրինակել¹³¹: Վերինշենի տանուտեր Հարությունը գնել է անօրեններից ձեռագիրը, 1749 թվականին կազմելու է սովել գարդմանցի Արիստակես երեցի որդի Վարդան քահանային, ապա պահ տվել Ջրաբերդի Վերինշեն գյուղի եկեղեցուն¹³²:

Պոկի Սր. Գևորգ վանքում¹³³ անհայտ գրիչը 1490 թվականին Ավետարան է գրել¹³⁴, իսկ 1760 թվականին Ժողովածու է օրինակել Հովհաննես արեղան¹³⁵:

Ձեռագիր մատյաններ են հասել նաև **Խանածախից**: Գյուղի Սր. Աստվածածին եկեղե-

¹²³ Գ. Տեր-Ավագյան, Առաջին մասն փոքր քերականության գրաքառ լեզուի ի հայոց, Շուշի, 1840:

¹²⁴ ՄՄ ձեռ. 9872, թերթ 174, նյութ թուղթ, 15,3 × 10,7, գիր՝ բոլորգիր, սող՝ 16:

¹²⁵ Մ. Բարխուդարեանց, Աղվանից երկիր և դրախտիք, Թիֆլիս, 1893, էջ 177:

¹²⁶ Յուզակ հայերեն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանի, Բ, Անտոնեան հավաքածու, Վիեննա, 1971, էջ 5, Արցախի վանքերը, էջ 90:

¹²⁷ Արցախի վանքերը, էջ 51-52:

¹²⁸ ՄՄ ձեռ. 3427, թերթ՝ 160, նյութ՝ թուղթ, 15,4 × 10, գիր՝ բոլորգիր, սող՝ 15:

¹²⁹ Գ. Յովսեփեան, Խաղարկեանք կամ Պոռոշեանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 29, նույնի՝ Յիշատակարան ձեռագրաց, էջ 882, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 181-183: Ս. արք. Չալայանց, Ճանապարհորդություն ..., Կ. Բ, Տփլիս, 1858, էջ 216-217, Մ. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրախտիք, էջ 235:

¹³⁰ Արցախ, էջ 169, Արցախի վանքերը, էջ 79:

¹³¹ Արցախի վանքերը, էջ 80:

¹³² Արցախ, էջ 247:

¹³³ Վանքի շուրջ ստեղծվել են բազմաթիվ ավանդազրույցներ: Ըստ ավանդության մահմեդական ամուսինները հավատով խնդրել և ունեցել են արու զավակ: Որդին հաճախ է եկել վանք և շարաթներով աղոթել: Սա դուր չի եկել այլադավան հորը. նա զայրացել և սպանել է որդուն և այդտեղ էլ թաղել: Վանքը ամուլ մարդկանց համար դարձել է ուխտատեղի: Մեկ այլ զրույց պատմում է վանքի շինարարությանը մասնակցած արջի մասին, որը մինչև վերջ քարերը կրելով օգնել է բանվորներին, այնտեղ էլ թաղվել է: Վանքի արևելյան կողմում կա մի անտաշ քար, որի մասին ասում են՝ արջի գերեզմանն է, և այդպես էլ կոչվում է: Տե՛ս Արցախ, էջ 163, Արցախի վանքերը, էջ 92:

¹³⁴ Հ. Աճառեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Բայազետի, Վիեննա, 1924, էջ 22:

¹³⁵ ՄՄ ձեռ. 8508, թերթ՝ 157, նյութ՝ թուղթ, 15,2 × 10, գիր՝ նտրգիր, սող՝ 17-23:

ցում Եփրեմ քահանան Մելիք Հախնազարի կին Մահփարի խաթունի խնդրանքով 1693 թվականին օրինակում է գեղեցկագիր մագաղաթյա Ավետարան¹³⁶: Գրիչը գրել է բոլորգրով, կանոնավոր ու համաչափ, սկզբնատողերը և սկզբնատառերը ոսկեգօծ են: Ոսկու և մուգ ու բաց կարմիրի, կապույտի, կանաչի, նարնջագույնի համադրությամբ նրբագեղ մանրանկարներով ծաղկազարդումը կատարել է գրիչը: Մատյանն ունի արծաթյա ոսկեգօծված կազմ՝ Ա փեղկին Շննդյան, Բ-ին՝ Խաչելության պատկերով:

Նույն եկեղեցում է պահվել «ի գիւղն Գոմորանց՝ ի դուռն Սր. Հռիփսիմէին» Փիլիպոս գրչի՝ ընտիր և հաստ թղթի վրա օրինակած և տերունական պատկերներով հարուստ մի Ճաշոց, որի գրչության թվականն անհայտ է: Ձեռագիրը նորոգելու են տվել գյուղի քահանան և գյուղացիները¹³⁷: Այստեղ է եղել նաև Դրագարկի Սր. Աստվածածին եկեղեցում Մանուել փիլիսոփայի խնդրանքով գրված թղթյա մի Ավետարան¹³⁸: Վերջին երկու ձեռագրերի հետագա ճակատագրերը հայտնի չեն:

Ձեռագիր մատյաններ են եղել նաև **Առաջածոր** գյուղի Սր. Աստվածածին եկեղեցում: Պահպանված անթվական մի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Շմավոն քահանայի խնդրանքով թղթյա Ավետարան է օրինակել Վարդան եպիսկոպոսը, իսկ ծաղկազարդումը կատարել է Հորդան եպիսկոպոսը, ով Մատթեոսի Ավետարանի վերջում թողած հիշատակարանում խնդրում է հիշել իրեն: Խոսքովի օրինակած թղթյա Աստվածաշունչը, որի գրչության թվականը նույնպես անհայտ է, ստացել են Մելքիսեդեկ, Հովհաննես և Մելիտեն քահանաները: Անհայտ հանգամանքներում մատյանը ընկել է Վաճառ գյուղի բնակիչ պարոն Ըռոզբեկի և նրա կնոջ՝ Հուրիի ձեռքը: Վաճառցի գյուղացիները 1617 թվականին նորոգել են տվել Սուրբ գիրքը¹³⁹:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» մի օրինակ է 15-րդ դարում Խաչենում տեր Հով-

հաննեսի խնդրանքով Մաթեոսի (գրիչն իր անունը գրում է այսպես), օրինակած մատյանը¹⁴⁰: Ուսանավորի նմանվող հիշատակարանից տեղեկանում ենք, որ Մաթեոսը «վարժապետաց ազգից» էր և լավ էր տիրապետում տաղաչափության կանոններին: Բայց գիրն օրինակելի ստացվելու համար գրչին խանգարել են տարիքն ու կենցաղային որոշ պայմաններ. Մաթեոսը մատյանը գրել է առաջացած տարիքում. «Չառամեցեալ ի յանուղոյա ընթացս, զՄաթեոս գծողս աղաչեմ յիշել» (թերթ 125ա), օրինակն էլ «ծուռ» էր ստացվել, որովհետև գրել է անկոկ թղթի վրա: Բարեբախտաբար, պահպանվել է գրչության երկրամասի անունը՝ «յերկիրս այս ի վտանգի, որ եւ անուն Խաչեն կոչի» (թերթ 1ա): Ձեռագրում կան հետագա ստացողների, կազմողի, լրացնողի վերաբերյալ հիշատակագրություններ: 16-րդ դարում թերին նոտրգրով լրացրել է Աստվածատուր գրիչը, իսկ Մինաս քահանան վերանորոգել է մատյանը: 1617 թվականին մատյանն ստացել է վանքի միաբան Թումա եպիսկոպոսը: Մատյանի երրորդ ստացողն է տեր Վարդանը, ով մագաղաթյա պատառիկ-պահպանակի վրա (9-10-րդ դդ) բոլորգրով թողել է հիշատակարան, որտեղ հիշվում են նրա ընտանիքի բոլոր անդամները:

1326 թվականին Վանական քահանայի խնդրանքով օրինակվել է Ավետարան՝ «ի յերկիրս Խաչենոյ ի նահանգիս **Մակաղեց անպատիս Բարիմարդկան**՝ ընդ հովանեաւ Սր. Նահատակիս ձեռամբ սուսքանուն Թումա գրչի, փոքր թեղենեցի Սարգիս վարդապետի» (Երուսաղեմ, ձեռ. 1794)¹⁴¹: Մատյանը սկզբից թերի է՝ թերթեր ընկած լինելու պատճառով, բացակայում է նաև Մատթեոս ավետարանիչի նկարը: Պահպանվել են մյուս երեք ավետարանիչների նկարները, գլխազարդեր ու լուսանցազարդեր: Գլխավոր հիշատակարանում հիշվում են ուխտի առաջնորդ տեր Աթանեսը և նրա կին Բորինան,

¹³⁶ ՄՄ ձեռ. 7840, թերթ՝ 341, նյութ՝ մագաղաթ, 12,6 × 9, գիր՝ բոլորգիր, սող՝ 20:

¹³⁷ Արցախ, էջ 153:

¹³⁸ Նույն տեղում, էջ 154:

¹³⁹ Նույն տեղում, էջ 186:

¹⁴⁰ ՄՄ ձեռ. 801, թերթ՝ 238, նյութ՝ թուղթ, 23,5 × 14, գիր՝ բոլորգիր, սող՝ 32-52: Մատյանը անբարվոք վիճակում է, թրջված, խուճացած, ցեցակեր, բազմաթիվ թերթեր քայքայված, բնագիրը վնասված, խուճացած, դժվարընթեռնելի է նաև գլխավոր հիշատակարանը:

¹⁴¹ Տե՛ս Ն. **Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 2, Երուսաղեմ, 1972, էջ 142:

որոնց կամեցողությամբ էլ գրվել է Ավետարանը, գրիչը հիշում է նաև իր ծնողներին՝ Վիրապչահին և Թագուհուն:

Երեքին Խաչենից մեզ հասած ձեռագրական ժառանգությունը հնարավորինս ամբողջական տեսնելու համար այստեղ տեղին է անդրադառնալ երկու գրչագրերի, որոնք թեև ոչ անմիջականորեն, բայց իրենց ստեղծման պատմությամբ կապված են այս երկրամասի հետ: Հասան-Չալալի դուստր Մամա-Խաթունի ամուսինն էր ծագումով մանագկերտցի ազնվական պարոն Ումեկը՝ թաթար-մոնղոլական շրջանում մեծ հեղինակություն վայելած վանառական, որի մասին հատուկ հարգանքով է խոսում Կիրակոս Գանձակեցին¹⁴²: Ապրելով Թիֆլիսում, որտեղ 1251 թվականին մեծ եկեղեցի է կառուցել, Ումեկը սերտ կապեր ուներ Արցախ-Ուտիքի հետ: Որպես ժառանգություն նա թաթարներից 40 հազար դուկանով գնել էր Գետիկն իր շրջակայքով, զբաղվում էր բարեգործությամբ: Բարեգործությամբ էր զբաղվում նաև նրա կինը՝ Մամա-Խաթունը, ով իր նվիրատվությունների արձանագրությունների մեջ ամուսնուն անվանում է «մեծ պարոն»: Ումեկի և Մամա-Խաթունի կրտսեր որդի Վախթանգը, ում բարեպաշտ մայրը դեռ մանկուց էր սնել ու դաստիարակել մորապապի երկրի ու ազգային մշակույթի նկատմամբ սիրով ու նվիրվածությամբ, տակավին պատանի գրավել էր Հովհաննես Երզնկացու ուշադրությունը: Երզնկայից եկած անվանի վարդապետը 1284 թվականին Թիֆլիսում ճառով հանդես է եկել Ումեկի կառուցած եկեղեցում¹⁴³: Այդ ճառից ոգևորված Վախթանգը մոր հորդորով դիմել է մեծ վարդապետին՝ գրելու «Յաղագս երկնի և նորին շարժման» երկը¹⁴⁴: Վախթանգի անվան

հետ են կապվում նաև վերոհիշյալ երկու ձեռագրերը, որոնց հիշատակարաններում նա ևս կոչվում է «մեծ պարոն»: Ձեռագրերից մեկը մագաղայա Ավետարան է, որ ունի միայն Մատթեոսի Ավետարանը՝ սկզբում ավետարանչի խունացած նկարով (թերթ 1բ) և մեկ կիսախորանով (թերթ 2ա): Մատյանը 1279 թվականին Վախթանգի պատվերով գրել է Վարդանը՝ որպես «խրատ և վարժումն» ազնվական երեխայի¹⁴⁵: Մյուսը Պողոս առաքյալի թղթերն են, որ ստեղծվել է որպես «շարունակություն ավետարանական ուսման»¹⁴⁶: Երկու ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են Գ. Հովսեփյանը¹⁴⁷ և Հ. Հակոբյանը¹⁴⁸: Երկրորդ ձեռագիրը չունի գրչության թվական: Գ. Հովսեփյանը կարծում է, որ այն գրվել է 1280 թվականին, հավանաբար՝ Տիֆլիսում, իսկ Հ. Հակոբյանը դնում է 1274-1275 թվականների ընթացքում և կարծում է՝ ձեռագիրը Արցախ-Ուտիք-Մյունիք միջավայրի արդյունք է: Ենթադրությունները փաստ համարելու համար բացակայում են կոնկրետ տվյալները, ուստի այս ձեռագրերին անդրադառնում ենք սույն որպես Հասան-Չալալյան տոհմի մշակութային ավանդների շարունակություն: Երկրորդ ձեռագրում հատկապես ուշադրության է արժանի բարձր թիկնաթռռին բազմած իշխանական զգեստով պատանի Վախթանգի դիմանկարը, որտեղ երևում է միջնադարյան ազնվականի կենցաղը, և ունի ազգագրական բացառիկ նշանակություն (թերթ 106բ):

ԽԱԿԱՎԱՆՔ

Վերին Խաչենի ամենից նշանավոր գրչության կենտրոնն էր Խաղավանքը, որն իր անունն ստացել է Արցախում քրիստոնեության առաջին տարածողներից մեկի՝ Թադեոս առաքյալի աշա-

¹⁴² Կիրակոս Գանձակեցի, էջ 363:

¹⁴³ Խոսքը Թիֆլիսի Սբ. Գևորգ հայոց եկեղեցու մասին է: Տե՛ս Գ. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը, Նյույթեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 222: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 202:

¹⁴⁴ «Տետրակ համառոտ և լի իմաստնախոհ բանիք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետի Յոհաննիսի Երզնկացույ... ի խնդրոյ գուարթամիտ պատանույ Վախթանգայ՝ կրտսեր որդույ հռչակաւոր իշխանին Հայոց Ումեկայ, յամի տետան 1284», Նոր-Նախիջևան, 1792:

¹⁴⁵ ՄՄ ձեռ. 5669, թերթ՝ 217, նյութ՝ մագաղաթ, 8,5 × 6, գիր՝ բողոքգիր, տող՝ 15:

¹⁴⁶ ՄՄ ձեռ. 155, թերթ՝ 130, նյութ՝ թուղթ, 15 × 11,2, գիր՝ բողոքգիր, տող՝ 31

¹⁴⁷ Գ. Հովսեփյան, Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը..., էջ 217-233:

¹⁴⁸ Հ. Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դարերում, էջ 65-71: Տե՛ս նաև V. Gabrielyan, Artskh the people and land of Kharabagh, Yerevan, 2011, p. 76-81.

կերտ Իսադ եպիսկոպոսի անունից¹⁴⁹: Աղբյուրներում վանքը հիշատակվում է նաև Իսադայի վանք, Իսադի վանք, Իսադարի վանք, Իրթրավանք, Իսաթրավանք անուններով: Ի սկզբանե վանքը եղել է Մեծ Կողմանք կամ Մեծ Կվենք գավառի առաջնորդանիստը¹⁵⁰: Վաղ միջնադարում հիմնադրված վանքը 12-րդ դարում դառնում է Վերին Իսաչենի կամ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատունը: Վախթանգ իշխանի մահից հետո էլ, երբ Հաթերքի իշխանության տարածքը բաժանվեց ներքին և վերին խաչենցիների միջև և Հաթերքի համրավավոր առաքելադիր Դադիվանքը դարձավ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնն ու տոհմական տապանատունը, Իսադավանքը դարձյալ մնաց եպիսկոպոսանիստ և գլխավոր տոհմական տապանատուն:

Ինչպես բոլոր գրչության կենտրոնների, այնպես էլ Իսադավանքի գրչակենտրոնի ուսումնասիրման հիմնական աղբյուրը վիմագրերն են, տեղում ստեղծված ու պահված ձեռագիր մատյաններն ու նրանց հիշատակարանները, որոնց հաղորդած տեղեկությունները հավաստի են ու վստահելի: 1265 թվականի մի արձանագրության մեջ վանքի առաջնորդ է հիշվում տեր Ռուբենը, իսկ միաբանության անդամներ են եղել Յոհան, Բարսեղ, Աթանաս, Ղազար, Ծահան վարդապետները¹⁵¹: Վանքի վերականգնումը կապվում է Վախթանգյան տոհմի պայագատներից մեկի՝ Հովհաննես վարդապետ Իսաչենցու անվան հետ: Այս երևելի այրը, վաղ հասակից տրված լինելով կուսակրոնության, կրթություն է ստանում Իսադավանքում, այստեղ էլ անցնում հոգևոր ծառայության: Վիմագիր արձանագրություններում ու ձեռագիր աղբյուրներում նա հիշվում է «Յովհաննես Իսաչենցի» կամ «Յովհաննես ի գաւառէն Իսաչենոյ»: Նա Սարգիս ամիրսպասալարի որդիների՝ Չաքարեի և Իվանեի դաստիարակն էր՝ «սնուցող նոցունց

իշխանացն»¹⁵²: Վերջիններիս մոտ այնքան է բարձրանում Հովհաննես Իսաչենցու վարկն ու հեղինակությունը, որ Չաքարեն դավանաբանական պատճառներից բխող անհնազանդության հետևանքով իր զարմիկ Գրիգորիս եպիսկոպոսին հալածելուց ու բանտարկելուց հետո, նրա փոխարեն Հաղբատի վանահայր է նշանակում Հովհաննեսին, ով հաջորդաբար առաջնորդում է Սանահինի (1170-80-ական թ.թ.) և Հաղբատի (1180-ական թ.թ.) վանքերը: Նրան առանձնահատուկ երախտագիտությամբ են հիշում ժամանակակից աղբյուրները: Իր գործունեության ընթացքում Հովհաննեսը կատարեց հիշարժան շատ գործեր, բարեկարգեց ու տնկեց այգիներ, վերակառուցեց եկեղեցիներ Սանահինում, Հաղբատում ու Իսաչենում և պատմության մեջ մնաց որպես բարերար-շինարար, գրչության արվեստի և գիտության հովանավոր, գեղեցիկի ու նվիրումի մարմնավորում: Նրա առաջնորդության տարիներին Հաղբատում, Սանահինում ու Իսաչենում ստեղծվեցին արժեքավոր շատ գրչագիր մատյաններ: Նա այն հոգևոր գործիչներից էր, որ հյուսիս-արևելյան վարդապետների հետ մեծ պայքար էր տանում բյուզանդական եկեղեցու ոտնձգությունների դեմ: Խոսելով Հովհաննեսի գործունեության մասին՝ Կիրակոս պատմիչը նրան անվանում է «առաքինի և սուրբ այր»¹⁵³, իսկ Հաղբատավանքի մեծ գավթի նրա կատարած շինարարության մասին պատմում է հատուկ ակնածանքով. «Այր առաքինի էր Յովհաննես և բազում գործս յիշատակի գործեաց նա ի Հաղբատ, ընդ որս և զհռչակաւոր գաւիթն եկեղեցւոյն շինեաց, որ հիացուցանէ զտեսողսն»¹⁵⁴: Հիրավի, Հաղբատի գավթի իսկ նարտարապետության փառահեղ հուշարձաններից մեկն է, իսկ գավթիների ճարտարապետության պատմության մեջ՝ անփոխարինելի¹⁵⁵: Հետագայում Իսաչենում իր վերակառուցած շինություններում Հովհաննեսը օգտագործել է Հաղբատի գավթի որոշ մանրամասներ: 1195-1204 թվականներին

¹⁴⁹ Ս. արք. Չալախանց, Ճանապարհորդություն ... հ. Բ, էջ 229:

¹⁵⁰ Բ. Ուլուբաբեան, Ս. Հասրաթեան, Իսադավանք-Իսաթրավանք, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ժ, Բեյրութ, 1982-1984, էջ 24:

¹⁵¹ Ս. արք. Չալախանց, Ճանապարհորդություն ... հ. Ա, էջ 229-231:

¹⁵² Կիրակոս Գանձակեցի, էջ 171:

¹⁵³ Նույն տեղում, էջ 216:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 174:

¹⁵⁵ Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, էջ 66: Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1961, էջ 32:

Հովհաննես Խաչենցին վերակառուցում է Վաղուհասից մոտ 8 կմ արևմուտք՝ Թարթառի աջ ափին, ձորերով շրջապատված ու դժվարամատչելի, անտառածածկ մի լեռնաբազկի վրա գտնվող Խաղավանքի Սբ. Աստվածածին եկեղեցին, որն ավերվել էր երկրաշարժից (1139 թ.) և սելջուկ-թուրքերի ասպատակություններից (1143 թ.), այնտեղ մեծաքանակ ձեռագիր մատյաններ ու խաչեր է հավաքում՝ հիմնելով յուրատիպ մատենադարան, հին ու նոր այգիներ է նվիրում վանքին, ապա բոլորը Հաթերքի տեր Վախթանգի միջնորդությամբ ընծայում իր ավագ եղբայր Հասանին ու նրա որդիներին. «Ի ՈՏԳ (1204) թվին ես տէր Յովհաննես շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչս եւ զգիրս, որ ի սմա եւ արկի զՋոթացն այգին եւ զՄատաղիսն բազում աշխատութեամբ եւ ետու զվանքս իւր ամեն սահմանան իմ եղբուրս Հասանայ եւ իւր որդոցն Հաթերքու տեառն միջնորդութեամբ»¹⁵⁶:

Նույն արձանագրության համաձայն՝ Հասանը ընդունում է ընծան, ինքն էլ իր հերթին վանքին է նվիրում Խնձորաբակի այգին. «Այս իմ գիր է Հասանայ, որ երբ իմ աղբէրս զեկեղեցիս շինեաց եւ զվանքս ինձ երես, ես զԽնձորոյբակս իւր սահմանով ի յեկեղեցիս տուի»¹⁵⁷: Այս պայմանագրով հիմքն է դրվում միջնադարյան գրչակենտրոններից մեկի՝ Խաղավանքի հզոր կենտրոնի՝ իր նշանավոր քահանայական դպրոցով, գրչատնով ու ձեռագրատուն-մատենադարանով, իսկ հիմնադիրն էլ համարվում է Հովհաննես Խաչենցին: Այս արձանագրությունը, որը Խաղավանքի գրչության կենտրոնի ու մատենադարանի հիմնադրման մասին առաջին վկայագիրն է, քանդակված է եղել եկեղեցու արևելյան ճակատին: Այսօր այդ վիմագիրը բոլորովին անեղծ վիճակով գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի ցուցադրությունում: Հովհաննեսի եղբայր Հասանը Ծարի իշխանն էր և Դովի ամուսինը: Այս արձանագրությունից հետո այլևս Հասանի անունը չի հիշատակվում: Ամուսնու մահից հետո իշխանությունը վարում է Դովը, որի անունով էլ իշխանական տունը կոչվում է Դովյան՝ մշտապես ունենալով Չաքար-

յան եղբայրների օժանդակությունն ու հոգածու վերաբերմունքը: Դովի գործունեության շնորհիվ հզորացավ Ծարի իշխանությունը, բարեկարգվեցին և ծաղկեցին հոգևոր կենտրոնները: Որպես հոգևոր մշակույթի ստեղծման ու պահպանման խոշոր կենտրոն՝ ծաղկում ու բարգավաճում էր նաև Խաղավանքը: Չոլի գորապետի գորաբանակի հարձակումներից ավերված ու թալանված վանքի մատենադարանը վերականգնվում էր՝ հարստանալով այստեղ ստեղծված և նվեր ստացած, ինչպես նաև գերությունից փրկված ձեռագրերով, որոնց հիշատակարանները կարևոր վկայություններ են պարունակում Խաղավանքի միաբանության ու գրչակենտրոնի գործունեության վերաբերյալ:

Ըստ արձանագրության՝ իշխանուհին 1225 թվականին կառուցել է եկեղեցու գավիթը և փոքրիկ մի մատուռ, վանքին նվիրել մի շքեղ Ավետարան ու այլ ընծաներ. «Ի թուին ՈՀԴ (1225) ես՝ Դավիս՝ դուստր Սարգսի, քոյր Չաքարեի և Իւանեի, շինեցի գաւիթս և մատուռս և տուի Աւետարան և զՅանկաբակուց երկիրն և յԱկուռինայ զիմ մատաղիս իմ հոգւոյս»¹⁵⁸: Դովի որդին՝ Վերին Խաչենի Գրիգոր Դովյան իշխանը և նրա կինը՝ Սյունյաց Տարսային իշխանի դուստր Ասիան պատրաստել են Սբ. Աստվածածին եկեղեցու բեմի սեղանը, կատարել նորոգչական բազում աշխատանքներ և վանքին են նվիրել մագաղաթյա շքեղ մի Ավետարան, որը շուրջ մեկ դար՝ մինչև 1900 թվականը, Գարդման գավառի Թարգմանչաց վանքում պահվելու համար վանքի անունով կոչվել է «Թարգմանչաց Ավետարան» (ՄՄ ձեռ. 2743)¹⁵⁹: Ձեռագիրը գրված է լավ մշակված սպիտակ մագաղաթի վրա, ունի

¹⁵⁶ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 121:

¹⁵⁷ Արցախի վանքերը, էջ 75:

¹⁵⁸ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 127, **Յովհ. եպս. Շահխաթունեանց**, Ստորագրություն..., Բ, էջ 363, **Ս. արք. Չալախեանց**, Ճանապարհորդություն..., Ա, էջ 207:

¹⁵⁹ Ավետարանի մանրամասն քննությունը տես **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 102-114, 1993, Ա-Բ-Գ, էջ 105-118:1911 թ. Գ. Հովսեփյանը գիտական շրջանառության մեջ է դնում Ավետարանի մանրանկարները: Տես **Գ. Յովսեփյան**, Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, թ. 5-6: Մանրանկարները արվեստաբանական վերլուծության է ներկայացրել Լ. Չուգասցյանը: Տես **Լ. Չուգասցյան**, Գրիգոր ծաղկող, Երևան, 1986:

372 թերթ, (30,1 × 23,2), գրությունը երկայուն է, տողերի քանակը՝ 17: Մատյանը գրված է գեղեցիկ երկաթագրով, որոշ տողեր դեպի ձախ թեքված գրերով, «Յարուցյալ Յիսուս» հատվածը, խորանների համաբարբառը, ցրվացանկը՝ աղյուսակ գրով:

Ըստ ձեռագրի հիշատակարանի՝ Ասփան «ամենայն բարեպաշտութեամբ զարդարել զարդարեաց զեկեղեցիս, ստացաւ գուրբ Աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընծայեաց իւր սուրբ ուխտն Խաթարի վանս, որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դօփեանց» (թերթ 10թ)¹⁶⁰: «Թարգմանչաց Ավետարանը» մեզ է հասել մի քանի անգամ կազմված (վերջինը՝ կաշվե կազմով) ու եզրահատված, լրացված ու առանց գլխավոր հիշատակարանի: Խորանների և կիսախորանների գերաններին ու սյուների վրա և Մարկոսի Ավետարանի վերջում պահպանված հիշատակագրություններում նշված են գրչի, ստացողի, ծաղկողի անունները և ծաղկելու թվականը, և քանի որ, ըստ Ա. Մաթևոսյանի, գրիչն ու բուն ձեռագրի ծաղկողը միասին են սկսել ու ավարտել աշխատանքը, ուստի նույն է նաև գրչության թվականը:

Ավետարանը 1232 թվականին գրել է Տիրացուն և ծաղկել Գրիգորը: Վերջինս կատարել է համաբարբառի խորանների, ավետարանառաջների, լուսանցազարդերի ու զարդագրերի նկարագրողումը՝ օգտագործելով գերազանցապես կարմիր ու կապույտ երանգները: Մատյանի առաջին ստացողն է Հովհաննես քահանան, որի մասին խորանների գերաններին հիշատակ է թողել Գրիգոր ծաղկողը. «ՉՅովաննէս աստուածագարդ քահանայ եւ զԽաչիկ հայր իւր յիշեսջիք ի Քրիստոս» (թերթ 7թ, 8ա, 12ա): Իշխանն ու իշխանուհին երկրորդ ստացողներն են, որոնք, Արցախում ստանալով մատյանը, հանձնարարում են Գրիգոր մանրանկարչին նկարելու ավետարանիչների ու տերունական պատկերները: Գրիգոր նկարիչը, պահպանելով Գրիգոր ծաղկողի ներկայակերպը, լրացնում է թերին: Մասնագիտական գրականության մեջ երբեմն

շփոթություն է առաջացել ծաղկողի (զարդանկարների հեղինակի) և մանրանկարչի (տերունական պատկերների հեղինակի) անունների նույնության հետևանքով, քանի որ երկուսն էլ Գրիգոր են: Մինչդեռ երկրորդ Գրիգորը տերունական պատկերները նկարել է Արցախում, և այսուհետև, ինչպես տարբերակում է Ա. Մաթևոսյանը, ճիշտ կլինի առաջինին կոչել **Գրիգոր ծաղկող**, երկրորդին՝ **Գրիգոր Արցախեցի**¹⁶¹:

1312 թվականին Ասփայի մահից հետո նրա հիշատակին իշխանը վանքին է նվիրում մեծ հարստություն՝ գյուղեր, այգիներ, անդաստաններ, զանազան սպասք ու հանդերձներ, իսկ Ավետարանը զարդարել է տալիս ոսկով և արծաթով¹⁶²: Իշխանուհին Խաղապանք տանող ճանապարհին՝ Թարթատի վրա, կառուցել էր նաև մի կամուրջ և խաչքար կանգնեցրել հետևյալ արձանագրությամբ. «Կամաւն Աստուծոյ, ես Ասփա՛ դուստր մեծ իշխանին Տարսայիճին և Մինախաթունին և ամուսին հսկայազար իշխանին Գրիգորի՛ որդւոյ մեծ իշխանին Հասանայ, քաջ տեսն Աղուանից, կապեցի զխաչս, շինեցի զկամուրջս յիշատակ հոգւոց անցելոց, ներկայից և սպազայից»¹⁶³: Ասփան վախճանվել է 1311 թվականին և թաղվել իրենց տոհմական դամբանատանը:

Խաղապանքի մատենադարանում է պահվել 1166 թվականին Առաքել Անծոռունյա եպիսկոպոսի խնդրանքով Հռոմիլայի Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Կոզմա գրչի ձեռամբ գրված մագաղաթյա մի Ավետարան, որը Իվանեի որդի Ավագը Կեսարիայում մոնղոլների կազմակերպած աճուրդից գնել ու բերել է Արցախ: Այստեղ 1244 թվականին ձեռագիրն ստացել է Գրիգոր Դոփյան իշխանը և նվիրել Խաղապանքին: Հետագայում մատյանը ինչ-ինչ ճանապարհներով բերվել է Օրթաքիլիսա (այժմ՝ Մայիսյան, Գյումրիի մոտ) գյուղի եկեղեցին, իսկ այժմ պահվում է Մատենադարանում (ՄՄ ձեռ. 7347):

¹⁶⁰ Տե՛ս նաև՝ Արցախ, էջ 390, Արցախի վանքերը, էջ 77: Վ. վրդ. Հացունի, Հայուհին պատմութեան առաջ, Վենետիկ, 1936, էջ 203:

¹⁶¹ Ա. Մաթևոսյան, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 106-109, 1993, Ա-Բ-Գ, էջ 112-118:

¹⁶² Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., Երևան, 1950, էջ 84:

¹⁶³ Վ. վրդ. Հացունի, Հայուհին պատմութեան առաջ, էջ 236, Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 129-130, Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 316:

Բայու նոյինի արշավանքներին հարկադրաբար մասնակցող Գրիգոր իշխանը հիշատակաբանում պատմում է, թե ինչպես նետողաց ազգը, ասպատակելով և բնաջնջելով Պարսից քաղաքներ ու գյուղեր, եկել-հասել է Աղվանք ու Հայոց երկիր, այստեղ էլ ավերել ու թալանել, գերեվարել է խաղաղ բնակիչներին. «...գորս ոչ կարենք գրով արկանել զաղետս տարեկուսի կործանման հանուրց աշխարհի, որ եւ եհաս մինչեւ յաշխարհս Հայոց եւ Աղուանից: Եւ առեալ զանթիւ գաւառս եւ զքաղաքս, եւ զվանորայս, ի սուր սուսերի մատնեցին զազգն քրիստոնէից, զիշխանսն մեծամեծս եւ զռամիկ ժողովրդականս...» (թերթ 342ա)¹⁶⁴: Մոնղոլներն իրենց հետ տարել են ամեն ինչ՝ հետագայում հայերին վաճառելու գերված հոգևոր և աշխարհիկ մարդկանց՝ իշխանավորների, ազնվականների, հոգևորականների, ռամիկների, բռնագրավված կայք, սրանց մեջ նաև մեծաքանակ հայերեն ձեռագիր մատյաններ և եկեղեցական սրբություններ: Իբրև մոնղոլական արշավանքների ականատեսի և դեպքերի մասնակցի՝ Գրիգոր իշխանի հաղորդած տվյալները հավաստի են ու վստահելի: Մոնղոլների կազմակերպած աճուրդների մասին գրում է նաև Կիրակոս Գանձակեցի պատմիչը. «Անթիւ գոյին անդ կտակարանւաք աստուածային գրոց՝ մեծամեծաց եւ փոքունց. զայն առեալ այլագգեացն՝ ծախելին քրիստոնէիցն, որ ի գօրուն էին, զյաճախագին ընդ դոյզն գնոց: Եւ նոցա խնդութեամբ առեալ, սփռելին յուրաքանչիւր գաւառ, բաշխելով յեկեղեցիս եւ ի վանորայս»¹⁶⁵: Ձեռագրեր փրկագնողների մեջ Կիրակոս Գանձակեցին հիշում է վերոհիշյալ Ավագին ու Գրիգոր Խաչենցուն, նրանց հետ նաև նրանց հարազատներից Ծահնշահին և Աղբուղային: Գրիգոր Խաչենցու հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ իշխանը մեկ տարի առաջ՝ 1243 թվականին, վանքին է նվիրել ևս չորս ձեռագիր մատյաններ, որոնք նա ձեռք էր բերել Կարնո երկրում և Կապադովկայում կազմակերպված աճուրդում և արշավանքից վերադառնալիս բերել էր

իր հետ. «...գնշանս տէրունական և գտառս աստուածային ոչ ձեռաւք մերաւք առեալ յաւարի, այլ գնեալ ի նոցանէ, բերաք ի սեփական տէրութիւնս մեր՝ զճաղկալից բուրաստան զԱւագ Տաւնականն եւ զմիւս այլ Տունական, զԺողովոց Յոհանն եւ զԱւետարան, եւ զաջն սրբոյն Ստեփաննոսի, գոր ի քաղաքէն Կանու բերանք եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս» (թերթ 342բ)¹⁶⁶: Գրիգոր իշխանի թվարկված ձեռագրերից մեկը, ըստ Ա. Մաթևոսյանի, Հովհան Օձնեցու «Սակս Ժողովոց ու եղեն ի Հայս» աշխատությունն է, որի ճակատագիրն անհայտ է: Ավետարանը, որ 1230-ին Թեոդոպոլսում գրել է Գրիգորը և կոչվում է Կարնո կամ Թեոդոպոլսի Ավետարան, այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում՝ 129 թվահամարի տակ¹⁶⁷: Իսկ Տոնականները, որ ստեղծվել են Երզնկայի Ավագ վանքում 1227 թվականին Ներսես գրչի ձեռամբ Վարդան վարդապետի (Ավագ Տոնական) և Տուրքի խնդրանքով, այժմ գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում են 6196 և 3779 թվահամարները¹⁶⁸:

Խաղավանքում է պահվել նաև Հաղբատի կամ Գետաշենի Ավետարանը (ՄՄ ձեռ. 6288): Մագաղաթյա երկաթագիր փառահեղ այս մատյանը, որ ստեղծվել է 1211 թվականին Հովհաննես Խաչենցու առաջնորդության տարիներին, Հաղբատի դպրոցի բարձրարվեստ գործերից է և նախատեսված է եղել վաճառքի համար: Հաղբատում Հակոբ գրչի օրինակեծ և Անիի Բեխենց վանքում Մարգարեի ծաղկագարդած մատյանը, որ տարագրվել էր, 1223 թվականին՝ «ի յիշխանութեան հզաւրի Հասանայ որդոյ՝ Վախտանգա, եւ ի հայրապետութեանս տեառն Յոհաննեսի», Անիում գնել ու ոմն Մխիթարի միջոցով Խաղավանք է բերել այստեղ քահանայական կրթություն ստացած Մարգիսը. «Արդ, երանելիս Սարգիս իբրեւ զիմաստուն վաճառական ի խնդիր

¹⁶⁴ Տե՛ս նաև՝ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 957-958: Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 228:

¹⁶⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 279-280:

¹⁶⁶ Տե՛ս նաև՝ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 229:

¹⁶⁷ Բ. Մարգիսեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հ. Ա, 1914, էջ 567:

¹⁶⁸ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1993, Ա-Բ-Գ, էջ 109-110:

պատուական մարգարտին եւ գտեալ զսա ի գաւառին Անոյ մեծայծախ, ոսկեգիր եւ ոսկեճանձ ծաղկաւք զարդարեալ ըստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց... եւ ընծայեաց զսա Մեծկողմանց եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան» (թերթ 358բ-59ա)¹⁶⁹: Մատյանը Արցախում երեք անգամ նորոգվել ու կազմվել է: Քանի որ ձեռագիրը «հնացեալ և աւերեալ» էր, Վանական քահանան 1325 թվականին Ստեփանոսին կազմելու է տալիս մատյանը (թերթ 351բ): Երկրորդ անգամ Մովսես քահանայի խնդրանքով 1388 թվականին կազմում է Սարգիսը (թերթ 112ա), իսկ երրորդ անգամ «յոյժ հնացեալ» մատյանը նորոգելու է տալիս պարոն Ուլուխաթունը՝ 1497 թվականին (թերթ 173բ): Որքան ժամանակ է մատյանը մնացել Բաղապանքում, հայտնի չէ: Այստեղից այն տարվել է Գարդման գավառի Գետաշեն գյուղ և պահվել մինչև 20-րդ դարի սկիզբները, որտեղից էլ Գ. Հովսեփյանը Ավետարանը բերում է Սբ. Էջմիածին¹⁷⁰:

Բաղապանքի մատենադարանի հարստություններից է եղել նաև հնագրական ու ձեռագրագիտական առանձնահատկություններով բացառիկ մի ձեռագիր՝ «Վեհափառի Ավետարանը» (ՄՄ ձեռ. 10780)¹⁷¹: Հնությամբ 10-րդ դար հասնող ակնագարդ և ուղղաձիգ երկաթագրով գրված մագաղաթյա այս մատյանի գրչի, ծաղկողի և ստացողի հիշատակարանները չեն պահ-

պանվել: Մատյանն ունի բազմաթիվ հետագայի հիշատակագրություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս նրա մասին: Ձեռագրագիտական ու հնագրական վերլուծությունը Ա. Մաթևոսյանին թույլ է տալիս պնդելու, որ մատյանն ստեղծվել է Վանա լճի շրջակա գավառներից մեկում, իսկ նրա գրիչը, որ նաև մանրանկարիչն է, ժամանակի հմուտ գրիչներից մեկն է, ով հավասարապես տիրապետում է գրի բոլոր տեսակներին: Մատյանին վերաբերող առաջին հիշատակությունը 1088 թվականին ձեռագրի նորոգման վերաբերյալ է: Այս թվին ձեռագիրը նորոգում է Սարգիս քահանան. «ՇԼԷ (1088) թվ[ական]: Ես՝ յոզնամե[ղ եւ տա]ռապեալ քահանա Սարգիս նորոգեցի սուրբ զԱւետարանս ի բարեխաւսութիւն ինձ եւ որդւոյ իմոյ Վարդա եւ մաւր նորին»¹⁷²: Մատյանը կրկին նորոգության է ենթարկվել 1371 թվականին, իսկ երրորդ անգամ՝ 15-րդ դարում ոմն Կոստանդինի և նրա կնոջ Մահրայգատի միջոցներով: Ձեռագիրն այս դարում, հավանաբար Կոստանդինից, ձեռք է բերում Համազասպի և Տիրամոր որդի, Տաթևի սան Սարգիս վանականը: Որոշ ժամանակ անց Սարգիսն իր հարազատների հետ բնակություն է հաստատում Արցախի Փառխոսի գավառում և որպես ընտանեկան սրբություն՝ իր հետ տանում է նաև այս Ավետարանը: Մատյանի հետագա ճակատագիրն այսուհետև կապվում է Արցախ աշխարհի հետ, իսկ հիշատակարաններում հիշվում են Սարգսի հետնորդները, որոնք սերնդեսերունդ գուրգուրանքով պահում ու փայտալուծում են Ավետարանը: Հետագայում ձեռագիրը մի քանի անգամ գերվել ու փրկագնվել է, մի քանի անգամ նորոգվել ու կազմվել: 1609 թվականին անօրեններից Ավետարանը ձեռք է բերում դարամուրատցի Աղաբաբը, ումից չորս տարի հետո ետ են գնում Սարգսի սերունդները՝ վերադարձնելով Փառխոսի մերձակա Քյուրլար գյուղը (այստեղ բնակություն էին հաստատել Սարգսի հորեղբոր սերունդները), որտեղ այն մնում է մեկ դար և գյուղի անունով կոչվում Քյուրլարի Ավետարան: Իսկ երբ լեզգիների կողմից հիմնահատակ ավերվում է գյուղը,

¹⁶⁹ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 134: Ձեռագիրը գրվել է Հաղբատում կրթություն ստացած անեցի Սահակի պատվերով, ով մատյանը նվիրել էր Արջոտաճի եկեղեցուն: Հաղբատի Ավետարանի մասին մանրամասն տե՛ս՝ Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի», թիվ 14, 1984, էջ 106-132: Գ. Մաթևոսյան, Հաղբատի Ավետարանը, Երևան, 2012:

¹⁷⁰ Այդ թվականներին Գ. Հովսեփյանը Ավետարանը դնում է գիտական շրջանառության մեջ՝ հատկապես կարևորելով մատյանի պատկերագրորդման առանձնահատկությունները: Իսկ 1984 թ. մատյանը ձեռագրագիտական քննության է ենթարկում Ա. Մաթևոսյանը: Տե՛ս՝ Գ. Հովսեփյան, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, էջ 254-290: Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, էջ 106-132:

¹⁷¹ Վազգեն Վեհափառի Ավետարանը, նմանահանություն, ուսումնասիրությամբ՝ Ա. Մաթևոսյանի և Տ. Իզմայլովայի, Երևան, 2000: Տե՛ս նաև՝ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Ա. Մալխասյան, Երևան, 2007, էջ 199:

¹⁷² Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դար, Երևան, 1988, էջ 115:

թալանվում է նաև Ավետարանը: Թշնամին, չարժևորելով մատյանը, տանում է միայն արծաթյա կազմը և թաշկինակը, որով փաթաթում էին ձեռագիրը՝ թողնելով անկազմ մագաղաթյա Ավետարանը: 1720 թվականին հարևան Նյուկ-գար գյուղի բնակիչների կողմից կրկին փրկագնվում է մատյանը, նորոգվում ու կազմվում: 1729 թվականին ձեռագիրն ստանում է Շահոն և նվիրում Խաղավանքին: 1978 թվականին Ավետարանը Մանիկ և Թադեոս Անտիկյաններից ձեռք է բերում Վազգեն Վեհափառը և «ի վայելումն Ազգիս Հայոց» նվիրում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանին¹⁷³:

Հաթերքը¹⁷⁴ վիմագիր արձանագրություններում և ձեռագիր հիշատակարաններում հաճախ է հանդիպում: Հաթերքի տերն էր իշխանաց իշխան Հասանը, որ Դադիվանքի արձանագրության համաձայն 40 տարի (1142-1182) վարել է իշխանությունը և բազում անգամ հաղթել պատերազմներում¹⁷⁵: Հասանի մահից հետո՝ մինչև 1214 թվականը իշխանությունը վարել է նրա ավագ որդի Վախթանգը՝ «յաշխարհն Խաչենոյ առ Վախտանկ՝ իշխանն Հաթերքոյ»¹⁷⁶, ով նաև մշակույթի մեծ նվիրյալ էր: 1184 թվականին Մխիթար Գոշը, Աղվանից Ստեփաննոս կաթողիկոսից հալածական, հանգրվանել էր Հաթերքում՝ Հաթերքի գահերեց իշխան Վախթանգի ապարանքում: Այդ մասին նա հաղորդում է Դասնո անապատում գրած Դատաստանագրքի հիշատակարանում. «...ի թուականութեանս Հայոց Ուր (1184)... ի կողմանս Խաչենոյ՝ ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ՝ որդւոյ Վախտանգայ կրանաւորեցելոյ, եւ որդւոյ նորա Վախտանգայ ի դիւելին, որ անուանեալ կոչի Հաթերք»¹⁷⁷: Սա Դատաստանագրքի վաղագույն օրինակն է, որ այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում և

կրում է 993 թվահամարը: Մատյանը գրված է երկաթագրով, մուգ բամբակյա թղթի վրա, առանց զարդարանքի, փոխարենը ունի բնագրի թանաքով բազմաթիվ հանգուցազծեր: Չնայած բանասերների կողմից բազմիցս վիճարկված լինելուն՝ Սահակ վարդապետը, հենց գրի տեսակն ու գրչության ձևը նկատի ունենալով, կարծում է, որ մատյանը Մխիթար Գոշի ինքնագիրն է¹⁷⁸: Մատյանը բավարար վիճակում է, խոնավության հետքերով, գրությունը մասամբ վնասված, սկզբից, միջից և վերջից որոշ թերթեր կտրված հանված են, սակայն «ընդհանուրին մեջ պատկանելի է իր հնութեամբ»: Իր ողջ կյանքում Մխիթար Գոշը միշտ էլ երախտագիտությամբ է հիշել իշխան Վախթանգին, նրա եղբայրներին ու իշխանուհի Արզուխաթունին, որոնք 1191-1196 թվականներին կառուցում են Նոր Գետիկավանքի գլխավոր Սբ. Աստուածածին եկեղեցին և նվիրում Մխիթար գիտնական-վարդապետին¹⁷⁹՝ օժանդակելով միջնադարյան Հայաստանի մի նոր՝ բարձր տիպի ուսումնական կենտրոնի զարգացման, որը շատ կարճ ժամանակում ձեռք է բերում մեծ անուն ու համբավ¹⁸⁰: Որպես երախտիքի առհավատյալ՝ Մխիթարը իշխան Վախթանգին և իշխանուհի Արզուխաթունին է նվիրել Դատաստանագրքի վաղագույն օրինակը՝ հետևյալ ընծայականով. «Յիսուս Բրիստոս, յորժամ գաս ի նորոգել գերկիր, նորոգեա հոգւով եւ մարմնով զաստուածաւեր իշխանն իշխանաց զՎախտանգ և զամուսին իւր զԱրզուխաթունն ի կեանս անմահս եւ ի ներկայիս առանց փորձանաց պահեսցես զաւակաւք հանդերձ եւ ամենայն ընտանեաւք, եւ բազում առատ ողորմու-

¹⁷³ Վազգեն Վեհափառի Ավետարանը, էջ 555-572:

¹⁷⁴ Գավառը, որ աղբյուրներում Մ. Բարխուդարյանը կոչում է նաև Ըռստակ, Ըռստիսական, տարածվում է Թարթառ գետի և Եանշաղ վտակի ձախ և Թրդի գետակի աջ ափերի միջև: Տե՛ս Արցախ, էջ 200, Արցախի վանքերը, էջ 95:

¹⁷⁵ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 198:

¹⁷⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 209:

¹⁷⁷ Մ. վրդ. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, Վենետիկ, 1996, էջ 328: Տե՛ս նաև Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 505, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժԲ դար, էջ 243:

¹⁷⁸ Մ. վրդ. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, էջ 326:

¹⁷⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 215:

¹⁸⁰ Նոր Գետիկի՝ աղբյուրներում վարժարան, վարժապետարան, համալսարան, ճեմարան անվանված դպրոցում ուսուցանվել են հայոց լեզու, հունարեն, լատիներեն, քերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ և նկարչություն: Դպրոցը ժամանակի առաջադեմ ուսումնական կենտրոններից էր, իսկ նրա ուսուցչապետը ժամանակի նշանավոր աստվածաբաններից մեկը: Մխիթար Գոշի՝ որպես գիտնականի և մանկավարժի համբավն ու փառքն էլ ավելի է տարածվում, և կրթություն ստանալու նպատակով այստեղ է բերում շատ ուսումնաստեղների, նրանց մեջ նաև հայ մշակույթի նշանավոր գործիչներ Վանական Վարդապետին, Վարդան Արևելցուն և Կիրակոս Գանձակեցուն, որոնք հետագայում իրենց հիմնած դպրոցներում շարունակել են Նոր Գետիկավանքի բարձր տիպի դպրոցի ավանդները:

թեամբ քո ողորմեսցիս ննջեցելոց նոցա» (թերթ 299ա)¹⁸¹, և ցանկացել. «Աստուած վայելել տացել աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ՝ որդւոյ Հասանայ, ի կամս իւր զԳիրքս դատաստանի, անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին» (թերթ 52բ)¹⁸²:

ԴԱԴԻՎԱՆՔ

Արցախի գրչության կարևոր կենտրոններից էր Դադիվանքը¹⁸³: Վանքն անունն ստացել է Թադեոս առաքյալի աշակերտ Դադիի կամ Դադոյի անունից, որն Արցախում քարոզել է քրիստոնեություն և այնտեղ էլ նահատակվել. «Դադին մի եւ Թադէի ի Մեծն Հայք կողմանս... և եմուտ ի Փոքր Միւնիք և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ Դադիու»¹⁸⁴: Վանքի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ենթադրվում է, որ այն կառուցվել է 4-5-րդ դարերում, իսկ աղբյուրներում հիշատակվում է 9-րդ դարից¹⁸⁵: Առաջին գրավոր տեղեկությունը հաղորդում է Մովսես Կաղանկատվացին. «ի Խորածորն, որ կոչի Դադոյի վանք»¹⁸⁶: Վանքը Հաթերքի հոգևոր կենտրոնն էր և Վախթանգյան տոհմի դամբանատունը, ունեցել է ժամատուն, զանգակատուն, մատենադարան, մի քանի մատուռ, գինետուն, հյուրանոց¹⁸⁷: 12-րդ դարից Դադիվանքը դառնում է եպիսկոպոսանիստ: Վախթանգյան տոհմից են եղել նաև վանքի առաջնորդները: Որպես առաջնորդներ հիշվում են Վախթանգի որդի Գրիգորիսը, Աթանասը, Վասակը, Հասան կրոնավորի որդի Գրիգորիսը, Գրիգոր եպիսկոպոսը՝ «որդի նահատակին Վասակա»¹⁸⁸, Սարգիսը, Պետրոս րաբունապետը:

¹⁸¹ **Ս. վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, էջ 329:

¹⁸² **Ս. վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 2, էջ 329: **Հ. Ոսկեան**, Մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 152-153:

¹⁸³ Դադիվանքը աղբյուրներում կոչվել է նաև Խուրթա վանք՝ խութի՝ բլրի վրա կառուցված լինելու պատճառով: Կոչվել է նաև Գոթայ վանք:

¹⁸⁴ **Միխայել Ասորի**, Ժամանակագրութիւն, Երևան, 1871, էջ 33:

¹⁸⁵ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 197:

¹⁸⁶ **Մովսես Կաղանկատուացի**, էջ 340:

¹⁸⁷ Արցախ, էջ 205-206:

¹⁸⁸ Գրիգոր եպիսկոպոսի անունից արձանագրություններ կան ԺԳ դարի 20-ական թվականներից մինչև դարի կեսերը: Գրիգորը 1224 թ. Դադիվանքի առաջնորդ ձեռ-

Մխիթար վարդապետը վկայում է, որ Չոյի գորպայետի արշավանքներից ավերվել ու թալանվել է նաև Դադիվանքը, գերեվարվել են ձեռագիր մատյաններն ու եկեղեցական սրբությունները. «Այրեաց և զառաքելադիր ուխտ սրբութեան, որ կոչուի Դադուի վանք»¹⁸⁹:

1145 թվականի թշնամու ասպատակություններից ավերված վանքը վերակառուցվում է 1170-ական թվականներին: 1214 թվականին Վախթանգ իշխանի կին և Քուրդ իշխանի դուստր Արգուխաթունը ամուսնու և երկու ուստրերի հիշատակին կառուցել է տալիս վանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին՝ հարավային պատին Հասան և Գրիգոր որդիների քանդակներով, իսկ արևելյան ճակատին Դադեի և Վախթանգ իշխանի պատկերաքանդակներն են: Արգուխաթունը զբաղվում էր նաև ասեղնագործությամբ: Իր աղջիկների հետ նա ասեղնագործել է Դադիվանքի, Հաղբատի, Նոր Գետիկի, Մակարավանքի խորանների վարագույրները: Կիրակոս Գանձակեցին, բարձր գնահատելով դրանց արվեստը, համեմատում է Բեսելիելի և Եդիաբի նկարների հետ: Ըստ պատմիչի՝ ովքեր տեսնում էին այդ նրբարվեստ վարագույրները, Աստծուն օրհնություն էին տալիս, որ կանանց այդպիսի «ոստայնանկության իմաստություն և նկարակերտության հանճար է տվել...»¹⁹⁰:

Մինչև 16-րդ դարի կեսերը Դադիվանքի գրչակենտրոնին վերաբերող տվյալներ չունենք:

16-17-րդ դարերում իրենց գործունեությամբ Դադիվանքի հետ են կապվում Վերին Խաչենում հայտնի երկու Ծարեցի Հովհաննեսները: Երկրորդ Հովհաննեսը առաջինից տարբերվելու համար հանախ իրեն կոչում էր «Փոքր Հովհաննեսիկ»¹⁹¹: Նա առաջինի եղբոր թոռն էր, և առավել հայտնի է Հովհաննեսիկ Ծարեցի անունով:

նաղբվելու առիթով կառուցել է ժամատուն՝ թողնելով արձանագրություն. Տե՛ս **Ս. Տեր-Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դադի եկեղեցիները և վանական շինությունները, Երուսաղեմ, 1931: Վասակը Հաթերքի տեր և Խաչենի գահերեց իշխան Հասանի վեց որդիներից երկրորդն էր, որը 1201 թվականին նահատակվել է թուրքմեններից Սյունյաց Գոլաշոյան բերդը առնելու ժամանակ: Այդ մասին Խաղավանքում պահպանվել է արձանագրություն: Տե՛ս Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 129, նաև՝ **Յովհ. եպո. Շահխաթունեանց.**, Ստորագրութիւն ..., հ. Բ, էջ 363, Արցախ, էջ 196:

¹⁸⁹ **Մխիթար Գոշ**, Ժամանակագրութիւն, էջ 608:

¹⁹⁰ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 215-216:

¹⁹¹ ՄՄ ձեռ. 2776, թերթ 266ա:

Ավագ Հովհաննես վարդապետ Ծարեցին ծնվել է Ծար գյուղաքաղաքում: Այստեղից էլ նրա Ծարեցի մականունը: Նրա ծննդյան թվականը հայտնի չէ: Հովհաննես վարդապետը ժամանակի հայտնի հոգևոր գործիչներից էր, ընթերցասեր ու գրասեր մարդ, որի վարդապետական ողջ գործունեությունն անցավ Դադիվանքում: Նրա մասին սակավ, բայց հավաստի կենսագրական տեղեկություններ ենք ստանում Հովհաննեսիկի Ժամանակագրությունից: Ծարեցի Ջհանշահի որդի Հովհաննեսը աշակերտել է Ղուկաս վարդապետ Հաղբատեցուն, եղել Հովհաննեսիկի ուսուցիչը: Վերջինս միշտ էլ երախտագիտությամբ է հիշել Հովհաննես վարդապետ րաբունապետին, ով շատ հոգատար է եղել իր սանի նկատմամբ: Հովհաննեսիկը գովասանքով է խոսում պապեղբոր մասին՝ անվանելով նրան «յոյժ սրբասեր եւ աստուածասէր, հեզ եւ աղոթող, քարոզող յուղղափառաց եւ յանդիմանող ըստահակաց, սիրող ուղղութեանց եւ պատուող տոնախմբութեանց, յոյժ ընթերցասէր եւ գրասէր»¹⁹²: Հովհաննես Ծարեցին վախճանվել է 1583 թվականին և թաղվել Գեղամա երկրի Վասկաշեն գյուղի Սբ. Աստուածածին եկեղեցում՝ Սարգիս վարդապետի կողքին¹⁹³:

Մելքոնի որդի Հովհաննեսի մասին (կոչված Հովհաննեսիկ) պահպանված տեղեկություններն ավելի շատ են: Զանի որ Հովհաննեսիկը հիշատակարաններում իրեն կոչում է նաև Հովհաննես, հաճախ շփոթություն է առաջացել ավագ և կրտսեր Հովհաննեսների միջև: Հովհաննեսիկը ծնվել է 1560 թվականին, կրթություն ստացել է Դադիվանքում՝ նախ՝ Հովհաննես վարդապետի մոտ, ապա աշակերտել անվանի րաբունապետ Ներսես Գնունեցուն, ստացել է վարդապետական աստիճան, եղել Դադիվանքի միաբան: Պատմության մեջ նա հայտնի է իր Ժամանակագրությամբ, որը պահպանվել է Մատենադարանի 2776 (թերթ 266ա-271ա) և 8245 (թերթ 93ա-95բ) ձեռագրերում: Մերը կրթության ու դպրության նկատմամբ Հովհաննեսիկը ժա-

ռանգել էր պապեղբորից, ումից անբաժան մնաց իր ամբողջ կյանքում: Գրավոր աղբյուրները Հովհաննեսիկի մասին հաղորդում են, որ նա Դադիվանքում ոչ միայն գրել է, այլև ստացել ու նորոգելու է տվել ձեռագիր մատյաններ՝ հարստացնելով վանքի մատենադարանը: Այսպես՝ 1381 թվականին Սարգիս քահանայի գրչագրած մատյանը, որ Վարդան Արևելցու Հնգամատյանի մեկնության օրինակն է, 1583 թվականին ստանում է Հովհաննեսիկը և հիշում նախ Հովհաննես Ծարեցի «քաջ րաբունապետին», ապա իրեն՝ Փոքր Հովհաննեսիկին, որ է «եղբոր թոռ» և սպասաւոր նորին» (ՄՄ ձեռ. 1136, թերթ 2բ): 1411 թվականին Ապրակունյաց վանքում Մատթեոս Ջուղայեցու օրինակած Ավետարանը դարձյալ ստացել է Հովհաննեսիկ Ծարեցի վարդապետը և բոլորգրով թողած հիշատակարանում նորից հիշել իր ուսուցիչ Հովհաննես «մեծ րաբունապետին» (ՄՄ ձեռ. 2519, թերթ 3բ): 1588 թվականին Հովհաննեսիկը նորոգելու է տալիս Վարդան Արևելցու «Երգ երգոցի» մի օրինակ և ընդգծում իր՝ Առանշահիկ տոհմից սերված լինելը. «Ես Յոհաննէս՝ անպիտան թափառ և յետնեալս ամենայն բանասիրաց ի Սբ. ուխտէն Թաղէի վանք կոչեցեալ՝ ի յերկրէն Ծարա՝ ի տանէն Սիսակայ յաշակերտ մեծ րաբունապետին Ներսէսի Գնունեցոյն... տեսի զՍաղմոսի մեկնիչս և զԵրգ երգոցս հնացեալ բազում ժամանակաց և յոլով թու/տ պակասեալ, յանարժան ձեռովք իմ ծրեցի նօտրիկս և նորոգեցի ի վայելումն յանձին իմոյ և յիշատակ ինձ և կրկնակի ծնողացն իմոց՝ հօրն իմ՝ Մելքոնին և մօրն իմ՝ Փիանդին»¹⁹⁴: Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի»՝ 15-րդ դարում Պետրոս երեցի օրինակած մատյանը 1594 թվականին ստանալով Հովհաննես Ծարեցի վարդապետը մատյանի մի քանի էջերում թողել է հիշատակագրություններ. «Չվերջին ստացող սուրբ գրոցս զՅոհաննէս վարդապետ կոչեցեալս ի յերկրէն Ծարայ՝ ի վանիցն Դադիու Սբ. Առաքելոյն»: Հովհաննես վարդապետը դարձյալ չի մոռանում իր ծնողներին՝ Մելքոնին և Փիանդին և հանգուցյալ եղբո-

¹⁹² ՄՄ ձեռ. 2776, թերթ 268բ: Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, Երևան, 1956, էջ 244-245:

¹⁹³ ՄՄ ձեռ. 2776, թերթ 268բ: Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 245:

¹⁹⁴ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 237:

րը՝ Յուլիանին (Երուսաղեմ, ձեռ. 2208)¹⁹⁵: 1451 թվականին Սևանում Դանիել արեղայի օրինակած մատյանը 1606 թվականին ստանում է Հովհաննեսիկը և հիշատակարանում կրկին հիշում իր ծնողներին: Ուղիղ մեկ դար հետո՝ 1708 թվականին, Հովհաննեսի հիշատակարանից անմիջապես հետո հիշատակ է թողել Թովմաս վարդապետը. «...որ եմ վերոգրեալ վարդապետի հորեղբոր թոռն...դրանս Թադէի Սր. Առաքելոյ աստուածափառ վանիցս» (ՄՄ ձեռ. 1301, թերթ 23բ): Թովմասը ձեռագիրը վաճառել է տեր Միմոնին:

Վիմագիր աղբյուրները խոսում են նաև Հովհաննեսիկի եկեղեցաշեն գործունեության մասին. համաձայն Գեղարքունիքի Սողբ գավառի Աղբիլիսա¹⁹⁶ գյուղի Սր. Աստուածածին վանքի մի արձանագրության, որը պահպանվել է գավթի հարավային մուտքի կամարակապ քարի վրա, եկեղեցին 1618 թվականին կառուցել է Հովհաննեսիկ Ծարեցին. «Ի թվին ՌԿԷ (1618)... ես՝ Յովհաննես վարդապետ շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և կրկնակի ծնողաց իմոց»¹⁹⁷: Եկեղեցու հարավային պատին եղած մեկ այլ՝ ավելի ընդարձակ արձանագրության մեջ, որտեղ Հովհաննեսիկը նշում է իր տոհմակույնները, կրկին հաստատվում է այս փաստը. «Ես՝ Յովհաննես վարդապետ՝ որդի Մելքոնին որդւոյ Միրզաջանին՝ որդւոյ Չհանշահի՝ յորդւոյ Պոռոշոյ՝ յորդւոյ Հասանայ՝ որդւոյ մեծ Ծահնշահի՝ որդւոյ Սարգսի՝ թոռնեայն Դոփայ՝ քոյր Մեծին Իւանէի եւ սպասալար Չաքարէի... յոյժ ջանիւ եւ մեծ յուսով եւ բազում փափագանալք շինեցինք զՍուրբ Աստուածածինս բարեխաւս եւ փրկութիւն հոգւոց մերոց եւ ծնողաց իմոց՝ Մելքոնին և Փիանդին եւ բազմերախտ ուսուցանո-

ղին իմոյ Յովհաննես թարունապետին»¹⁹⁸: Այս արձանագրության մեջ Հովհաննեսիկը նորից է հիշում ծնողներին և ուսուցչին:

Հովհաննեսիկի մահվան թվականը հայտնի չէ. համաձայն մի կարվածագրի, որտեղ պահպանվել է Հովհաննեսիկի կնիքը, նա 1621 թվականին դեռ կենդանի էր¹⁹⁹: Ենթադրվում է, որ Հովհաննեսիկը մահացել է 1623 թվականից ոչ ուշ²⁰⁰, որովհետև այս թվականից արդեն Ժամանակագրության տերն էր նրա եղբայր Թովմաս վարդապետը²⁰¹:

Հովհաննեսիկի Ժամանակագրությունը ընդգրկում է 18 տարվա ժամանակահատված՝ 1572-1600 թվականների իրադարձությունները: Բնագրում նկարագրված են թուրք Մուստաֆա Լալա փաշայի 1578 թվականին Անդրկովկաս կատարած արշավանքներն ու պատերազմները, 1579-1580 թվականներին Ատրպատականում և Աղվանքում մոլեգնող սաստիկ սովն ու մահտարածամը, 16-րդ դարավերջին վրաց ժողովրդի ազատագրական պայքարը Օսմանյան Կայսրության դեմ, պարսից Խուդաբանդա շահի, սպա Ծահ Աբասի վարած քաղաքականությունը: Իբրև դեպքերի ականատեսի ու ժամանակակցի՝ Հովհաննեսիկի հաղորդած տվյալները արժանահավատ են և ունեն պատմական ու աղբյուրագիտական արժեք:

Հովհաննեսիկի ժամանակագրությանն առաջին անգամ անդրադարձել է Առաքել Դավրիժեցին՝ այն որպես առանձին գլուխ տեղադրելով իր Պատմության մեջ՝ «Պատմութիւն Աղվանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննես վարդապետին» վերնագրով²⁰²: Չտարբերելով Չհանշահի և Մելքոնի որդիներ Հովհաննեսներին՝ Ծարեցի Յովհան վարդապետ է ճանաչում նաև Չաքարիա Սարկավազը²⁰³, Մ. Չամչյանը՝ Հովհաննես Ծարեցի²⁰⁴: «Յովհաննիսիկի վարդապետի համառօտ պատմութիւն անցից անցելոց ի

¹⁹⁵ Տե՛ս Ե. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, էջ 282:

¹⁹⁶ Այժմ գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանում և վերանվանվել է Ազատ: Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1, էջ 203:

¹⁹⁷ Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, պր. IV, կազմ.՝ Մ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 369, Մ. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1896, էջ 628:

¹⁹⁸ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 74, Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք..., պր. IV, էջ 371:

¹⁹⁹ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 238-239: Յ. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 24:

²⁰⁰ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 403:

²⁰¹ ՄՄ ձեռ. 2776, թերթ 32բ:

²⁰² Առաքել Դավրիժեցի, էջ 605-619:

²⁰³ Չաքարիա Սարկավազի Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 12:

²⁰⁴ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Երևան, 1984, էջ 531:

վերին կողմանս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան» վերնագրով հենց Հովհաննիսի կի ինքնագրից 1859 թվականին հրատարակում է Մ. Մսերյանը՝ բնագրին կցելով տեղեկություններ հեղինակի և նրա երկի մասին²⁰⁵, որով հերքում է Մ. Չամչյանի այն տեսակետը, թե երկի հեղինակը 1583 թվականին մահացած Հովհաննես Ծարեցին է²⁰⁶: Ք. Պատկանյանի մոտ ժամանակագրության հեղինակը կոչվում է Օհան Ծարեցի, որը գրել է «Աղվանից երկրի համառոտ ժամանակագրությունը 1571-1600 թվականներին»²⁰⁷: 1893 թվականին Ա. Տեր-Միքելյանը Սամուել Անեցու ժամանակագրության հրատարակության ծանոթագրության հավելվածում հրատարակում է Հովհաննեսիկի ժամանակագրության բնագիրը²⁰⁸: Ղ. Ալիշանի կարծիքով ժամանակագրության հեղինակը ավագ Հովհաննեսն է, իսկ Հովհաննեսիկը շարունակել է նրան²⁰⁹: Հարցը վերջնականապես լուծում է Վ. Հակոբյանը, ըստ որի՝ ժամանակագրության հեղինակը Հովհաննեսիկն է²¹⁰:

Ժամանակագրության բնագիրը, որը Հովհաննեսիկի ինքնագիրն է, հետագայում մուծվել է 1334 թվականի մի ձեռագրի մեջ (ՄՄ ձեռ. 2776, թերթ 266ա-271ա, գրիչ՝ Գրիգոր երեց, ստացող՝ Եղիա արքեպիսկոպոս)²¹¹: Ինչպես է 17-րդ դարի բնագիրը տեղ գտել երկուսուկես դարից ավելի հեռավորություն ունեցող հին ձեռագրի մեջ: Սույն մատյանը Ժողովածու է և բովանդակում է Մխիթար Գոշի Դատաստանագրի մի ընդօրինակություն՝ հիշատակարաններով (թերթ 1ա-176դ), Հովհաննեսիկ Ծարեցու ժամանակագրությունը՝ հեղինակի հիշատակարանով (թերթ 266բ-71ա), և Դադի վանքի «քոթուկից» 12-13-րդ դարերի մի պատառիկ (թերթ 271ա-73բ), որ հիմնական մատյանից պոկվել և կցվել է ձեռագրին ու փրկվել կործանումից:

²⁰⁵ «Ճառարադ», Մոսկվա, 1859, հ. Ա, տետրակ Գ, էջ 69-76, տետրակ Դ, էջ 105-112:

²⁰⁶ Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հ. Գ, էջ 531:

²⁰⁷ «Փորձ», 1880, թ. 1 հավելված, էջ 35:

²⁰⁸ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 235:

²⁰⁹ Ղ. Ալիշան, Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 129:

²¹⁰ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 236:

²¹¹ ՄՄ ձեռ. 2776, թերթ՝ 273, նյութ՝ թուղթ, 22 × 15,8, գիր՝ բոլորգիր, տող՝ 21-33:

Ըստ հիշատակարանի՝ Հովհաննեսի եղբայր Դավիթ երեցը Մխիթար Գոշի Դատաստանագիրքը 1531 թվականին ձեռք է բերել «որպես աստուածային յիշատակ» իրեն ու ծնողաց՝ հորը՝ Ջհանշահին և մորը՝ Մուսամփաշային, որը հետո «սրտի կամոք» նվիրել է իր եղբայր Հովհաննես վարդապետին (թերթ 32աբ): Ստանալով մատյանը՝ Հովհաննեսն իր ձեռքով 258բ էջին հիշատակարան է գրել՝ խնդրելով չմոռանալ իրեն. «ԸզՅովհաննեսս Ծարեցի, / Կարմիրս, որ սեաւ ես խառնեցի, / Յիշել խնդրեմ զիս ի բարին...»: Մատյանը հետո ժառանգաբար անցել է Հովհաննեսիկին, որն էլ 1600 թվականին այն նորոգելու է տվել Ալեքսանոս կրոնավորին՝ միացնելով նաև իր ժամանակագրությունը և Դադիվանքի «քոթուկի» պատառիկը: Հովհաննեսիկը իր իսկ ձեռքով գրած հիշատակարանում դարձյալ հիշում է իր տոհմակույնները. «Ես՝ մեղուցեալ Ծարեցի Յոհաննես վարդապետս՝ որդի Մելքոնի՝ որդոյ Միրզազանին՝ յորդոյ Ջհանշահի, որոյ որդին մեծ վարդապետն Յոհաննես ի ՋՁ (1531) թվին ստացել է այս սուրբ Գիրքս դատաստանաց» (թերթ 266ա): 266բ էջի հիշատակագրության մեջ Հովհաննեսիկը պատեղբայր Հովհաննեսին հիշում է բոլորից առաջ և անվանում «մեծ վարդապետ». «Յիշեալ գմեծ վարդապետն Յոհաննես եւ զիս՝ զՓոքր Յոհանիսիկս եւ զիմ ծնողքն»: Հովհաննեսիկից հետո մատյանը պատկանել է Թովմաս վարդապետին, ով 3բ էջին 1723 թվականին թողած հիշատակագրության մեջ իրեն համարում է «եղբոր որդի վերոծրեալ բարունապետին Յոհաննեսի»:

1694 թվականին Դադիվանքում Պետրոս բարունապետի առաջնորդության տարիներին գրվել է մի Ավետարան²¹²:

1699 թվականին Թովմա վարդապետը «ի կողմանս Միւնեաց հրեշտակաբնակ եւ գեղեցկանկար Սբ. աթոռոյս Դադէի վանիցս եւ սորին յառաջնորդ տեսոն Չաքարիայ յոզնահաննար բարունապետի» օրինակում է մի Ժողովածու²¹³:

Ոչ մեծ թվով ձեռագրեր են հասել Վերին Խաչենի այլ վայրերից:

Վկայություն է պահպանվել այն մասին, որ 1387 թվականին Սարգիս վարդապետը Ծար գյուղաքաղաքում ավարտում է մի Ավետա-

²¹² Արցախի վանքերը, էջ 110:

²¹³ ՄՄ ձեռ. 8505, թերթ՝ 249, նյութ՝ թուղթ, 16,1 × 10,5, գիր՝ նտրգիր, տող՝ 22-24:

րան²¹⁴: Թուման Ծարում գրում ու ծաղկում է մեկ ուրիշ Ավետարան²¹⁵: Ծար գավառի **Քարվաճառ** գյուղում 1402 թվականին Հունան կուսակրոն քահանան իր ծնողների Առաքելի և Մինախաթունի հիշատակին Թումա Սյունեցուց խնդրել և ստացել է Գրիգոր Տաթևացու Մատթեոսի Ավետարանի մեկնությունը²¹⁶: Խոշորությամբ ու սխալների համար գրիչը անմեղադրություն է խնդրում: Մատյանը գրվել է «ի հայրապետության Հայոց և Աղուանից երկոցունց տերանց Կարապետք կոչեցելոց... և յարհեպիսկոպոսութեան այսմ նահանգիս Չաքարիայի Դադիվանուց վերատեսչի ի հոչակաւոր երկիրս Ծար՝ ի գեղս Քարվաճառ» (թերթ 293բ):

Գրիչ Թովման Ծարի **Գետամեջի** Սր. Աստուածածին եկեղեցում արտագրում է Ճաշոց 1411 թվականին, որի հիշատակարանում գրչության վայրի մասին նշվում է. «Ի սուրբ եւ հոչակավոր վանքս Գետամիջոյ, ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս եւ Մարդաղօնեաց սուրբ Ստեփանոսիս»²¹⁷: Նույն տեղում Վրթանես քահանան ծնողների՝ Մուրատ աղի և Սառայի հիշատակին Թովմա կրոնավորից 1456 թվականին խնդրում ու ստանում է Ավետարան²¹⁸: 1661 թվականին Գետամիջի վանքում մահացած ամուսնու հիշատակին Խանումը Հովհաննես երեցից խնդրում և ստանում է Ավետարան²¹⁹:

1652 թվականին **Ապահեն** գյուղում՝ «ի յերկիրս Ծարայ, ի գեղս, որ կոչի Ապահեն» Մովսես Գորիսեցին օրինակել, տերունական պատկերներով, բազմաթիվ ճակատագրադրերով ու լուսանցազարդերով ծաղկել ու կազմել է մի Ծարակնոց «ի յԱղվանից հայրապետութիւն Գրիգորի կաթողիկոսի եւ յառաջնորդութեանն տեր Ստեփաննոս արհեպիսկոպոսի, որ է սպասաւոր

եւ ժրաջան հովիւ ի Սր. Դադիվանիցն եւ Մարդաղանեաց Սր. Նշան» (ՄՄ ձեռ. 1626, թերթ 406բ)²²⁰: Մովսեսը 1647 թվականին «ի յերկիրն Ծարայի մայրաքաղաքն Սոթէի» նորոգել էր 1490 թվականին Ալեգսիանոս արեղայի՝ Գարդմանքի Խորոտկա վանքում գրչագրած Ավետարանը (ՄՄ ձեռ. 8135)²²¹:

Նորընծա քահանա տեր Թադեոսը 1653 թվականին «ի յերկիրս Ծարայ ի գեաւոս Մոս» Մարտիրոս «Խնծորեկցի» դպրին գրել է տվել Ավետարան՝ որպէս բարի հիշատակ իրեն ու ծնողներին: Մատյանը Մովսես երեցը ծաղկագարդել ու կազմել է, փեղկին մետաղյա ակնակուռ խաչ դրել²²²:

ՄՄ 2577 մագաղաթյա Ավետարանը օրինակվել է 1655 թվականին ձեռամբ Թամուր դպրի «ի արքայանիստ և մեծահոչակ քաղաքս Կոստանդնուպոլիս» ի դուռն Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն» «ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մահմատին որդոյն սուլթան Իպրահիմին» (թերթ 230ա)²²³: Վաճառական Մարտիրոս Փառակեցին ստանում է մատյանը և նվիրում իր ծնողների ու նախնյաց հիշատակին և 329ա-ում թողած հիշատակարանում խնդրում է հիշել բոլոր մերձավորներին: Գլխավոր հիշատակարանում գրիչը ակնածանքով հիշում է երկու երևելի այրերի՝ Փիլիպոս սրբազանին, որ հայտնի է իր շինարարական գործունեությամբ և բազմաթիվ վանքեր ու անապատներ է նորոգել, և ռաբունապետ Հակոբ վարդապետին: Ծաղկագարդումը «գունգոյն ծաղկոք, ոսկով ու պատկերոք» կատարել է Մատթեոս դպիրը, որը ծնունդով Ծարա երկրի Չափար գյուղից լինելու պատճառով կոչվել է Չափարցի: Համադրելով գրեթե բոլոր գույների բաց ու մուգ երանգները՝ ճաշակով ու բարձր արվեստով է Մատթեոսը նկարել տերունական և ավետարանիչների պատկերները, կատարել խորանների ու

²¹⁴ Մ. Բարխուդարեանց, Աղվանից երկիր և դրախտիք, էջ 220:

²¹⁵ ՄՄ ձեռ. 8124, թերթ՝ 285, նյութ՝ թուղթ, 18 × 13,3, գիր՝ բոլորգիր, տող՝ 17-20:

²¹⁶ ՄՄ ձեռ. 3578, թերթ՝ 295, նյութ՝ թուղթ, 18 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 30:

²¹⁷ **Փիրղակեմեան**, Նօտարք, էջ 39-40, **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 122: Ճաշոցի արտագրության թվականը Հ. Ոսկյանը համարում է 1410 թվականը: Տե՛ս Արցախի վանքերը, էջ 10:

²¹⁸ **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1958, էջ 66: Արցախի վանքերը, էջ 162:

²¹⁹ Արցախի վանքերը, էջ 162:

²²⁰ ՄՄ ձեռ. 1626, թերթ՝ 406, նյութ՝ թուղթ, 12,2 × 9, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-20:

²²¹ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Գ, Երևան, 1984, էջ 261:

²²² ՄՄ ձեռ. 3647, թերթ՝ 353, նյութ՝ թուղթ, 16 × 11,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:

²²³ ՄՄ ձեռ. 2577, թերթ՝ 330, նյութ՝ մագաղաթ, 187,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Տե՛ս նաև՝ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Գ, էջ 654:

կիսախորանների, լուսանցագարդերի ու գարդագրերի նկարագարողումը: Նա եղել է Փիլիպոս Ա Աղբակեցի (1632-1655) կաթողիկոսի նոտարը: Հետո Մատթեոս Չափարցին գնացել է Երուսաղեմ, ապա Մտամբուլ, որտեղ աշակերտել է Մարկոս վարդապետին, նրանից էլ սովորել է ծաղկագարդելու արվեստը: Մատթեոս ծաղկողը հիշատակարանում խնդրում է հիշել իրեն և Մարկոս վարդապետին (թերթ 327բ): 1753 թվականին Ավետարանը պատկանել է Վարդանի որդի Մելիք Հակոբջանին, վերջինս էլ այն ընծայել է Սր. Վարդանա եկեղեցուն:

1663 թվականին «բարեմիտ ու մեծահավատ» Միմեոնի խնդրանքով Եսայի երեցը գրում և ծաղկում է Ավետարան՝ «ի յերկիրս Ծարայ, ի գեաւղն» (ՄՄ ձեռ. 4053, թերթ 301ա)²²⁴: Այստեղ հիշատակարանի վերջին թերթը մկրատված է, և անհայտ է մնում գրչության կոնկրետ վայրը: Այս ձեռագրի օրինակումից տասը տարի անց՝ 1673 թվականին, Եսայի գրիչը **Դաշտակ** գյուղում «ի յերկիրս Ծարայ՝ ի գեաւղս, որ կոչի Դաշտակ՝ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնին եւ Մարդադաւնեաց Սր. Նշանին և Սր. Յակոբին» ավարտում է տեր Բարսեղի պատվիրած Մաշտոցը²²⁵: Հավանաբար նախորդ ձեռագիրն էլ Եսային օրինակել է Դաշտակում:

Պետրոս րաբունապետը, որը «որդի գոյով ազատաց, յագգէն մեծի իշխանացն Գրիգորի եւ Հասանայ Դօբեանց», իր և հարազատ եղբոր՝ Գրիգոր եպիսկոպոսի հիշատակի համար 1684 թվականին՝ «դառն եւ անբարի ժամանակիս, յորում նեղիմք յանօրէն բռնաւորաց ծանր հարկապահանջութեանց» (ՄՄ ձեռ. 2067, թերթ 470բ), գրչուհի Վառվառեին «**ի յերկիրս Ծար Փոքր Սիւնիս**՝ կոչեցելոյ՝ ի սուրբ վանս Կուսանաց՝ ընդ հովանեաւ Դադէի Սր. Առաքելոյն եւ Սր. Կաթողիկէի եւ Սր. Աստուածածնին եւ ամենագոր Սր. Նշանին Մարդադաւնեաց» (թերթ 471ա) օրինակել է տալիս Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը»²²⁶: Վառվառեն վարպետ գրիչ է.

նա գրում է կոկիկ, մանր գրերով ու համաչափ: Գրչուհին ուշադրություն է դարձրել ոչ միայն ձեռագրի գեղագրության, այլև ստուգության վրա՝ խնամքով կատարելով նաև սրբագրումները, «գի օրինակն սխալ էր եւ անկիրթ գրչաց գրեալ»: Իսկ «ոսկիաբան» տեր Բարսեղը ծաղկագարդել է մատյանը գեղեցիկ լուսանցագարդերով ու գարդագրերով և կազմել այն: Բարսեղին օգնել է եղբայրը՝ Ղազար սարկավագը: Վառվառեն հիշում է ծնողներին՝ Մարտիրոսին ու Սողոմանադին, եղբորը՝ Հակոբին և հանգուցյալ եղբորը՝ Աստվածատուրին: Վառվառեին հիշատակ է Մկրտիչ արեղայի՝ Մայնանապատում 1485 թվականին օրինակած Ավետարանը²²⁷:

1671 թվականին Օղվերձում Պետրոս վարդապետի խնդրանքով Եփրեմ քահանայի օրինակած մագաղաթյա Ավետարանը 1684 թվականին դարձյալ Բարսեղ գրիչը ծաղկում ու կազմում է «ի յերկիրս Ծար, որ կոչի Փոքր Սիւնիս՝ ի գերահռչակ եւ ի հին հանդիսարանի Դադէի վանիցս ընդ հովանեաւ Սր. Առաքելոյն եւ Սր. Աստուածածնիս եւ ամենագոր Սր. Նշանիս Մարդադաւնեաց»՝ օգտագործելով ոսկի և հարուստ ներկապնակ²²⁸: Ավետարանի նկարագարողումը նախաձեռնել էր Գրիգոր քահանան, բայց 1676 թվականին նա վախճանվում է. տարիներ հետո հոր կիսատ թողած գործը շարունակում է որդին: Այդ մասին Բարսեղը հայտնում է 325բ էջում թողած հիշատակարանում. «Դարձեալ զծաղկող եւ զկազմող աստուածագարդ սուրբ Աւետարանիս զբազմաւեր եւ ամենավրէպ զԲարսեղ սոսկ քահանայս՝ որդի Գրիգոր քահանային, յոգնահանճար եւ ոսկիանկար քաջ քարտուղարին՝ ի յերկրէն Գանջակոյ՝ ի գեղջէն Քարահատու: Քանզի ի կենդանութեան իւրում ձեռնարկեալ էր նկարագրեալ սուրբ Աւետարանս... վճարեց զկեանս իւր հատուցանելով զպարտ բնութեանս... եւ ի մահուն ինձ աւանդեց անդարձիւ կատարել զայս եւ լալոտ աջօր յանձն առի իմում կարողութեանս եւ բազում աշխատանօք նկարագործել զայս աստուածագարդ

²²⁴ ՄՄ ձեռ. 4053, թերթ՝ 301, նյութ՝ թուղթ, 22 × 17, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

²²⁵ ՄՄ ձեռ. 3601, թերթ՝ 230, նյութ՝ թուղթ, 18 × 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

²²⁶ ՄՄ ձեռ. 2067, թերթ՝ 474, նյութ՝ թուղթ, 24,5 × 19, գիր՝ բոլորգիր, տող՝ 44:

²²⁷ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Գ, Երևան, 1967, էջ 74: Արցախ, էջ 143:

²²⁸ ՄՄ ձեռ. 7232, թերթ՝ 327, նյութ՝ մագաղաթ, 12 × 9,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-21:

սուրբ Աւետարան»։ Քանի որ հայրը վարպետ ծաղկող էր, և նրան շարունակելը խիստ պատասխանատու, Բարսեղից մեծ հմտություն ու ջանք է պահանջվել, ուստի այս մատյանում նա նկարել է կաղապարներով։ Բարսեղն ստեղծել է քսանչորս տերունական նկար, ավետարանիչների պատկերներն՝ անվանաթերթերով, խորանները և կիսախորանները։

Ծարը կամ Վերին Խաչենը աղբյուրներում կոչվել է նաև **Փոքր Սյունիք**։ Փոքր Սյունիք անվանաձևը առաջին անգամ հանդիպում ենք Վանական վարդապետի մոտ՝ Դադիվանքի անվանակոչության հետ կապված. «Դադիում յեթանասնիցն, որ գնաց հրամանաւ ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ գմահն Աբգարու եւ դարձեալ եմուտ ի **Փոքր Սիւնիս**, եւ կրունաւորեալ անդէն ծածկարար՝ վանառեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ Դադիում»²²⁹։ 14-րդ դարից արդէն Փոքր Սյունիք տեղանվանումը այս տարածքի համար դառնում է առավել գործածական։ Վառվառեն և Բարսեղը ձեռագրեր են օրինակում «**ի յերկիրս Ծար, որ կոչի Փոքր Սիւնիս**», Գրիգոր Դոփյան իշխանը իրեն համարում է «տէր եւ պարոն **Փոքր Սիւնեաց**, Հանդաբերդոյ եւ Ականոյ եւ բարձր լեռանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Ծաղուագայ»²³⁰։ 1430 թվականին Դոփյան իշխանագուհից Սայտին խաչքար է կանգնեցնում հետևյալ արձանագրությամբ. «Ես՝ Սայտի՝ որդի պարոն Ծանշին՝ քաջ եւ յաղթող զաւրաւարին եւ մեծ իշխանաց յազգէն եւ ի թուին ՊՀԹ (1430) տեղեացս տէր եւ պարոն **Փոքր Սիւնեաց**, Ականայ, Հայթերքոյ եւ Հանդաբերդոյ եւ ծովակին Գեղամայ, Սոթից մինչեւ ի Ծաղվաքայ կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Ծանշին»²³¹։ Հովհաննես սիկը Հովհաննես Ծարեցու մահվան առիթով գրում է. «Ի սոյն (1583) թվականին եղեւ վախճանք մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհաննիսի։ Եւ զի էր նա **ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս** կոչեցելոյ, ի վանիցն Դադիու Սուրբ յԱռաքելոյն»²³²։

²²⁹ Գիրք թղթոց, Տփլիս, 1901, էջ 536։ Տե՛ս նաև՝ **Միխայել Ասորի**, Ժամանակագրություն, էջ 33։

²³⁰ ՄՄ 2743, թերթ 183ա։ Տե՛ս նաև՝ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., էջ 84։

²³¹ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 225, Արցախ, էջ 408։

²³² ՄՄ 2776, թերթ 268բ։ **Վ. Հակոբյան**, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 244։

ԳՏՉԱՎԱՆՔ ԵՎ ԴԻՉԱԿ ԳԱՎԱՌ

Պատմական Դիզակ գավառը կազմավորվել է 16-րդ դարավերջին՝ աշխարհացոյցյան Մյուս Հարանդ գավառի հարավային մասում։ Արևելքում նրա սահմանները ձգվում էին մինչև Մուղանի դաշտ, հյուսիսում՝ Քյոնդալան գետի ձախափը, արևմուտքում հասնում Քիրսի լեռնաշղթային և նրանից դեպի Երասխի հովիտը ձգվող բարձրություններին, հարավում՝ Երասխ գետին։ Գավառը համապատասխանում է պատմական այն տարածքին, որ պատմահայր Մովսես Խորենացին անվանում է Պարզկանք²³³, ձեռագրերում կոչվում է Բազկանք կամ Պանձկանք։ Դիզակում էին գտնվում իշխանանիստ Գորոզ ամրոցը, Գտիչ բերդը, մելիքանիստ Տոդ ավանը, Տումի գյուղը։ Դիզակում էր իշխում Գտիչի Եսայի Աբու Մուսեի (825-855)²³⁴ ժառանգներից սերող Առանշահիկ իշխանական տոհմի մի ճյուղը։ Իշխանական այդ տոհմն իր գոյությունը պահեց մինչև 1271 թվականը, իսկ 16-րդ դարի վերջից դարձավ Դիզակի մելիքության տերը։

Դիզակի կենտրոնն է Գտչավանքը՝ կառուցված մի գեղեցկահայաց սարահարթի վրա։ Աղբյուրներում վանքի անունը հիշատակվում է տարբեր ձևերով՝ Գտչա, Գթիշու, Գտչո, Քթիշ, Քթիշու, Կտիչ, Գտիչ, Քթիչ, Քթիս։ Հանդիպում է նաև Թիլնա անունը²³⁵։ Վանքը հիմնադրվել է վաղ միջնադարում, իբրև եպիսկոպոսանիստ հիշատակվում է 5-րդ դարից, իսկ 8-րդ դարից համանուն բերդի հետ Առանշահիկ իշխանական տոհմի Դիզակի ճյուղի հովանավորության տակ էր²³⁶։ Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 8-րդ դարում Պարտավի եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Գտչավանքի տանուտերը²³⁷։ Վանքի անունով են կոչվում նաև լեռը և վանքից

²³³ **Մովսես Խորենացի**, Աշխարհացոյց, առաջաբանը և քնն. բնագիրը՝ **Բ. Յարության**, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Անթիլիաս, 2003, էջ 2188։

²³⁴ Եսայի Աբու Մուսե (Եսայի՝ հայր Մովսեսի), 9-րդ դարի Աղվանից իշխան, արաբական աղբյուրներում հայտնի է նաև Իսա-իբն Յուսուֆ (Եսայի՝ որդի Հովսեփի)։ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 199։

²³⁵ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 181։

²³⁶ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 959։

²³⁷ **Մովսես Կաղանկատուացի**, էջ 372։

վերև կառուցված բերդը, որը 9-րդ դարում եղել է Եսայի իշխանի նստավայրը, հետո դարձել Դիզակի մելիքների բերդավանը: Անտառապատ լեռան գագաթին պահպանվել են բերդի պարիսպների ավերակները: Քթիչ բերդը, որ Արցախի հնագույն և հզոր բերդերից մեկն էր, իր պարիսպների տակ նշանավոր շատ մարտեր է տեսել: 9-րդ դարում արաբ Բուղա ոստիկանը պաշարում է այստեղ ամրացված հայոց Եսայի Աբու Մուսե իշխանին, պահանջում իջնել Քթիչի լեռներից և հանձնվել: Երկար դիմադրությունից հետո Բուղան ստիպված հաշտություն է կնքում²³⁸: Պահպանվել է Բուղային ուղղված Եսայի իշխանի նամակը, որը Աս. Մնացականյանը համարում է 9-րդ դարից մեզ հասած գրականության ամենաուշագրավ նմուշներից մեկը²³⁹:

Վանական համալիրը բաղկացած է միմյանց կից միանավ և գմբեթավոր եկեղեցիներից, գավթից և բնակելի սենյակներից: Գլխավոր եկեղեցին կառուցվել է 1241-1248 թվականներին Ամարասի Սարգիս և Վրթանես վանական եղբայրների կողմից, որը հաստատվում է վանքի հյուսիսային պատի վրայի արձանագրությամբ: Համաձայն նույն արձանագրության՝ նրանք վանքին նվիրաբերել են ընդարձակ տարածքներ²⁴⁰: Գավթի հյուսիսային պատին կից կա անտաշ քարով և ծածկն ամբողջովին փրկված ուղղանկյուն խորանով ավելի վաղ կառուցված մի եկեղեցի: Հնաշեն գավթում կան երկու գեղեցկաքանդակ խաչարձաններ՝ կանգնեցրած տանարի դռան երկու կողմերում: Հարավկողմյան խաչը Վրթանեսն է կանգնեցրել 1246-ին՝ իր հոգու փրկության համար, իսկ հյուսիսայինը հիշատակ է տո-

ղեցի Սարգսի որդի Սայուն, ով 1717 թվականին նորոգել է գլխավոր եկեղեցու գմբեթը: Գավթում են հանգչում վանքի միաբաններն ու առաջնորդները:

15-րդ դարում արդեն հայտնի մշակութային կենտրոն էր Գտչավանքը, և ուներ իր գրչատունը: Այն առավել նշանավորվեց մելիք Եզանի իշխանության տարիներին: Մելիքն իր հոգածու վերաբերմունքով նպաստում էր կենտրոնի բարգավաճմանն ու շենացմանը, հովանավորում էր շրջանի հասարակական, եկեղեցական և մշակութային կյանքը: 1868 թվականի երկրաշարժից վնասվել է գմբեթավոր եկեղեցին, իսկ միանավը՝ ավերվել, որից հետո վանքը լքվել ու ամայացել է:

Դիզակի գրչության կենտրոնի մասին տեղեկությունները սուղ են:

Ձեռագրերի մեծ մասը ոչնչացվել է ավերածությունների և կողոպուտների հետևանքով: Այս գրչության կենտրոնին վերաբերող ձեռագիր մատյանները սակավաթիվ են, որոնք հիմնականում գործնական նպատակներով և ծիսական արարողությունների համար գրված մատյաններ են՝ Ավետարաններ, Մաշտոց, Շարակնոց: Նկարագրուման արվեստով էլ այդ ձեռագրերը առանձնապես աչքի չեն ընկնում: Այս գավառից մեզ հասած ձեռագրերը գրվել ու նկարագրվել են, ինչպես նաև պահպանվել են հիմնականում Գտչավանքում, սակավ թվով՝ Թաղասեռում, Հաղրոթի Շախկախ գյուղում, Դիզափայտում, Տող և Թաղար գյուղերում:

Դիզակի գավառում գրչության կենտրոնի մասին վկայող ամենավաղ տեղեկությունները 1428 թվականից են: Մի կորած ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ «դառն ու անբարի ժամանակներում», Ամարասի եպիսկոպոս Մանուել գրիչն ընդօրինակում է մի Ավետարան Ասադի որդի Մելքիսեդ արեղայի խնդրանքով՝ որպես հիշատակ նրա ծնողների, եղբայրների և ազգակից-մերձավորների. «Գրեցավ Աւետարանս ի թվին Հայոց ՊՀԷ (1428) ձեռամբ մեղապարտ տէր Մանուէլի ի վիճակս Ամարասա՝ ի վանքս Քթիսոյ՝ ի դառն եւ անբարի ժամանակիս, որ Թորգոմացի ազգն տիրեն աշխարհի եւ ամենեքեան ի մեծ վշտի կան»: Գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել իրեն, իր ծնողներին և «գամենայն երախտա-

²³⁸ Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, առաջաբանը և քնն. բնագիրը՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 207: **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 407, **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց, առաջաբանը և քնն. բնագիրը՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 436: **Ստեփանոս Տարանացի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, առաջաբանը և քնն. բնագիրը՝ **Գ. Մանուկեանի**, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, Երևան, 2011, էջ 708: **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը..., էջ 62-63:

²³⁹ **Աս. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, էջ 181-182:

²⁴⁰ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 183: Արցախ, 81, Արցախի վանքերը, էջ 14:

ւորս ի յաշխարհի», իսկ ստացողի անունից գրած հիշատակարանում նգովում է բոլոր նրանց, ովքեր կհանդգնեն կտրել հիշատակարանը²⁴¹:

Մանուել գրչին հանդիպում ենք դարձյալ այս թվականին՝ Շուշու գյուղում Ավետարան ընդօրինակելիս (ՄՄ ձեռ. 8211):

1464 թվականին Վայոց ձորի Էրեբան վանքում մահտեսի Մուրատի և նրա կնոջ՝ Դիշատի խնդրանքով Մաղաքիա կրոնավոր գրիչը՝ «որպես առաջնորդ հոգո իւրոյ եւ պարծանս հաւատոց եւ թողութիւն մեղաց» և ի վայելումն Ալեքսիանոսի և Մուրատի օրինակել է Ավետարան²⁴²: Ստացողի անունից գրիչը հիշատակարանում խնդրում է հիշել Մուրատին, նրա ծնողներին՝ հորը՝ Տողտողին, մորը՝ Ագրումայիքին, նաև իր եղբայր Էավետին և քույր Ազիզին: Ձեռագիրն ընծայվել է Գոչավանքին. «Կամաւն Աստուծոյ ես՝ Աղանանս կալայ սուրբ Աւետարանս, տվի Քթիշոյ վանքին, ինձ քառասնից տէր Ալեգասնոս եպիսկոպոսի ձեռաւքն կատարեցինք քառասունքն» (թերթ 279ա):

1477 թվականին Ամարասի Ոմավանս անապատում Չաքարիա արեղայի գրչագրած մատյանը Ալեքսիանոս արքեպիսկոպոսը գնում և բերում է Գոչավանք ու գրել տալիս հիշատակարան, որտեղ խնդրում է հիշել իր ծնողներին՝ հորը՝ Ճանագիզային, մորը՝ Սուլթանային, եղբորը՝ Կոստանդիանոսին, հորեղբորը և ուսուցչին՝ Ամարասի Մանուել եպիսկոպոսին, նորաբողոք քահանա Գրիգորիսին և բոլոր մերձավորներին: Ալեքսիանոսը մեծ ցավ է ապրում երկրում տիրող ծանր իրավիճակից և խնդրում է չմոռանալ նաև իրեն ու իր եղբորը, որ «միաբանեցաք եւ եկաք ի Քթիշոյ վանքս, զի թուրք ազգս բազմացեալ է եւ հայս նուազեալ, եւ չարիքը շատացեալ, եւ մեր յոյսն Քրիստոս է, զի պանդխտինք ի միասին սակաւ աւուրցս» (ՄՄ ձեռ. 9792, թերթ 331ա): Վերջում Ալեքսիանոսը մեղքերի թողություն է հայցում և անիծում է հիշատակարանը կտրողին:

Ալեքսիանոս արքեպիսկոպոսի հիշատակարանը պարունակում է պատմական փաստեր

նաև Վրաստանի վերաբերյալ: Իբրև ականատես՝ հիշատակագիրը դառնացած է այդ խռովահույզ ու դաժան օրերի իրականությունից, թե ինչպիսի մեծ կորուստներ ունեցավ Հայաստանի հարևան երկիրը, որոնց պատճառը Ուզուն Հասանի գործած ավերածություններն էին: Իրականությունն այնքան սահմնկեցուցիչ է, որ գրիչը բառեր չի գտնում որակելու տեղի ունեցածը: Մեծ տառապանքներ է կրում ժողովուրդը: Ուզուն Հասանը հիմնահատակ ավերել է ամեն ինչ, կոտորել է մարդկանց, մեծ ու փոքր, երեց, սարկավազ ու աշխարհական, այր ու կին, դուստր ու որդի գերի տարել և «ցան ու ցիր արար աշխարհի, զողբն ու կսկիծն լեզու ոչ կարէ պատմել»:

Պետրոս կրոնավորը 1575 թվականին՝ «ի դառն եւ ի չար ժամանակի, ի դանութեան շահ Թահմազին՝ ի երկիրս Դիզակ՝ ի գեղս Պայկայթաղ՝ ի վանքս Քթիշու Սբ. Աստուածածինս» Մաշտոց է ընդօրինակել²⁴³: Ձեռագրի ստացողն է աստվածասեր ու հավատարիմ Բեկին, որն արդար վաստակով պատվիրում է ձեռագիրը և գրել տալիս հիշատակարան իր և բոլոր հարազատների համար: Գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է ուժ ու կարողություն՝ սկսած գործն ավարտին հասցնելու համար: Նա խնդրում է հիշել իր ծնողներին՝ Մուքուն և Թեգային, եղբայրներին ու քույրերին, իսկ ստացողի անունից՝ նրա բոլոր հարազատներին՝ ծնողներին, որդիներին, դուստրերին, բոլոր կենդանի և հանգուցյալ մերձավորներին՝ հականե-հանվանե նշելով անունները: Գրչի հաղորդածից տեղեկանում ենք նաև, որ այս թվականին Գոչավանքի վանահայրը Գալոս եպիսկոպոսն էր: 17-րդ դարում ձեռագիրն ստացել է խոջա Բարաքը և հիշատակարան գրել 189ա էջին:

Ըստ Ղ. Ալիշանի՝ 1653-1675 թվականներին Գոչավանքի միաբան է եղել Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձրեցու եղբայր Մատթեոս քահանան, որի համար 1668 թվականին մի Ավետարան է ընդօրինակվել²⁴⁴:

Գոչավանքում է ապրել ու գործել Առաքել Կոստանյանցը: Նա 1853 թվականին նշանակվել է վանքի վանահայր և երկար տարիներ գրադվել միաբանության կառավարման ու բարեկարգ-

²⁴¹ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 385:

²⁴² ՄՄ ձեռ. 3701, թերթ՝ 277, նյութ՝ թուղթ, 27,5 × 16,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

²⁴³ ՄՄ ձեռ. 6834, թերթ՝ 189, նյութ՝ թուղթ, 17,3 × 13,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 17-18:

²⁴⁴ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 270:

ման հարցերով²⁴⁵, ինչպես նաև հայոց լեզու և կրոն է դասավանդել, գրել է պատմություններ, որոնք բարեբախտաբար հասել են մեզ: ՄՄ 7822²⁴⁶ և 7823²⁴⁷ ձեռագրերը Առաքել վարդապետի «Պատմութիւն Արցախի» աշխատության երկու հատորներն են, որոնք հեղինակը գրել է 1858-1880 թվականներին և նվիրել իր հոգևոր ծնող Հակոբ վարդապետի հիշատակին: Հեղինակն իր մատյանում արժեքավոր աշխարհագրական տեղեկություններ է հաղորդում, որով էլ երկը ձեռք է բերում աղբյուրագիտական արժեք և, կարելի է ասել, իրենից ներկայացնում է Արցախի մասին աշխարհագրական մի ինքնատիպ ձեռնարկ: Չի բացառվում, որ այն ժամանակին գործածված լինի նաև իբրև դասագիրք: «Պատմութիւն Արցախի» երկն աղբյուր է եղել Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատության համար: Մեծ գրողը, գնահատելով Կոստանյանցի երկերի պատմական ու աղբյուրագիտական արժեքը, տեսնում է նաև թերությունները և տեղին դիտողություններ է անում²⁴⁸:

«Պատմութիւն Արցախին» տեղեկություններ է հաղորդում հատկապես Դիզակի մելիքության պատմությունից, որը Հայ ազգագրական ընկերության կողմից առանձին հրատարակվել է «Նյութեր հայ մելիքության» մատենաշարով²⁴⁹: Իսկ ժամանակագրական ցուցակը, ինչպես հեղինակն է հավաստում, դուրս է բերել Գասպար քահանայի ձեռքով գրված մի ձեռագիր Մաշտոցից: Առաջին հատորի հիշատակարանում (թերթ 156բ-57ա) Առաքել վարդապետը տալիս է նաև ինքնակենսագրական բնույթի տե-

ղեկություններ, խնդրում է հիշել իր ծնողներին՝ հորը՝ Ավագին, ում կորցրել է մանուկ հասակում, մորը՝ Մարիամին, ինչպես նաև իր հոգևոր ծնող ճգնազգաց Հակոբ վարդապետին, Գտչավանքի միաբաններին, որոնց օգնությամբ է այս գործն ավարտել: Գրիչը հատկապես ակնածանքով է հիշում մորը, ով քառասունհինգ տարի մնաց այրի և վախճանվեց ու թաղվեց Գտչավանքում՝ որդուն թողնելով սգավորության և տրտմության մեջ:

1884 թվականին Առաքել Կոստանյանցը գրում է Գտչավանքի պատմությունը²⁵⁰: Ինչպես հիշատակարանում խոստովանում է հեղինակը, այս երկը լրացումն է նախորդ երկու հատորների. «Յայսմ հատորի պատմագրութեան ցանկում բովանդակել գայն ամենայն թերութիւնս, որ յետոյ շրջելով ընդ ամենայն անտոնակոխ տեղիս...աստի եւս արտագրեալ զպակասութիւնս անցեալ երկուց հատորոց պատմագրութեանց» (թերթ 1ա): Ձեռագիրը կարևոր սկզբնաղբյուր է և հավաստի տեղեկություններ է հաղորդում վանքի միաբանության կյանքի մասին: Հեղինակը ներկայացնում է իրեն նախորդած վանահայրերին: Գտչավանքի վանահայրն է եղել Մելիք Եգանի հայր Ղուկաս վարդապետը, ում հաջորդել է Մեսրոպ եպիսկոպոսը: Նա առաջնորդ է նշանակվել Մելիք Եգանի կողմից 1723 թվականին և շուրջ 25 տարի ղեկավարել վանքի միաբանությունը: Մեսրոպ եպիսկոպոսից հետո վանքի առաջնորդ է նշանակվում նրա որդի Սիմեոն եպիսկոպոսը, ով «արիաջան աշխատասիրութեամբ լուսաւորեաց մեծ իմն պայծառազարդութեամբ զուրբ վանս և վերստին իսկ հաստատեաց գմերձակայ կալուածս...»: Վերջինիս էլ հաջորդել է Հովհաննես վարդապետը: Ապա պատմագիրը ներկայացնում է տեր Սիմեոն եպիսկոպոսի և Հովհաննես վարդապետի վանահայրության տարիների իրադարձությունները: Իսկ Մելիք Եսայու՝ 1781 թվականին սպանվե-

²⁴⁵ ՄՄ Կայթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41:

²⁴⁶ ՄՄ ձեռ.7822, թերթ՝ 161, նյութ՝ թուղթ, 20,5 × 17, գիր՝ նոտրգիր, տող՝ 19:

²⁴⁷ ՄՄ ձեռ.7823, թերթ՝ 117, նյութ՝ թուղթ, 20,5 × 17, գիր՝ նոտրգիր, տող՝ 15-27:

²⁴⁸ «Առաքել վարդապետը, իրավ է, իր պատմության մեջ ժամանակագրական կարգը չի պահպանել, նյութերը իրանց տեսակի համեմատ չէ դասավորել, և նրա աշխատությունը ավելի մի անկապ հավաքածու է, քան թե պատմություն, այնուամենայնիվ, նրա գրքերը բովանդակում են իրենց մեջ թեև անմշակ, բայց բավական առատ նյութ պատմության համար: Առաքել վարդապետի երկու հատորների մեջ կան և այնպիսի գլուխներ, որ կարող են ծառայել իբրև աղբյուր Ղարաբաղի մելիքների պատմության համար: Իսկ որ ամենից հետաքրքիր է, դա է մի ժամանակագրական ցուցակ Ղարաբաղի նշանավոր անցքերի մասին, սկսյալ 1721 թվականից մինչև 1813 թվականը»: **Րաֆֆի**, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 609-610:

²⁴⁹ **Ա. Կոստանյանց**, Դիզակի մելիքությունը, Նիւթեր հայ մելիքութեան մասին, պրակ Ա, Վաղարշապատ, 1913:

²⁵⁰ ՄՄ ձեռ. 3966, թերթ՝ 11, նյութ՝ թուղթ, 22,5 × 18, գիր՝ նոտրգիր, տող՝ 20-27: Երկը «Պատմութիւն Գտչա վանուց» վերնագրով է Խաչիկ վարդապետ Դադայանը: Տե՛ս **Յ. Թովհնես**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, էջ 102: Այս խորագրով է երկը ներկայացվում նաև Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակում (Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, էջ 1120): Բնագիրը ընդարձակ առաջաբանով հրատարակել է Ա. Մաղալյանը (**Ա. Մաղալյան**, Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչա վանուց» աշխատությունը», «Բանբեր Մատենադարանի», թ.18, Երևան, 2008, էջ 283-304):

յուց հետո միաբանության վիճակը սաստիկ վատանում է, վանքը «աստանօր տկարանայ եւ սկսեալ նուագի օրըստօրէ», սրան էլ հաջորդում է Աղա Մուհամմադ խանի արշավանքներից հետո բռնկված աննկարագրելի սովն ու մահտարածամը:

Առաքել վարդապետը տեղեկություններ է հաղորդում Գոչավանքի հողային սեփականության սահմանների վերաբերյալ, որը հաստատվում է վանքի կալվածքների մասին 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրով²⁵¹: Տեղեկություններ ենք ստանում նաև Մելիք-Եգանյանների մահմեդականացված ճյուղի մասին. «Դարձեալ ի դէս Մահմետի, այսպէս պնդութեամբ պահեն զօրէնս նորա, կարծեն թէ Մահմետն բնաւ չէ այնու հոգւով պահպանեալ, որպէս նոքա կամին զոհել զիրարս եւ զորդիս իւրեանց» (թերթ 6ա)²⁵²: Հեղինակը հաղորդում է նաև ինքնակենսագրական տեղեկություններ: Ձեռագիրը մեզ է ավանդել նաև մի գեղեցիկ ավանդագրույց՝ Անտոն մանկան նահատակության պատմությունը լենկթեմուրյան ժամանակաշրջանում (թերթ 10ա-11բ):

Գոչավանքից մեզ հասած հաջորդ մատյանը՝ ՄՄ 3881 ձեռագիրը, դարձյալ Առաքել Կոստանյանցի գրչին է պատկանում. այն պատմական նյութերի ժողովածու է, գրվել է 1886-1888 թվականներին²⁵³: Այստեղ հեղինակը գետեղել է տարաբնույթ պատմական նյութեր, տալիս է նաև Մելիք-Շահնագարյան տոհմի ժամանակագրությունը, հաղորդում է, որ Մելիք Եսային սպանվել է 1781 թվականին Շուշիի Իբրահիմ խանի կողմից:

Այսպիսով Դիզակ գավառի ձեռագրական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում Գոչավանքում գրված կամ այս կենտրոնին առնչվող ձեռագրերը:

Գավառի այլ վայրերից ևս ունենք մատյաններ, որոնցից մեկն է 1604 թվականին Դիզակի Մարտիրոս քահանայից մելիք Սուջումի ստա-

ցած Ավետարանը, որ գրիչը օրինակել է «ի յերկիրն Տիգրակա՝ ի գիւղս, որ կոչի **Խանձաձոր**»²⁵⁴:

Բաղդասար գրիչը 1631 թվականին **Թաղասեռում** գրել է մի Մաշտոց²⁵⁵: Խոնավությունից գրադաշտը գունափոխված, թթվակեր ու ցեցակեր այս ձեռագիրն ունի մեկ կիսախորան, բազմաթիվ ճակատագարդեր, լուսանցագարդեր, զարդագրեր: Գլխավոր հիշատակարանում Բաղդասար գրիչը հիշում է տեր Մելքեսեթ վարժապետին, իր բոլոր մերձավորներին՝ հորը, մորը, որոնց անունները չի տալիս, կողակցին՝ Բեկին, եղբայրներին, ձեռագրի պատվիրատու Շահավարին ու նրա կողակցին՝ Հուրիին, մյուս եղբորը՝ Մուլքին, որդիներին՝ Տավաթարին, Բրթունին, Պարխուտարին և եղբորորդուն՝ Պետրոս քահանային: Գրիչը ձեռագրի ստորին լուսանցքներում թողել է բազմաթիվ մանր հիշատակագրություններ: 18-րդ դարում ձեռագիրը նորոգել է Մարդանս դպիրը և 172բ էջին թողած հիշատակարանում խնդրել է հիշել իրեն: 1745 թվականին ձեռագիրը պատկանել է Շահնագարի որդի Մելիքսեթին: Երկրորդ ստացողի հիշատակարանը մասամբ եղծված է, և կարդացվող անուններից՝ Շահրիման, Օսեփ, Սարգիս, հասկացվում է, որ նրանք նույնպես Շահնագարի որդիներն են ու Մելիքսեթի եղբայրները, իսկ Մաշտոցը եղել է նրանց ընտանեկան սրբությունը: Դարձյալ հետագայի մեկ այլ հիշատակարան հաղորդում է, որ տեր Գրիգորը 1783 թվականին ձեռնադրվել է Աբրահամ աստվածաբան վարդապետի ձեռքով: Ձեռագիրը հետո գտնվել է գերության մեջ: 1791 թվականի սպրիլի մեկին թիֆլիսեցի նալբանդ Սիսոյի որդի Եզխեստն ազատել է գերված ձեռագիրը և որպես հիշատակ նվիրել Սբ. Աստվածածին եկեղեցուն, «որ եւ յիշատակն բարի եղիցի տեր Գրիգորի»: Ձեռագրի վերջին ստացողն է ագուլեցի Առաքելի որդի Հարությունը, ով 1804 թվականին ձեռագիրը գնել է Թիֆլիսում: 100 տարի անց ձեռագիրը բերվում է Սբ. Էջմիածին:

17-րդ դարում Թաղասեռում գրչության արվեստ էր ուսուցանում և եղբոր՝ Կիրակոս քահա-

²⁵¹ ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449:

²⁵² Մելիք-Եգանյանների մասին ավելի մանրամասն տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, Գիրք 2, Երևան, 1973, էջ 364:

²⁵³ ՄՄ ձեռ. 3881, թերթ՝ 195, նյութ՝ թուղթ, 18 × 11,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 20:

²⁵⁴ **Ամիրջանյան Ա.**, Տումի գյուղի պատմական հուշարձանները, «Գիտություն և տեխնիկա», 1991, թ. 2, էջ 30: **Ա. Յակոբյան**, Պատմա-աշխարհագրական եւ վիճագրական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երևան, 2009, էջ 117, ճնթ. 70:

²⁵⁵ ՄՄ ձեռ. 3580, թերթ՝ 174, նյութ՝ թուղթ, 19×14,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:

նայի հետ ձեռագրեր էր ընդօրինակում Մելքե- սեթ վարժապետը: Նրանք Թաղասեռի Սբ. Սարգիս եկեղեցում միասին սկսել ու ավարտել են բոլորգիր մի Ավետարան. «Գրեցաւ Սբ. Աւետարանս ի երկիրս Աղւանից՝ ի գաւառս Դիզակ՝ ի գեաղս, որ կոչի Թաղասառ՝ ի դուռն սուրբ Սարգսի ի Շահ Սեփոյն երրորդ ամի՝ ձեռամբ Մելքիսեթ իրեցու եւ եղբայր իմոյ՝ տէր Կիրակոս քահանայի, որ ի միասին սկսաք եւ ավարտեցաք»²⁵⁶: Ավետարանը գերի է տարել Պարսկաստանի Թավրիզ քաղաք, որտեղից էլ 1806 թվականին էրզրումցի պարոն Մկրտիչը փրկագնել ու նվիրել է շուշեցի մահտեսի Սրապիոն Շիսեյանցին: Ձեռագիրը պահվել է Շուշիի Ագուլեցոց եկեղեցում, որտեղ էլ այն տեսել և հիշատակարանն արտագրել է Մ. Բարխուդարյանը²⁵⁷: Մատյանի հետագա ճակատագիրն անհայտ է:

Կիրակոսը 1638 թվականին Մաշտոց է օրինակել տեր Հովհաննեսի պատվերով «ի երկիրս Աղւանից, ի գաւառս Դիզակ, ի գիւղս Թաղասեռ՝ ընդ հովանեաւ սուրբ Սարգսի եկեղեցո, ձեռամբ մեղաւոր Կիրակոս անարժան իրիցւի, յիշատակ տէր Յովաննես սրբասնունդ քահանայի եւ ծնօղաց ///»: Այստեղ հիշատակարանն ընդհատվում է՝ վերջին թերթն ընկած լինելու պատճառով, ուստի այլ տեղեկություններ չունենք²⁵⁸:

Պահպանված հիշատակարաններից տեղեկանում ենք Թաղասեռում գրված և պահված, բայց անհայտ ևս երկու ձեռագրերի մասին: 1635 թվականին «ի գեաղ, որ կոչի Թեղասեռ՝ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածինս» մի Ավետարան է ընդօրինակվել²⁵⁹: Իսկ գյուղի հին եկեղեցում, որ կոչվել է Հին Թաղասեռի եկեղեցի, եղել է անխնամ ու հիշատակարանը գողացված մի Ավետարան²⁶⁰:

Աբրահամ արեղան ընդօրինակել է մի Ավետարան «ի գեղս, որ կոչի **Փարաջանց**՝ ի երկիրս Հաքարու՝ ի ոտս Դիզափայտու ի թվին ՌԻԳ

(1574)»): Ըստ գրչի՝ դա Գրիգորիս Աղվանից կաթողիկոսի ուրացության տարին է. «Կաթողիկոսութեան Տանս Աղվանից տէր Գրիգորիսի, որ երես Թահեայմազ փաթշահ անկամա տաջկացուց, մեզ մեծ սուգ եղել անմխիթար»²⁶¹: Գրիչները Մեհրաբ-Բեկի որդի Գրիգորիսի գահակալությունը նշում են 1556 թվականից: Աղբյուրները արձանագրում են նաև, որ 1573 թվականին նա ուրացել է հավատը. «Տէր Գրիգոր՝ որդի Մեյրամբեկին տեսառն Խաչենոյ ՌԵ (1556) թուին և սա ուրացաւ գժրիստոս ՌԻԲ (1573)-ին»²⁶²: Մ. Բարխուդարյանը ևս այս թվականն է ընդունում Գրիգորի ուրացության տարին. «Գրիգոր կաթողիկոսը 1573-ին ուրանում է յուր հավատը, որին փոխարինում է տեր Դավիթ Թ Առաջածորցի նոյն իսկ թվին, սակայն խաչենցիք մեզ անհայտ պատճառով խեղդում են՝ կախելով Գանձասարի զանգակատնից»²⁶³: Թե ինչ պայմաններում ու հանգամանքներում է տեղի ունեցել այս արատավոր երևույթը, ձեռագիր աղբյուրները լռում են: Միայն Աբրահամ գրչն է հաղորդում, որ Գրիգորը մահմեդականությունն ընդունել է պարսկական արքունիքի հարկադրանքով: Դա, ըստ Աբրահամ արեղայի, 1574 թվականին էր, իսկ նրան հենց նույն տարին հաջորդել է Գրիգորիսի եղբոր՝ Բաղդասար-Բեկի որդին՝ Դավիթը: Սրանից հետո ձեռագիր աղբյուրները Գրիգորիսի մասին լռում են:

Դիզակի Հաղրութի անապատի **Ճախկախ** գյուղում Հովհաննես երեցի խնդրանքով 1584 թվականին Աբրահամ արեղան մեկ այլ Ավետարան է օրինակել²⁶⁴: Հիշատակարանում պահպանվել են սակավ տեղեկություններ անապատի միաբանության կյանքից: Այս տարիներին ուխտի առաջնորդն էր Հովհաննես եպիսկոպոսը: Ըստ գրչի՝ ձեռագիրը գրվել է Դավիթ կաթողիկոսի հայրապետության տարիներին: Նկատենք, որ այստեղ գրչության թվականի անհամապատասխանության սխալ կա, որովհետև Դավիթը, որի մասին խոսվեց վերևում, կաթողի-

²⁵⁶ **Յ. Թովմեան**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 46:

²⁵⁷ Արցախ, էջ 143:

²⁵⁸ ՄՄ ձեռ. 5380, թերթ՝ 182, նյութ՝ թուղթ, 22 × 15, գիր՝ բուրգիր, տող՝ 20: Ըստ 182թ էջի հետագայի հիշատակարանի՝ 1906 թվականին ձեռագիրը հաշվվել է Օ. Բարադամյանի կողմից կազմված Վասպուրականի ցուցակի մեջ:

²⁵⁹ «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1925, էջ 476:

²⁶⁰ Արցախ, էջ 69:

²⁶¹ **Ա. Տեր-Աւետիսեան**, Յուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Ա, Վիեննա, 1970, էջ 127:

²⁶² **Յ. Թովմեան**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Ա, էջ 89:

²⁶³ **Մ. Բարխուդարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 21:

²⁶⁴ **Մ. Վրդ. Քեչիշեան**, Յուցակ հայերէն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 37:

²⁶⁴ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 181:

կոս է եղել Գրիգորիսի ուրացությունից անմիջապես հետո՝ 1574-ին, ընդամենը մեկ տարի և նույն թվականին էլ մահացել անհայտ պայմաններում, ապա նրան հաջորդել է Գրիգորիսի եղբայր Հովհաննեսը, ով աթոռակալել է մինչև 1586 թվականը:

Ճախկախի **Sup** գյուղից ևս հասել են ձեռագրեր: 1563 թվականին այստեղ Հովհաննես երեցի խնդրանքով Նասիպ սարկավագը ընդօրինակում է Ավետարան: Ձեռագիրն ունի ավետարանիչների պատկերները, կիսախորաններ և լուսանցազարդեր²⁶⁵: Տաքում մի Ավետարան էլ գրվել է 1673 թվականին, որի հիշատակարանում հիշվում են ուխտի միաբանները. «յերկիրս Դիզակու ի գիւղս Դաք ընդ հովանեաւ սուրբ եւ նշանաւոր տեղուջ, որ կոչի Ճախկախ եւ այլ միաբանիցս Յակոբ եպիսկոպոսին եւ տէր Մկրտչին, տէր Բարսղին գրոց աշակերտ Սաղաթին»²⁶⁶:

Այլուր գրված ձեռագրերից մասամբ տեղեկություններ ենք ստանում Դիզակի գավառի սոցիալական վիճակի, վանքերի ու անապատների կյանքի մասին:

Եղիա արեղան, որ 1428 թվականին գործել է Վայոց ձորի **Եղեգիս** ավանի **Ճգնավորի քար** անապատում, իր օրինակած բոլորգիր Ավետարանում հայտնում է իր՝ ծագումով հաղորթեցի լինելը. «Աւարտեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ եւ փցուն գրչի Եղիայի, որ անուամբ կոչեմ արեղայ եւ ոչ գործով, աշխարհաւ յԱղվանից եւ տեղեւ Դիզակցի, եւ գեղաւ Հաղրուղեցի» և խնդրում հիշել իր ուսուցիչ Աթանասին, հորը՝ Մեսարին, եղբորը՝ Չեսարին, և իրեն գրչին²⁶⁷: Ձեռագիրը հետագայում հասել է Ազուլիս, որտեղ էլ այն հայտնաբերել և երեսուկյոթ ձեռագրերի հիշատակարանների հետ 1911 թվականին «Արարատ» ամսագրում հրատարակել է Մեսրոպ Մաքսուդյանը²⁶⁸: Ո՛վ է ձեռագրի

առաջին ստացողը, հայտնի չէ, երկրորդը ազուլիսցի Խաթունբեկն է: Եղծված հիշատակարանից ենթադրում ենք, որ նա Գրիգորի կինն է և գնել է ձեռագիրը որպես հիշատակ իրեն, Կարապետ որդուն և ծնողներին²⁶⁹:

ՄՄ 6432 Ավետարանը գրվել է 1679 թվականին Պապանանի խնդրանքով, գրչության վայրը հայտնի չէ²⁷⁰: Գրիչն իր ապրած ժամանակը «դժվարացեալ» որակելով՝ նկարագրում է Արցախի գավառներին պատուհասած աղետները, որոնք եկան «վասն ծովացեալ մեղաց»: Նախ կոտորվեցին անասունները, ապա մորեխը ավերեց Դիզակ, Վարանդա, Խաչեն և մյուս գավառները: Սրան հաջորդեցին ավելի դաժան աղետներ՝ սաստիկ սովն ու մահտարածամը: Դաժան համաճարակից անթիվ մարդիկ մահացան, ամայացավ երկիրը:

1775 թվականին **Վարագավանքում** ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում գրիչ Գևորգ Նաղաշ վարդապետը խնդրում է հիշել Դիզակ գավառի Դիզափայտի ուխտի առաջնորդ և իր հոգևոր ծնող հանգուցյալ Երեմիա եպիսկոպոսին²⁷¹:

Միմեռն բարունու խնդրանքով Անիի Հովհաննես եպիսկոպոսի ընդօրինակված անթվակիր մի Աստվածաշունչ մատյան էլ պահվել է **Տող** ավանի **Կուսանաց** անապատում²⁷²: Նույն ավանի Սբ. Հովհաննես եկեղեցում արծաթյա խաչերի մեջ պահվել են առաքյալների սուրբ մասունքներ և կենաց փայտից մի կտոր²⁷³: Դիզակի Սպիտակ խաչ վանքում են եղել Աղվանից Եսայի, Ներսես և Հովհաննես կաթողիկոսների մի քանի կոնդակները, որոնք, սակայն, վանքի սպիտակ խաչի հետ գողացվել են²⁷⁴:

²⁶⁵ ՄՄ ձեռ. 7571, թերթ՝ 186, նյութ՝ թուղթ, 23,5 × 19,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 25: Հայաստանի Կուլտուր-պատմական թանգարանի ազգագրական արչավախումբը Ավետարանը ձեռք է բերել իջևանցի Մարտիրոս Բաղդասարյանից և մուծել թանգարանի հարուստ հավաքածուի մեջ (թիվ 1325), իսկ 1938 թվականին բերվել է Մատենադարան: Տե՛ս **Օ. Եգանեան**, Կարվանսարայի (Իջևանի) Սբ. Ամենափրկիչ եկեղեցու ձեռագրերի հավաքածուն, Աշխատություններ, էջ 66:

²⁶⁶ Արցախի վանքերը, էջ 20:

²⁶⁷ **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ.Ա, էջ 382-83:

²⁶⁸ «Արարատ», 1911, էջ 567:

²⁶⁹ Երրորդ ստացողի հիշատակարանը 344ա էջում է, դարձնալ եղծված է և հատուկենտ բառերից կարդացվում են «Ալեքսանոս, Մարտիրոս: /// այլ և ամուսին իմ Շիրազն, և դուստրն իմ Նուի/// և Մարգարիտն»: Ձեռագիրը գնել է Ռստակետը իր և ծնողների հիշատակին:

²⁷⁰ ՄՄ ձեռ. 6432, թերթ՝ 288, նյութ՝ թուղթ, 23 × 16,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21-22:

²⁷¹ **Հ. Աճառեան**, Յուզակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, էջ 18բ:

²⁷² Արցախ, էջ 78:

²⁷³ Արցախ, էջ 74-75, Արցախի վանքերը, էջ 18:

²⁷⁴ Արցախ, էջ 66-68, Արցախի վանքերը, էջ 23, **Ս. արք. Զալալեանց**, Ճանապարհորդություն... հ. Բ, էջ 263:

ՎԱՐԱՆՊԱ ԳԱՎԱՌ

Արցախի աշխարհի Վարանդա գավառը կազմավորվել է 16-րդ դարում աշխարհացույցյան Մյուս Հաբանդ գավառի հյուսիսային մասում: Գավառն ընդգրկում էր Կարկառ գետի աջ ափը, հասնում մինչև Քիրս-Դիզափայտի լեռնագոտին: Աղբյուրներում գավառը կոչվել է նաև Հաբանդ, Մյուս կամ Փոքր Հաբանդ, Մուխանք, Վառանդա, Վառանդինի, Վարանդ, Վարանդա Մյուս, Վերենդե, Քոչիզ, կենտրոնի անունով նաև Ամարաս²⁷⁵:

Վարանդայի կենտրոն Ամարասի վանքը 4-րդ դարի սկզբին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ ավարտումն ու օծումը վերագրվում է նրա թոռ Գրիգորիսին²⁷⁶: 330-331 թվականներին Բուն Աղվանքի կողմերում (Մասքթաց թագավորությունում) քրիստոնեություն տարածելու ժամանակ նահատակվում է Գրիգորիսը, և նրա աճյունն իր աշակերտները բերում ամփոփում են Ամարասի եկեղեցու բակում²⁷⁷: 489 թվականին Վաչագան Գ Բարեպաշտ թագավորը, գտնելով Գրիգորիսի գերեզմանը, վրան մատուց է կանգնեցնում, միաժամանակ ավարտում եկեղեցու կառուցումը²⁷⁸: Վանական համալիրն ամբողջացրել են հետագա դարերում կառուցված շրջապարիսպը, միաբանների և ուխտավորների սենյակները, օժանդակ այլ շինություններ²⁷⁹:

Վաղ միջնադարում Ամարասը նշանավոր էր որպես եպիսկոպոսանիստ և հոգևոր մշակույթի

կենտրոն: Ըստ ավանդության՝ գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը այստեղ է բացել Արցախի առաջին դպրոցը և հիմք դրել հայեցի դպրության: Քանի որ գրչակենտրոնից ոչ մի ձեռագիր մատյան չի պահպանվել, դժվար է ասել, թե ինչ տիպի դպրոց է գործել Ամարասում, ինչ գործունեություն է ծավալվել, ինչ մասնագետներ են պատրաստել, ովքեր և ինչ են դասավանդել: Վանքի՝ որպես կրոնական և մշակույթի կենտրոնի վերաբերյալ հատուկենտ տեղեկություններ են տալիս վիմագիր արձանագրությունները, գավառի այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարանները, ինչպես նաև Անաստաս վարդապետի կազմած վանքերի մասին պաշտոնական վավերաթուղթը, որ պահպանվել է նաև Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ²⁸⁰:

Պատմական Արցախի այս հնագույն ու նշանավոր վանքը բազմիցս է ենթարկվել օտար նվաճողների ասպատակություններին: 821 թվականին արաբները գրավում են Ամարասը, թալանում վանքի հարստությունը, բայց Առանշահիկ Սահլ Սմբատյանը հերոսական դիմադրություն է ցույց տալիս թշնամուն. «զԱմարաս գաւառ գերի առեալ իբրեւ ոգիս հազարս... Սահլ Սմբատեան Եռանշահիկն տէր քաջագոր եղբարքք իւրովք եւ զօրօք ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիպաւալ գնոսս ցիր ու ցան կացուցանէին»²⁸¹: 853-854 թվականներին արաբները Բուդայի գլխավորությամբ կրկին ասպատակում են գաւառը, այս անգամ էլ նրանց դեմ է դուրս գալիս Եսայի Աբու Մուսեն²⁸²:

Մյուսյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ 1293 թվականին թաթար Բաթուխանը կողոպտել է Ամարասի վանքը, ավերել ու թալանել, թանկարժեք շատ իրերի հետ տարել է Գրիգորիսի գավազանն ու 36 թանկարժեք քարերով ընդելուզված ոսկեձույլ մի խաչ²⁸³: 1387 թվականին՝ Լենկթեմուրի արշավանքից հետո,

²⁷⁵ **Մովսես Խորենացի**, Աշխարհացոյց, էջ 2188: **Ս. Երենյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 70: **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 772: **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը ..., էջ 31: **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 160: Արցախի վանքերը, էջ 25, **Ա. Յակոբեան**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտություններ (ԱրցախեւՈւտիք), էջ 302-311:

²⁷⁶ **Փաւստոս Բուզանդ**, Պատմութիւն Հայոց, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Ա, առաջաբանը **Պ. Մուրադեանի**, **Կ. Իւզբաշեանի**, Անթիլիաս, 2003, էջ 428: **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 68: Գիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 170: **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախշյան**, **Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 211:

²⁷⁷ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 72: **Փաւստոս Բուզանդ**, էջ 429: **Անանուն**, Կեանք եւ վարք Վաչագան արքայի, առաջաբանը և քնն. բնագիրը՝ Ա. Յակոբեանի, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 63:

²⁷⁸ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 73:

²⁷⁹ Արցախի վանքերը, էջ 27, **Ս. արք. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն..., հ. Ա, էջ 196: «Ազգագրական հանդէս», 1897, Բ, էջ 37-39:

²⁸⁰ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 74, տե՛ս նաև **Ղ. Ալիշան**, Հայաստանում, էջ 229, **Աս. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, էջ 97-101:

²⁸¹ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 402-403:

²⁸² **Թովմա Արծրունի և Անանուն**, էջ 207: **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 407, **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 436: **Ստեփանոս Տարանացի Ասողիկ**, էջ 708: **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը ..., էջ 62-63: **Լեո**, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1947, էջ 459-464:

²⁸³ **Ստեփանոս Օրբելեան**, էջ 476:

Ամարասը մեծ կորուստներ է կրում: Չափազանց մեծ է նաև ձեռագիր արժեքների կորուստը: Քանիցս ավերված վանքը 17-րդ դարում վերականգնում է Աղվանից (Փանծասարի) Պետրոս կաթողիկոսը, որը նաև միաբանության ամառանոց Հերիեր գյուղում կառուցում է մի նոր եկեղեցի (ՄՄ ձեռ. 2561, թերթ՝ 264ա): 18-րդ դարում այս սրբավայրը թուրքերը դարձնում են իրենց աղոթատեղին, ապա բերդատեղի ու մաքսատուն այնքան ժամանակ, մինչև որ Բաղդասար մետրոպոլիտին հաջողվում է օտարներից նորից ետ վերցնել այն²⁸⁴: Երբեմնի ծաղկուն ու շեն վանքը 19-րդ դարում ամայանում է, դառնում անմարդաբնակ՝ մնալով լոկ ուխտատեղի:

Բազմաթիվ ավերածություններ տեսած վանքը մոռացել էր դաժան ժամանակներում էլ չի դադարել կրոնական ու մշակութային կենտրոն լինելուց: Վկայություն ունենք այն մասին, որ 15-րդ դարում Մանուել գրիչը, ով ձեռագրեր է ընդօրինակել Գոչավանքում, գործել է նաև Ամարասում²⁸⁵: Ամարասի վիճակի մեջ մտնող **Շուշու** գյուղում Մանուելի գրչագրած Ավետարան է մեզ հասել, որն այժմ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում՝ 8211 թվահամարի տակ²⁸⁶: Ծաղկողի անունը չի նշվում, հավանաբար գրիչն է, որը նկարել է ավետարանիչների պատկերները՝ իրենց անվանաթերթերով, կիսախորանները, 176թ թերթի լուսանցքում Գաբրիել հրեշտակի պատկերն է, ունի նաև լուսանցագարդեր ու զարդագրեր: Ձեռագիրը գրվել է Հովհաննեսի կաթողիկոսության և Իսկանդարի, «որ է թորգամածին եւ չարչարող քրիստոնէից», բռնակալության տարիներին:

Չալալ իշխանի որդի Հովհաննեսը երկար տարիներ եղել է Աղվանից կաթողիկոս: Վերոնշյալ ձեռագիրն արժևորվում է նրանով, որ հիշատակարանում առաջին անգամ արձանագրված է Հովհաննեսի հայրապետությունը. «Գրեցաւ աստուածագիծ սուրբ Աւետարանս ձեռամբ ոգնամեղ եւ ապիկար գրչի՝ տէր Մանուէլի՝ ի թվականութեանս Հայոց ՊՎԷ (1428)՝ ի յաշխարհս Աղուանից՝ ի վիճակս Ամարասայ՝ ի գեղս Շուշու կոչեցեալ՝ ընդ հովանեալ Սուրբ Աստուածած-

նիս՝ ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի» (թերթ 359բ-60ա): Հետագայի գրիչներն արդեն հիշում են նրա կաթողիկոսության տարիները՝ 1456, 1464, 1466, 1467, 1468 թվականներին²⁸⁷: Իսկ համաձայն Սբ. Հակոբա վանքի՝ Հովհաննես հայրապետի տապանագրի, նա մահացել է 1470-ին. «Այս է հանգիստ տէր Ովհանէս կաթողիկոս[ին] Աղվանից թվ. ԶԺԹ (1470)»²⁸⁸:

Ավետարանը Մանուելի ընդօրինակած վերջին մատյանն է: Երբ վախճանվել է մեծ սեր ու հարգանք վայելող գրիչը, նրա չորս եղբայրներն իբրև ժառանգություն բաժանել են նրա գրվածքները: Ամարասի Ալեքսիանոս եպիսկոպոսին, որը գրչի եղբորորդին է, որպես հիշատակ բաժին է ընկել այս ձեռագիրը: Մանուել եպիսկոպոսը և՛ գրչագրել է մատյաններ, և՛ ուսուցանել: Իրեն պատկան ձեռագրերից մեկի հիշատակարանում (ՄՄ ձեռ. 9792) Ալեքսիանոսը նրան վարպետ է անվանում: Մանուելի վարպետ լինելու հանգամանքն էլ թույլ է տալիս ենթադրելու, որ գավառի եկեղեցիներում ու առանձին բնակավայրերում 15-րդ դարի առաջին կեսին գործել են դպրոցներ, որտեղ ուսուցանվել է գրչության արվեստ և ընդօրինակվել են ձեռագրեր: Երկու դար հետո՝ 1634 թվականին, Հովհաննես եպիսկոպոսը, որը նույնպես Մանուել գրչի տոհմից էր, Դիզակի գավառի Թաղասեռ գյուղի Սբ. Սարգիս եկեղեցում մահտեսի Կիրակոսին նորոգել է տալիս Ավետարանը՝ որպես հիշատակ իրեն, հորեղբայրներին և բոլոր մերձավոր բարեկամներին՝ Մանուել, Ալեքսիանոս, Մարտիրոս, Գրիգոր եպիսկոպոսներին, Հովհաննես և Մարտիրոս արեղաներին, Սարգիս երեցին, տեր Թորոսին, իր պապ Հովհաննեսին, հորը՝ Մարտիրոսին, մորը՝ Մարգարիտին և եղբորը՝ Հովանին:

Շուշու գյուղից մեկ ձեռագիր էլ ունենք 16-րդ դարից: 1575 թվականին Հովհաննես քահանան Սբ. Ստեփանոս եկեղեցում «ի Փոստանհանկ գաւառս Վարընթոյ, ի գեղս, որ կոչի Շուշոյ» օրինակել է մի պատկերագրող Ավետարան²⁸⁹: Առաջին ստացողը հայտնի չէ, երկրորդ

²⁸⁴ «Ազգագրական հանդես», 1897, Բ, էջ 8, **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:
²⁸⁵ Արցախի վանքերը, էջ 27:
²⁸⁶ ՄՄ ձեռ. 8211, թերթ՝ 369, նյութ՝ թուղթ, 23,5 × 15,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:

²⁸⁷ **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 66, 219, 244, 245, 272: Արցախի վանքերը, էջ 162:
²⁸⁸ Դիվան հայ վիճակագրության, Արցախ, պր. V, էջ 17:
²⁸⁹ ՄՄ ձեռ. 4375, թերթ՝ 266, նյութ՝ թուղթ, 21 × 15,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Հասկանալի է, որ այստեղ նշվում է ոչ թե Շուշի քաղաքը, այլ Շուշո, այսինքն՝ ներկայիս Շոշ գյուղը:

ստացողն է Գրիգոր երեցը: Ծաղկողը հավանաբար գրիչն է: Ձեռագիրն ունի ավետարանիչների պատկերները, կիսախորաններ, բազմաթիվ լուսանցազարդեր ու զարդագրեր: Գլխավոր հիշատակարանում գրիչը հիշում է իր ծնողներին՝ Մատթեոսին և Գանուն, կողակցին՝ Գուլխաթունին, եղբայրներին, քույրերին, զավակներին և արյունակից մերձավորներին: 1596 թվականին ձեռագիրը գնել է Ովաննես եպիսկոպոսը: 1825 թվականին այն գտնվել է Մավրի գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում՝ Հակոբի որդի Ավագի մոտ:

ՄՄ 9792 ձեռագիրը գրվել է 1477 թվականին Ամարասի Ոմավանս անապատում՝ ձեռամբ կուսակրոն արեղա տեր Չաքարիայի²⁹⁰: Չաքարիան աշակերտել է տեր Բարսեղին, ով այդ տարիներին անապատում գրչության արվեստ էր ուսուցանում: Գրիչը երախտագիտությամբ ուսկնածանքով է հիշում իր ուսուցչին, ինչպես նաև Ամարասի արքեպիսկոպոս տեր Ալեքսիանոսին՝ նրան անվանելով երախտավոր այր: Խնդրում է հիշել նաև իր ծնողներին: Այս թվականին ձեռագիրն իր «հալալ ընչից և աշխատանաց» Չաքարիայից գնել է Ալեքսիանոս արքեպիսկոպոսը և բերել Գոշավանք:

17-րդ դարում Վարանդայի տիրակալներն էին Դովյան իշխանական տոհմից սերող Մելիք-Շահնազարյանները: Մելիք Շահնազար Ա-ի սերնդից մելիք Հուսեինը Գեղարքունիքի Մեծ Մագրա գյուղից գալիս ու վերահաստատվում է Ավետարանոց ավանդում՝ հիմք դնելով այս տոհմի՝ Վարանդայի Մելիք-Շահնազարյաններ ճյուղին: Ավետարանոցը դառնում է նրանց իշխանանիստը²⁹¹: Կուսանաց անապատի գավիթը Մելիք-Շահնազարյանների տոհմական դամբանատունն էր: Այստեղ հանգչում են Մանուել վարդապետը, մելիք Միրզան, մելիք Հուսեինը, մելիք Հովսեփը և նրանց կանայք²⁹²: Այս տոհմի պատմությունն է ներկայացված Միքայել Բեկ

Լալարեկյան-Մելիք-Շահնազարյանցի «Վասն ծագման Մելիք-Շահնազարեանց տոհմին» երկում²⁹³:

Ավետարանոց ավանի Կուսանաց անապատը, որն, ըստ ավանդության, հիմնադրվել է 5-րդ դարում Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորի կողմից²⁹⁴, 17-18-րդ դարերում դառնում է գրչության կենտրոն և կապվում Գայանե և Հռիփսիմե կույսերի անունների հետ: Անապատի բարեկարգման աշխատանքներով զբաղվում էր մայրապետ Հռիփսիմեն, իսկ տեր Առաքելն ու Գայանեն օգնում էին նրան²⁹⁵: Գայանեն, որ գավառի անունով կոչվում էր նաև Վարանդացի, մելիք Հուսեինի և Դիզակի գավառի տիրակալ մելիք Ավանի քույր Աննայի դուստրն էր: Իշխանական տոհմից սերող այս խիզախ հայուհու մասին ավանդագրույցը պատմում է, որ նա իր մոր՝ Աննայի հետ սպանում է գյուղ ներխուժած թուրք զինվորներին, նրանց հետ նաև թուրք զորավարին, ով, տեսնելով Գայանեին, սիրահարվել էր և ցանկանում էր կնության առնել նրան²⁹⁶: 1733 թվականին Գայանեն մտնում է անապատ և մինչև կյանքի վերջն իրեն նվիրում գրչության արվեստին²⁹⁷: Գայանեն հմուտ գրիչ էր: Բաֆֆին վկայում է, որ ինքն անձամբ Ավետարանոց գյուղում տեսել է Գայանեի գրչագրած գեղեցկազարդ մի Ավետարան²⁹⁸:

Գայանեի ձեռքով գրչագրված ու նկարազարդված երեք ձեռագիր է մեզ հայտնի: Առաջինը Մաշտոց է, որ համաչափ ու մանր բոլորգրով Գայանեն օրինակել է պարոն Ջանումի

²⁹⁰ ՄՄ ձեռ. 9792, թերթ՝ 335, կյուրթ՝ թուրթ, 21,6 × 16, գիր՝ բոլորգիր, տող՝ 19: Տե՛ս նաև **L. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, էջ 460:

²⁹¹ **Ս. արք. Չալալեանց**, Ճանապարհորդություն... հ. Բ, էջ 247: **Մ. արք. Սմբատեանց**, Տեղեկագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի..., էջ 810: Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 147:

²⁹² Արցախ, էջ 96, Արցախի վանքերը, էջ 31, Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 148 :

²⁹³ ՄՄ ձեռ. 7429, թերթ՝ 103, կյուրթ՝ թուրթ, 35,3 × 23, գիր՝ շղագիր, տող՝ 33-49:

²⁹⁴ Ըստ ավանդության՝ Վաչագան թագավորը, չենթարկվելով պարսիկների՝ հավատափոխ լինելու պարտադրանքին, հրաժարվում է թագավորությունից, քաշվում է անապատ ու ապրում մեկուսի ու մենակյացի կյանքով: Նույն ավանդության համաձայն՝ թագավորն այստեղ արտագրում է մի Ավետարան, որից էլ առաջացել է գյուղի անունը: Տե՛ս նաև **Մովսես Կաղանկատուացի**, էջ 47:

²⁹⁵ **Ս. արք. Չալալեանց**, Ճանապարհորդություն... հ. Բ, էջ 246: **Վ. Հացունի**, Հայուհին պատմութեան առաջ, էջ 174:

²⁹⁶ ՄՄ ձեռ. 7429, թերթ՝ 8բ, Տե՛ս նաև՝ **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 445, **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:

²⁹⁷ **Վ. Հացունի**, Հայուհին պատմութեան առաջ, էջ 174, **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, էջ 445, **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:

²⁹⁸ **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 441:

խնդրանքով 1641 թվականին «ի յերկիրս Ադուանից՝ ի գեաւդաքաղաքն Աւետարանոց՝ ընդ հովանեաւ Սր. եկեղեցոյս Յարութիւն»²⁹⁹: Համեստ ծաղկազարդումը՝ մի քանի ճակատագրողեր, լուսանցազարդեր ու զարդագրեր, նույնպէս կատարել է Գայանեն: Գլխավոր հիշատակարանում, որտեղ գրիչն իր անունը թողել է ծածկագրով, խնդրում է հիշել իր հոգևոր հայր «գրքսնաջան և բազմաներախտ և զքաղցրագոյթ» տեր Առաքելին, որ իրեն «սնոյց խրատու և ուսմամբ սուրբ գրոց», իր ավագ քույր և հոգևոր ծնող Հռիփսիմեին, որ մանկուց դաստիարակել է իրեն, ինչպէս նաև ուխտի բոլոր միաբաններին (թերթ 228ա):

Արդար վաստակով ձեռք բերած Մաշտոցը Ջանումը նվիրել է Մարտիրոս քահանային՝ որպէս հիշատակ իր ծնողներին և բոլոր արյունակից մերձավորներին: Մտացողը խնդրում է հիշել իրեն և նգովում նրան, ով այս Մաշտոցը Մարտիրոսի ձեռքից կփորձի առնել: 1823 թվականին Ջրաբերդի Իննմասն կոչվող անապատում Խաչատուր դպիրը, տեսնելով «զպիտանացու գիրքս զայս... յիրաւի ցաւեցեալ մեզ զբազում ցաւս, զի կայր անկեալ ի ձեռս անշքաց եւ անպատիւ եղեալ», լրացրել է թերին և նորոգել, որպէսզի ոչ մի պակասություն չունենա (թերթ 289ա):

Դարձյալ Ավետարանոցի Կուսանաց անապատում Գայանեն մի Ավետարան օրինակել է 1671 թվականին³⁰⁰: Ձեռագրի գտնվելու վայրը հայտնի չէ:

Երրորդ ձեռագիրը նույնպէս Ավետարան է, որ 1650 թվականին «ի յերկիրս Վարանդա, ի գեաւդս Թաղավարդ» Մարգիս քահանայի խնդրանքով բոլորգրով օրինակել է Կատարինե կույսը, իսկ ծաղկազարդումը կատարել է Գայանեն: Ավետարանը չունի համաբարբառ աղյուսակներ: Գրիչը գրել է միայն Մատթեոսի Ավետարանի ցանկն ու նախադրությունը, իսկ մյուսների համար թողել է մաքուր թերթեր՝ հետագայում դրանք ավելացնելու համար: Գայանեն նկարել է Ավետարանի խորաններն ու զարդագրերը, որոնց նկարազարդումը նույնպէս համեստ է: Թեպէտ Գայանեն հմուտ է ու գեղեցկա-

զիր գրչության արվեստում, բայց անվարժ է ու անփորձ ծաղկազարդման մեջ: Գրվելուց հինգ տարի հետո ձեռագիրը կազմելու են տվել: Մատյանն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում՝ 931 թվահամարի տակ³⁰¹: Կատարինեն անապատի սանուհիներից էր. նա աշակերտել է կուսանուհի Մարիամին: Վերջինս հոգացել է իր սանի կրթության ու դաստիարակության մասին, նրան կարդալ է սովորեցրել, ապա ուսումը կատարելագործելու նպատակով ուղարկել է Սյունյաց Ծենհեր անապատի խոստովանահայր Աստվածատուր քահանայի մոտ՝ «վասն շարականի և գիր ուսուցանելոյ»:

Կատարինեի հիշատակարանում դարձյալ միասին են հիշվում անապատի միաբաններ խոստովանահայր տեր Առաքելը, գրիչ և ծաղկող Գայանեն և նրա քույր մայրապետ Հռիփսիմեն: Կատարինեն ակնածանքով է հիշում նաև իր երկու ուսուցիչներին՝ բնիկ վանեցի Աստվածատուր քահանային և Մարիամին, որ ծնունդով Նախիջևանի դիմաց, Պարսկահայքում գտնվող Դարաշամբ գյուղից էր: Գրիչը վերջում խնդրում է չմոռանալ նաև իրեն՝ «զղարիպն կրկին դարիպացեալ հոգւով և մոխրաթաւալ և հողոյ հաւասար» գրիչին: 1745 թվականին ձեռագիրը պատկանել է ցղնեցի Սողոմոնի որդի Թաթեոսին, իսկ երրորդ ստացողներն են Աղապն ու նրա կինը՝ Սուլթանումը:

Ավետարանոց ավանում 1667 թվականին գրիչ Խոսրովը մայրապետ Հռիփսիմեի խնդրանքով գրչագրել է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը³⁰²: Ավետարանոցի Սր. Աստվածածին եկեղեցում 1671 թվականին անհայտ գրիչն ընդօրինակել է թղթյա պատկերազարդ մի Ավետարան³⁰³:

Այստեղ է պահվել այժմ նյույորքաբնակ Արսեն և Արման Փուշմանների սեփականությունը հանդիսացող մագաղաթյա Ավետարանը³⁰⁴: Ավետարանը գրված է բոլորգրով, գրությունը՝

²⁹⁹ ՄՄ ձեռ. 2404, թերթ՝ 249, նյութ՝ թուղթ, 11 × 9, գիր՝ բոլորգիր, տող՝ 17, տե՛ս նաև՝ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 14:

³⁰⁰ Ս. արք. Զալալեանց, Ճանապարհորդություն..., հ. Բ, էջ 246:

³⁰¹ Հ. Ոսկեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1963, հ. Բ, էջ 515-517: Տե՛ս նաև Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 626-627:

³⁰² ՄՄ ձեռ. 7421, թերթ 596, նյութ՝ թուղթ, 35,5 × 23,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 35:

³⁰³ Արցախ, էջ 94:

³⁰⁴ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», թ. 12, էջ 258-261, նաև՝ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 851-852: Արցախ, էջ 94-95:

երկայուն, ունի 319 թերթ (12 × 16,3), տողերի քանակը՝ 19, կազմը կաշի է՝ Ա փեղկին արծաթյա խաչելության պատկերով: Այս շքեղ մատյանը Եղիա միայնակյացի խնդրանքով 1659 թվականին Քարահատի Սբ. Աստվածածին եկեղեցում օրինակել է «երբն-երբն գունովք եւ ոսկեգոծ որակօք» ծաղկազարդել է հմուտ գրիչ և ծաղկող Գրիգոր երեցը: Ձեռագիրը Եղիան նվիրել է իր հոգևոր ծնող «մաքրազարդ եւ սրբաներկ» տեր Տերունին, որ «ստացաւ բազում գրեանս եւ շատ շինութիւն աւելացոյց ի յանապատին»: Ստացողի անունից գրիչը խնդրում է հիշել Եղիային, որ ջանք ու եռանդ չխնայեց մատյանի ստեղծման համար, Գրիգոր եպիսկոպոսին, Կարապետ արքային, ուխտի մյուս միաբաններին, իրեն՝ գրիչն և տեր Դավիթին, որ իրեն օգնել է աշխատանքի ընթացքում: Վերջում գրիչը խնդրում է անմեղադիր լինել, որովհետև մագաղաթը շատ վատն էր և մեծ դժվարությամբ է ծաղկազարդումն ավարտել: Քանի որ գրչության արվեստով ու ներքին հարդարանքով Ավետարանը շատ էր շքեղ, տարիներ հետո Եղիան ու Մխիթար միայնակյացը ցանկանում են արտաքին տեսքն էլ պատշաճ տեսնել և կազմի Ա փեղկին արծաթյա խաչելության պատկեր են ավելացնում: Ավետարանը 6000 դեկանով գնել են Մարգիսն ու նրա կողակից Ոսկանձը: 1675 թվականին Ավետարանը դարձել է Դարամուրատ անապատի սեփականությունը: Իսկ տեր Եղիազարի՝ 1747 թվականի հիշատակումից տեղեկանում ենք, որ ձեռագիրը հիշատակ է մելիք Բաղիի դուստրերին՝ Հռուբսիմեին, Դավլաթին և Շահանդուխտին: Ավետարանոց ավանի Սբ. Աստվածածին եկեղեցում արծաթյա տուփերի մեջ պահվել են նաև Թաղեոս և Բարդուղիմեոս առաքյալների, Պանդալիոնի և կենաց փայտից մասունքներ³⁰⁵:

Վերին Թաղավարդ գյուղում անհայտ գրիչը 1717 թվականին օրինակել է Առաքել Մյունեցու «Աղամագիրքը»³⁰⁶: 15-րդ դարում Առաքել երեցը իր եղբայր Պողոսի հետ «ի գաւառս Վարընդոյ, ի գեղս, որ կոչի Լիզներ, ի դուռը Սուրբ Յովհաննէսին» սկսել ու ավարտել է մի Ավետարան³⁰⁷:

³⁰⁵ Արցախ, էջ 95:

³⁰⁶ ՄՄ ձեռ. 3888, թերթ՝ 148, նյութ՝ թուղթ, 17 × 10,5, գիր՝ նոտրգրանման շղագիր, տող՝ 20-22:

³⁰⁷ ՄՄ ձեռ. 4176, թերթ՝ 252, նյութ՝ թուղթ, 26 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 21-22:

Խնուշինակ գյուղի եկեղեցում է պահվել 1672 թվականին Վանում Վարդան գրչի օրինակած և Գրիգոր Վանեցու ծաղկած Ավետարանը³⁰⁸, որը 1845 թվականին Մելիք Ջհանբախշի դուստր Նանագույլը նվիրել է Ավետարանոցի Սբ. Աստվածածին եկեղեցուն: Իսկ շուշեցի տիրացու Անաստաս Տեր-Մկրտչյանը 1855 թվականին Խնուշինակ գյուղի եկեղեցուն է նվիրել մի Մաշտոց³⁰⁹:

Գրչագրեր են հասել նաև **Թաղար** գյուղից (ավանից): 1834 թ. Գասպար քահանան անվարժ բոլորգրով Մայր Մաշտոց է օրինակել: Ձեռագրի ստացողը գրիչն է³¹⁰:

Թաղարում է պահվել ՄՄ 2464 Շարակնոցը: Գրվել է 1665 թվականին, գրիչը, գրչության վայրն ու առաջին ստացողն անհայտ են³¹¹: Ձեռագիրը թերի է՝ սկզբից և վերջից թերթեր ընկած լինելու պատճառով: Երկրորդ ստացողը՝ մեծթաղարցի ուստա Միրզան արդար վաստակով այլազգիներից գնել է ձեռագիրը՝ հիշատակ իրեն և ազգականներին³¹²: Իսկ Մելքումը 1707 թվականին ստացողի անունից հիշատակ է թողել ձեռագրի մի քանի էջերում: Գլխավոր հիշատակարանը պատմում է, թե ինչպես թշնամին մտել է Արցախի գավառները, կողոպտել, տարել է ամեն ինչ, գերվել են նաև ձեռագրերը, կործանվել ու թալանվել են Գանձակի, Դիզակի, Վարանդայի, Խաչենի հոգևոր կենտրոնները. «Լազկին եկն Կանճա, Խաչին, Վարանդա, Դուգաղ ամեն եսիր տարաւ Դաղիստան: Եղ նորա այլազգն զօրացան, երկիր խնկարկեցին, վանք, զանցապատ, եկեղեցիք կօղօբդեցին: Չայս Շարակնոցս այլազգի ձեռաց գնեցի, որ է Ծիրվանդալոյ»: Բարեբախտաբար, տարիներ հետո գտնվել ու փրկվել է այս Շարակնոցը:

Թաղար ավանի Ամենափրկիչ եկեղեցում է պահվել 1776 թ. Ռոտտանի Լոր գյուղի Սբ.

³⁰⁸ ՄՄ ձեռ. 9032, թերթ՝ 257, նյութ՝ թուղթ, 12,1 × 9,3, գիր՝ բոլորգիր, տող՝ 22: Հմմ. Արցախ, էջ 119:

³⁰⁹ Արցախ, էջ 119:

³¹⁰ **Յ. Թովմեան**, Յուրակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Ա, էջ 50:

³¹¹ ՄՄ ձեռ. 2464, թերթ՝ 296, նյութ՝ թուղթ, 12 × 9,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

³¹² Ստացողը հիշատակարանում հիշում է ծնողներին՝ Գրիգորին և Խանումին, եղբայրներին՝ Ավաքին, Աղայճանին, Մանին և կողակցին՝ Խանապաշուն, որդուն՝ Ոյանին, դստերը՝ Չանանին:

Գևորգ եկեղեցում Կաթավաքերդի Մահրավու գյուղի քահանա տեր Վրդանեսի խնդրանքով Արիստակես սարկավագի օրինակած Ավետարանը: Մագաղաթյա և նկարագրողման արվեստով համեստ այս Ավետարանը Թաղարցի Պողոսնոց Պողոսի որդի Աբրահամը տեսել է այլազան մոտ, գնել և նվիրել է Տեղ գյուղի Սբ. Գևորգ եկեղեցուն: Ապա, ինչպես երևում է Աբրահամի վերջին հիշատակարանից, նա ձեռագիրը նվիրել է Թաղարի Ամենափրկիչ եկեղեցուն՝ իր ծնողների՝ Պողոս և Խաթուն Բաղդասարյանների հիշատակին³¹³:

Ազոխ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցում Մարգիս անունով ունի ծերունի քահանա օրինակել է թղթյա մի Ավետարան³¹⁴:

Խաչմաչ գյուղում Թաղեռես քահանայի խնդրանքով Աղեքսանդր եպիսկոպոսի օրինակած մի Ավետարան է պահվել Ծուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում³¹⁵: Իսկ Խաչմաչ գյուղի Սբ. Ստեփաննոս եկեղեցու քահանայի մոտ եղել է երկու գրչագիր Սաղմոսարան: Նրանցից մեկը՝ մագաղաթյա և գեղեցկագիր, ունեցել է նաև Աթանաս եպիսկոպոսի Դավիթ մարգարեի մեկնությունը³¹⁶: Վերջին չորս ձեռագրերի ճակատագրերը հայտնի չեն:

Սարուշենի հնաշեն, բայց գավառի բոլոր եկեղեցիների մեջ իր ներքին և արտաքին հարդարանքով առանձնացող Սբ. Աստվածածին եկեղեցին հռչակված է նաև Սարուշենի Կարմիր Ավետարանով³¹⁷: Հնության, թե՞ գորության պատճառով Ավետարանը տեսնելու համար այստեղ են եկել շատ ուխտավորներ ոչ միայն Արցախից, այլև հարևան երկրներից, եկել են անգամ մահմեդականներ:

Նկարագրողման արվեստով Ավետարանն առանձնապես աչքի չի ընկնում: Այն մագաղաթյա է, գրվել է հավանաբար 1182 թվականին³¹⁸: Գրչության թվականի վերաբերյալ մատյանի սկզբում պահպանվել է դժվարընթեռնելի մի փոքրիկ գրություն. «Գրեցաւ սուրբ Աւետարանս...յաբեթեանս թուականին ՈԼԱ (1182)»:

Քանի որ բնագիրն ամբողջությամբ գրված է երկաթագրով, Գ. Հովսեփյանը կարծում է, որ ձեռագիրը գրվել է ավելի վաղ, իսկ 1182-ը վերանորոգման թվականն է³¹⁹: Ավետարանն ունեցել է Ռստակես, Վրդանես, Ստեփանոս վարդապետների պատկերները: Նրանք ձեռագրի գրիչներն են: Ռստակեսն առաջին գրիչն է, որ հասցրել է գրել Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները՝ ձեռագրի սկզբում ու խորանների մեջ թողնելով հիշատակագրություններ, որոնցում խնդրել է հիշել իրեն. «ՁՌստակես գրիչ յիշեսցիք, սիրելի՛ եղբարք...»: Նրա հիշատակարանը անավարտ է մնացել, որովհետև վախճանվել է գրիչը՝ կիսատ թողնելով աշխատանքը: Այն շարունակել է Վրդանես գրիչը՝ Ռստակեսի հիշատակարանին ավելացնելով. «Որ փոխեցաւ առ Քրիստոս, որ գրեց զՄատթեոս և զՄարկոս»: Վրդանեսը գրել է Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները, իսկ իր նկարի տակ թողած գրությամբ խնդրել է հիշել իրեն՝ մեղավոր գրչին՝ «զի չիք մարդ մեղավոր, քան զիս՝ յերկրի»: Վրդանեսին շարունակել է Ստեփանոսը և դարձյալ նկարի տակ միայն անունն է թողել՝ «Ստեփաննոս»: Ձեռագիրը ծաղկել է Հակոբը և Մատթեոսի պատկերի տեղում փակագրով թողել է հիշատակարան. «Տէ՛ր Աստուած, ողորմեա Յակովբայ նկարչի»:

Ավետարանը գերի է տարվել Պարսկաստան: 1827 թվականին Ծուշիի Ղալի գյուղի բնակիչ Միրզա Օհանեսյան-Չարկարյանցովը ձեռագիրը տեսել է Թավրիզում, մեծ գումարով գնել և վերադարձրել է Ծուշի ու նորոգել տվել³²⁰: Մատյանի հետագա ճակատագիրն անհայտ է:

Կղարծի գյուղի Սրբոց Թարգմանչաց եկեղեցում պահվել է կենաց փայտից մի մասունք՝ ամփոփված արծաթյա խաչի մեջ և 1477 թվականին Հովհաննես գրչի՝ Աղթամարում օրինակած թղթյա պատկերագրող Ավետարանը: «Ի դառն և ի նեղ ժամանակ խուժադուժ ազգաց նետողաց տանկաց ազգաց չարամահ եղած» Ավետարանը փրկվել ու բերվել է Արցախ, որտեղ 1502 թվականին ՉՌ (6000) դահեկանով մի քահանա գնել ու նվիրել է Գանձասարի առաջնորդին, վերջինից էլ այն ձեռք է բերել Թորոս երեցը³²¹:

³¹³ Արցախ, էջ 86-87:

³¹⁴ Նույն տեղում, էջ 88:

³¹⁵ Նույն տեղում, էջ 140:

³¹⁶ Նույն տեղում, էջ 100:

³¹⁷ **Յ. Թոփճեան**, Յուզակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Բ, էջ 47: Արցախ, էջ 101:

³¹⁸ **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ, էջ 234:

³¹⁹ **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 491: Արցախ, էջ 101-102:

³²⁰ Արցախ, էջ 100-102: **Ս. Զալալեան**, Ճանապարհորդութիւն..., հ. Բ, էջ 342:

³²¹ Արցախ, էջ 112:

Տասնինը ձեռագիր մատյան է հասել **Ճուշից**, որոնք գրվել են 18-19-րդ դարերում: Այդ ձեռագրերը հիմնականում բառարաններ են, փիլիսոփայական, բարոյագիտական, տոմարական, բժշկական նյութերի ժողովածուներ: Դրանք պահվում են Մաշտոցյան Մատենադարանում (տե՛ս ցանկը):

Ճուշիի եկեղեցիներում պահվել են նաև բավական մեծ թվով ձեռագրեր:

Վայոց ձորի Հերմոնի վանքում Եսայի նկարչի գրած և ծաղկած մագաղաթյա Ավետարանը պահվել է Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցում: Ձեռագիրն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (ՄՄ ձեռ. 9431): Այստեղ են եղել Նիկողայոս գրչի 1658 թվականին ստույգ և ընտիր օրինակից Կաֆայում գրված և ճաշակով նկարագարով մագաղաթյա Ավետարանը³²², Վարդանի 1460 թվականին Վանում օրինակած Ավետարանը³²³: 1656 թվականին Կոստանդնուպոլսում Ղազար գրչի օրինակած տասնմեկ նրբաճաշակ և ընտիր պատկերներով մագաղաթյա Ավետարանը Ամենափրկիչ եկեղեցում ստացել է Ղուկասը³²⁴: Իսկ 1765 թվականին այն գնել է Ղազանչեցոց Նարինեն. վերջինիս զավակներն էլ Ավետարանը նվիրել են եկեղեցուն:

Ագուլեցոց Սբ. Աստվածածին եկեղեցում են եղել 1645 թվականին Տավուշի Թովուզ գյուղում Մարուխանի խնդրանքով Եսայի գրչի օրինակած Ավետարանը³²⁵, Չարեքա անապատի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի աշակերտ Մարգիս կրոնավորի 1641 թվականին նորոգած Ավետարանը³²⁶, Քարահատում Բարսեղ քահանայի 1680 թվականի ընդօրինակած Ավետարանը³²⁷, 1308 թվականին Ասալինսկայում Ղազարի օրինակած Ավետարանը, որ հետո նկարագարդ էլ Ծերուն ծաղկողը և նորոգել վերջին ստացող Կիրակոս քահանան³²⁸:

Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցում է պահվել 1414 թվականին Կտուց անապատում Հովսեփ քահանայի ձեռքով ընդօրինակված Ավետարանը, 1473 թվականին մոկացի հայտնի գրիչ Իսրայելի օրինակած Ավետարանը, 1778 թվականին տեր Մեսրոպի գրած, ավելի ուշ Հակոբի ձեռքով նորոգված Ավետարանը, և փորադիր մի Ավետարան, որ պատվիրել է Մարիամը Հովհաննես արեղային³²⁹:

Ճուշիի Նոր թաղի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն շուշեցի Ավագ Դանիելյան-Ղազարյանը նվիրել է Գեղվաձորի Կից գյուղում ընդօրինակված գեղեցկագիր մագաղաթյա մի Ավետարան³³⁰:

Այս բոլոր ձեռագրերի գտնվելու վայրն անհայտ է:

ՋՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌ

Մեծ Հայքի Արցախ աշխարհի Ջրաբերդի գավառը տարածվում է Մռավի լեռնաշղթայի, Դաշտաբերանի, Թարթառ գետի և նրա Թրդի վտակի ձախ և Կուրակ գետակի աջ ափերին³³¹: Գավառն անունն ստացել է իշխանանիստ բերդի անունից: Աղբյուրներում գավառը կոչվել է նաև Մեծկողմանք³³², Մեծկուանք³³³, Չարաբերդ³³⁴, Թալիշ, Կուլիստան (Գուլիստան), Չիվանշիր³³⁵, Մխիթար Գոշի մոտ՝ Ճառաբերդ³³⁶, ձեռագիր աղբյուրներում՝ Չրաբերդ, Չարապերթ, Չարաբերդ, Չարապերթ, Չարիպերթ անվանաձևերով: 17-րդ դարում մելիքության կազմավորումից հետո գավառը բաժանվում է երկու առանձին գավառների՝ Ջրաբերդի և Գյուլիստանի՝ առանձին մելիքական տներով³³⁷:

³²⁹ Արցախ, էջ 147-148:

³³⁰ Նույն տեղում, էջ 147:

³³¹ Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, էջ 417: Արցախ, էջ 24, Արցախի վանքերը, էջ 115:

³³² Մովսես Կաղանկատուացի, էջ 264:

³³³ Մովսես Խորենացի, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Բ, էջ 2153, Մովսես Կաղանկատուացի, 140:

³³⁴ Մովսես Կաղանկատուացի, էջ 209, Կիրակոս Գանձակեցի, էջ 216:

³³⁵ Արցախ, 24, Արցախի վանքերը, էջ 115:

³³⁶ Մխիթար Գոշ, Ժամանակագրություն, էջ 609:

³³⁷ Մ. Բարխուդարեանց, Պատմություն Աղուանից, հ. Ա, էջ 145: Ջրաբերդ գավառի տերերն էին Մելիք-Իսրայելյանները, որոնց նստավայրը Ջրաբերդ ամրոցն էր, Մայրաքաղաքի բերդավանն ու Հին Մոխրաթաղի սպարանքը, իսկ Մելիք-Աթաբեկյաններինը՝ Ջրաբերդի Կուսա-

³²² Նույն տեղում, էջ 138:

³²³ Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Բ, էջ 146: Արցախ, էջ 139:

³²⁴ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 701: Արցախ, էջ 138:

³²⁵ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 181-182: Արցախ, էջ 145:

³²⁶ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 47: Արցախ, էջ 143:

³²⁷ Արցախ, էջ 144:

³²⁸ Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԸ դ., էջ 57: Յ. Թովմեան, Յուզակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մաս Բ, էջ 46: Արցախ, էջ 148:

Գավառում դպրության գործին վերաբերող ամենավաղ տեղեկությունները 5-րդ դարից են և կապվում են Վաչագան Գ թագավորի անվան հետ, երբ նա Թալիշ գյուղից փոքր ինչ հյուսիս՝ Դյուրթական բնակավայրում, որը արքունի ամառանոցն էր, հիմնում է դպրոց, որտեղ քրիստոնեություն էին ուսուցանում քրմերի որդիներին, որոնք դառնում էին քարոզիչներ և քարոզում նոր ուսմունքը³³⁸: Արքան ինքն էր հաճախ դպրոց այցելում և հրճվում աշակերտների ընթերցանությամբ: Մովսես Կաղանկատվացին հաղորդում է, որ այս թագավորը ձեռնամուխ էր եղել Արցախում դպրության ու լուսավորության տարածմանը և կառուցել է տվել 365 եկեղեցի. «...ըստ թուոյ աւուրց տարւոյն եկեղեցի միայն բարեպաշտն Վաչագան շինեաց յարեւելս»³³⁹: Վաչագան թագավորը քրիստոսասեր, խաղաղասեր, գրասեր ու շինարար էր: Նրա թագավորության տարիներն այժի են ընկնում սահմանադրական և կրոնական բարեփոխումներով, տնտեսական և մշակութային կյանքի աշխուժացմամբ: Եկեղեցաշինության այս վերելքը չէր կարող չնպաստել մշակութային կյանքի զարգացմանը, ինչը շատ բնական է, որովհետև հենց եկեղեցիներում էին ստեղծվում դպրոցներ, գրչության արհեստանոցներ, որոնք դառնում էին գրչության կենտրոններ:

Գավառում գրչության հայտնի կենտրոններ գործել են Եղիշեն առաքյալի, Երից մանկանց վանքերում և Գյուլիստանում:

Ջրվշտիկ Եղիշեն առաքյալի վանքը, որ հիմնված է Մռավ լեռան լանջին՝ մի անտառապատ ու ժայռոտ բարձունքի վրա, վաղագույն ժամանակներում հեթանոսական սրբավայր է եղել՝ Միհր Ներսեհեա³⁴⁰ կամ Ներսմեհա ուխտ³⁴¹ անունով: Զրիստոնեության ընդունումից հետո վանքը կոչվել է Ջրվշտիկ՝ մոտ գտնվող ջրվեժի անունով³⁴²: Մենաստանը առաքյալի անունով է կոչվում 5-րդ դարից, երբ, ըստ ավանդության, Ադ-

վանից Վաչագան Բարեպաշտ թագավորը Հռոեկա վանքից բերում և այստեղ է ամփոփում Եղիշեն առաքյալի մատուները, վրան կառուցում մատուռ-դամբարան, որտեղ էլ վախճանվելուց հետո թաղվում է նաև ինքը³⁴³: 1286 թ. Վաչագան թագավորի գերեզմանի վրա Միմեոն վանահայրը կառուցում է եկեղեցի: Այդ մասին արձանագրություն է պահպանվել վանքի հյուսիսարևելյան կողմում գտնվող մատուռի վրա. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին..., որ շինեց գեկեղեցիս առաջնորդութիւն տէր Միմեոնի, թվին ՉԼԵ (1286)»³⁴⁴: Տեր Միմեոնը մահացել է 1298 թվականին և թաղվել վանքի գավիթում³⁴⁵: Նրանից հետո հաջորդաբար վանքի առաջնորդներ են եղել Հովհաննեսը, Վարդանը, Մատթեոսը, Կարապետ և Դավիթ եպիսկոպոսները, Մելքիսեդը, որ սպանվել է թուրքերի կողմից, Կիրակոսը, Ավագ Դալի Մահրասա վարդապետը: Վանքի գերեզմանատանն են ամփոփված վանքի առաջնորդներն ու միաբանները³⁴⁶, նշանավոր մելիք Ադամը³⁴⁷: Ջրվշտիկ Եղիշեն առաքյալի վանքը գավառի եպիսկոպոսանիստն էր և որպես սրբատեղի, հոգևոր ու մշակութային կենտրոն՝ համախմբել է շատ հայտնի հոգևոր և աշխարհիկ անձանց: Որոշ ժամանակ վանքում են ապաստանել նաև Մաքենյաց ուխտի միաբանները³⁴⁸:

Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավիթից, սեղանատնից, յոթ մատուռներից, որոնք ծառայել են որպես դամբարաններ, վանական և առաջնորդական շինություններից, մելիքական պալատ-ապարանքից և օժանդակ այլ շինություններից³⁴⁹: Համալիրն ամբողջացնում է շրջապարիսպը՝ երկու կամարակապ մուտքերով, իսկ համալիրի բակում տեղադրված

պատ գյուղը: Գյուլիստանում իշխում էին Մելիք-Բեգլարյանները. նրանց իշխանանիստն էր Գյուլիստան բերդը և Թալիշ գյուղի մոտ՝ Հռոեկա վանքի դիմաց գտնվող ապարանքը:

³³⁸ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 102:

³³⁹ Մովսես Կաղանկատուացի, էջ 417:

³⁴⁰ Ստեփանոս Օրբելեան, էջ 159:

³⁴¹ Մովսես Կաղանկատուացի, էջ 41:

³⁴² Նույն տեղում, էջ 41: Ըստ Ջալալյանցի՝ «Ջրվշտիկ» ստուգաբանվում է «Ջուր միշտ կա», տե՛ս Ս. արք. Ջալալեանց, Ճանապարհորդություն..., հ. Ա, էջ 175:

³⁴³ Յ. Տաշեան, Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 60, Գ. Ինճիբեանց, Ստորագրություն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 535-36:

³⁴⁴ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 110, Արցախի վանքերը, էջ 118:

³⁴⁵ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 108, Արցախի վանքերը, էջ 120:

³⁴⁶ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 108-110:

³⁴⁷ Արցախի վանքերը, էջ 117, Լեո, Իմ հիշատակարանը, էջ 298, «Մասիս», 1889, թ. 3931, էջ 129-135, «Նոր-Դար», 1893, թ. 118, 1897, թ. 203:

³⁴⁸ Ստեփանոս Օրբելեան, էջ 119:

³⁴⁹ Ըստ արձանագրության՝ գավիթը 1264 թվականին կառուցել է Խաչատուր շինարարը (Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 106):

են 12-13-րդ դարերի խաչքարեր ու հուշարձաններ: Արցախի աշխարհի այս հնագույն վանքը Ջրաբերդի հոգևոր և մշակութային կենտրոններից էր և գլխավոր ուսումնավայրը: Գրչակենտրոնից մեզ հասած ձեռագիր մատյանները 16-17-րդ դարերից են, թեպետ ենթադրելի է, որ այստեղ ձեռագրեր են ընդօրինակվել նաև ավելի վաղ շրջանում:

Ըստ մի ձեռագրի հիշատակարանի՝ 1554 թվականին՝ Կարապետ և Դավիթ եպիսկոպոսների աթոռակալության տարիներին «յերկիրն Ջրաբերդոյ՝ ընդ հովանեաւ Սբ. Եղիշէ առաքելոյն և Երից մանկանց և Աւագ սբ. Նշանիս» ծաղկազարդվել ու կազմվել է մագաղաթյա մի Ավետարան, որ գրվել է Ծուլավերի Սբ. Մեսրոպ եկեղեցում³⁵⁰: Ձեռագրի ծաղկազարդումն ավարտվել է Աղվանից Սարգիս կաթողիկոսի մահվան տարում՝ 1555 թվականին: Մ. Բարխուդարյանցը նույնպես 1555 թվականն է համարում Սարգիս կաթողիկոսի մահվան տարին³⁵¹:

16-րդ դարի երկրորդ կեսին Ջրաբերդում ձեռագիր մատյաններ էր գրում ու ծաղկում Աթանասը, որի մասին սակավ տեղեկություններ ենք ստանում իր իսկ ձեռքով գրված ձեռագրերի հիշատակարաններից: 1551 թվականին Աթանասը նկարում է Սանահինում 1534 թվականին Տերունական գրչի օրինակած Ավետարանի անվանաթերթերը, լուսանցազարդերն ու զարդագրերը³⁵²: 1559 թվականին Կարապետ եպիսկոպոսի խնդրանքով Աթանասը Հայսմավուրք է գրում ու ծաղկազարդում «ի կաթողիկոսութեան տեառն Յոհաննիսի ի յերկիրս Ջարաբերդու... մեծապայծառ եւ գերառնչակ ուխտս Եղիշէի առաքելոյ Սուրբ այթոռոյն եւ առաջնորդութիւն սորա Կարապետ եւ Դավիթ եպիսկոպոսացս»³⁵³: Գլխավոր հիշատակարանում, որը վերջից թերթեր ընկած լինելու պատճառով թերի է, գրիչը խնդրում է հիշել ստացողին, նրա ծնողներին, եղբայրներին և քույրերին: Ստացողի անունից հիշատակագրություններ կան ձեռագրի բազմաթիվ էջերում, որտեղ հիշվում են ուխտի միա-

բաններ Կարապետ եպիսկոպոսի մորեղբայր տեր Յոհանը, տեր Մաղաքիան, իսկ վերջում գրիչը խնդրում է հիշել նաև իրեն ու իր ծնողներին: Հետագայի հիշատակարաններում հիշվում են Ռեան արեղան և նրա մերձավորները (թերթ 233բ, 246բ, 297բ):

Աթանաս արեղան երկու տարի հետո՝ 1561 թվականին, «ի յերկիրս Ջարաբերդոյ, ընդ հովանեաւ Սբ. Եղիշէ առաքելոյս եւ Երից մանկանցն Աւագայ սբ. Նշանիս եւ Թումայի առաքելոյս» նկարազարդում է 1560 թվականին Ղուկաս բարունապետի խնդրանքով Մարգարա քահանայի և Եղիա եպիսկոպոս Բերկրացու Այրարատում օրինակած Հայսմավուրքը³⁵⁴: Մատյանի 1-241 թերթերը գրել է Մարգարա քահանան, 241 թերթից նրան շարունակել է Եղիա եպիսկոպոսը: Նրանց աշակերտել է տեր Մինասը, իսկ Մովսես արեղան օգնել է գրչին՝ թուղթ կոկելով: Մեկ տարի անց ձեռագիրը ծաղկելու համար տրվում է Աթանասին: Ծաղկողի հիշատակարանից երևում է, որ նա ինքնու է և կատարելապես չի տիրապետել մանրանկարչության արվեստին, ուստի խնդրում է անմեղադիր լինել, որովհետև իր հնարավորության սահմաններում է կատարել աշխատանքը. «Անմեղադիր լերուք, զի կար մեր այս է, վարպետ ծաղկողի չէի տեսեալ» (թերթ 4բ): Այս ձեռագիրը եղել է Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանում (թերթերից մի քանիսում դրված է նրա անձնական կնիքը):

Աթանասից մեզ հասած հաջորդ մատյանը 1565 թվականին «ի դառն ու վշտաշատ ժամանակիս» Երից մանկանց վանքում օրինակած Ավետարանն է³⁵⁵: Ռատակես մենակյացը, որ երկիցս գնացել էր Երուսաղեմ՝ երկրպագության, եղբոր՝ անգավակ Քարիմշիմի հետ և նրա կամեցողությամբ Աթանասից խնդրում և ստանում են «զանառիկ մեծութիւնս և զփարթամ հարստութիւնս և զուրախութիւնս մանկանց եկեղեցւոյ տերունեան աւետաբեր սուրբ Աւետարանս»՝ որպես հիշատակ իրենց գերդաստանի: Պարզ ու ճաշակով նկարազարդումը կատարել է գրիչը: Ստորին լուսանցքներում տեղ-տեղ նա կարմ-

³⁵⁰ Արցախի վանքերը, էջ 120,122, Մ. արք. Մմբատեանց, Նկարագիր Սբ. Կարապետի վանից Երնջակայ, էջ 146:

³⁵¹ Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 21:

³⁵² ՄՄ ձեռ. 217, թերթ՝ 327, նյութ՝ մագաղաթ, 18 × 13, գիր՝ բոլորգիր, սող՝ 19:

³⁵³ ՄՄ ձեռ. 4477, թերթ՝ 608ա: Ձեռագիրը թղթյա է, 31 × 21, գիր՝ բոլորգիր, սող՝ 33:

³⁵⁴ ՄՄ ձեռ. 6282, թերթ՝ 626, նյութ՝ թուղթ, 31 × 20, գիր՝ բոլորգիր, սող՝ 35:

³⁵⁵ ՄՄ ձեռ. 2928, թերթ՝ 230, նյութ՝ թուղթ, 27,5 × 18, գիր՝ բոլորգիր, սող՝ 23:

րագրով ցուցումներ է տվել, ուղղումներ արել, իսկ 7ր էջին՝ Մատթեոսի նկարի տակ ավելացրել է. «Խորանս դենացել էր, յիրանց կպել, ես չէի իմացել, թողութիւն արեք»։ Գրիչը գլխավոր հիշատակարանում առաջին անգամ նշում է ծնողներին՝ Վրդանես քահանային և Գուլպահարին, և ուսուցչին՝ Ղուկաս վարդապետին, որից հետո հիշում է նաև Հովհաննես վարդապետին։ Ստանալով մատյանը՝ Ռատակեսն այն տվել է տեր Մկրտիչին, իսկ 1745 թվականին Ավետարանը պատկանել է թաղարցի Պակու որդի Ապաղին, որն էլ մատյանը նվիրել է Թաղարի Ամենափրկիչ վանքին։

Տարիներ հետո՝ 1576 թվականին, Աթանասը կատարում է կաթողիկոսական պատվեր. ծաղկազարդում է Հովհաննես Աղվանից կաթողիկոսի խնդրանքով Կարապետ գրչի Գանձասարում օրինակած Մաղմուսարանը (ՄՄ ձեռ. 1923)³⁵⁶։

1681 թվականին «ի յերկիրս Չարաբերդ ընդ հովանեաւ Սբ. առաքելոյս Եղիշէի ի հայրապետութեան տեսոն Երեմիայի սրբազան կաթողիկոսի և առաջնորդութեան Սբ. ուխտիս Ջրվշտկայ Յոհան եպիսկոպոսի Մեծշինեցոյ ի թագաւորութեանն շահ Սուլէյման ինքնակալին, նաև իշխող ամենայն գաւառացս Աբաս դուլի խանն» (թերթ 280բ) Ահարոն Մայեկացին Հակոբ քահանայի խնդրանքով արտագրել է մի Մաշտոց³⁵⁷։ 1682 թվականին «յարքեպիսկոպոսութեանն Սրբոյ աթոռոյն Եղիշէի առաքելոյն՝ Յովհաննու Մեծիգեղոյ» Սարգսի կին Մարիամը Հովսեփ քահանայից խնդրել ու ստացել է մի Ավետարան և նվիրել Ջրաբերդի Սբ. Աստվածածին եկեղեցուն, «որ է մերձ Սրբոյ Երից մանկանց եւ յերկիրս Չարաբերդու»³⁵⁸։ 1787 թվականին վանքում գրված մի Քարոզգիրք տիրացու Հովհաննեսը նվիրել է մեծշենցի տեր Մելիքսեթի որդի Սողոմոն վարդապետին³⁵⁹։

Վանքի գրատունը հարստացել է նաև նվիրատվություններից։ Համաձայն գավթի մույթե-

րին պահպանված արձանագրությունների՝ ուխտի միաբաններից Գրիգորը կառուցել է Ուղտապատ եկեղեցին, գնել է մի Ավետարան և Փերթ կոչվող հողատարածքի հետ ընծայել ուխտի առաջնորդ տեր Սիմոնին և միաբանների հետ երկու ժամ պատարագ է տվել Համբարձման տոնին։ Մերոք քահանան երեք գիրք է նվիրել տեր Սիմոնին, իսկ միաբանները Բարսեղի տոնին երկու պատարագ։ Դավիթը և նրա կինը միաբանությանը նվիրել են մի խաչ, Առաքելոց տոնին ստացել են երեք պատարագ³⁶⁰։ 1607 թվականին մի քանի ձեռագրեր է նվիրել նաև վանքի առաջնորդ «գերիմաստ եւ յոզնահանճար» Ավագ Դալի Մահրասա վարդապետը³⁶¹։

Հաջորդ նշանավոր կենտրոնը, որտեղ օրինակվել են ձեռագրեր, Մռավի լեռնաշղթայի հարավային անտառածածկ լանջին՝ նշանավոր Ջրաբերդ ամրոցի մոտ գտնվող **Երից մանկանց** անապատն է։ Եղիշե առաքյալի վանքին մոտ գտնվելու պատճառով այս երկու վանքերը հիշատակարաններում հաճախ միասին են հիշվում։ Գլխավոր եկեղեցին 1691 թվականին եղբոր Իզնատիոսի հետ կառուցել է տվել Սիմեոն Ա Խոտորաշենցի կաթողիկոսը։ Վերջինս էլ այն դարձրել է Գանձասարի հակաթոռ կաթողիկոսության կենտրոն, և այդ ժամանակից սկսած մինչև 1819 թվականը շարունակվել են հակամարտությունները երկու կաթողիկոսությունների միջև, ինչը ստիպել է Ամենայն հայոց կաթողիկոսներին հանդես գալ հաշտարար միջնորդությամբ։ 1664 թվականի մի արձանագրության մեջ Իզնատիոսը բարունակետ է հիշվում. «Վերտեցաւ այս յարկ նուիրանց տանն Աստուծոյ... շինեցաւ յերկունց հարազատաց Սիմեոնի կաթողիկոսի եւ Իզնատիոսի բարունուոյ... ի թուականիս ՌՃԺԳ (1664) աւարտեցաւ սոյն եկեղեցին»³⁶²։

Գրիչ Իզնատիոսը, որ Մեծշենում ծնված լինելու համար կոչվում էր Մեծշենցի, կրթությունը ստացել է Երից մանկանց վանքում, աշակերտել

³⁵⁶ Աթանասի մասին տե՛ս նաև՝ **Ա. Գեորգեան**, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ, Գահիրե, 1998, էջ 28։

³⁵⁷ ՄՄ ձեռ. 8125, թերթ՝ 303, նյութ՝ թուղթ, 15,7 × 10,7, գիրքուրգիր, տող՝ 16։

³⁵⁸ Արցախի վանքերը, էջ 116, 123։

³⁵⁹ **Մ. Բարխուդարեանց**, Աղվանից երկիր և դրախտիք, էջ 192։

³⁶⁰ Դիվան հայ վիմագրության, Արցախ, պր. V, էջ 106-107, Արցախի վանքերը, էջ 118։

³⁶¹ Արցախ, էջ 261, Արցախի վանքերը, էջ 123, Խամսայի մելիքությունները, էջ 65։

³⁶² **Ս. արք. Ջալալեանց**, Ճանապարհորդություն..., հ. Ա, էջ 178-179, Արցախի վանքերը, էջ 125, Լեռ, Իմ հիշատակարանը, էջ 275։

է դպրապետ Անդրեաս Ջուղայեցուն, նրանից սովորել է «յոյովից զարհեստս իմաստից»։ Իգնատիոսը 1661 թվականին սիրահոժար գաղափարել է «Գիրք Պիտոյիցը» Տաթևից Երից մանկանց անապատ բերված «ի մեջ բանասիրաց արեգակն» համարվող բարունապետ Ռհան Տաթևացու ստույգ և ընտիր օրինակից, որովհետև «բնաւին անհետացեալ ի մերայինս ազգաց»³⁶³։ Գլխավոր հիշատակարանում Իգնատիոսը հիշում է իր ուսուցչին՝ Անդրեասին, մեծ պապին՝ Հաննարին, հորը՝ տեր Սարգսին, մորը՝ Մավարին, հորեղբայրներին, եղբայրներին, ինչպես նաև վանքի միաբաններին։

Երից մանկանց անապատից մեզ հասած ձեռագիր մատյանների թիվը ևս մեծ չէ։

1589 թվականին «յերկիրս յԷնկելին ի գիւղն Մանճըլլիսին, ի դումն Սբ. Թորոսու» Պողոս երեցը Հակոբ վարդապետի խնդրանքով գրչագրում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը³⁶⁴։ Տարիներ հետո՝ 1592 թվականին՝ «ի դառն և ի նեղ ժամանակիս» Երեքմանկանց վանքում ծաղկագարդումն ավարտում է Պողոս Մելտենցի եպիսկոպոսը։ Նա նկարում է թեմատիկ նկարները, անվանաթերթերը (թերթ 1գ, 390ա), գլխագարդերն ու լուսանցագարդերը՝ օգտագործելով նաև արծաթ։ 1700 թվականին Թաթևոսը նորոգելու է տվել ձեռագիրը, նորոգությանը մասնակցել է նաև ժամհար Ղարիպը։ Եսայի գրիչը 1619 թվականին օրինակում է Լամբրոնացու երկերի մի Ժողովածու և նվիրում Երից մանկանց վանքին³⁶⁵։

Աբրահամ Ծաբեցի եպիսկոպոսը, ով եղել է Աղվանից Ներսես հայրապետի աշակերտը, ապա դարձել նրա նոտարը կամ քարտուղարը, 1760 թվականին նրա համար Երից մանկանց վանքում ավարտում է Ձեռնադրության Մաշտոց, որի «ընտիր և ստույգ» օրինակն ու թուղթը շնորհել էր հայրապետը³⁶⁶։ Գրիչը թերացումների համար անմեղադրություն է խնդրում. «Թէ

գտանիցին ի սմա սխալանս ինչ յուրեք ի տառս եւ կամ ի բառս, արասջիք արժանի ներման, քանզի ոչ եթէ կամաւ եւ գիտութեամբ են եղեալ, այլ ի մոռացմանէ տկար մտաց» (թերթ 94ա), մանավանդ ժամանակներն էլ անբարենպաստ էին. «ի ժամանակս գրչութեանս եղեն սաստիկ աղմկունք եւ արհավիրք հեթելաշարժութեան», ուստի շտապել է, որ վերջացնի. «միգուցէ թերակատար մնացէ զսկսեալս եւ լինիցի ծաղր ի տեսողաց»։ Գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել սրբազան հայրապետին, իր հանգուցյալ ծնողներին՝ խոջա Չաքարիային և Խաթունին, վերջում՝ իրեն՝ գրչին։ Աբրահամ Ծաբեցի եպիսկոպոսը Աղվանից Աթանաս կաթողիկոսի խնդրանքով մի Ձեռնադրության Մաշտոց էլ օրինակել է Գանձասարում 1766 թվականին (ՄՄ ձեռ. 3971)։

1725 թվականին քոյիվա Ալլահվերդի Պանագուրցին անօրենների ձեռքից փրկել և ուխտին է նվիրել մի Ավետարան, շուրջառ ու թագ՝ որպես հիշատակ իր ծնողների, դուստրերի, որդիների, բոլոր մերձավոր ազգականների³⁶⁷։

Ձեռագրեր են գրվել նաև **Գյուլիստանում**։ Այստեղից երկու գրիչ են հիշվում՝ Եսայի երեցը և Դավիթը։ Նրանց ընդօրինակությամբ երկուական ձեռագրեր են հասել, որոնք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում։

Եսայի գրչից մեզ հայտնի առաջին մատյանը Ավետարան է, որ նա գրել ու ծաղկագարդել է 1681 թվականին³⁶⁸։ Հախնազարի և Պեկաղի որդի Եսային, որ հորեղբոր՝ Մելքումի հսկողությամբ է սովորել գրչության արվեստը, գլխավոր հիշատակարանում ակնածանքով է հիշում նրան. «Հորեղբայրն Մելքում, որ էր աշխատաւոր առաւել, քան զհայր, որով բազում աշխատեցաւ ի վերայ իմ ի մանկութենէս մինչեւ ցայսօր, որպէս յայգեգործ ի յայգոյն իւրում աշխատէ, այդպէս աշխատաւորէ ի վերայ իմ մինչեւ կարգեաց զիս» (թերթ 210ա)։ Հորեղբայրը ջանացել է, որպեսզի եղբորորդին վարժ գրիչ դառնա։ Ավետարանը Եսայու առաջին գործն է, նա գրել է անվարժ բոլորգրով և սխալներով։ Գրիչը խոստովանում է, որ գրչության արվեստում հմուտ

³⁶³ ՄՄ ձեռ. 3446, թերթ՝ 369, նյութ՝ թուղթ, 15 × 9,5, գիր՝ նոտրգիր, սող՝ 19։

³⁶⁴ ՄՄ ձեռ. 1505, թերթ՝ 586, նյութ՝ թուղթ, 37,8 × 27,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 39։

³⁶⁵ Հ. Աճառեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, էջ 81, նաև՝ Արցախի վանքերը, էջ 126։

³⁶⁶ ՄՄ ձեռ. 1078, թերթ՝ 95, նյութ՝ թուղթ, 18,2 × 11,8, գիր՝ նոտրգիր, սող՝ 24-27։

³⁶⁷ Արցախ, էջ 43, Արցախի վանքերը, էջ 126-127։

³⁶⁸ ՄՄ ձեռ. 4228, թերթ՝ 213, նյութ՝ թուղթ, 21 × 16,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 21։

չէ, ուստի անմեղադրություն է խնդրում. «Անմեղադիր լերուք ի սխալութենէ, որ առաջի գիրս է, չէի ուղիղ ուսուցեալ, ի փափկութիւնէս գրեցի» (թերթ 210ա): Ստեփանոս սարկավագն օգնել է գրչին՝ թուղթ կոկելով: Երան ևս չի մոռանում գրիչը և խնդրում է հիշել: Նախնական այս կրթությունից հետո Եսային այլ կրթություն ստացել է, չգիտենք, բայց 1686 թվականին՝ «ի եպիսկոպոսութեանն Վլասին Շամախեցոյ» նրա գրչագրած երկրորդ մատյանում՝ Մաշտոցում³⁶⁹ արդեն գրիչն ավելի կանոնավոր, հավասարաչափ ու գեղեցիկ է գրում, որն ինքնին առաջադիմության ապացույց է: Գլխավոր հիշատակարանում նա դարձյալ հիշում է ծնողներին, հորեղբորը, նրա կնոջն ու Հովհաննես որդուն, ինչպես նաև իր որդուն՝ Ովանեսին, դստերը՝ Մարգարիտին, մյուս ազգակիցներին:

Դավիթ գրիչը 1689 թվականին մի Մաշտոց է օրինակել Եսայի քահանայի խնդրանքով «ի դառն և ի դժուար ժամանակի, որ պարսիկ ազգն շարժեալ և նեղացուցանէին զքրիստոնեացսն», «ի երկիրս Բարտայ՝ ի գեղօս, որ կոչի Գուլըստեան՝ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնին ու Սբ. Մինասայ՝ ի հայրապետութեանց տեառն Միմնի եւ Երեմիայի, ի եպիսկոպոսութեան Ուռեկայ Մօսիսի, ի իշխանութեան պարսից Բարտոյ Ապագ դուլի խանն» (թերթ 131աբ)³⁷⁰:

Երկրորդ Մաշտոցը «բարեմիտ և աստվածասեր» Մելիքսեթ քահանայի խնդրանքով Դավիթը նույն եկեղեցում օրինակել է 1692 թվականին³⁷¹: Մելիքսեթ քահանան ձեռագիրը նվիրել է իր ծնողներին՝ Գասպարին և Փերիին, հանգուցյալ եղբայրներ Պահաթուրի, Այդիին, Մեջլումի հիշատակին: Ստացողի անունից գրիչը հիշում է նաև նրա մյուս եղբայրներին՝ Ղազարին, Սեհիդին, Խաչատուրին, նրանց կանանց ու որդիներին, քույրերին՝ Նազումին, Ջիջին, Սանդուխտին, ինչպես նաև տեր Մելիքսեթի կնոջը՝ Մարիամին և նրա ծնողներին՝ Կոստանդիլին և Հերիքնագին, «որ մին երախտիք ունին ի վերայ գրոյս» (թերթ 298ա): Ձեռագրի երկրորդ ստացողն է Խաչատուր քահանան, ով 1740 թվակա-

նին նոտրգրով հիշատակարան է թողել³⁷²: Երրորդ ստացող տեր Կարապետ քահանայի հիշատակարանից տեղեկանում ենք, որ նա Նախիջևանի Սբ. Կարապետ վանքում 1799 թվականին ձեռնադրվել է Կարապետ վարդապետի ձեռամբ:

Մ. Բարխուդարյանը Գուլիստան գյուղում տեսել է Գրիգոր գրչի օրինակած մի Ավետարան, և քանի որ բացակայել է գլխավոր հիշատակարանը, դժվարացել է ասել գրչության տեղն ու ժամանակը³⁷³:

ՄՄ 1338 ձեռագիրը գրվել է Մոխրաթաղում. այն Հայսամավուրք է, 16-րդ դարավերջին մոխրաթաղցի Գրիգորի խնդրանքով օրինակել է մեծչենցի Սարգիս գրիչը, իսկ թուղթը կոկել է Ախիճանը³⁷⁴: Գրիգորը մատյանը ստացել է «ի յիշատակ ծնողաց իւր», ապա «աշխատողաց և Մոխրաթաղա առհասարակ ամենայն ժողովրդեանն՝ մեծի և փոքոյ, քահանայից և տանուտերաց» (թերթ 212ա): Ձեռագրի հետագա աշխատանքները, հատկապես նյութական միջոցները հոգացել է տանուտեր Հասանը: Մատյանի ստեղծման աշխատանքներին մասնակցել է ողջ գյուղը, ուստի գրիչը հսկանե-հանվանե հիշում է նրանցից շատերին: Հատկապես հիշման են արժանի տանուտեր Հասանը, Իսամը և նրա մայր Խիպլն, «որ բազում աշխատանք ունին ի վերայ գրքի», Խոճիկ պապը և մեծչենցի Սարգիս երեցը, որ «խիստ փափագին գիրքը, բազում անգամ գային ու երթային սիրով ու պատվով», տեր Պետրոսը, տեր Ղազարն ու տեր Հովհաննեսը, Դավիթ սարկավագը:

Երեսուն տարի Մուղնու Սբ. Կարապետ վանքի միաբան Մատթեոսի որդի Մկրտիչ վարդապետը, որ ծնունդով «ի յերկրէն Աղուանից՝ ի գաւառէն Չարապերթու՝ ի գուղէն Մոխրաթաղու՝ ի յազգէն Մաթոսանց Ծահնագարին», 1776 թվականին Կարինում հանդիպել և 40 դուռուշով գնել է մի Ավետարան և նվիրել Մոխրաթաղի Սբ. Իննմաս եկեղեցուն (ՄՄ ձեռ. 11204):

Ջրաբերդի գավառում են պահվել բացառիկ արժեք ունեցող երկու հնագույն մատյաններ: Առաջինը ՄՄ 6202 ձեռագիրն է և հայտնի է Մեծ-

³⁶⁹ ՄՄ ձեռ. 10472, թերթ՝ 291, նյութ՝ թուղթ, 16,5 × 13, գիր՝ բոլորգիր, սող՝ 18 :

³⁷⁰ ՄՄ ձեռ. 9043, թերթ՝ 294, նյութ՝ թուղթ, 16,3 × 12, գիր՝ բոլորգիր, սող՝ 18 :

³⁷¹ ՄՄ ձեռ. 1032, թերթ՝ 304, նյութ՝ թուղթ, 15,5 × 12, գիր՝ բոլորգիր, սող՝ 18 :

³⁷² Խաչատուր քահանան հիշում է իր ծնողներ Մկրտչին և Գուլիարին, հանգուցյալ եղբորը՝ Ծատուրին, տիրացու Հակոբին և իր հորեղբայր տեր Տերունին (թերթ 297բ):

³⁷³ Արցախ, էջ 241:

³⁷⁴ ՄՄ ձեռ. 1338, թերթ՝ 542, նյութ՝ թուղթ, 3153 × 22,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 34-38:

շենի Կարմիր Ավետարան անունով: Ս. Ջալալյանը ձեռագիրը տեսել է Նորաշեն գյուղում³⁷⁵, իսկ Ս. Բարխուդարյանը՝ Մեծշենում³⁷⁶: 1915 թվականին Գ. Հովսեփյանը մատյանն անձամբ է բերել Սբ. Էջմիածին:

Ավետարանը հաստ մագաղաթի վրա բոլորագիծ երկաթագրով 909 թվականին Կոստանդնուպոլսում գրել է Թութայել գրիչը: Պատվիրատուն, ըստ Գ. Հովսեփյանի, Հայոց Սմբատ Ա թագավորի եղբորորդի Աշոտ սպարապետն է³⁷⁷: Առաջին ծաղկողը հայտնի չէ: Գրչության ժամանակից պահպանվել է մեկ տերունական նկար՝ Ծնունդ (թերթ 1բ): Մարկոսի և Հովհաննեսի անվանաթերթերը անավարտ են և հավանաբար առաջին նկարչի գործերն են: Երկրորդ ծաղկողը Իզնատիոս Հոռոմոսցին է³⁷⁸: Իզնատիոսը 1236-1242 թվականներին ավելացրել է սկզբի մագաղաթյա վեց թերթերը և կատարել խորանների և Մատթեոսի ու Ղուկասի անվանաթերթերի նկարագարումը՝ խորանների հորիզոնական երիզներին թողնելով մի քանի հիշատակագրություններ, որոնցում ակնարկվում է մոնղոլական արշավանքների մասին: Իզնատիոսը գրել է նաև Մատթեոսի և Մարկոսի ավետարանառաջները: Վերջին խորանի ներքո նկարված է խաչ, որի երկու կողմերում մոմերով մոմակալներ են, իսկ խորանների գլխագարդերում՝ հյուսկեն գարդեր ու վարդյակներ: Դատելով խորանների նկարագարումից՝ նկարիչը դիմել է զարդանկարչական վաղ ավանդներին, որը «կարող է մասամբ օրինակի ազդեցության հետևանք լինել, որ անպայման հին է»³⁷⁹: Ձեռագիրը 1252 թվականին Ոստան քաղաքում այլազգիներից 25 կարմիր դեկանով գնել է Հայրապետ աբեղան և իր ծնողների՝ Խաչիկի և Տիկնոց հիշատակին նվիրել

Սուրբ խաչ եկեղեցուն³⁸⁰: Թե ինչպես է մատյանը Վասպուրականից հասել Արցախ, հայտնի չէ:

Երկրորդ մատյանը Բեգյունց Ավետարանի մագաղաթյա մասունքներն են: Ավետարանի գրության ստույգ թվականը հայտնի չէ: Գրվել է 10-11-րդ դարերում, գրիչը Ստեփանոսն է: Ձեռագիրը գրված է բոլորագիծ երկաթագրով: Ստեփանոս քահանան կատարել է նաև ավետարանիչների պատկերները և լուսանցազարդերը: Մատյանին վերաբերող առաջին թվականը 1060-ն է: Ավետարանը, որ «ի սուեպ հնից անկատար էր մնացեալ», այս թվականին Կանչնուտ անապատի Արշարունյաց դպրոցում հայր Դավիթի ծախսերով նորոգվել, լրացվել է թերին՝ ցանկերն ու անվանաթերթերը, ապա ծաղկագարդվել ու կազմվել Հովհաննես Սանդղկավանցի գրչի կողմից, իսկ ոսկերիչ Սարգիսը կատարել է խորանների նկարագարումը և զարդարել արծաթով՝ «զարծաթն գործեաց և զԱւետարանս զարդարեաց»³⁸¹: Ըստ Գ. Հովսեփյանի՝ Ավետարանի խորանների նկարագարումը նման է 6-7-րդ դարերի հնագույն ձևերին³⁸²: Նորոգության 1060 թվականն էլ նկատի ունենալով Գ. Հովսեփյանը կարծում է, որ ձեռագիրը գրվել է ավելի վաղ, և նրա գրչությունը դնում է 1060 թվականից առաջ³⁸³: Իսկ Ա. Մաթևոսյանը կարծում է, որ ձեռագիրը գրվել է 1047-54 թվականների ընթացքում, ուստի այն տեղադրել է 1054 թվականի տակ³⁸⁴: Ավետարանը 1272 թվականից առաջ մեծկվենցի տեր Ուզի որդի Հասանի ձեռքով փրկվել ու բերվել է Կեսարիայից և երկար ժամանակ գտնվել է Ջրաբերդի Թալիշ գյուղում՝ Բեգյունց ընտանիքի մոտ, որի պատճառով էլ ստացել է Բեգյունց Ավետարան անունը³⁸⁵: Այստեղ ձեռագիրը ամբողջական վիճակով տեսել ու

³⁷⁵ Ս. արք Ջալալյանց, Ճանապարհորդություն..., հ. Ա, էջ 180:

³⁷⁶ Արցախ, էջ 219-220:

³⁷⁷ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 106-108:

³⁷⁸ Գ. Հովսեփյան, Իզնատիոս մանրանկարիչ և Ծոռոթկանց տոհմը: Տե՛ս Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, էջ 250-253: Կ. Մաթևոսյան, Անի, էջ 282: Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ., էջ 248-249:

³⁷⁹ Գ. Հովսեփյան, Իզնատիոս մանրանկարիչ... էջ 251: Կ. Մաթևոսյան, Անի, էջ 282:

³⁸⁰ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 267:

³⁸¹ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 100:

³⁸² Ա. Ալպոյաճեան, Պատմություն հայ Կեսարիոյ, Բ, Կահիրե, 1937, էջ 559:

³⁸³ Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 237-238:

³⁸⁴ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 98, ծնթ. 1:

³⁸⁵ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 426: Արցախ, էջ 226:

նկարագրել են Մ. Բարխուդարյանը³⁸⁶ և Գ. Հովսեփյանը³⁸⁷: Դժբախտաբար, գեղեցկագիր այս մատյանից մնացել է 18 թերթ: Այդ վիճակով այն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում է ՄՄ 10099 թվահամարը:

Շատ քիչ թվով ձեռագրեր են հասել նաև գավառի այլ վայրերից: Այսպես՝ **Մաղավուզ** գյուղի Սր. Գևորգ եկեղեցու քահանայի մոտ եղել է Գրիգոր կրոնավորի խնդրանքով Հովհաննես արեղայի գրչագրած 1575 թվագրության թղթյա մի Մաշտոց, որը 1662 թվականին պատկանել է Հովհաննես երեցին, իսկ 1729 թվականին մրշմանցի տեր Մելիքսեթի որդի Մարկոսը այն նվիրել է Դավիթ քահանային «ի երկրեն Ճարայ ի գեղջեն Եանշաղեն»: Մաղավուզի եկեղեցում եղել է անհիշատակարան մի Ավետարան, որի միայն երկրորդ ստացողն է հայտնի՝ ոմն Շադուպար³⁸⁸: Այստեղ 1615 թվականին Եսայի երեցը նորոգել, իսկ Քասպար երեցը կազմել է Ավետարան³⁸⁹: Քասպարը 1637-ին Սարգիս երեցին նորոգել է տվել մեկ ուրիշ Ավետարան (ՄՄ Գ795)³⁹⁰: Մի Ավետարան էլ պահվել է Խրիստոս գյուղի եկեղեցում, որ պատկանել է Մելքում և Ապրես եղբայրներին, որոնք Մատթեոսի և Մարկոսի Ավետարանների վերջում թողել են հիշատակարան³⁹¹: Վերինշեն գյուղի եկեղեցում է պահվել 1493 թվականին Սարգիս գրչի օրինակած մագաղաթյա գեղեցկագիր Ավետարանը³⁹², որը անօրեններից ձեռք է բերում գյուղի տանուտեր Հարությունը և նվիրում եկեղեցուն: Իսկ Ներքինշենի եկեղեցին ունեցել է երկու թղթյա Ավետարան, որոնցից մեկը 1678 թվականին Ռոռտանի Լոր գյուղում գրել է Աբրահամ գրիչը: Երկրորդը չունի գլխավոր հիշատակարան, Մարկոսի Ավետարանի վերջում պահպանվել է

ստացողի հիշատակարանը. մատյանն ստացել են Հովհաննես միայնակյացը և իր եղբայր Հովասափը, իսկ 1628 թվականին Ավետարանը պատկանել է հարազատ եղբայրներ Հունանին և Դավիթին³⁹³:

³⁸⁶ Արցախ, էջ 226-227:

³⁸⁷ Գ. Հովսեփյան, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 237-238:

³⁸⁸ Արցախ, էջ 220-221:

³⁸⁹ Տե՛ս Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Ա, Երևան, 1974, էջ 561, Արցախ, էջ 140:

³⁹⁰ Տե՛ս Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Բ, Երևան, 1978, էջ 699:

³⁹¹ Արցախ, էջ 243:

³⁹² Նույն տեղում, էջ 246:

³⁹³ Նույն տեղում, էջ 245:

ԱՐՑԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ՓԱՌԻՍՈՍԻ ԳԱՎԱՌ

Պատմական Փառիսոս գավառը տարածվում էր Կուրի աջակողմյան Շամխոր վտակի ու նրա աջ Գարդման գետակի արևելյան կողմում, հարավից սահմանակից էր Գեղամա լեռնաշղթային, արևմուտքից՝ Տավուշ գետին, հյուսիսից՝ Դաշտաբերանին: Գավառն աղբյուրներում կոչվել է նաև Փառիս, Փառնես, Փարիսոս, Փավե, Քուստիփառնես անուններով: Գարդման գավառին սահմանակից լինելու համար երբեմն երկու գավառները նույնացվել են՝ Քուստիփառնես ընդհանուր անունով³⁹⁴:

10-րդ դարում Համամ-Գրիգորի որդի Սահակ Սևադայի ժառանգական տիրույթն էր Փառիսոսը, որին իշխանը միացնում է Գարդման և Ձորագետ գավառները՝ ստեղծելով հզոր իշխանություն՝ իշխանանիստ դարձնելով Փառիսոսի բերդը. «Սահակ, որ և Սևադայ կոչեցաւ, այր քաջ էւ յաջող, սա առհասարակ տիրեց Գարդմանայ եւ Քաւսայ եւ Փառնայ գաւառաց, այլ եւ աւագակապետաց Ձորոյգետոյն բովանդակ եղև իշխան և խնդրող իսկ գրագիտութեան, եւ դպրապետս ի տան իւրում կարգեաց»³⁹⁵: Փառիսոսի բերդը մինևույն ժամանակ թեմի առաջնորդի նստավայրն էր³⁹⁶: Սահակ Սևադայի որդի Հովհաննես-Մենեքերիմը 10-րդ դարի կեսին ստեղծում է թագավորություն: Փառիսոսի թագավորությունն ընդունում են Պարսից արքունիքը և բյուզանդական կայսեր ներկայացուցիչ Դավիթ Մագիստրոսը՝ Հովհաննես-Մենեքերիմին ուղարկելով թագ և ծիրանի: Այս թագավորության հետագա վիճակը շատ հեղիեղուկ եղավ. այն գոյատևեց շուրջ մեկ դար և խորտակվեց 11-րդ դարի երկրորդ կեսին: Հայոց Բագրա-

տունի Գագիկ Ա թագավորը, չհանդուրժելով Փառիսոսի թագավորության գոյությունը, պայքար է սկսում նրա դեմ՝ իրեն դաշնակից դարձնելով Գանձակի քուրդ ամիրա Փատլունին: Ըստ Ասողիկի՝ դա տեղի է ունեցել Մենեքերիմ և Գրիգոր եղբայրների մահվանից հետո. «Ի ՆԾԲ (1003) թուականին իշխանքն Փառիսոսոյ, որ ի Հայկազնեայ ազանց՝ բաւեալ մինչև ը ցՄենեքերիմ էւ ցԳրիգոր սպառեցան մահուամբ: Չորոց գաշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ էւ Փատլուն ամիրայն Գանձակայ»³⁹⁷: Ըստ Վարդան Արևելցու՝ նրանց մահով Փառիսոսի թագավորությունը դեռ չի ավարտվում. այդ թագավորության անկումը տեղի ունեցավ Գրիգորի որդի Փիլիպպեի օրոք և Գանձակի ամիրա Փատլունի ձեռքով: Այս դեպքերը տեղի են ունեցել 1044 թվականից հետո³⁹⁸:

Փառիսոսում դպրության տարածման գործում մեծ դեր է ունեցել Սահակ Սևադայ իշխանը: Նրա մասին գովեստով է խոսում Մովսես Կաղանկատվացին: Իշխանը հովանավորում էր գրականությունն ու դպրությունը, և նրա այդ գործունեությունը՝ «խնդրող իսկ գրագիտութեան» և «դպրապետ ի տան իւրում» կարգելը գնահատվել է որպես հիշարժան երևույթ: Անգամ Բագրատունյաց պետության դեմ Սևադայի կենտրոնախույս ձգտումները չխրախուսող Հովհաննես կաթողիկոսը նրա մասին խոսում է պատկառանքով՝ անվանելով «հոյակապ իշխան մեծ Սահակ», որ ուներ «զիմաստութիւնն իւր մեծ»³⁹⁹: Ցավոք, նրա ծավալած մշակութային ու լուսավորչական գործունեության մասին մեզ հասած տեղեկություններն այսքանն են:

Փառիսոսի Մանջար գյուղում⁴⁰⁰ է ծնվել բանաստեղծ, քերական, տոմարագետ, փիլիսոփա,

³⁹⁴ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 2001, հ. 5, էջ 239: Փառիսոսը այժմ համապատասխանում է Տավուշի մարզի Շամշադին բնակավայրի հետ:

³⁹⁵ Մովսես Կաղանկատուացի, էջ 419:

³⁹⁶ Մովսես Կաղանկատուացի, էջ 425:

³⁹⁷ Ստեփանոս Տարանացի Ասողիկ էջ 827:

³⁹⁸ Վարդան Վարդապետ, էջ 100:

³⁹⁹ Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 383:

⁴⁰⁰ ՄՄ 3710 ձեռագրի հիշատակարանում Հովհաննես Սարկավագի ծննդյան վայրը նշված է. «Սարկավագ վարդապետ Հաղբատ, ի գեղջէ Մանջար Գետեգր» (թերթ 377բ):

մանկավարժ, գեղագետ-տեսաբան Հովհաննես Սարկավազ Իմաստասերը (1045/1050-1129), որի մասին Վարդան Արևելցիին գրում է. «Յովհաննէս, որ և Սարկաւազ ի գաւառէն Փառիստոյ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչև ցարդ ի բանս իւր...»⁴⁰¹: Հովհաննէսը մեծացել ու դաստիարակվել է բարեկիրթ միջավայրում. «Ի նախնեաց բարեպաշտից եւ յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ առնել քան ըստ բնութեան տածիւք խնամս յառ մանկունս, որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան»⁴⁰²: Ղևոնդ Ալիշանը նրան անվանում է «բնատուր մեծ հանճար»⁴⁰³: Սանահինի և Հաղբատի դպրոցներում, որտեղ դասավանդում էր նաև իր քեռին՝ Ուռնացի վարդապետը, Սարկավազը սովորում է «զմեկնութիւն և զառակս խորին»⁴⁰⁴: Բազմակողմանի զարգացած Հովհաննէսը խորապես տիրապետում էր բոլոր գիտություններին, հայ ինքնուրույն ու թարգմանական գրականությանը՝ սկսած վաղագույն ժամանակներից: Հաղբատում և Սանահինում ուսումն ավարտելուց հետո՝ գիտության մեծ պաշարով նա գնում է Անի և զբաղվում գիտական ու մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ: Կարճ ժամանակում տարածվում է նրա համբավը. «որ իբրև զիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զճաղիկս յերանգոց գունոց և հոտոց և համոց, բերեր ի քաղաք իւր և տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի և յի առնէր գտունն ի փարթամութենէ անտի»⁴⁰⁵: Անիից նա վերադառնում է Հաղբատ և դառնում դպրոցի բարունապետ: 11-12-րդ դարերում Հաղբատում և Անիում մեծ ճանաչում ունեին Հովհաննէս Սարկավազի դպրոցները: Հովհաննէսը նորոգում է Հայոց տոմարը, որ իր անունով կոչվում է Սարկավազագիր, գրում է տոմարագիտական ու թվաբանական աշխատություններ, կատարում է խմբագրական ու

սրբագրական բազում աշխատանքներ՝ Փիլոն Եբրայեցու, Դիոնիսիոս Արիոպագացու, Գրիգոր Նյուսացու, Եվագր Պոնտացու, Ոսկերեքանի, Արիստոտելի, Պրոկղի, Հովհան Մայրագոմեցու, Դավիթ Անհաղթի, Մովսես Խորենացու երկերից՝ կանոնավորելով հիսունից ավելի գրքեր տարբեր բնագավառներից: Կիրակոս Գանձակեցիին հիացմունքով գրում է. «Մեծիմաստ գիտութեամբ, քան զյոյովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն՝ Յովհաննէս Սարկավազն կոչեցեալ ի Հաղբատ: Սա բազում ինչ աշխատասիրեաց ի զիրս՝ յիշատակ բարի թողեալ... վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ»⁴⁰⁶: Հովհաննէս Իմաստասերը վախճանվել ու թաղվել է Հաղբատում, որի շիրմաքարի վրա պահպանվել է հետևյալ արձանագրությունը՝ «Արձանս այս սեմական է Սոփեստոսի Սարկաւազին»:

Փառիսոսի վանքում 1657 թվականին Հակոբ վարդապետը գրել է մի Ավետարան ⁴⁰⁷:

Փառիսոսի գավառի նշանավոր գրչության կենտրոններից էր **Չարեքա անապատը**: Առաքել Դավրիժեցիին վանքի հիմնադիր է համարում Տաթևի անապատում ուսանած և ծննդավայր վերադարձած Դավիթ եպիսկոպոսին, որը սերում էր մի իշխանական տոհմից, «որ Ղարամանենց կոչին»: Ըստ պատմիչի՝ Դավիթը կառուցել է անապատը, ստեղծել միաբանություն, կարգ ու կանոն սահմանել⁴⁰⁸: Դավիթ եպիսկոպոսին փոխարինել է Սարգիս վարդապետը, որի առաջնորդության տարիներին վանքում գրվել են շատ ձեռագիր մատյաններ: Վանքի երկրորդ ծաղկումը Մկրտիչ վարդապետի առաջնորդության տարիներն էին: Երեսուն տարուց ավելի Մկրտիչ վարդապետը ղեկավարել է միաբանությունը (1710-ական թ.թ.-1746) և կատարել հիշարժան շատ գործեր. նա պարսպապատել է վանքը, իսկ 1730 թվականին Կարապետ կաթողիկոսի և Երուսաղեմի Գրիգոր պատրիարքի թույլտվությամբ ու կոնդակով շենացրել է լեզգիների արշա-

⁴⁰¹ Վարդան Վարդապետ, էջ 121:

⁴⁰² Ղ. Ալիշան, Յուշիք Հայրենեաց Հայոց, Բ, Վենետիկ, 1869, էջ 284:

⁴⁰³ Նույն տեղում, էջ 279:

⁴⁰⁴ Ա. Աբրահամյան, Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 120:

⁴⁰⁵ Նույն տեղում, էջ 120:

⁴⁰⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 113:

⁴⁰⁷ Արցախի վանքերը, էջ 177:

⁴⁰⁸ Առաքել Դավրիժեցի, էջ 96-97: 1579 թվականին անապատում գրված մի Ավետարանի հիշատակարանում առաջնորդ Դավիթը հիշվում է ոչ թե անապատի հիմնադիր, այլ վանքի վերականգնող: Դավիթ եպիսկոպոսը թաղվել է անապատի Հարանց մատուռում (Արցախի վանքերը, էջ 168, 175):

վանքների հետևանքով թալանված ու քայքայված միաբանությունը: Վանքի առաջնորդներ են եղել Սահակ վարդապետը, Ներսես վարդապետը, որ կառուցել է եկեղեցու գավիթը, Դավիթ վարդապետ Ջալալյանը, Սարգիս վարդապետ Դավթյանը, Գրիգորիս վարդապետ Տեր-Հակոբյանը, Եփրեմ վարդապետ Ենիկոլոփյանը, Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանը, որ թշնամու ահուսարսափն էր, և «Կարմիր-Սուլթան» կամ «Շամբոռա ձորերի հերոս» էին կոչում նրան, Անտոն վարդապետ Վարդապարյանը, Վահան վարդապետ Գևորգյանը, Թեոդորոս Ծիրակունին, բոլորն էլ երևելի հոգևորականներ, որոնք անմնացորդ նվիրվել են միաբանությանը⁴⁰⁹:

Գրիգոր քահանան 1665 թվականին «ի գերահռչակ ուխտս, որ կոչի Չարեքու անապատ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս» ուխտի առաջնորդ Սարգիս րաբունապետի համար օրինակում է Ճաշոց, որի հիշատակարանը տեղեկություններ է հաղորդում անապատի և միաբանների գործունեության մասին (ՄՄ ձեռ. 986): Սարգիս րաբունապետն իր շուրջն էր համախմբել 70 միաբանների և, ինչպես գրիչն է ասում, նրանք «միական ու միախորհուրդ էին»: Հիշվում են ուխտի միաբաններ քաջ վարդապետ տեր Ներսեսը, տեր Նահապետը, խոստովանահայր տեր Սահակը, որ անապատի «գարդն էր», տեր Խաչատուրը, տեր Հովհաննեսը, վերակացու Գասբարը, երկու Խաչատուրներն ու չորս Կիրակոսները, դարբին Սիմեոնը, երկու Հովհաննեսներն ու երկու Մարտիրոսները... այսպես՝ 70 միաբան, որոնց հականե-հանվանե հիշում է գրիչը: Հիշատակարաններից մեկում գրիչը հիշում է նաև ծնողներին՝ Հովհաննեսին և Եղիսաբեթին, հանգուցյալ եղբորը՝ Հակոբին:

⁴⁰⁹ Գերմանացի հնագետ Լ. Հաուպտը 1906 թվականին եղել է Չարեքա վանքում և իր նոթերում գրել. «Այդ վանքը նույնպես ամայացած էր: Այնտեղ դեռ բնակվում էր միայն մի վանական, որը գերմաներեն լեզվին տիրապետում էր և մեզ ծանոթացրեց ընդարձակ, ամայի կառույցների, ստորգետնյա նկուղի հետ, որ ծառայում է որպես փախստավայր: Այնուհետև նա վանքի վայրի և խառնիխուռն կերպով աճող այգում, մի յորենու տակ մեզ թեյ, կարագ, հաց և սեփական արտադրության յորենու մեղր հյուրասիրեց, որոնք մենք շոգ միջօրեի արշավից հետո հաճույքով վայելեցինք: Մեղվապահությունը նրա հիմնական զբաղմունքն էր: Լավ տարիներին նա ստանում էր 50-ից 60, իսկ աննպաստ տարիներին միայն 10-ից 15 պուղ (1 պուղը կազմում է 16,38 կգ) մեղր»: «Արարատ», 1906, էջ 794: Lehmann-Haupt C. F., Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 133:

Գրիչը չի մոռանում նաև կնոջն ու որդիներին՝ Հակոբին, Պալասանին և Ղազարին, որոնք օգնել են գրչին մատյանը ծաղկազարդելու և կազմելու աշխատանքներում: Սարգսի առաջնորդության տարիները անապատի ամենաբեղմնավոր տարիներն էին: Նա առաջնորդ էր դարձել Դավիթ եպիսկոպոսի մահվանից հետո և անմիջապես ձեռնամուխ եղել անապատի բարեկարգման աշխատանքներին: Վերականգնել էր կարգ ու կանոնը անապատում, բարեկարգել միաբանների սենյակները, կառուցել զանգակատունը, պարսպապատել: Այս տարիներին ստեղծվել են նաև ձեռագիր շատ մատյաններ: Սակայն անապատը ենթարկվել է կողոպուտի: Եվ չնայած տարիներ հետո Մկրտիչ վարդապետի ջանքերով այն մասամբ վերականգնվում է, բայց անապատի ձեռագրատան հարստությունից գրեթե ոչինչ չի պահպանվում⁴¹⁰:

Չարեքա անապատի ձեռագրական ժառանգությունից այսօր ունենք հատուկենտ տվյալներ: Ահա դրանք: Առաքել գրիչը գրում է Ավետարան 1579 թվականին, իսկ 1637 թվականին ինքն է պատվիրում մեկ այլ ձեռագիր⁴¹¹: Սարգիս կրոնավորը 1641 թվականին նորոգում է մի Ավետարան⁴¹²: Ավետիս քահանան 1655 թվականին ավարտում է Չակամի Պապանյան գյուղում սկսած Ծարակնոցը⁴¹³: Վանքի առաջնորդ Ներսես վարդապետը 1699 թվականին ավարտում է «Գիր օրհնութեանը»⁴¹⁴, իսկ 1704 թվականին մի Գավազանագիրք⁴¹⁵:

Ձեռագրեր են հասել Փառիսոսի այլ վայրերից ևս:

Գառնակեր գյուղում պարոն Հովհաննեսի և Հովսեփ Բալենացի քահանայի մոտ եղել են Քարոզգրքեր⁴¹⁶: Գառնակեր գյուղին մերձ **Ծաղկոց** վանքում 1467 թվականին Մատթեոս քահանայի խնդրանքով Ազարիա քահանան նկարազարդում է Ավետարան⁴¹⁷:

⁴¹⁰ Արցախի վանքերը, էջ 172:

⁴¹¹ **Ն. Ալիսեան**, Մովսես Տաթևացի կաթողիկոսը, Վիեննա, 1936, էջ 161:

⁴¹² Արցախի, էջ 144:

⁴¹³ Արցախի, էջ 388:

⁴¹⁴ F. Conybeare, Gatalogue Armenian manuscripts bodleian library, Oxford, 1918, էջ 265:

⁴¹⁵ **Յ. Թովհեան**, Ցուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 52:

⁴¹⁶ Արցախի, էջ 315:

⁴¹⁷ **Ա. Տեր-Ալեքսիսեան**, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, էջ 92: Արցախի վանքերը, էջ 162:

Քարտում գյուղի եկեղեցին ունեցել է ավետարանիչների պատկերներով նկարազարդ թղթյա մի Ավետարան՝ 1579 թվականի գրչությանամբ, որի գրիչն ու գրչության վայրն անհայտ են, իսկ պատվիրատուն Հակոբ երեցն է⁴¹⁸:

Ղուլալի գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում են պահվել Սիմեոն քահանայի խնդրանքով անհայտ գրչի օրինակած 1306 թվականի մի Ավետարան, Հերցհանկիս գյուղում Հովհաննես գրչի՝ 1669 թվականին օրինակած Ավետարանը, Հերմոնի վանքում օրինակված մի Ավետարան, որի գրիչն ու գրչության թվականը անհայտ են, և պատկերազարդ ու անհիշատակարան մի Ավետարան: Այս ձեռագրերի գտնվելու վայրն անհայտ է⁴¹⁹:

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՊԱԿԵՏԻ ԿԱՍ ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ԴՊՐՈՑԸ

Փառիսոսի գավառի ամենանշանավոր գրչության կենտրոնն էր Խորանաշատի վանքը: Վանական վարդապետ Տավուշեցին, Մխիթար Գոշից ստանալով վարդապետական գավազան (1207), հայրենի Խորանաշատ է վերադառնում և 1220-ական թվականների սկզբին իշխան Վահրամ Գ Գագեցու հովանավորությամբ հիմնում բարձր տիպի դպրոց՝ վարդապետարան, ինքն էլ դառնում դպրոցի առաջին ուսուցիչը⁴²⁰: Վանական վարդապետը ծնվել է 1181 թվականին, Ուտիք նահանգի Տավուշ գյուղաքաղաքում: Ծննդավայրի անունով երբեմն կոչվել է նաև Տավուշեցի: Եղբոր՝ Պողոս քահանայի մոտ սկզբնական կրթություն ստանալուց հետո նա գալիս է Նոր Գետիկ՝ տեղի բարձրագույն դպրոցում ուսումը կատարելագործելու, աշակերտում Մխիթար Գոշին, որտեղ էլ 1201 թվականին նրա կողմից ձեռնադրվում է քահանա: Վանականը դառնում է Գոշի գաղափարակիցն ու օգնականը, նրա հետ մասնակցում Լոռեի (1204 թ.) և Անիի (1207) եկեղեցական ժողովներին: 1240 թվականին Խաչենի իշխան Հասան-Չալալ Դոլայի հրավերով մասնակցում է Գանձասարի օծման արա-

րողությանը: Վանական վարդապետ Տավուշեցին վախճանվում է 1251 թվականին և իր կտակի համաձայն թաղվում Խորանաշատի մոտ գտնվող աղքատների գերեզմանոցում⁴²¹:

Խորանաշատի դպրոցը միջնադարյան Հայաստանի նշանավոր գիտական, մշակութային ու հոգևոր կենտրոններից էր, իսկ նրա ուսուցչապետը՝ Ժամանակի հեղինակավոր աստվածաբաններից ու գիտնական վարդապետներից մեկը⁴²²: Վանականը Խորանաշատում կրթական գործին զուգահեռ վարում էր նաև գրչական ու քարոզչական բեղմնավոր աշխատանքներ: Նա իր սաներին ստույգ և ընտիր օրինակներից արտագրել էր տալիս ձեռագիր մատյաններ, որոնցով հարստացնում էր վանքի մատենադարանը: Այստեղ են գրվել և որպես դասագրքեր օգտագործվել են նաև Վանականի երկերը: Վարդապետարանի աշակերտների համար աշխարհիկ և հոգևոր առարկաների մասին իմացական շտեմարան էր նրա «Հարցմունք և պատասխանիքը» (Երուսաղեմ, ձեռ. 587, թերթ 8-83, ձեռ. 1288, թերթ 2-142), որը պարունակում է բոլոր այն գիտելիքները, որ պարտավոր էին իմանալ նրա սաները ուսման ընթացքում: Օգտվելով Անանիա Ծիրակացուց՝ աշակերտներին աստղաբաշխական ու տոմարագիտական գիտելիքներ տալու նպատակով գրում է «Յաղագս տարեմտին» ճառը, որը նախատեսված է եղել Ամանորին եկեղեցիներում կարդալու համար⁴²³: Խորանաշատում են գրվել Վանական վարդապետի նաև մյուս երկերը՝ «Բացատրութիւն Աղօթից Ամբակումայ Մարգարէի» (Ճռաքաղ, 1859), «Մեկնութիւն Յորայ», որը նախորդ մեկնիչներից (Հեսիքոսո, Ստեփանոս Սյունեցի, Դավիթ Քորայրեցի) արված քաղաքություն է (Երուսաղեմ, ձեռ. 68, թերթ 252-378), «Համեմատութիւն Հնոյ և Նորոյ կտակարանաց» (Երուսաղեմ, ձեռ. 587, թերթ 1-3, ձեռ. 1273, թերթ 143-6), «Պատճառք վասն առաջաւորաց պահոց» (Երուսա-

⁴¹⁸ Արցախի, էջ 318:

⁴¹⁹ Արցախի, էջ 322:

⁴²⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Ոսկեան, Յովհաննես վանական եվ իւր դպրոցը, Վիեննա, 1922:

⁴²¹ Ե. Պողարեան, Հայ գրողներ, Ե-ՏԵ դար, Երուսաղեմ, 1971, էջ 290:

⁴²² Հ. Ոսկեան, Յովհաննես վանական եվ իւր դպրոցը, էջ 20-36:

⁴²³ Լ. Խաչիկյան, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետ ասացեալ», «Բանբեր Մատենադարանի», թիվ 1, 1941, էջ 156-169:

ղեմ, ձեռ. 173, թերթ 496-500), «Տեսութիւն շարականին Ուրախացի պսակ կուսից» (Երուսաղեմ, ձեռ. 617, թերթ 151-6), «Գովեստ Հայոց ազգի» (Երուսաղեմ, ձեռ. 773, թերթ 163-5): Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ Վանական վարդապետը հեղինակել է նաև մի պատմություն, որը կարևոր սկզբնաղբյուր է եղել մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների վերաբերյալ⁴²⁴: Այս վերջին գործը, դժբախտաբար, մեզ չի հասել:

Վանականը ժամանակի դավանաբանական վեճերի ակտիվ մասնակիցներից էր: Հայտնի է նրա «Խրատ դաւանութեան» ճառը, որ գրվել է 13-րդ դարի կեսին սկիզբ առած հռոմեա-բյուզանդական դավանաբանական մի վեճի առիթով: Այն պահպանվել է Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ (Կիրակոս Գանձակեցի, Գ. Ծ): 1250 թվականին, երբ Վերին Խաչենի Ծար գավառում սկիզբ առած Դավիթ Ծարեցի Մոլորեցուցի գլխավորած աղանդավորական շարժումն ընդգրկել էր «զամենայն գաւառս» Հայոց արևելից կողմանց և դարձել էր խիստ վտանգավոր, վրդովվել ու պայքարի էին ելել անվանի հոգևոր գործիչները՝ բանադրելով Դավիթ Ծարեցուն և նրա կողմնակիցներին, որոնց մեջ կային նաև հոգևորականներ ու ավատատեր ազնվականներ⁴²⁵: Վանական վարդապետը այս առիթով գրում է «Գիր սաստից և մեղադրանաց» թուղթը:

Վանականի դպրոցում, որտեղ սաներն ուսանել են 7-8 տարի, հոգևոր առարկաներից բացի դասավանդել են պատմություն, իմաստասիրություն, մատենագիտություն, երաժշտություն, քերականություն, ճարտասանություն, թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, տրամաբանություն և այլ առարկաներ: Խորանաշատի վարդապետարանի կրթական համակարգում դրված էր քառյակ արվեստների ուսուցումը: Վանականի մոտ սովորելու էին գալիս տարբեր վայրերից: Նրա դպրոցում աճեցին Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Մաղաքիա կրոնավորը, Ստեփանոս Աղթամարցին, Գրիգոր Ակներցին, Մարկոսը, փիլիսոփա

Սոսթենեսը, Առաքելը, Հովսեփ վարդապետը, Ներքին Խաչենի Իսրայել արքեպիսկոպոսը, Խաչենի Մարկոս վարդապետը՝ բոլորն էլ իրենց գործի լավագույն գիտակներ, որոնք վարդապետական աստիճան ստանալուց հետո իրենց վարդապետի գործը շարունակեցին տարբեր գրչության կենտրոններում:

Գրչության արվեստը ծաղկում էր Խորանաշատի վանքում ու կապվում Վանականի անձի հետ: Մեծ էր դպրոցի և նրա բաբունապետի հեղինակությունը: Գրիչներն իրենց օրինակած ձեռագրերի հիշատակարաններում հաճախ գրչության վայրը ճանաչում ու նշում էին նրա անունով՝ «ի վանս վարդապետի Վանականի»: Ուսուցչի մասին հատկապես հիացմունքով են խոսել նրա աշակերտները: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ դպրոցը, ի դեմս ուսուցչապետի, ձեռք էր բերել մեծ անուն և համբավ, որտեղ կրթություն ստանալու էին գալիս տարբեր վայրերից. «Բազումք դեգերելին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն»⁴²⁶: Վարդան Արևելցին նրան անվանում է «համբաւատենչ և արդիւնական, փառաւորեալ հայրն մեր»⁴²⁷: Գրիգոր Ակներցին՝ «Ի դառն ժամանակիս փայլէր իբրեւ զարեգակն Սուրբ Հոգի վարդապետն մեր Վանական յերկիրն արեւելից, յերկրորդ արեւելք անուանեալ»⁴²⁸:

Վանականը, դպրոցում ձեռագրեր ընդօրինակելուց բացի, մեծ տեղ էր հատկացնում նաև խմբագրական աշխատանքներին: Այդ աշխատանքներում հատկապես հմուտ էին Իսրայելը և Կիրակոս Գանձակեցին, որոնք ուսուցչի հանձնարարությամբ խմբագրում էին Հայսմավուրքային ժողովածուներ: Ստեփանոս Աղթամարցին 1223 թվականին «ի վանքս Խորանաշատու՝ ի գաւառիս Գարդմանայ առ ոտս ուղփանեն և աստուածարդիւնական վարդապետիս Վանականի» ընդօրինակում է մի ժողովածու, որի հիշատակարանում նախ հիշում է բաբունապետ

⁴²⁴ Նույն տեղում, էջ 151:

⁴²⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 326-328:

⁴²⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 218:

⁴²⁷ Վարդան Վարդապետ, 146:

⁴²⁸ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղեմ, 1974, էջ 27:

Վանական վարդապետին, որ «փայլէ ի ժամանակիս որպէս գաստղ առաւաւտու», ապա հորը՝ տեր Սարգսին, հորեղբորը՝ տեր Հովհաննեսին, և եղբորը՝ Իգնատիոս քահանային⁴²⁹: Գրիչը անմեղադրություն է խնդրում, որովհետև «ի ձմեռնային յաւուրս գրեցաւ, այլ աղաչեմ չլինել մեղադիր թիրութեան, զի զհոյովն ճրագով գրեցի»:

Սրանից մեկ տարի հետո՝ 1224 թվականին, Ջաջուռ Խաղբակյանի դստեր և Կուկ Սևադյաց իշխանի կնոջ՝ Վանենու պատվերով գրվում ու նկարագարովում է մագաղայա երկաթագիր մի Ավետարան, որը վանքի անունով կոչվում է «Խորանաշատի Ավետարան»⁴³⁰: Հայտնի չեն ձեռագրի գրիչն ու ծաղկողը: Ձեռագիրն ունի չորս ավետարանիչների պատկերներ, ութ խորաններ, կիսախորաններ, զանազան լուսանցագարդեր, որ պարզ ու ներդաշնակ ծաղկագարդել է տաղանդավոր, բայց մասնագիտական հմտություն չունեցող նկարիչը⁴³¹: Ծաղկողն օգտագործել է ոսկի և բազմազան գույներ: Ձեռագրի հետագա ճակատագրի մասին հաղորդումները նրա գերեվարումների և փրկագնումների մասին են: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Վանական վարդապետը, 1229 թվականին Ջալալեղդինի արշավանքներից խուսափելով, ապաստանում է Լորուտ գյուղի մերձակա մի քարայրում, այստեղ էլ շարունակում է ուսուցանել⁴³²: Մոնղոլներն իմանում են Վանականի տեղը, պաշարում են քարայրը 1236 թվականին, ուսուցչապետին և աշակերտներին, որոնց մեջ էր նաև Կիրակոս Գանձակեցին, գերեվարում են՝ իրենց հետ տանելով

ողջ գույքը՝ շուրջառներ, արծաթյա խաչեր, անոթներ և երկու արծաթակազմ Ավետարան, որոնցից մեկը այս գեղեցիկ մագաղայա մատյանն է. «...և խուզեալ առին, որ ինչ կայր առ ումեք... խաչ արծաթի և երկու Աւետարանս ընդելուզեալ»⁴³³: Որոշ ժամանակ անց մեծ փրկագնով Գագ բերդի բնակիչները ազատում են Վանական վարդապետին, իսկ Կիրակոսը, որ մոնղոլների բանակում թարգմանիչ էր ու գրագիր, փախչում է ու ապաստանում Նոր Գետիկի վանքում: Վանականը նորոգում է Խորանաշատը, վերականգնում դպրոցը և նորից սկսում է ուսուցանել: Մոնղոլների կողմից գերված երկրորդ ձեռագրի ճակատագիրը ցայսօր անհայտ է, իսկ «Խորանաշատի Ավետարանը» 1238 թվականին Տփխիսում մոնղոլները հանում են աճուրդի: Բարեբախտաբար, այստեղ է լինում նաև Վանական վարդապետը, որը մեծ փրկագնով ձեռք է բերում մատյանը և վերադարձնում Խորանաշատ: Նրա ձեռքով է գրված Ավետարանի հետագայի հիշատակարանը. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի՝ ի դրան Սր. Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւշոյ ի Մուղան ի թաթարեն, և յետ երից ամաց բերեալ անվնաս վաճառեցին ի ՌՁԷ (1238) թուխս, որ փառաւոր աւագերեց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածաւեր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախաւք և աշխատութեամբ գնել ետուն ի մեզ» (թերթ 155ա): 1517 թվականին Ավետարանը տարվում է Տաթև, որտեղ Ալեքսանոս արեղան Ղասումի խնդրանքով փոխում է արծաթյա կազմը, նոր կոստղագարդ կաշվե կազմ է դնում՝ մետաղյա անկյունագարդերով և Ա փեղկին մետաղյա մի խաչ: Մատյանն այս կազմով էլ հասել է մեզ: 16-րդ դարում նորից գերվում է ձեռագիրը և փրկագնվում մելիք Հովասափի կողմից ու ընծայվում Վանի Սր. Վարդան Չորավար եկեղեցուն: 1915 թվականին բանասեր Ս. Տեր-Ավետիսյանը Վանում տեսնում է Ավետարանը և նահանգապետ Դիտմենի միջնորդությամբ ուղարկում է Սր. Էջմիածին⁴³⁴: Վանենին «Խորա-

⁴²⁹ ՄՄ ձեռ. 2101, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 17,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

⁴³⁰ ՄՄ ձեռ. 4823, թերթ՝ 319, նյութ՝ մագաղաթ, 36 × 23, գիր՝ բոլորագիծ երկաթագիր, տող՝ 19: «Խորանաշատի Ավետարանին» են անդրադարձել Գ. Սրվանձտյանցը (Գ. Սրվանձտեանց, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1884, էջ 272-275), Գ. Հովսեփյանը (Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք ..., էջ 34, նույնի՝ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 837-842), Ա. Սվիրինը, (Ա. Կ. Տւիրին, նշվ. աշխ., էջ 90), Վ. Լազարևը (Յ. Կ. Լազարեւ, նշվ. աշխ., էջ 12): Լ. Դուրնովն (Л. А. Дурново, նշվ. աշխ., էջ 32), Հ. Հակոբյանը (Հ. Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., էջ 51-62):

⁴³¹ Հայկական մանրանկարչություն, աշխատասիրությամբ՝ Լ. Դուրնովնի և Ռ. Դրամբյանի, Երևան, 1967, էջ 204:

⁴³² Քարայրը կոչվում է Վանական վարդապետի քարայր և գտնվում է Տավուշ բերդի հարավային կողմում՝ Լորուտ գյուղի մոտ: Արցախ, էջ 434, Հ. Ոսկեան, Յովհաննես Վանական եվ իր դպրոցը, էջ 13:

⁴³³ Կիրակոս Գանձակեցի, էջ 247:

⁴³⁴ Յու. Վարդանյան, Խորանաշատի գրչագրի դեգերումները, «Գրքերի աշխարհ», 1979, թ. 5, մայիսի 15:

նաշատի Ավետարանից» ութ տարի հետո՝ 1232 թվականին, Գետիկա վանքում Ստեփանոսից ստանում է նոր ու շքեղ ձեռագիր և նվիրում Հավապտուկ վանքին⁴³⁵: Այս ձեռագրի հետագա ճակատագիրը հայտնի չէ:

1230 թվականին Եսայի գրիչը գրում է մի Սաղմոսարան «ի յերկիրս Տայուշ և ի գիւղս, որ կոչի Թաւուշ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս... յաթոռս Խորանաշատի և Վանական վարդապետի»⁴³⁶:

Խորանաշատի վարդապետարանի գործունեության բեղուն շրջանն ավարտվում է Վանականի մահով: Բաբունապետի մահից հետո դպրոցը գլխավորում են Գրիգորիս և Պողոս վարդապետները, որոնք չեն կարողանում նույն բարձրության վրա պահել դպրոցը, և աստիճանաբար խամրում է երեսուն տարի գիտական, մանկավարժական և քաղաքական գործունեություն ծավալած վարդապետարանի փառքը: Չնայած դրան՝ հետագայի գրիչները, նկատի ունենալով վարդապետարանի երբեմնի հռչակը, հիշատակարաններում վանքն անվանում են «քարձրահամբաւ», «մեծայարկ գումբեթաձև», «հռչակաւոր սուրբ ուխտն Խորանաշատ»:

Վանական վարդապետի ամենից բեղմնավոր սանն ու վարդապետարանի առաջին շրջանավարտներից էր Վարդան Արևելյին, որ Ժամանակակիցների կողմից մեծարվել է «սուրբ», «հոգիապայծառ սուրբ հայր», «լուսավոր վարդապետ», «եռամեծ», «տիեզերալույս վարդապետ» պատվանուններով: Իսկ Գրիգոր Տաթևացին նրան պատվել է «Մեծն Վարդան» անունով:

Մխիթար Գոշի մոտ կրթություն ստանալուց հետո Վարդանը գալիս է Խորանաշատ և աշակերտում Վանական վարդապետին, նրանից ստանում վարդապետական աստիճան և 1235 թվականից զբաղվում գիտական, մանկավարժական, եկեղեցական ու քաղաքական բեղմնավոր գործունեությամբ: Նա բացում է դպրոցներ, սկզբում՝ Կայենո բերդի Սբ. Անդրեաս վանքում, ապա՝ Խոր վիրապում, որտեղ շարունակում է

Վանական վարդապետի դպրոցի ավանդները: Խոր վիրապում Արևելյուն աշակերտում են Գրիգոր Բջնեցի վարդապետը, Արարատյան գավառի Գրիգոր եպիսկոպոսը, Գևորգ Սկևռացին, Հովհաննես Երզնկացի Պյուզը, Եսայի Նչեցին, Ներսես Մշեցին: Վերջինս Սուրբ գրքի մեկնություն էր դասավանդում, իսկ բաբունապետի մահից հետո փոխարինում է նրան, ապա դպրոցը տեղափոխում Մշո Առաքելոց վանք:

Վարդան Արևելյուն թողած մատենագիտական հարուստ ժառանգությունը՝ պատմական, մեկնողական, քերականական բնույթի երկեր, ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր, շարականներ, թարգմանություններ, նրան դնում են մեր մատենագիրներից լավագույնների շարքերում: Վարդան Արևելյին հայ մեկնաբանական մտքի ամենանշանավոր դեմքերից էր, հիմնադիրը մի ամբողջ մեկնաբանական դպրոցի: Վարդանը ճանաչված էր միջնադարյան Հայաստանում ու Կիլիկիայում և ակտիվ մասնակցություն ուներ դավանաբանական խնդիրներում: Նա մասնակցել է Սսի 1243 թվականի եկեղեցական ժողովին, այնտեղ սահմանված կանոնները 1245 թվականին բերել Հայաստան: 1248 թվականին կրկին մեկնել է Կիլիկիա՝ իր հետ տանելով «արևելյան» վարդապետների պատասխան թուղթը, մասնակցել Սսի 1251 թվականի ժողովի ընդունած կանոնների մշակմանը: Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի հանձնարարականով գրել է «Թուղթ խրատականը», Հելոն Ա թագավորի պատվերով՝ «Ժողանքը»: Վարդանը 1267 թվականին խմբագրում ու լրացնում է Տոնապատճառ ծիսական ժողովածուն: Իսկ նրա «Հաւաքումն պատմութեան» երկը կարևոր աղբյուր է ժամանակաշրջանի՝ Հայաստանի և հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար⁴³⁷:

Ե՛վ Գետիկավանքում, և՛ Խորանաշատում Վարդան Արևելյուն ուսումնակիցն էր Կիրակոս Գանձակեցին: Նոր Գետիկի վանքում վաղ մանկությունից աշակերտելով Վանական Վարդապետին՝ 1215 թվականին նրա հետ գալիս է Խորանաշատ և ուսումը շարունակում այստեղ: 1236 թվականին նա ուսուցչի հետ գերեվարվում

⁴³⁵ Գ. Յովսեփեան, Խաղրակեանք կամ Պոռչեանք..., էջ 29, նույնի՝ Յիշատակարան ձեռագրաց, էջ 882, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 181-183:

⁴³⁶ Հ. Ոսկեան, Յովհաննէս վանական եվ իւր դպրոցը, էջ 10:

⁴³⁷ Վարդան Արևելյուն կյանքին ու գործունեությանը ծավալուն ուսումնասիրություն է նվիրել Փ. Անթապյանը, տե՛ս Փ. Անթապյան, Վարդան Արևելյի, հ. Ա, Երևան, 1987, հ. Բ, Երևան, 1989:

է մոնղոլների կողմից: Փախչելով մոնղոլների բանակից՝ ապաստանում է Նոր Գետիկում, որի դպրոցը Մխիթար Գոշի մահից հետո էլ (1213 թ.) դեռ շարունակում էր իր գործունեությունը: Այդ ժամանակ դպրոցում դասավանդում էին Աբրահամը, Մխիթարը, Հովասափը, նշանավոր Հովհաննես Արմանեցին, որ այստեղ էր եկել Հաղբատից, իսկ դպրոցը գլխավորում էր Գոշի աշակերտ Մարտիրոսը: Վերջինիս մահից հետո Նոր Գետիկավանքի դպրոցի ռաբունապետն է դառնում Կիրակոս Գանձակեցին:

Կիրակոս Գանձակեցու գլխավոր երկը «Հայոց պատմությունն» է, որտեղ հեղինակը, որպես ականատես, տեղեկություններ է հաղորդում մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների, լեզվի, կենցաղի, բարքերի, հասարակական կառուցվածքի, Հուլավանների պետության քաղաքական, տնտեսական պատմության, Հայաստանի հայ իշխանների, Կիլիկիայի հայկական պետության և մոնղոլների փոխհարաբերությունների մասին:

Գրիգոր Ակներցի պատմիչը 1265-1266 թվականներին մեկնում է Կիլիկիա և դառնում Ակներ վանքի միաբան: Այստեղ Ստեփանոս վանահոր համար Գրիգորը 1273թ. ընդօրինակում է Միխայել Ասորու «Ժամանակագրությունը» և գրում «Պատմություն թաթարաց» երկը⁴³⁸: Երկու երկերն էլ պահպանվել են Երուսաղեմի Սբ. Հակոբյանց գրատան թիվ 32 ձեռագրում, որ հենց հեղինակի ինքնագիրն է⁴³⁹: Հիշատակարանում Գրիգորը հիշում է իր ուսումնակից ընկերների՝ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու մահվան թվականները. «Ի թուականին Հայոց Չ և Ի (1271) փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետքն Հայոց՝ Վարդան և Կիրակոս»⁴⁴⁰: Ակներցու Պատմությունը ընդգրկում է 1220-

1273 թվականների իրադարձությունները, և կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ: Հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ժամանակի տնտեսական և քաղաքական կյանքի, մոնղոլների կրոնի, հավատալիքների, կենցաղի և սովորույթների մասին:

Վանականի լավագույն աշակերտներից էր Առաքելը, որին հանդիպում ենք Գրիգոր Ակներցու մոտ՝ Վարդանի, Կիրակոսի, Հովսեփի հետ հիշվելիս. «Նոյնպես եւ գովելի աշակերտքն իւր Վարդան եւ Կիրակոս, Առաքելն եւ Յովսեփ խաչանման բաժանեալ զաշխարհն Արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ»⁴⁴¹: Գ. Հովսեփյանը Վանականի աշակերտ Առաքելին նույնացրել է Մահկանաբերոց գավառի Դեղձուտ և Առաքելոց վանքերի առաջնորդ և ռապունապետ նշանավոր Առաքել վարդապետի հետ, որը, Վանականից ստանալով վարդապետական աստիճան, գալիս է Մահկանաբերոց գավառ և Դեղձուտում հիմնում բարձր տիպի դպրոց: Առաքելի դպրոցը գավառի նշանավոր գրչության կենտրոններից էր, որտեղ ձեռագրեր էին ընդօրինակվում ընտիր և ստույգ օրինակներից: Ձեռագրերի բազմացման համար ընտիր և ստույգ օրինակ ունենալու համար այստեղ էին գալիս անգամ Նոր Գետիկից⁴⁴²:

Իսկ Հովսեփը, որ դավանաբանական հարցերում բարձր հեղինակություն էր վայելում, դառնում է Արտազ գավառի թեմակալ:

Վանականի աշակերտներից Մարկոսը ևս բարձր դիրքի էր հասել Խաչենում. նա Հասան Ջալալի շքախմբի կազմում բանակցությունների էր գնացել Բաթու խանի մոտ⁴⁴³:

Գրիգորիս քահանան, որը Վանականի աշակերտն ու եղբորորդին էր, 1252 թվականին Ստեփանոս քահանայի համար «ի նեղ և դառն ժամանակիս... զի բազմացաւ անհնարին վիշտք և

⁴³⁸ Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմություն թաթարաց: Այս երկը վերագրվել է Մադաքիա արեղային: Տե՛ս Մադաքիա արեղայի Պատմություն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870:

⁴³⁹ Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 144-147: Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 427, 429: Հմմտ. Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմություն թաթարաց:

⁴⁴⁰ Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, էջ 146: Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 403:

⁴⁴¹ Գրիգոր վրդ. Ակներցի, էջ 67:

⁴⁴² Գ. Յովսեփեան, Հավուց թառի Ամենափրկիչը, Երուսաղեմ, 1937, էջ 62: Դիվան հայ վիմագրության, Իջևանի շրջան, պր. VI, կազմ.՝ Ս.Ավագյան, Հ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 110:

⁴⁴³ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը..., էջ 197-202, Կիրակոս Գանձակեցի, էջ 225:

նեղութիւնք ի վերայ ամենայն աշխարհի ի ձեռն անաւրէն և այլակերպ զաւրուն նետողաց... ի վանս վարդապետի Վանականի Խորանաշատ կոչեցեալ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս» (թերթ 361ա) ընդօրինակում է մի Ժողովածու⁴⁴⁴, իսկ 1255 թվականին Թաղե և Հայրապետ եղբայրների համար գրում է Վանականի «Հարցմունք ու պատասխանիքը»⁴⁴⁵:

1266-ին Սարգիս գրիչը Միսիթար րապունապետի համար արտագրում է Վարդան Արևելցու Երգ երգոցի մեկնությունը⁴⁴⁶: Մատյանը կազմում է Յոհանը և հիշում իր ծնողներին և աշակերտ Հովհաննես կրոնավորին:

1283-ին Պետրոս վարդապետի առաջնորդության տարիներին «ի վանս Վանական վարդապետի» Մարտիրոս գրիչը ծերացյալ հասակում արտագրում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունը»⁴⁴⁷:

Խորանաշատի վարդապետարանի գործունեության մասին հետագայի գրավոր տեղեկությունները վերաբերում են 16-րդ դարին: Իսկ 17-րդ դարի ձեռագրերում արդեն Խորանաշատը հիշվում է Չական գավառի կազմում:

1503 թվականին Հունան եպիսկոպոսի օրինակած մատյանը Խորանաշատի Սր. Աստվածածին եկեղեցում ավետարանիչների պատկերներով և կիսախորաններով ծաղկում է Ստեփանոս եպիսկոպոսը և Ղուկասի նկարի տակ թողնում հիշատակարան. «Նկարող Ստեփանոս եպիսկոպոսս յիշեցե՛ք» (թերթ 137բ)⁴⁴⁸:

1620 թվականին Հակոբ երեցը Ավետարան է գրում «ի դուռն սուրբ, բարձրահամբաւ Սր. Խորանաշատու և ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս սուրբ Վանական վարդապետիս և Գրիգոր վարդապետիս, և Սր. Յովանիսիս՝ ի ծորս Չականա՝ ի գեղս, որ կոչի Լդարակ» (թերթ 284բ) և հիշում իր ծնողներին՝ Ղազարին և Ուստիանին,

ինչպես նաև տնտեսին՝ Էթարին, որ ձեռագրերի ստեղծման աշխատանքներում իրեն շատ է օգնել⁴⁴⁹: Գրիչը թողություն է խնդրում սխալների ու խոշոր գրի համար ու բերում է մի քանի պատճառներ. «զի նուագեալ էր զաւրութիւն մարմնոյս և ի աչացա լոյսն պակասեալ, զի չէմաւ գրէի, զի չար ժամանակիս գրեցաւ, զի բագում նեղութիւնք ունէաք ի ձեռն տանկաց, որ Աբագ...աւերաց զաշխարհն, զմեծամեծս կոտորեաց և այրեաց զաշխարհն և զամէն առու գերի արաւ, տարաւ» (թերթ 284բ):

1637 թվականին Եսայի գրիչը Աստվածատուր քահանայի համար «ընդ հովանեաւ մեծալարկ գումբեթաձև Խորանաշատ Սր. Աստուածածնիս և Վանական վարդապետի սուրբ գերեզմանիս» օրինակում է մի Ժողովածու: Իսկ Թումա կրոնավորի համար օրինակած Ավետարանում Եսայի գրիչը գրչության տեղի մասին գրում է. «ընդ հովանեաւ Սր. Խորանաշատայ Աստուածածնիս ի գաւառս Չագամ»⁴⁵⁰: 1642 թվականին որդու՝ Դավիթ սարկավագի համար Թամուրը Ժամագիրք է պատվիրում, որը «ի դուռս Խորանաշատայ Սր. Աստուածածնիս եւ գերեզմանացս Վանականայ եւ Գրիգորի սուրբ վարդապետացս» ավարտում է Եսային⁴⁵¹:

1674 թվականին Ավետիս քահանան Մաշտոց ձեռագ է օրինակում «ի հայրապետութեան տէր Պետրոսի և յայժող Խորանաշատու»⁴⁵²:

ՉԱԿԱՍԻ ԳԱՎԱՌ

Չական գավառը տարածվում էր համանուն գետի հովտում՝ ընդգրկելով նրա ստորին ու վերին հոսանքները և համապատասխանում էր Կողթ գավառի մի մասին, իսկ երբեմն էլ նույնացվում էր նրա հետ⁴⁵³: Չականը բաժանվում էր

⁴⁴⁴ ՄՄ ձեռ. 2273, թերթ՝ 364, նյութ՝ թուղթ, 17 × 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 26-28:

⁴⁴⁵ ՄՄ ձեռ. 6106, թերթ՝ 274, նյութ՝ թուղթ, 12 × 8, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:

⁴⁴⁶ ՄՄ ձեռ. 5452, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 24,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:

⁴⁴⁷ ՄՄ ձեռ. 1563, թերթ՝ 340, նյութ՝ թուղթ, 17 × 12,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-22:

⁴⁴⁸ ՄՄ ձեռ. 5601, թերթ՝ 311, նյութ՝ թուղթ, 17,5 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁴⁴⁹ ՄՄ ձեռ. 6669, թերթ՝ 286, նյութ՝ թուղթ, 20,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-20:

⁴⁵⁰ Արցախի վանքերը, էջ 157-158:

⁴⁵¹ ՄՄ 8882, թերթ՝ 160, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:

⁴⁵² ՄՄ 3536, թերթ՝ 134, նյութ՝ թուղթ, 20 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁴⁵³ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 259: Արցախ, էջ 419-420:

Ներքին Չակամի և Վերին Չակամի⁴⁵⁴: Երկու հատվածները միասին Ադվանից Եսայի կաթողիկոսը անվանում էր Ամիրաշ Ճատինու⁴⁵⁵: Ներքին Չակամում էր գտնվում պատմական Խաղիսաղ քաղաքը, որը Ադվանից թագավորների ձմեռոցն էր⁴⁵⁶:

Սակավաթիվ ձեռագիր մատյաններ են մեզ հասել նաև Չակամա երկրից, բոլորն էլ հետագա դարերից և հիմնականում ծիսական բովանդակությամբ:

1571 թվականին **Վերին Չակամում** մոլեգնող համաճարակի հետևանքով մեկ օրում ընտանիքի յոթ անդամ կորցրած Եվա և Ոսկան ամուսինները իրենց հարազատների հիշատակին գրիչ Մխիթարից խնդրում և ստանում են Ավետարան: Ստանալով Սուրբ գիրքը՝ Եվան նվիրում է Ղարամուրատի Կուսանաց անապատին, որի առաջնորդն էր Սանդուխտը⁴⁵⁷: Ձեռագիրը հետո պահվել է Մեծ Բանանց գյուղի Սր. Լուսավորիչ եկեղեցում:

1647 թվականին «ի յերկիրս Չակամա՝ ի գեօղս, որ կոչի **Սուլտանեցի**» Մխիթար աշխարհականը Լալա Ճատուրի համար արտագրել է Ավետարան՝ հիշատակարանում խնդրելով հիշել իր ծնողներին՝ Հայրապետ քահանային և Գոհարին, նաև ուսուցչին՝ Մովսես վարդապետին, Ստեփանոս քահանային և Հռիփսիմե ապաշխարողին, իսկ ստացողի անունից նրա պապ Ղարամային և բոլոր ազգականներին⁴⁵⁸: Նույն վայրում 1678 թվականին Թաթեոս եպիսկոպոսը գրիչ Մխիթարից խնդրել ու ստացել է Մաշտոց⁴⁵⁹: 1727 թվականին Մաշտոցի տերն էր Ներսես վարդապետը: Այստեղ 1709 թվականին Վարդան գրիչը Սարգսի համար արտագրում է

Հայսմավուրք⁴⁶⁰: 1844 թվականին Գրիգոր Լուռու-Մելիքյանը ավարտում է իր բանաստեղծությունների ժողովածուն⁴⁶¹:

1610 թվականին «ի յերկիրս Չակամայ՝ ի գիւղն **Ղարամուրատոյ**» Աղաբաբը իր հոգու փրկության համար Դավիթ եպիսկոպոսից խնդրել ու ստացել է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը և նվիրել «նորակնունք սուրբ խորանին»⁴⁶²: Գրիչ Ավետիս Քամալեցի արեղան, որ Տավուշի երկրի Քամալու գյուղից էր, 1679 թվականին Ղարամուրատի Հարանց անապատում ծերացյալ հասակում լավ և ընտիր օրինակից արտագրում է Ավետարան և խնդրում հիշել իրեն ու իր զավակներին և տնտես Թագազիզին⁴⁶³: Այս ձեռագիրը նույնպես պահվել է Մեծ Բանանց գյուղի Սր. Լուսավորիչ եկեղեցում⁴⁶⁴: 1682 թվականին «ի դուռն Ամենափրկչի՝ ի գեղն Ղարամուրատ» Դուկաս երեցը իր համար Ձեռաց մաշտոց է օրինակում⁴⁶⁵:

Հակոբ քահանան «ի յերկիրս Չակամ՝ ի գիւղս **Մելիքատայ**» ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս և Սր. Թովմայ և Սր. Նահատակի» 1652 թվականին արտագրում է Ավետարան⁴⁶⁶: Մատյանը գտնվել է Մեծ Բանանց Սր. Լուսավորիչ եկեղեցում: Այժմ ձեռագրի գտնվելու վայրն անհայտ է:

17-րդ դարում Չակամում մի Ավետարան է օրինակում Գրիգոր քահանան⁴⁶⁷: 1703 թվականին Չակամի **Սարդարի թալ** կոչված գյուղում Արիստակես երեցը մահտեսի Եսայու և տանուտեր Ոսկանի պատվերով արտագրում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը⁴⁶⁸:

Առաքելի և Նազուխանի որդի Ավետիս քահանան Վերին Չակամի **Պապաճան** գյուղում գրում ու նկարագրողում է ձեռագիր մատյան-

⁴⁵⁴ Չակամի արևմտյան մասը համապատասխանել է Տավուշի մարզի Ճամշադին քաղաքին: Չակամի մեջ է մտել նաև Ադրբեջանի Ղազախ քաղաքը, որը կառուցվել է 1881 թվականին Շուշիից, Գանձակից, Բանանց գյուղից, Արցախի և Ղազախի գյուղերից եկած բնակիչների կողմից: Տե՛ս Արցախ, էջ 60, 420:

⁴⁵⁵ Արցախ, էջ 420:

⁴⁵⁶ **Եղիշե**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Մատենագիրք Հայոց, հ. Ա, առաջաբանը **Պ. Մուրադեանի, Կ. Իզբաշեանի**, Անթիլիաս, 2003, էջ 606:

⁴⁵⁷ ՄՄ ձեռ. 6759, թերթ՝ 260, նյութ՝ թուղթ, 18 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22

⁴⁵⁸ ՄՄ ձեռ. 223, թերթ՝ 222, նյութ՝ թուղթ, 18 × 13,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

⁴⁵⁹ ՄՄ ձեռ. 968, թերթ՝ 228, նյութ՝ թուղթ, 23 × 18, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁴⁶⁰ ՄՄ ձեռ. 3813, թերթ՝ 497, նյութ՝ թուղթ, 39,5 × 26,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 41:

⁴⁶¹ ՄՄ ձեռ. 7501, թերթ՝ 126, նյութ՝ թուղթ, 33,8 × 21,3, գիր՝ շղագիր, տող՝ 47-70:

⁴⁶² ՄՄ ձեռ. 3812, թերթ՝ 518, նյութ՝ թուղթ, 39 × 24,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 41:

⁴⁶³ ՄՄ ձեռ. 6705, թերթ՝ 264, նյութ՝ թուղթ, 20,8 × 14,8, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-23:

⁴⁶⁴ Արցախ, էջ 284:

⁴⁶⁵ ՄՄ ձեռ. 5868, թերթ՝ 152, նյութ՝ թուղթ, 19 × 13,7, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

⁴⁶⁶ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 476:

⁴⁶⁷ ՄՄ ձեռ. 7299, թերթ՝ 327, նյութ՝ թուղթ, 17,8 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

⁴⁶⁸ ՄՄ ձեռ. 9088, թերթ՝ 495, նյութ՝ թուղթ, 34,7 × 23,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 39:

ներ: Ավետիսը 1655 թվականին ավարտում է Շարակնոց⁴⁶⁹: Նա 1659 թվականին տանուտեր Հախում Պասակերցու խնդրանքով օրինակում է մի Ավետարան⁴⁷⁰: Տեղացիներն այն կոչել են Կարմիր Ավետարան՝ «քրիստոսախօս եւ տիեզերալոյս սուրբ Կարմիր Աւետարան»: Գլխավոր հիշատակարանում Ավետիսն իր անունը թողել է խառն՝ գումարագիր-եղբայրագիր ծածկագրով՝ «ա էռ բգ դռ ժժ բռ ժժ», որ կարդում ենք «Աւետիսի»: Հախումն ու նրա կողակից Գուլխաթանը գնել են «զգիրքս ի հալալ արդար վաստակոց» և նվիրել իրենց որդուն՝ նորընծա Բարսեղ քահանային: Ավետիսը հիշատակարանի սկզբում բոլորից առաջ հիշում է իր ուսուցչին՝ «քաջաբան տէր Մխիթարին՝ աննման վարդապետին», ապա տեր Սարգիս վարդապետին և քաջ բարունապետին և «ամին բանի համեմիչ եւ առաջնորդ» տեր Հակոբ շնորհագարդ քահանային (թերթ 299ա-300ա): 1664 թվականին ստացողի անունից 223ա թերթին հիշատակ է թողել Մինաս վարդապետը, ով նգովում է մատյանը վաճառողներին: 1661 թվականին Ավետիսը գրում, ծաղկում ու կազմում է երկրորդ Ավետարանը և դարձյալ հիշում իր ծնողներին ու ուսուցչին, որ իրեն գրել ու նկարել է սովորեցրել. «...շնորհագարդ վարպետն իմ գտեր Մխիթարն, որ ուսույց զիս զիր և ծաղիկ» (թերթ 279բ)⁴⁷¹: Ավետիսից մեզ հասած երրորդ և վերջին մատյանը Շարակնոց է, որ նա օրինակում է նույն վայրում 1668 թվականի ձմռանը և դժգոհում ցուրտ եղանակից, որ օրինակը «ոչ եղև ընտիր ըստ յոճին և ըստ պատշաճին, սակս ցրտութեան խանգարումն եղև թանաքին և թառամիլ թղթին» (թերթ 292ա)⁴⁷² Ավետիսը դարձյալ հիշում է Մխիթար վարդապետին:

1661 թվականին «ի յերկիրս Վերին Չակամ՝ ի գեօս **Պապաճան** ընդ հովանեաւ Ջուխտակ եկեղեցիս հնոյն Սբ. Աստուածածնի և նորոյս Սբ. Գրիգորի Լուսաւորչիս և Սբ. Յովանէսի» Հովհաննես երեցն ընդօրինակվում է մի Ավետարան: Այս թվին վախճանվում է անապատի վա-

նահայր տեր Տիրունը, և վանահայր է դառնում տեր Գրիգորը⁴⁷³: Մեկ տարի հետո Հովհաննես երեցը գրում ու ծաղկում է երկրորդ Ավետարանը⁴⁷⁴: 1674 թվականին՝ Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության շրջանում, «ի յերկիրս Վերին Չակամ՝ ի գիւղս, որ կոչի **Ճաքարեկ**» Հովհաննես երեցը արտագրում է Ավետարան, որն ընծայվում է Ղարամուրատ Հարանց անապատի Սբ. Աստվածածին եկեղեցուն⁴⁷⁵:

ԳԱՆՁԱԿ ԵՎ ԳԱՐԴՄԱՆԻ ԳԱՎԱՌ

Գարդման գավառը, որ աղբյուրներում հայտնի է Գարդմանաձոր, Գարդմանք, Գարթմանիկ, Քարթմանիկ, Քրթմանիկ անվանաձևերով, տարածվում էր Կուրի աջակողմյան վտակ Շամխորի, Դաշտաբերանի և Մռավ լեռնաշղթայի շարունակության մեջ: Գարդմանի կենտրոնն էր նույնանուն ամրոցը: Ըստ աղբյուրների՝ 1-5-րդ դարերում Գարդմանքը Ուտիք աշխարհի նախարարների աթոռանիստն էր, 9-11-րդ դարերում մասամբ ենթարկվում էր Բագրատունիներին, իսկ 12-13-րդ դարերում Չաքարյաններին: Հետագա դարերում Գարդմանը անցնում է մոնղոլների, ապա թուրքմենական ցեղերի տիրապետության տակ: Գավառը երբեմն նույնացվել է սահմանակից Փառիսոսի հետ և կոչվել է Քուստիփառնես⁴⁷⁶: Գարդման գավառի նշանավոր գրչության կենտրոններից է Գանձակը⁴⁷⁷:

⁴⁷³ Արցախի վանքերը, էջ 165-166:

⁴⁷⁴ ՄՄ ձեռ. 337, թերթ՝ 266, նյութ՝ թուղթ, 19,1 × 12,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 23:

⁴⁷⁵ Արցախ, էջ 334, Արցախի վանքերը, էջ 165:

⁴⁷⁶ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 809: Ըստ Հ. Ոսկյանի՝ գավառը ուշ շրջանում կոչվել է նաև Գանձակ: Տե՛ս Արցախի վանքերը, էջ 131:

⁴⁷⁷ Գանձակը աղբյուրներում հայտնի է նաև Արբասապատ, Գանգակ, Գանձակ Առանի, Գանձակ Հայոց, Գանջա, Գեկչե, Գենճե, Գենջե, Կենճե, Քանճա, Չանգան, ավելի ուշ՝ Գանձակ Նոր, Ելիգավետալոյ, Եղիսաբերթուպոլիս անուններով: Ատրպատականի համանուն քաղաքից տարբերելու համար աղբյուրներում հաճախ կոչվել է Գանձակ Առանի կամ Գանձակ Աղվանից: 17-րդ դարակազմից հին Գանձակից հարավ-արևելք հիմնվում է համանուն քաղաք՝ Նոր Գանձակը, որը 18-րդ դարում դառնում է խանության կենտրոն: 1804 թվականին Գանձակը միանում է Ռուսաստանին, դառնում համանուն նա-

⁴⁶⁹ Արցախ, էջ 388:

⁴⁷⁰ ՄՄ ձեռ. 3542, թերթ՝ 304, նյութ՝ թուղթ, 19 × 12, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁴⁷¹ ՄՄ ձեռ. 7687, թերթ՝ 282, նյութ՝ թուղթ, 18,6 × 12,2, գիր՝ բոլորգիր, սող՝ 22:

⁴⁷² ՄՄ ձեռ. 8549, թերթ՝ 295, նյութ՝ թուղթ, 12,3 × 8,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 23:

1139 թվականի երկրաշարժից ծանր կորուստներ կրած քաղաքը կրկին ավերվում է 1232 թվականին թաթար-մոնղոլական արշավանքներից, բնակչությունը մեծ տառապանքներ է կրում: Անտանեյի է դառնում ժողովրդի վիճակը, թալանվում են սրբավայրերը, գերեվարվում բնակիչները. քաղաքն ամայանում է:

Գանձակի առման վերաբերյալ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ մոնղոլները այնպես են պաշարում քաղաքը, որ ոչ ոք չի կարողանում փախչել ու փրկվել: Սրան հաջորդում է կողոպուտը. «Այսպես ամայի եկաց քաղաքն գտրոս ամս, և ապա հրաման ետուն շինության քաղաքին, և եկին ժողովեցան առ սակաւ-սակաւ»⁴⁷⁸:

1232 թվականին իշխան Ջաջուռի դուստր Վանենու խնդրանքով Հավապտուկ վանքին նվիրած Ավետարանի հիշատակարանում Ստեփանոս գրիչը նույնպես խոսում է քաղաքի առման մասին. «Ի թուխ Հայոց ՈԶԱ (1232)... եկն ազգն նետողաց եւ զմայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ՝ կոտորեց զմարդ եւ զանասուն, զբազումս ի քրիստոնէից»⁴⁷⁹: 1239 թվականին վերակառուցված քաղաքը երրորդ անգամ կործանվում է Ծահ-Աբասի կողմից 1606 թվականին:

Գանձակն առավել հայտնի է որպես ձեռագրապահպանման կենտրոն: Տեղի և շրջակայի գրեթե բոլոր գյուղերում և եկեղեցիներին կից ստեղծված գրչակենտրոններում և մատենադարաններում եղել են ձեռագիր մատյաններ:

Գանձակ քաղաքի Սբ. Հովհաննես եկեղեցում են պահվել Թումա գրչի օրինակած մագա-

ղաթյա կաշեկազմ Ավետարանը, որ ամբողջապես գրված է եղել երկաթագրով, ևս մեկ Ավետարան, որ ստեղծվել է 1183 թվականին Դրագարկում Հովսեփի խնդրանքով և ունեցել է «ազնիվ մագաղաթ, ընտիր պատկերներ, նուրբ գրիչ և գեղարվեստի փայլուն ճաշակ»⁴⁸⁰: Այս երկու ձեռագրերի գտնվելու վայրն անհայտ է: 1660 թվականին ընտիր թղթի վրա Ստեփաննոս քահանան բոլորգրով օրինակել է Ավետարան, որը պարուն Հակոբն ու պարուն Աբրահամը 1699 թվականին արդար վաստակով ձեռք են բերում և նվիրում Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցուն⁴⁸¹:

Սբ. Հովհաննես եկեղեցու հարստություններից է եղել հայ ձեռագրական մշակույթի արժեքներից մեկը՝ «Կեռանի և Հեթումի Ավետարանը» (ՄՄ ձեռ. 6764)⁴⁸²: 1283 թվականին որդուն՝ Հեթումին ձիավարության տիտղոս շնորհելու առիթով Կեռան թագուհին Ստեփանոս գրչին պատվիրում ու ստանում է Ավետարան և նվիրում Կիլիկիայի Սկևռա վանքին: Նուրբ մագաղաթի վրա բոլորգրով գրված Ավետարանի ծաղկողի անունը չի պահպանվել: Չեն պահպանվել նաև նախկին կազմն ու նկարազարդումն ամբողջապես: Մատյանն ունի երկու խորան, ավետարանիչների պատկերներն իրենց անվանաթերթերով և բազմաթիվ լուսանցազարդեր՝ ստեղծված վարպետ նկարչի ձեռքով: «Կեռանի և Հեթումի Ավետարանը» ոչ երկար ժամանակ Կիլիկիայում մնալուց հետո բերվում է Անի, որտեղ 1357 թվականին նորոգվում է անեցի պարուն Ասիլի միջոցներով և ընծայվում Անիի Առաքելոց եկեղեցուն: Ճակատագրի բերումով մատյանը Անիից հասնում է Սբ. Կարապետի վանք, որտեղ, հավանաբար 15-րդ դարում, վանքի փակակալ Միմեոն արեղան կազմելու է տալիս Ավետարանը: 1626

հանգի կենտրոնը, որը հետագայում Ելիզավետա թագուհու անունով կոչվեց Ելիզավետապոլ, իսկ 1935 թվականին Ս. Կիրովի անունով վերանվանվեց Կիրովաքաղ, այժմ կոչվում է Գյանջա: Տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 785: Ծնունդով Գանձակի շրջանից են Հովհաննես Մարկավազը (մահ. 1129 թ.), Դավիթ Այվակտորիին (1070/80-1140), Միսիթար Գոշը (1120-1213), Կիրակոս Գանձակեցին (1202/3-1271), Վարդան Արևելցին (1200-1271):

⁴⁷⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 237:

⁴⁷⁹ Գ. Յովսեփեան, Խաղրակեանք կամ Պոռոշեանք ..., էջ 344, նույնի՝ Յիշատակարան ձեռագրաց, էջ 883, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 181-183: Ս. արք. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ..., հ. Բ, էջ 216-217,

⁴⁸⁰ Արցախ, էջ 40-41:

⁴⁸¹ Հ. Ոսկեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Միսիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, էջ 719-720:

⁴⁸² Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի ձեռագրատանն է պահվում «Կեռան թագուհու Ավետարանը» (ձեռ. 2563, 1272թ.): Այդ ձեռագրից տարբերելու համար Կ. Մաթևոսյանը ՄՄ 6764 Ավետարանը պայմանականորեն անվանում է «Կեռանի և Հեթումի Ավետարան» և կատի ունենալով ձեռագիրը ստացողի և նրա որդու անունները: Այդ անունով ենք անվանում ենք նաև մենք: Տե՛ս Կ. Մաթևոսյան, Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991, թ. 3, էջ 46-49:

թվականին Ավետարանը գտնվում էր հոգաձու ձեռքերում: Օքսանդ անունով մի հայ մարդ, որ քազում գրկանքներ էր տեսել, կորցրել էր ամեն ինչ՝ տուն-տեղ, կին, երեխաներ, տաճիկ «հարամից» փրկում ու պահում է Ավետարանը՝ որպես վերջին հիշատակ: 1740 թվականին Հակոբի որդի Հովակիմը Ավետարանը նվիրում է Գողթնի Սբ. Ստեփանոս վանքին, իսկ 1807 թվականին Հարություն Երեմյանը նվիրում է Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցուն:

Ըստ Հ. Ոսկյանի՝ 1445-1467 թվականների ընթացքում «գաւառիս Գանձակայ ընդ հովանեաւ **Լեղանի** Սբ. Աստվածածնիս» գրվել է Ավետարան⁴⁸³:

Ստեփանոս արեղան նույն վայրում 1641 թվականին Սահակ միայնակեցի համար Ավետարան է արտագրում⁴⁸⁴: Գրիչը նկարել է նաև ավետարանիչների պատկերները, խորաններն ու կիսախորանները, զարդարել լուսանցազարդերով ու զարդագրերով: Նույն թվականին Փիլիպոս Կեչառեցի երեցը գնում է մատյանը և տալիս կազմելու և կոստողազարդելու: 1515 թվականին լավ և ընտիր օրինակից Ալեգսանոս արեղան «ի կաթողիկոսութեան տէր Ռստակէսի ի դանութեան Շահ Իսմայելին...ի յերկիրս Գանձակայ ի վանքս **Քրտմանկայ** ի դուռն Սբ. տաճարիս Յովհաննիսիս» ուխտի առաջնորդ տեր Բարսեղի համար օրինակել է Մաշտոց⁴⁸⁵:

Գանձակում Հովհաննես գրիչը մի Ժողովածու է ստեղծում 1682-ին⁴⁸⁶:

1779 թվականի հունվարի 27-ին գրիչ Միքայել Աստապատեցին ավարտում է Օվանեսի և Հակոբի կիսատ թողած հայատառ պարսկերեն Աստվածաշունչը⁴⁸⁷, իսկ 1783 թվականին գրում է մի Բժշկարան⁴⁸⁸: 1881-1882 թվականներին Մկրտիչ մահուեսի Աղանանյան-Իսահակյանը տարաբնույթ բովանդակությամբ նյութերի ժողովածու է հեղինակում⁴⁸⁹:

Ձեռագիր մատյաններ են հասել **Ելիգավետապոլից**, որոնք հիմնականում ծխական բովանդակություն ունեցող մատյաններ են (տե՛ս ցանկը):

Գրչության կենտրոն է գործել նաև **Շատախում**: «Ի յերկիրն Գանձա՝ ի գիւղս, որ կոչի Շատախ՝ ի դուռն Սբ. Աստուածածնին» 1621 թվականին՝ Հայտնության պահքի հինգշաբթի օրը, գրիչ Ովանես քահանան ստույգ և ընտիր օրինակից արտագրել է մի Ժողովածու⁴⁹⁰: 1661 թվականին նույն վայրում ձեռամբ Նազար դպրի օրինակվել է Ավետարան⁴⁹¹: Մատյանը ստացել է տանուտեր Խաչատուրը և հիշել իր կողակից Սառիկին, որդուն՝ տեր Հովհաննես քահանային, տեր Մարտիրոսին և բոլոր կենդանի և հանգուցյալ հարազատներին: 1730 թվականին չարդախվեցի Եղիազարը գնել է մատյանը և Մատթեոս երեցին գրել տվել հիշատակարան իր բոլոր հարազատների համար:

ՄՄ 713 մատյանը կազմված է երկու տարբեր ձեռագրերից⁴⁹²: Առաջինը Պարգատումար է, Գանձակի **Շատախ** գյուղում 1636 թվականին «իշխանաց իշխան և պարոնաց պարոն» Մելիք Սիմավոնի խնդրանքով օրինակել է Հովհաննես երեցը: Երկրորդը, որ գրիչը անվանում է «Քաղուածո», Ժողովածու է. «բարեպաշտ և աստուածասեր, իշխանաց զարմ և մեծագի պարոնաց պարոն» Մելիք Հախնազարի խնդրանքով գրել և կազմել է Բարսեղը 1687 թվականին: 1644 թվականին Հովհաննես երեցը Գրիգոր քահանայի համար օրինակել է մի Ժողովածու⁴⁹³:

Գետաշեն գյուղի Ավագ Սբ. Նշան մատրանը քանի՞ ձեռագիր է եղել, այստեղ ձեռագրեր ընդհանրապես գրվել են, թե՛ ոչ, դժվար է ասել: Ձեռագիր հիշատակարանները վկայում են միայն այստեղ պահված ձեռագրերի մասին, որոնցից հայտնի է միայն հինգի ճակատագիրը:

⁴⁸³ Արցախի վանքերը, էջ 7:

⁴⁸⁴ ՄՄ ձեռ. 3992, թերթ՝ 321, նյութ՝ թուղթ, 18 × 14, գիր՝ բուրգի, սող՝ 21:

⁴⁸⁵ Արցախի վանքերը, էջ 5:

⁴⁸⁶ ՄՄ ձեռ. 8967, թերթ՝ 86, նյութ՝ թուղթ, 16,8 × 11,5, գիր՝ նոսրգիր, սող՝ 14-19:

⁴⁸⁷ ՄՄ ձեռ. 3044, թերթ՝ 144, նյութ՝ թուղթ, 21,1 × 16,9, գիր՝ նոսրգիր, սող՝ 34-37:

⁴⁸⁸ ՄՄ ձեռ. 6234, թերթ՝ 129, նյութ՝ թուղթ, 35 × 21, գիր՝ նոսրգիր, սող՝ 31-51:

⁴⁸⁹ ՄՄ ձեռ. 9770, թերթ՝ 128, նյութ՝ թուղթ, 20,6 × 17, գիր՝ շղագիր, սող՝ 17-27:

⁴⁹⁰ ՄՄ ձեռ. 728, թերթ՝ 318, նյութ՝ թուղթ, 15,5 × 10, 5, գիր՝ բուրգի, սող՝ 17-22:

⁴⁹¹ ՄՄ ձեռ. 5072, թերթ՝ 306, նյութ՝ թուղթ, 18 × 12, գիր՝ բուրգի, սող՝ 20:

⁴⁹² ՄՄ ձեռ. 713, թերթ՝ 65, նյութ՝ թուղթ, 14 × 10, գիր՝ նոսրգիր, սող՝ 18 (Ա ձեռագիր), թերթ՝ 76, նյութ՝ թուղթ, 13,5 × 9,5, գիր՝ նոսրգիր, սող՝ 19 (Բ ձեռագիր):

⁴⁹³ ՄՄ ձեռ. 10882, թերթ՝ 182, նյութ՝ թուղթ, 21 × 13,5, գիր՝ բուրգի, սող՝ 20:

Ձեռագրերից մեկը արծաթապատ, ոսկեգոծ կողակալներով Ավետարան է՝ գրված ընտիր մագաղաթի վրա, ունի չորս ավետարանիչների և Հիսուս Քրիստոսի հրաշագործությունների և բժշկության պատկերները: Այս ձեռագիրն այժմ գտնվում է Բաքվի ԳԱ հանրապետական ձեռագրական ֆոնդում և կրում է 8315 համարը⁴⁹⁴: Մ. Բարխուդարյանցի նկարագրությունից երևում է, որ Ավետարանը գեղեցկագարդ է ու թանկարժեք. «Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ թռչնագրերն, սքանչելի ծաղիկներն, հիանալի նախշերն, ուշագրաւ նկարներն, թանկագին ներկերն, ազնիւ ոսկեղօծն և գմայլելի գեղարուեստի նրբագործությունն»⁴⁹⁵: Ավետարանը Կաֆայում 1667 թվականին ստույգ և ընտիր օրինակից արտագրել և ծաղկագարդել է Նիկողայոս գրիչը: Ծաղկագարդումն արված է գեղեցիկ ու ճաշակով: Մեկ տարի հետո մատյանն ստացել է մահտեսի Չանդուլին և Մարկոսի և Ղուկասի Ավետարանների վերջում Ալեքսան գրչի ձեռամբ թողել հիշատակարան. «Յիշատակ է Աւետարանս մահտեսի Չանդուլուն և ծնողացն՝ Վելիջանին, Համանին և կողակցուն իւրոյ Փարուն և եղբարց Պապին և Ետկարին և հանգուցյալ եղբարցն Միրաքին, Ծահիջանին և ամենայն ազգականաց»: Տարիներ հետո ձեռագիրը հասել է Նախիջևան և պահվել տեղի Ամենափրկիչ եկեղեցում: Անհայտ հանգամանքներում մատյանը գերեվարվել է այլազգիների կողմից: 1753 թվականին Մելիք Աղամը «ի հալալ ընչիւք» գնել է գերված ձեռագիրը, զարդարել արծաթով, ընդելուզել ոսկով և ընծայել Ջրվշտիկ Եղիշե առաքյալի վանքին⁴⁹⁶:

Երկրորդը թղթյա բոլորգիր Ավետարան է (ՄՄ ձեռ. 6303): Քանի որ այս ձեռագիրը չունի գլխավոր հիշատակարան, անհայտ են մնում գրիչը, գրչության վայրն ու ժամանակը: Ունի ավետարանիչների և տերունական պատկերներ, բազմաթիվ խորաններ, կիսախորաններ, լուսանցագարդեր: Ծաղկագարդումը հավանաբար կատարել է գրիչը: 1356 թվականին Պետանց

Հովհաննես արեղան և Բրտանց Սարգիսը Ավետարանը վաճառել են ոմն Վարդանին և նրանից գնել են մեկ կով և երկու կապիճ հաց: Կարապետ արեղան տեր Գրիգորի խնդրանքով 1372 թվականին մատյանը կազմելու է տվել Մելիքսեդեկին: Բարեմիտ և աստվածասեր Սարգիսը, նրա կին Հռոմը և դուստր Եղիսաբեթը 1672 թվականին երկրորդ անգամ կազմելու են տալիս Ավետարանը դափանցի Թումային և նրա որդի Սողոմոնին՝ որպես հիշատակ իրենց և Եղիսաբեթի դուստրերին՝ Աղասուլթանին, Էրիքին և Նազրուն: Մատյանը երրորդ անգամ նորոգվել ու կազմվել է 1767 թվականին Արիստակես քահանայի և նրա կին Ծահանդուխտի ծախսերով (թերթ 339թ)⁴⁹⁷:

Ավագ Սր. Նշան մատրան հարստություններից է եղել նաև Հաղբատի նշանավոր Ավետարանը (ՄՄ ձեռ. 6288)⁴⁹⁸: Ձեռագիրը այստեղ է բերվել Խաղապանքից, պահվել մինչև 20-րդ դարի քսանական թվականները և գյուղի անունով երբեմն կոչվում է «Գետաշենի Ավետարան»:

Այստեղ են պահվել Դրագարկում Հովսեփ փիլիսոփայի խնդրանքով 1295 թվականին երկու գրիչների՝ Թորոս փիլիսոփայի և Յոհանի գրած, Յոհանի ձեռքով նաև ծաղկագարդած մագաղաթյա Ավետարանը (ՄՄ ձեռ. 6290) և Դաստիփյուր գյուղում ծնողների՝ Մարյանի և Եաղուբի հիշատակին Սարգիս երեցի 1671-1673 թվականին ընդօրինակած գեղեցկագարդ, ակնակուռ և կոստղագարդ Ավետարանը: Մատյանը 1677 թվականին պատկանել է Եարամիշին և նրա որդիներ Ամիրխոջին և Թումանին (ՄՄ ձեռ. 6746): Սարգիս երեցի ընդօրինակությամբ հայտնի է ևս երկու ձեռագիր: Նա տեր Կարապետի և տեր Օհանի եպիսկոպոսության տարիներին «յերկիրս Աղուանից՝ ի մեճ և վայելագեղ գեղոյս **Դաստիփիւրի**, որ է մերձ մայրաքաղաքին Գանջայոյ՝ ի դուռն Սր. Ստեփաննոսի» 1673 թվականին սկսել և 1674 թվականին ավարտել է մի Մաշտոց⁴⁹⁹: Դարձյալ «ի յերկիրս Գանճոյ՝ ի

⁴⁹⁴ Օ. Եգանեան, Գետաշենի Ավագ սուրբ Նշան մատրան հայերեն ձեռագրերը, Աշխատություններ, էջ 78:

⁴⁹⁵ Արցախ, էջ 259:

⁴⁹⁶ Նույն տեղում, էջ 259-261:

⁴⁹⁷ Արցախ, էջ 261-262, Ե. Լալայան, Գանձակ, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1899, թ.1, էջ 319:

⁴⁹⁸ Արցախ, էջ 262-263:

⁴⁹⁹ ՄՄ ձեռ. 3576, թերթ՝ 308, նյութ՝ թուղթ, 18,5 × 12, գիր՝ բոլորգիր, սող՝ 20:

գիւղս, որ կոչի Դաստափիւր» նա «հեգահոգի և քրիստոսահավատ» Վարդանի խնդրանքով ընտիր բոլորգրով արտագրել է Ավետարան: Մարգիսը նաև ծաղկել ու կազմել է մատյանը: Հոր՝ Ռվանիսի և մոր՝ Մարթայի հիշատակին պատվիրված մատյանը ստանալով՝ Վարդանն ու յուր կողակից Մարյանը նվիրել են գյուղի եկեղեցուն: Վարդանը հիշատակարանում հիշում է նաև իր որդուն՝ Դովթին, և դստերը՝ Էզիլին և նրանց զավակներին⁵⁰⁰:

Ավագ Սբ. Նշան մատրանը եղել են նաև սուրբ մասունքներ. արծաթյա փոքրիկ խաչում պահվել է կենաց փայտից մի կտոր, մի արծաթյա ոսկեգոծված աջում՝ Եղիշե առաքյալի բազկից մասունք, որը Իգնատիոս եպիսկոպոսն էր բերել Կաֆայից, և մի անհայտ սրբի մասունք՝ ամփոփված ակնագարդ խաչում⁵⁰¹:

Եղնասարի Եղիշե առաքյալի վանքում Պետրոս սարկավագը նորոգել է թերթերը և կազմը վնասված մի Ավետարան, որ նրան տրամադրել էին Բումեցի մահտեսի Ոսկանը և նրա եղբորորդի Մանուչարը⁵⁰²: Եղնասարի Եղիշե առաքյալի վանքին մերձ է Եղնասարի կամ Գետաշենի Կուսանոց անապատը: Ըստ որոշ վկայությունների՝ այստեղ ապաշխարել է մի կույս՝ Մելիք-Բեգլարյանների տոհմից, որի պատճառով մելիք Թամրազի որդին նորոգել է տվել անապատը: Սրա արևմտյան կողմում եղել է մի շինություն, որ ծառայել է որպես ուսումնարան⁵⁰³:

Գարդման գավառի հնագույն վանքերից է **Թարգմանչաց վանքը**: Ավանդության համաձայն՝ այն հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը: Վանքը քանիցս քանդվել ու վերանորոգվել է, կրկին հիմնադրվել 989 թվականին: Հայտնի չէ, թե երբվանից և որքան ժամանակ է վանքում գործել գրչության կենտրոն: Չնայած պատկառելի տարիքին՝ վանքի ձեռագրատան հավաքածուից շատ քիչ ժառանգություն է հասել մեզ: Ըստ Մարգիս Ջալալյանցի՝ վանքի գրատանը եղել են երևելի շատ ձեռագիր մատյաններ, բայց

«մատնեալ են ապականութեան և ապա թաղեալ են ի սիրտ երկրի ի նշան մեծի յարգանաց ըստ ռամկական մտաց նոցա»⁵⁰⁴: Այստեղ է պահվել նշանավոր «Թարգմանչաց Ավետարանը» (ՄՄ ձեռ. 2743): Մարգիս Ջալալյանցը վկայում է, որ վանքում տեսել ու վերցրել է մի Ժողովածու, որ բովանդակել է Թովմա Մեծոփեցու, Սոկրատեսի, Միխայել Ասորու, Մաղաքիա արեղայի, Դիոնիսիոս Արիոպագացու աշխատանքներից⁵⁰⁵: Օ. Եգանյանը կարծում է, որ դա կարող է լինել ՄՄ 3076 ձեռագիրը⁵⁰⁶: Հովհաննես եպիսկոպոսը 1583 թվականին այստեղ Գանձատետր է կազմել⁵⁰⁷: Վանքում է եղել նաև 1652 թվականին Մարխոշ Վարդենիսցու խնդրանքով Գրիգոր Բյուրականցու օրինակած Ավետարանը, որի գտնվելու վայրը նույնպես անհայտ է⁵⁰⁸: Վանքի վանահայրերից հիշվում են Սամուել վարդապետը և Թեոդորոս քահանան, որն այստեղ բացել է վարժարան⁵⁰⁹: Վանքում պահվել են նաև եպիսկոպոսական թագ և այլ սրբություններ:

Թարգմանչաց անապատից Մաշտոցի անվան Մատենադարանում ունենք 19-րդ դարում գրված տասը ձեռագիր, որոնց հեղինակը վանքի վանահայր Թեոդորոս վարդապետ Շիրակունին է (տե՛ս ցանկը):

Մեծ Բանանց գյուղի Սբ. Լուսավորիչ եկեղեցին, որ համեմատաբար ուշ շրջանի կառույց է (1863 թ.), նույնպես ունեցել է ձեռագիր մատյաններ, որոնք եկեղեցուն են նվիրաբերել գյուղացիները: Մ. Բարխուդարյանցը 1890-ական թվականներին այստեղ տեսել ու նկարագրել է տասներեք ձեռագիր մատյան, բոլորն էլ Ավետարաններ:

Այստեղ է պահվել մեր ձեռագրական ժառանգության արժեքավոր մատյաններից մեկը՝ հնությամբ 7-րդ դար հասնող երկաթագիր «Վեհամոր Ավետարանը»⁵¹⁰: Ավետարանի հարդա-

⁵⁰⁰ Վիեննայի ձեռ. 914: Տե՛ս Հ. Ոսկեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, էջ 502:

⁵⁰¹ Արցախ, էջ 264:

⁵⁰² Արցախի վանքերը, էջ 132-133:

⁵⁰³ Արցախ, էջ 265:

⁵⁰⁴ Մ. արք. Ջալալեանց, Ճանապարհորդություն ... , հ. Ա, էջ 168-169:

⁵⁰⁵ Նույն տեղում:

⁵⁰⁶ Օ. Եգանեան, Մարգիս արք. Ջալալյանցի Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան գրքում հիշատակվող ձեռագրերը, Աշխատություններ, էջ 21:

⁵⁰⁷ Նույն տեղում:

⁵⁰⁸ Օ. Եգանեան, Թարգմանչաց վանքի ձեռագրերը, Աշխատություններ, էջ 19:

⁵⁰⁹ Արցախի վանքերը, էջ 136:

⁵¹⁰ ՄՄ ձեռ. 10680, թերթ՝ 257, նյութ՝ մագաղաթ, 33 × 25,7, գիր՝ բոլորագիծ երկաթագիր, տող՝ 18:

րանքը պարզ է՝ ընդելուզված մի քանի թանկարժեք քարերով ու գամերով և առանց ծաղկազարդման: Մ. Բարխուդարյանցը հնության պատճառով ձեռագիրն անվանել է «ծեր»⁵¹¹: Ավելի ուշ մատյանը տարվել է Գանձակի Սբ. Գրիգոր եկեղեցի, որտեղից էլ Աղոբեջանի Հայոց թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տերյանը բերել է Սբ. Էջմիածին և նվիրել Ամենայն հայոց հայրապետ Վազգեն Ա-ին: Վազգեն Վեհափառը, անչափ արժևորելով Ավետարանը, այն նվիրում է Մատենադարանին՝ ի հիշատակ իր մոր՝ Միրանուշ Պալճյանի, որից էլ մատյանը ստանում է «Վեհամոր Ավետարան» անունը: Ավետարանը բացառիկ է նաև նրանով, որ երդմնակալության ժամանակ Հայաստանի նախագահները երդվում են հենց այդ Սուրբ մատյանի վրա:

Մեծ Բանանցում են պահվել Ուրծ գյուղաքաղաքում 1461թ. Ներսես քահանայի խնդրանքով Խաչատուր գրչի օրինակած և Մալեզկերո անապատում Գրիգոր Ծարեցու ծաղկազարդած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6367), որը 1580 թվականին կազմել է Աթանես եպիսկոպոսը:

Վանքի մատենադարանի հավաքածուի մեջ են մտել 1585 թվականին Տաթևում Հովհաննես եպիսկոպոսի օրինակած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6339), ՄՄ 6432 գեղեցկագիր Ավետարանը (1679-ից առաջ, գրիչ՝ անհայտ, ստացող՝ Պապանյան), 1451 թ. Հովհան երեցի խնդրանքով Հովսեփի օրինակած մագաղաթյա, բայց ծաղկազարդման արվեստով պարզ մի Ավետարան, որ 1540 թվականին կազմել է Գրիգորը (ՄՄ ձեռ. 6424) և 16-րդ դարի մի Ավետարան, որը 1762 թվականին կազմել է տեր Մխիթարը (ՄՄ ձեռ. 6427), Հաղբատում 1455 թվականին Ամիրբեկի և Էլիսաթունի խնդրանքով Գրիգոր արեղայի արտագրած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6683), Աստվածատուր երեցի 17-րդ դարում օրինակած մատյանը (ՄՄ ձեռ. 6667), Մաքենյաց վանքում 1524 թվականին Ալեգսանոս արեղայի օրինակած թղթյա Ավետարանը (ՄՄ ձեռ. 8196): Այստեղ է եղել նաև ՄՄ 6560 Ավետարանը, որը 1620 թվականին օրինակել է Հակոբ երեցը: Մատյանը Տփիսի Սբ. Աստվածածին եկեղեցում ծաղկազարդում ու կազմում է Ջուղայից այստեղ տեղափոխված Աղամալ Ջուղայեցին:

⁵¹¹ Արցախ, էջ 279:

Գրչության նշանավոր կենտրոն է գործել Գանձակի **Քարահատ** գյուղում, թերևս Գարդման գավառի ամենաբեղմնավոր կենտրոնը: Կենտրոնն ունեցել է իր գրատունը, մատենադարանն ու կազմատունը, որտեղ գրիչները արտագրել, ծաղկել, նաև կազմել են ձեռագիր մատյաններ: Քարահատում որպես գրիչ և ծաղկող հայտնի էր Գրիգոր քահանան: Նա գրչության արվեստի լավագույն գիտակ էր, միաժամանակ ուսուցանում և իրեն արժանի փոխարինողներ էր պատրաստում: Գրիգորը գրչագրելու ու ծաղկելու արվեստը փոխանցել է իր երկու որդիներին՝ Բարսեղին և Ղազարին, որոնք գրչության ու նկարազարդման արվեստում գրեթե չէին զիջում իրենց հորը⁵¹²: Առաջին անգամ Գրիգորին հանդիպում ենք 1655 թվականին, երբ նա ծաղկազարդում է Ավետիսի օրինակած Ավետարանը, վերջին անգամ՝ քսան տարի հետո՝ 1676 թվականին, երբ վախճանվում է Գրիգորը և նրա կիսատ թողած գործը ավարտում է ավագ որդին՝ Բարսեղը: Գրիգորն օգտագործում է հարուստ ներկապնակ՝ նկարելով բացառապես պայծառ ու վառ երանգներով: Այդպես են նկարում նաև նրա աշակերտները: Գրիգորից, Բարսեղից և Ղազարից մեզ բազմաթիվ ձեռագրեր են հասել, որոնք բոլորն էլ նկարազարդված են ճաշակով ու վարպետորեն:

1655 թվականին Ավետիս քաջ քարտուղարը բոլորգրով օրինակել է Ավետարան Ղուկաս րաբունապետի և նրա աշակերտ Պետրոս կաթողիկոսի խնդրանքով: Գրիչը գրել է լավ մշակված մագաղաթի վրա, գեղեցիկ ու համաչափ: Նույն թվականին էլ մահանում է գրիչը, իսկ ծաղկազարդումը Պետրոս կաթողիկոսի պատվերով հանձնարարվում է Գրիգոր քահանային: Գրիգորը «խոց լերդով եւ թախիժ կսկծալի սրտիւ, հողամած դիմօք» (թերթ 298ր) ավարտում է այն՝ ոսկով և բազմերանգ գույներով նկարելով երկու թեմատիկ նկար (6ա, 276ա), ավետարանիչների պատկերները, կիսախորանները, լուսանցազարդերն ու զարդագրերը: Գրիգորը կազմում է նաև մատյանն արձայա զարդարուն կրկնակազմով:

⁵¹² Գրիգորի, Բարսեղի և Ղազարի նկարազարդած ձեռագրերի մասին տե՛ս **Ա. Գեորգեան**, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ., էջ 138-139, 93-95, 350-351:

Ա փեղկին Աստվածամայրն է մանկան հետ, Բ փեղկին՝ խաչված Հիսուսը՝ աջ ու ահյակ կողմերում Աստվածամայրն ու Հովհաննես ավետարանիչը, ներքևում և վերևում՝ հրեշտակներ, իսկ դռնակին ավետարանիչների խորհրդանիշ չորս մետաղադրոշմներ են⁵¹³: Սա Գրիգորից մեզ հասած առաջին մատյանն է, որին նա վերաբերել է «որպես որդի հարազատ, առեալ աղերս ինչ ի ձեռաց հօր իւրոյ, եւ ետու ձեռն՝ զարդարել ըստ իմում անվարժ տկարութեամբս» (թերթ 298բ): Իսկ Պետրոս կաթողիկոսը, երբ ստացել է մատյանը «ուրախ եղև, իբրև ընծա ի վերուստ առաքեալ» (թերթ 298բ): Գլխավոր հիշատակարանում գրիչը հիշում է Եղիշե առաքյալի ուխտի միաբան քաջ վարդապետ Կիրակոսին, Գանձասարի միաբաններ Աստվածատուր արքեպիսկոպոսին, Հովհաննես, Եղիա և Մինաս եպիսկոպոսներին, դպրապետերին ու դպիրներին: 1657 թվականին Գրիգորը կաթողիկոսի համար գրում ու ծաղկազարդում է Խորհրդատետր (Երուսաղեմ, ձեռ. 2273):

Նույն թվականին Միրզան իր ծնողների՝ Նավասարդի և Թափառուկի հիշատակին Գրիգորից խնդրում ու ստանում է Ավետարան: Գրիգորը արտագրում է մատյանը, նկարում է նաև ավետարանիչների պատկերներն ու խորանները՝ իրենց գլխագրերով ու լուսանցազարդերով՝ օգտագործելով նաև ոսկի, իսկ մյուս լուսանցազարդերն ու գլխագրերը թողնում է նորուստն մի նկարչի⁵¹⁴: Գրիգորից մեզ հայտնի չորրորդ մատյանը 1659 թվականին Եղիայի խնդրանքով տեր Տերունի համար ստեղծած Ավետարանն է, որ հետո դարձել է Արսեն և Արման Փուշմանների սեփականությունը: Գրիգորը 1662 թվականին ստանում է կաթողիկոսական նոր պատվեր. նա Պետրոս հայրապետի համար գրում ու ծաղկում է երրորդ մատյանը, այս անգամ մագաղաթյա Տոնացույցը⁵¹⁵: Մեկ տարի հետո Քարահատում Գրիգորը Սանդուխտի խնդրանքով գրում ու նկարազարդում է Ծարակնոց, դարձյալ զարդարում ոսկով ու բազմազան գույներով⁵¹⁶:

1665 թվականին Գրիգորը արտագրում է մի Ժամագիրք և նկարազարդում⁵¹⁷: Այս թվականին է նա Չարեքա անապատի Սարգիս բարունապետի համար արտագրում Ճաշոց, նկարում է թեմատիկ պատկերները, կիսախորաններն ու զարդամոտիվները և կազմում մատյանը⁵¹⁸:

Գանձակի Գուլյար գյուղում 1667 թվականին «ի թագաւորութեանն Պարսից Փոքր շահ Սէֆուն նորընծա թագաւորի և ի հայրապետութեան Տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսի և առաջնորդութեան գերահռչակ սուրբ ուխտիս մերոյ Ամենափրկչի և Սբ. Նահատակի՝ Յովհաննէս եպիսկոպոսի և իշխանութեան մերոյ Մէլիք Միմէնի» Տարչինի խնդրանքով Սարգիս երեցը օրինակում է մի Ավետարան⁵¹⁹: Իր օրինակած մատյանը գրիչը կոչում է «սքանչելագործ Կարմիր Ավետարան», որ հետո տալիս են Գրիգոր քահանային՝ զարդարելու «ոսկով, երփնափայլ գունով և զանազան երանգօք» և ապա՝ «ետ ի դուռն Սբ. Յովաննիսի, որ ամփոփեալ կա ի նմա մասն ինչ նշխարաց սրբոյն Կարապետի» (թերթ 303բ): Գրիչը խնդրում է հիշել իր հոգևոր հայր Հովհաննես բանիբուն քահանային և շնորհալի ծաղկող Գրիգոր քահանային, ինչպես նաև Գանջա քաղաքի տեր Մովսեսին և տեր Եսայուն: Տարիներ հետո՝ 1741 թվականին, մատյանը կազմել են արծաթե զարդաքանդակ կրկնակազմով:

1675-ին Գրիգորը Գանձասարի առաջնորդ Իզնատիոս վարդապետի խնդրանքով Քարահատում գրում ու ծաղկում է Ավետարան⁵²⁰: 1676 թվականին Գրիգորը հասցնում է նկարել Մովսես քահանայի պատվիրած և Բարսեղի գրչագրած Ավետարանի միայն համաքարբաններն ու ավետարանիչների պատկերները: Նա մահանում է՝ անավարտ թողնելով նույն թվականին սկսած մատյանը: Բարսեղը ավարտին է հասցնում հոր կիսատ թողած գործը. գրում և «երփն-երփն գունովք և ոսկեգօծ որակոք» ծաղկում է տերունական նկարները և կազմում մատյանը արծաթյա կրկնակազմով, որի Ա փեղ-

⁵¹³ ՄՄ ձեռ. 3196, թերթ՝ 304, նյութ՝ մագաղաթ, 13,6×9,7, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁵¹⁴ ՄՄ ձեռ. 6873, թերթ՝ 308, նյութ՝ թուղթ, 16,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 19:

⁵¹⁵ ՄՄ ձեռ. 10743, թերթ՝ 270, նյութ՝ մագաղաթ, 10,5 × 7,6, գիր՝ բոլորգիր, սող՝ 17:

⁵¹⁶ ՄՄ ձեռ. 10044, թերթ՝ 378, նյութ՝ թուղթ, 12×8,7, գիր՝ բոլորգիր, սող՝ 22:

⁵¹⁷ ՄՄ ձեռ. 9448, թերթ՝ 285, նյութ՝ թուղթ, 10 × 7 ,4, գիր՝ բոլորգիր, սող՝ 17:

⁵¹⁸ ՄՄ ձեռ. 986, թերթ՝ 552, նյութ՝ թուղթ, 29,7×23, գիր՝ բոլորգիր, սող՝ 29:

⁵¹⁹ ՄՄ ձեռ. 6771, թերթ՝ 304, նյութ՝ թուղթ, 17,8 × 13,5, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁵²⁰ ՄՄ ձեռ. 8965, թերթ՝ 365, նյութ՝ թուղթ, 15,7 × 11, գիր՝ բոլորգիր, սող՝ 19:

կին խաչելության պատկերն է՝ անկյուններում սերովբեների ոսկեգոծ զարդաքանդակներով: Ստանալով մատյանը՝ Մովսեսն այն նվիրում է Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցուն⁵²¹:

1683 թվականին Գանձակի **Հերցհանկիս** գյուղում Հովհաննես քահանան Նազար քահանայի համար արտագրում է մի Ավետարան⁵²²: Հիվանդության պատճառով մահանում է նաև այս գրիչը՝ չավարտելով ձեռագրի նկարագրումն ու կազմելը: Գանձակում, որտեղ արդեն այնքան էր մեծացել Բարսեղի հեղինակությունը, «իշխանաց իշխան և պարոնաց պարոն» մելիք Հախնազարի հրամանով ծաղկազարդումը հանձնարարվում է նրան: Վերջինս էլ իր եղբայր Ղազարի հետ ավարտին է հասցնում այն: Մատյանը կազմում է Ովանես երեցը: Ձեռագրի հետագա ճակատագրի մասին հիշատակարանում կարդում ենք. «Ի նեղ և դառնացեալ ժամանակիս, որ անկեալ եմք ընդ լծով ծանր ծառայութեանն օսմանցուց և պարսից, որք յարեալ յաղթայարեն զմիմեանս, և տառապեալ ազգս Հայոց ցիր ու ցան եղեալ, ի ներքոյ ոտից անկեալ, ոտից կոխան եղեն, ի հուր մերձեցան և ի սուր մաշեցան, բազում գերի վարեցան և շատքս ի ծովս լլուկ /// խավարեցան և հատան ձայնք փառաբանչաց /// և տեղիք սրբութեան ի ձեռս անօրինաց անկեալ ցրուեցան» (թերթ 297բ): 1733 թվականին Դրախտիկեցի տեր Մովսեսի որդի տեր Սահակը, երբ այլազգիների մոտ տեսնում է Ավետարանը՝ «գալարեալ կիզաւ աղիքը և տոչորեր», փրկագնում է այս մատյանը:

1671 թվականին Օղվերձում Եփրեմ քահանայի սկսած Ավետարանը, որի ծաղկազարդումն սկսել էր հայրը, բայց չէր հասցրել ավարտել, 1684 թվականին Բարսեղը վերջացնում է Դաղիվանքում: Այստեղ նույն թվականին Բարսեղը Վառվառեի գրչագրած Գրիգոր Տաթևացու Քարոզիքը կազմում է և նկարում լուսանցազարդերն ու զարդագրերը:

1691 թվականին վախճանվում է նաև գրիչ Հովհաննես երեցը, որ սկսել էր մի Ավետարան և հասցրել էր ավարտել միայն երկու գլուխ՝ Մատ-

թեոսի ու Մարկոսի Ավետարանները: Հովհաննեսին շարունակում է Ղազարը՝ վերջացնում Դուկասի ու Հովհաննեսի Ավետարանները, նկարում ավետարանիչների պատկերները, խորաններն ու կիսախորաններ, գեղեցիկ զարդամոտիվները, զարդարում ոսկով և բազմազան գույներով և կազմում մատյանը⁵²³:

Գրիգոր երեցը ծաղկազարդել ու կազմել էր նաև **Մալազնաբերդի** Սբ. Ամենափրկիչ վանքում 1666 թվականին գրիչ Հովհաննեսի օրինակած Ավետարանը, որ նա կատարել է Հակոբի խնդրանքով «ի յերկիրս Գանջայ՝ ի գեօղն Հարցհանկիստ... յեպիսկոպոսութեան Սբ. Ամենափրկչին քաջ եւ արի բարունապետի Խաչատուր վարդապետի և թագաւորութեան Պարսից փոքր Շահ Աբասին, խանութեան երկրիս Աւղուրլու խանին»⁵²⁴: Երկու տարի հետո՝ 1668 թվականին, Հովհաննեսը «առաջնորդութեան այթոռոյս Ամենափրկչին պարոնտեր Յովհաննիսի» խոջա Փարսադանի համար գրում և ծաղկում է երկրորդ Ավետարանը⁵²⁵: Երրորդ Ավետարանը Հովհաննեսը ավարտում է 1669-ին: Հերցհանկիս գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում է պահվել 1221 թվականին Տարսնում Գրիգոր գրչի օրինակած մագաղաթյա գեղեցկագիր մի Ավետարան⁵²⁶:

1639 թվականին Հովհաննես երեցը **Գանձո ձոր** կոչված վայրում Գրիգորի և Անանիա քահանայի խնդրանքով ավարտում է Ավետարան⁵²⁷: 1669 թվականին Նաղտինի և Դովլաթի որդի Սարգիս երեցը Մարուխանբեկի որդու և «մեծ Միրումանի» թոռ պարոն Միրումի խնդրանքով օրինակել է Աստվածաշունչ «ի թագաւորութեանն պարսից շահ Սուլէյմանի և ի հայրապետութեան տանս Աղուանից տեառն Պետրոսի կաթողիկոսի և ի յառաջնորդութեան սուրբ մենաստանին Պայանու Անտոն պարոնտիրի... ի յերկիրս Գանձայու ի գեղս **Քարա-**

⁵²¹ ՄՄ ձեռ. 5636, թերթ՝ 323, նյութ՝ թուղթ, 18,5 × 12, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁵²² ՄՄ ձեռ. 3994, թերթ՝ 298, նյութ՝ թուղթ, 18 × 14, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁵²³ ՄՄ ձեռ. 10660, թերթ՝ 251, նյութ՝ մագաղաթ, 17,3 × 12,4, գիր՝ բոլորգիր, սող՝ 20-23:

⁵²⁴ ՄՄ ձեռ. 11060, թերթ՝ 318, նյութ՝ թուղթ, 17,8 × 13, գիր՝ բոլորգիր, սող՝ 22:

⁵²⁵ ՄՄ ձեռ. 10966, թերթ՝ 293, նյութ՝ թուղթ, 17,3 × 12,8, գիր՝ բոլորգիր, սող՝ 21:

⁵²⁶ Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 813-814, Արցախ, էջ 292:

⁵²⁷ ՄՄ ձեռ. 7980, թերթ՝ 299, նյութ՝ թուղթ, 18,6 × 14,7, գիր՝ բոլորգիր, սող՝ 19:

տակ»⁵²⁸: Միրումը և իր կողակից Խաթունադեն զավակներ չունեին և ստանալով մատյանը՝ նվիրում են Ոսկանապատի Սբ. Աստվածածին եկեղեցուն: Մատյանը գերեվարվում է, 1684 թվականին ոսկանապատի Սարգսի որդի Խոջազատը անօրեններից ձեռք է բերում մատյանը և նվիրում Ոսկանապատի Կուսանաց անապատի Սբ. Աստուածածին տաճարին: Պայանու Անտոնի մենաստանը Սբ. Հրեշտակապետաց վանքն է՝ «ի ձորս Գանձակու ի երկիրս Գանձու՝ ի գիւղս, որ կոչի Պայանանց ի դուռն Սբ. Հրեշտակապետ եկեղեցւոյ», որտեղ՝ 1763-ին Հովհաննես գրիչը արտագրում է Ավետարան⁵²⁹:

Ոսկանապատի Սբ. Հակոբ եկեղեցում է պահվել մագաղաթյա ոսկեգօծ ու գեղեցկագարդ մի Ավետարան, որ Թորոս գրիչը օրինակել է Դրազարկում: Մատյանը 1331 թվականին ստացել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճը, իսկ Կիրակոս վարդապետը ընդելուզել է ոսկով, արծաթով ու թանկարժեք քարերով: Ձեռագիրը հետո գնել է ոսկանապատի Հովհաննեսը՝ իր և ծնողների հիշատակին⁵³⁰: Եկեղեցում է պահվել նաև թղթյա մի Ավետարան, որ 1463 թվականին Մոկաց Փասավանք անապատում օրինակել է Իսրայելը⁵³¹: 1684 թվականին Սարգսի որդի խոջա Պատին անօրեններից գնել է մի Ավետարան և նվիրել Ոսկանապատի Սբ. Աստուածածին անապատին⁵³²:

Գանձակի **Հոռոմաշենի** Կարմիր վանքում Սարգիս գրիչը 1635 թվականին ավարտում է «Գործք առաքելոցի» արտագրությունը⁵³³: **Պանդալիոնի** վանքում 1671 թվականին իր վարպետի՝ Ազարիա քահանայի սկսած Ավետարանը ավարտում է Ղազար քահանան⁵³⁴:

Գանձակի շրջանի **Աբլահ** գյուղի Սբ. Մինաս եկեղեցում ևս պահվել են ձեռագիր մատյաններ: Այստեղ է եղել 1463 թվականին Վանի

Սբ. Աստվածածին եկեղեցում Եփկողայոս գրչի օրինակած թղթյա պատկերագարդ Ավետարանը⁵³⁵, որ պատկանել է Փիլիպոս կաթողիկոսին, ապա կաթողիկոսն այն տվել է սոթեցի Հակոբին, հետո անհայտ հանգամանքներում Ավետարանը բերվել է Աբլահի Սբ. Մինաս եկեղեցի⁵³⁶:

Երկրորդ ձեռագիր Ավետարանի հիշատակարանից տեղեկություն ենք ստանում միջնադարում Գեղարքունիքի զավառում Վասիլ իշխանի որդի ամիր Վահապի կողմից եկեղեցու և Գավառանո կամուրջի և ջրանցքի կառուցման վերաբերյալ: Այս շինարարության ժամանակ մորթվել է մեծաքանակ անասուն. «Ի թվականիս ԲՃՂԱ (1374)-ին ես ամիր Վահապս՝ որդի Վասիլ իշխանի, շինեցի եկեղեցիս եւ Գավառանո առուն հանեցի Կինեվանուց ձորերէն եւ սարերէն: Բնակիչք գեղիս խոստացան տարին Գ (3) ժամ կատարողն Աստուծոյ աւրինին: Դարձեալ կամուրջն շինեցի ու կապն կապեցի ԹԹ (900) անձեն յերինջ մորդեցի, ոչխարաց, դոչից, գառնից սաւա: Այս եղաւ դարձեալ Բուսխանի մուլքն իմն Էր, ջուր չունէր, շապտենն ա. աւր Ծակքարովն ջուր տվի»⁵³⁷: Այս փաստը հաստատվում է Գավառ քաղաքի «Դարի գլուխ» կոչված գերեզմանատան խաչքարի արձանագրությամբ⁵³⁸: Ըստ ձեռագրի սկզբում պահպանված հիշատակագրության՝ 1606 թվականին Ծահ Աբասի կողմից Ղարաբաղի գրավման տարում, հաթերքցի տեր Ռհաննես Ղալաբեկը Գանձակ քաղաքից մեծաթիվ գերիներ է ազատագրում, ձեռագիր մատյաններ է փրկագնում ու նվիրում Սբ. Եղիշե առաքյալի վանքի տեր Մելքիսեթին⁵³⁹: Ծահ Աբասի գրավումների մանրամասներին է անդրադարձել նաև Առաքել Դավրիժեցին իր Պատմության «Յաղագս առման քաղաքացն Գանջալոյ և Ծամախւոյ» գլխում⁵⁴⁰:

Այս վայրից մեզ հասած հաջորդ մատյանը դարձյալ Ավետարան է՝ առանց հիշատակարա-

⁵²⁸ ՄՄ ձեռ. 3856, թերթ՝ 326, նյութ՝ թուղթ, 18 × 12, գիր՝ բուլղոգիր, տող՝ 21 :

⁵²⁹ Արցախի վանքերը, էջ 7:

⁵³⁰ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., էջ 231: Արցախ, էջ 273:

⁵³¹ Արցախ, 274:

⁵³² Արցախի վանքերը, էջ 141:

⁵³³ **Յ. Թոփճեան**, Յուրացի ձեռագրաց, Խաչիկ վ. Դադեան, մասն Ա, էջ 11:

⁵³⁴ ՄՄ ձեռ. 3541, թերթ՝ 283, նյութ՝ թուղթ, 19 × 14, գիր՝ բուլղոգիր, տող՝ 20- 21: Տե՛ս նաև՝ **Մ. Բարխուդարեան**, Աղուանից երկիր և դրախտիք, էջ 251: Արցախ, էջ 271:

⁵³⁵ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Բ, էջ 198: Արցախ, էջ 267

⁵³⁶ Արցախ, էջ 268:

⁵³⁷ **Ղ. Ալիշան**, Միսական, էջ 145: **Թ. Ավդալբեգյան**, Երկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1927, էջ 14, Արցախ, էջ 268:

⁵³⁸ Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք, պր. IV, էջ 52, Ե. Լալայան, Նոր Բայազետի զավառ կամ Գեղարքունիք, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1908, թ.8, էջ 111, Թ. Ավդալբեգյան, Երկու էջ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1927, էջ 10:

⁵³⁹ Արցախ, էջ 268:

⁵⁴⁰ **Առաքել Դավրիժեցի**, էջ 96-97:

նի: Ղուկասի Ավետարանի վերջում գրված մի հիշատակագրության համաձայն՝ ոմն Մուրադ-չեն իրեն պատկանող Ավետարանը վաճառել է Եղիշե առաքյալի վանքի Խաչատուր երեցին⁵⁴¹:

Գրչության կենտրոններ են գործել նաև **Ճամբրում**: 1635 թվականին Ճամբր անապատում Պողոս առաքյալի թղթերն է արտագրում Սարգիս բանասերը և խնդրում հիշել իրեն ու իր ծնողներին⁵⁴²:

1671 թվականին մահտեսի Հովհաննեսը «ի յերկիրս Ճամբառ ի գեաղս **Բերդայտակ** ընդ հովանեաւ Սր. Յովաննիսին» ընտիր և ստույգ օրինակից ծնողների՝ Էվագի և Պայի հիշատակին գրել ու ծաղկել է Ավետարան: Գրիչը մի քանի էջերի լուսանցքներում բնագրային լրացումներ է կատարել⁵⁴³: Հիշատակարանում նա հիշում է իր եղբայրներին՝ Հովսեփին, Գրիգորին և տարածամ հասակում վախճանված Հարությունին, ինչպես նաև ազգակից-բարեկամներից շատերին: 1737 թվականին Համպար անունով մի աստվածասեր այր Կարսում Ավետարանը տեսել է մի «անօրեն տանկի» մոտ և «արտասուև հարեալ», գնել է մատյանը և նվիրել Սր. Ստեփաննոս Նախավկայի եկեղեցուն:

Մխիթար դպիրը՝ «ի յերկրէն Գեղամայ, բնիկ գեղջիւ Աղնաղալեցի», իր ծնողների՝ Խաչատուրի և Թեգայի, եղբոր՝ Հարությունի, և քեռու՝ Տավաթի հիշատակին Սարգսից «ի յերկիրս Ճամբռո ի գեօղս Բերթատակ ընդ հովանեաւ Սր. Աստուածածնին» խնդրել ու ստացել է Աղթթների ժողովածու, որում ամփոփված են եկեղեցու հայրեր Գրիգոր Նարեկացու, Եփրեմ Խուրիի, Բենիկ և Սարկավագ վարդապետների աղոթքները⁵⁴⁴: Սարգիսը մատյանն ավարտել է 1717 թվականի նոյեմբերի 20-ին: Նույն բովանդակությամբ մի Աղոթագիրք էլ 1721 թվականին դարձյալ նույն եկեղեցում Սարգիս երեցից խնդրում և ստանում է Առաքել Դանձուտեցին, որ բնիկ «ի յերկրէն Ճամբռոն» ի գեօղն, որ կոչի Դանձուտ, որ է մերձ Փառիսոսի սուրբ աթոռոյն»⁵⁴⁵:

⁵⁴¹ Արցախ, էջ 268:

⁵⁴² ՄՄ ձեռ. 3944, թերթ՝ 150, նյութ՝ թուղթ, 20,5×14,5, գիր՝ նոսրգիր, տող՝ 21

⁵⁴³ ՄՄ ձեռ. 6645, թերթ՝ 268, նյութ՝ թուղթ, 20,5×15, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁵⁴⁴ ՄՄ ձեռ. 1574, թերթ՝ 232, նյութ՝ թուղթ, 15×9,4, գիր՝ նոսրգիր, տող՝ 19-20:

⁵⁴⁵ ՄՄ ձեռ. 7008, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 15,7×10,7, գիր՝ նոսրգիր, տող՝ 20:

Ճամբրի **Նոր Փիփ** ավանի Սր. Ստեփանոս եկեղեցում եղել է չորս Ավետարան⁵⁴⁶, որոնցից երկուսը չունեն հիշատակարաններ, ուստի հնարավոր չէ որոշել նրանց գրչության վայրը, ժամանակը և գրիչը: Երրորդ ձեռագիրը գրվել է 1488 թվականին ձեռամբ Աթանասի «ի սուրբ ուխտս Աւծոպոյ՝ ի դուռն Սր. Աստուածածնին յիշատակ Գասպարին և ծնողաց իւրոց»⁵⁴⁷: Չորրորդ մատյանը, որ թղթա է ու պարզունակ նկարազարդումով, գրվել է Արտամետում Կարապետ երեցի ձեռամբ:

1659 թվականին «ի հայրապետութեան տեառն Պետրոսի կաթողիկոսի Տանս Աղուանի Սուրբ աթոռոյս Գանձասարա վերադիտողի և ի մենաստանա Չարեքանն Ճամբրո առաջնորդի տէր Սարգսի բարունապետի և առաջնորդութեան Զարդման գաւառի տէր Դաւիթ արհեսկսկոպոսի և ի խանութեանն Գանձակայ Մահամատին» Ալեքսանի և նրա որդի Միքայելի խնդրանքով Հովհաննես գրիչը «ի յերկիրս Ճամբրո՝ ի գեղոս **Գետապագ՝** ընդ հովանեաւ Սր. Աստուածածնիս» ավարտում է Հայսմավուրք⁵⁴⁸:

ՇԱՄԱԽՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ձեռագրեր են հասել **Ճամախուց** և շրջակա գյուղերից: Ճամախում 1717-1720 թվականներին Հաքիմ Բաքիջանը գրում և թարգմանում է հայատառ պարսկերեն Ավետարան⁵⁴⁹: Մարտիրոս գրիչը 1742-ին արտագրում է Ժողովածու⁵⁵⁰: 1825 թվականին Հին Ճամախում գրվում է Խորհրդատետր⁵⁵¹: Պետրոս Մատաթյանը 1865-67 թվականներին կազմում է իր երկերի Մատենագրությունը⁵⁵²: ՄՄ 9562 և 10005 ձեռագրերը

⁵⁴⁶ Արցախի վանքերը, էջ 297:

⁵⁴⁷ Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Շոպ է կոչվել այժմյան Դիլիջանի ձորը, իսկ Աստվածածնի վանքն այժմ անմարդաբնակ է և կոչվում է Ջուխտակ վանք: Տե՛ս՝ Արցախի վանքերը, էջ 297:

⁵⁴⁸ ՄՄ ձեռ. 4559, թերթ՝ 663, նյութ՝ թուղթ, 39 × 24, գիր՝ բոլորգիր, տող՝ 35:

⁵⁴⁹ ՄՄ ձեռ. 8492, թերթ՝ 239, նյութ՝ թուղթ, 16 × 10,4, գիր՝ նոսրգիր, տող՝ 24-25:

⁵⁵⁰ ՄՄ ձեռ. 8361, թերթ՝ 154, նյութ՝ թուղթ, 16,1 × 10,3, գիր՝ նոսրգիր, տող՝ 18-35:

⁵⁵¹ ՄՄ ձեռ. 2941, թերթ՝ 16, նյութ՝ թուղթ, 31,5 × 20,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 33-36:

⁵⁵² ՄՄ ձեռ. 7655, թերթ՝ 186, նյութ՝ թուղթ, 21,7 × 17,5, գիր՝ շղագիր, տող՝ 15-30:

Երգարաններ են⁵⁵³, որոնց հեղինակը Մեյիդ Շամախեցին է: «Զրիստիանոսի ճանապարհորդութիւնը» 1844 թվականին Գեորգ Գեոկջանցի համար գրում է Առաքել Բիշարայովը (ՄՄ ձեռ. 8499):

Ձեռագրեր են գրվել Սաղիան գյուղում: 1636 թվականին Ռհանես դայիր Շաքեցին «ի յերկիրս Աղուանից՝ ի գօղս, որ կոչի **Սաղիան**... մերոյ նահանգիս առաջնորդութեան Թումայի մեծ բարունապետի, որ... դպրոց կարգեաց և բազում քահանայքս հասուց, և բազում եկեղեցիս շինեաց և լուսաւորեաց այլալեզու ազգս Աղուանից» Աբրահամ դպրից ստացել է Աղոթամատույց⁵⁵⁴:

1654 թվականին Շաղպաթի դուստր Եղիսաբեթը վարժ բոլորգրով իր եղբայր Եղիա վարդապետի համար «ի գեաւդս, որ կոչի Սաղիան ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնիս» օրինակել է Ժողովածու, որ կազմված է Ժամագրքից, Խորհրդատետրից, Տոնացույցից⁵⁵⁵: Մատյանն ունի մեծ և փոքր հիշատակարաններ: Գրչուհին նախ հիշում է ծնողներին՝ հանգուցյալ հորը՝ Շաղպաթին և մորը՝ Գայանեին, ապա եղբորը՝ բարունապետ Եղիային և սխալների համար թողություն է աղերսում. «Թողութիւն արեք խոշորութեան գրոյս և սղալութեանս, որ խիստ ի տրտում և տարակուսեալ, նեղ և անձուկ ճանապարհի մոլորեալ եմ մտօք»: 1765-ին Սաղիանում Անտոն տիրացուն ստանում է Աղոթագիրք⁵⁵⁶: 1803 թվականին Սաղիանի Սբ. Ստեփանոս վանքի միաբան Միքայել վարդապետը արտագրում է Միմեոն Գառնեցու Պրոկղի մեկնությունը, որը դառնում է ուխտի սեփականությունը⁵⁵⁷: Հետագայի հիշատակարաններից տեղեկանում ենք, որ 1876 թվականին վանքի վանահայր էր Մարգիս վարդապետ Միրզաբեգյանցը, իսկ 1887-1894 թվականներին Շամախու թե-

մի առաջնորդն էր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը: Նա ձեռագրի 113ա էջին թողել է իր մտորումները Հայաստանի վանքերի ամայանալու և անմարդաբնակ դառնալու մասին: Հեղինակն իր խոհերն անվանել է ողբ՝ «Ողբ ի վանօրայս Հայաստանի»⁵⁵⁸:

Շամախու թեմի մեջ մտնող **Սաղիան, Մատրասա, Հնդար, Կյարմախան, Ղալակա և Չարխու** գյուղերի եկեղեցիներում պահվող ձեռագրերը տեսել ու նկարագրել են Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը⁵⁵⁹ և Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը⁵⁶⁰, ընդհանուր թվով քսանմեկ ձեռագիր մատյան և մեկ հնատիպ գիրք, որոնցից այժմ հայտնի են 13-ը: Շամախու թեմի ձեռագրերի հավաքածուի մեջ են մտել Սեբաստիայում 1723 թվականին Գալուստ վարդապետի համար տեղ Մինասի օրինակած Միմեոն Գառնեցու Պրոկղի մեկնությունները (ՄՄ ձեռ. 2573), Առաքել Սյունեցու Սահմանաց մեկնությունը, որ Մինաս Խախտեցու համար օրինակել է Հովհաննես գրիչը (ՄՄ ձեռ. 3329), 15-րդ դարում Գրիգորի օրինակած Գանձարանը (ՄՄ ձեռ. 4011), նույն դարում անհայտ գրիչների օրինակած Շարակնոց (ՄՄ ձեռ. 3220) և Ժողովածու (ՄՄ ձեռ. 3827), 1683 թվականին Հակոբ Ջուղայեցու Շատիկո անապատում գրած ու

⁵⁵³ ՄՄ ձեռ. 9562, թերթ՝ 143, նյութ՝ թուղթ, 19,8 × 12,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 20-32: ՄՄ ձեռ. 10005, թերթ՝ 55, նյութ՝ թուղթ, 22,2 × 18, գիր՝ նոտրգիր, տող՝ 20-28:

⁵⁵⁴ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի ձեռ. 2417: Տե՛ս **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց, հ. Ը, Երուսաղեմ, 1977, էջ 56:

⁵⁵⁵ Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի ձեռ. 2426: Տե՛ս **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց, հ. Ը, էջ 67:

⁵⁵⁶ ՄՄ ձեռ. 9729, թերթ՝ 110, նյութ՝ թուղթ, 10 × 7, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁵⁵⁷ ՄՄ ձեռ. 4013, թերթ՝ 116, նյութ՝ թուղթ, 21 × 16, գիր՝ նոտրգիր, տող՝ 17:

⁵⁵⁸ Գրությունն իր ձևով ու բովանդակությամբ հիշեցնում է Խորենացու Ողբը. «Այս ինն և տասներորդ լուսաւորեալ տարուս մէջ, որ գիտութեան ու արուեստի դար պետք է անուանել, փոխանակ ուրախական երգ երգելոյս քաղցր մեղեդիք՝ ցաւօք արտի ողբ եմ կարդում Հայաստանի Վանօրէից գլխին»: Ի՞նչն էր, այս ամենի պատճառը: «Կեղծ լուսաւորութիւնը փոխանակել է ճշմարիտ և անկեղծ լուսաւորութիւնը, կեղծ հաւատը փոխանորդել է հաստատուն հաւատոյ, կեղծ յոյսը կորցրել է ճշմարիտ յուսոյ նշանակութիւնը, և՛ պատիվը, և՛ սերը տեղակալել է անկեղծ սիրոյ և ամեն բան փոխել է ձեւականութեան»: Ու՛ր էր մնացել մեր նախնեաց հավատը, հույսն ու սերը, որից սկիզբ էր առնում կատարեալ աստուածասիրութիւնը, եղբայրասիրութիւնը, ազգասիրութիւնը և մարդասիրութիւնը: Ի՞նչն էր այսպէս վրդովեցրել սրբազան հորը, ինչո՞ւ էր այսքան դառնացած նա, ում համար առնավել ցավային է այն, որ անհավատարմությունը, ձեւական բարեպաշտությունը, կեղծ սիրոյ հոգին մտել է ամեն տեղ, և պակասել էր սերը կրթության ու լուսավորության նկատմամբ: Հարցին, թե ինչո՞ւ Հայաստանի վանքերի մեծ մասն անմարդաբնակ են մնացել, հեղինակը պատասխանում է. «Մեր նախնիքը վանքերը իբրեւ կրթարան էին գործադրում, որով և վանօրայքն շէն էին մնում և պիտոյանում ազգին»:

⁵⁵⁹ **Մ. արք. Սմբատեանց**, Նկարագիր Շամախույ թեմի, Թիֆլիս, 1896:

⁵⁶⁰ **Մ. Բարխուդարեանց**, Աղվանից երկիր և դրախտիք, էջ 156:

ծաղկազարդած Ժողովածուն (ՄՄ ձեռ. 3947), 1666-ին Թիֆլիսում Բարսեղի (ՄՄ ձեռ. 6414) գրած ու ծաղկած, 1296 թվականին Ադիսու ա-նապատում Մխիթար քահանայի (ՄՄ ձեռ. 7353), 1428 թվականին Ամարասի եպիսկոպոս Մանուելի (ՄՄ ձեռ. 8211), 1654-ին Կաֆայում Նիկողայոսի (ՄՄ ձեռ. 9798), 1644-ին Նոր Ջուղայում Ստեփանոսի (ՄՄ ձեռ. 6665) գրչագրած Ավետարանները, 1473 թվականին Ուրծ գյուղում Մեսրոպ արեղայի խնդրանքով Խաչատուրի օրինակած Մաշտոցը (ՄՄ ձեռ. 958): Հավաքածուի մեջ են մտել 1483-ին Խունկ գրչի, 1490 թվականին Սանահինում Արիստակես վարդապետի օրինակած Ավետարանները, Անուզ Հավայտուն Հենգուզակում Արեթ գրչի օրինակած Ավետարանը, որի գրչության ժամանակը անհայտ է, 1665-ին անհայտ գրչի Փառակա գյուղում օրինակած Ավետարանը: Վերջին չորս Ավետարանների տեղն անհայտ է⁵⁶¹:

* * *

Հայկական գրչության կենտրոնների պատմության մեջ առանձնանում է Մեծ Հայքի տասներորդ նահանգ Արցախը, որը միշտ էլ եղել է միջնադարյան Հայաստանի վարչա-քաղաքական խոշոր կազմավորումներից մեկը և կարևոր դեր է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ ու մշակութային կյանքում:

Արցախ աշխարհը հայ գրավոր մշակույթի ու գրչության հնագույն կենտրոններից մեկն էր, որի գրչատներում զարգացել է գրչության ու մանրանկարչության արվեստը: Արցախի վանքերին ու եկեղեցիներին կից գործող գրչության կենտրոններում գրվել, ծաղկազարդվել ու պահպանվել են պատմական, փիլիսոփայական, մեկնողական, կրոնական, ծիսական բովանդակությամբ բազմաթիվ ձեռագիր մատյաններ, որոնց հիշատակարանները նաև բազմաթիվ պատմական նյութեր և ուշագրավ տեղեկություններ են պահպանել Արցախի պատմության ու հոգևոր կյանքի վերաբերյալ: Որպես գրչության կենտրոններ՝ հռչակված էին Գանձասարը, Խաղավանքը, Գտչավանքը, Խորանաշատը՝ իրենց դպրատներով, բարունապետներով, մատենա-

դարաններով ու ձեռագրերի հարուստ հավաքածուներով: Ձեռագրեր են ընդօրինակվել Մեծառանաց Սբ. Հակոբում, Երից մանկանց, Եղիշե առաքյալի վանքերում, Գյուլիստանում, երկրամասի բազմաթիվ բնակավայրերում: Ժամանակի քաղաքական ու տնտեսական ծանր իրավիճակի, կործանարար արշավանքների ու պատերազմների պայմաններում էլ, երբ քանդվեցին, ավերվեցին հոգևոր ու մշակութային բազմաթիվ կենտրոններ, անխնա ոչնչացվեց վիթխարի ժառանգություն, մշակութային կյանքի շարունակական ընթացքը չդադարեց, ինչի վկայությունն են Արցախից և հարակից շրջաններից մեզ հասած այն հարյուրավոր ձեռագիր մատյանները, որոնք հիմնականում 13-18-րդ դարերի ընդօրինակություններ են:

Արցախը նաև հոգևոր մշակույթի ստեղծման ու պահպանման կենտրոն էր, որն իր անառիկ դիրքի և հայկական իշխանությունների շնորհիվ դարձավ Հայաստանի տարբեր անկյուններում ստեղծված բազմաթիվ մեծարժեք ձեռագրերի պահպանման ու փրկության վայր: Եվ չնայած անցյալում տեղի ունեցած հսկայական ձեռագրական կորուստներին, պահպանվել ու մեր օրերն են հասել տասնյակ հազարավոր հայերեն միջնադարյան մատյաններ:

Ձեռագիր և վիմագիր նյութերի, մատենագրական տեղեկությունների հիման վրա հնարավորինս փորձեցինք տալ Արցախի և հարակից շրջանների գրչակենտրոնների նկարագիրը, ամբողջացնել հայտնի գրիչների և ծաղկողների ձեռագրական վաստակը՝ տալով նույն տեղում ստեղծված ձեռագրերի գրչական ու մանրանկարչական ընդհանրությունները, և այդ ամենը ներկայացնել տվյալ տարածքի պատմության և հոգևոր-մշակութային իրողությունների համապատկերում:

⁵⁶¹ **Օ. Եգանեան**, Մեսրոպ արք. Սմբատեանցի «Նկարագիր Շամախույ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, Աշխատություններ, էջ 72-75:

Скриптории Арцаха

Резюме

В культурном наследии армян важную роль играет рукописная книга. В средние века рукописи создавались в основном в скрипториях при крупных монастырях, однако параллельно распространению рукописного дела книга становилась доступной широким кругам, а копирование рукописей и сопутствующие ему работы (разглаживание бумаги, изготовление переплета и др.) производились также в различных населенных пунктах, городах, крепостях и селах. Скриптории были не только местами написания рукописей, но также центрами создания и сохранения духовной культуры. Именно благодаря этому, несмотря на колоссальные потери в прошлом, до наших дней дошли десятки тысяч средневековых армянских рукописных книг.

Изучение истории скрипториев как особое направление арменистики развивалась в основном в Матенадаране имени Маштоца, где за прошедшие десятилетия был написан ряд посвященных скрипториям исследований, создавались их карты. По установившейся традиции, при изучении истории армянской рукописной культуры рукописи группируются и рассматриваются по месту их создания, т.е. по скрипториям. Речь как об истории отдельных скрипториев, так и о едином представлении рукописного наследия, созданного в пределах более крупных территориальных единиц (провинций, областей). Таким образом становится возможным систематизированное изучение истории рукописных центров, выявляющее общность манеры письма и живописных традиций в созданных в одном месте рукописях, позволяющее обобщить рукописное наследие известных писцов и иллюстраторов и представить все это на фоне истории и культурных реалий данного региона.

Особое место среди армянских рукописных центров принадлежит десятой провинции Великой Армении, Арцаху, крупному политико-административному образованию средневековой Армении, сыгравшему важную роль в истории и культурной жизни армянского народа. Арцах был древнейшим центром армянской письменности и учености, в котором на протяжении веков пись-

менная культура развивалась в гармонии с культурной жизнью всей страны, в скрипториях которого особого расцвета достигли искусство письма и миниатюры.

В средневековом Арцахе развивалась архитектура, было построено множество монастырей и церквей: Аваптук (1163 г.), Хадаванк (1204 г.), Хоранашат (1211-1222 гг.), Дадиванк (1214 г.), монастырь Гандзасар (1216-1238 гг.), Гтчаванк (1241 г.), монастырь св. Богородицы в Царе (1301 г.). В условиях такого подъема церковного строительства и параллельно с ним развивалось также искусство письма и литература. Характерно, что под покровительством и при непосредственном пособничестве князей Арцаха при крупных монастырях были созданы центры письменности, со скрипториями, учителями (рабунапетами), библиотеками и богатыми рукописными коллекциями. Эти библиотеки также пополнялись привезенными из других мест рукописями. Сведения об арцахских скрипториях, настоятелях монастырей, ученых вардапетах, одаренных писцах и иллюстраторах, а также о заказчиках и дарителях содержатся в лапидарных надписях, которые сохранились на стенах церквей и хачкарах, а также в памятных записях рукописей.

В скрипториях при монастырях и церквях, а также действующих в различных населенных пунктах Арцаха, было скопировано, проиллюстрировано и хранилось множество рукописных книг, содержащих исторические, философские, грамматические, религиозные труды, комментарии, сочинения, касающиеся ритуала. В их колофонах (памятных записях) также встречаются богатые сведения по истории и духовной жизни Арцаха. Известными центрами были Гандзасар, Хадаванк, Гтчаванк, Девичья пустынь в селе Аветараноц, монастырь Таргманчац (“Переводчиков”), Хоранашат. Рукописи копировались в монастыре св. Якова в Мецаранке, в монастыре Трех отроков, в монастыре апостола Елисея (Египше), в Гюлистане, в различных населенных пунктах провинции. В Арцахе развивались и другие искусства: скульптура, настенная живопись, декоративно-прикладные искус-

ства, создавались хачкары. Из декоративных искусств особо выделялось изготовление кожаных и металлических переплетов рукописных книг. Известная мастерская переплетов находилась в скриптории села Караат в Гандзаке, писцы и художники которого были также мастерами-переплетчиками. Они украшали книги серебряными и позолоченными “суперобложками” (дополнительными переплетами), каждая из которых – произведение искусства, восхищающее высокохудожественным оформлением и разнообразием декоративных мотивов.

Разрушительные походы арабов, турков-сельджуков и монголов, различные войны опустошили Армению, были повержены многие монастыри и церкви, сожжены бесценные старинные рукописи. Несмотря на тяжелую политическую и экономическую ситуацию, на разрушение и ограбление многих культурных центров и уничтожение огромного наследия, культурная жизнь не утратила своей продолжительности, свидетельством чего являются сотни дошедших до наших дней рукописей, скопированных в Арцахе и сопредельных областях в течение 13-18 вв. Большая их часть хранится в Матенадаране им. Маштоца, остальные разбросаны по всему миру, а судьба многих нам пока не известна.

Арцах был также центром создания и сохранения духовной культуры. Благодаря неприступному географическому положению и длительному существованию армянских княжеств он стал местом хранения и спасения множества рукописей, созданных в различных уголках Армении. Именно благодаря этому обстоятельству многие древнейшие рукописи дошли до нас. Такие исключительно ценные, уникальные рукописи, как Евангелия “Матери католикоса” (“Вехамор”) (ММ 10680) “Католикоса” (“Вехапара”) (ММ 10780), “Ахпата” (ММ 6288), “Переводчиков” (ММ 2743), “Мецшена” (ММ 6202), фрагменты “Евангелия Бегюнц” (ММ 10099), пергаменное Красное Евангелие, принадлежавшее Рафаэлю Стора (рук. 949 Университетской библиотеки Чикаго, Goodspeed Manuscript Collection), “Евангелие из Карина или Феодосиополя” (Венеция рук. 129), Евангелие 1166 г. писца Козьмы (ММ 7347), “Евангелие Керан и Гетума” (ММ 6764), “Тонаканы” (“Праздничные календари”, древнейшее название Гомилиариев), скопированные в 1227 г. в

монастырях Аваг в Ерзнка писцом Нерсесом (ММ 6196 и ММ 3779), и многие другие рукописи хранились в церквях Арцаха и у частных лиц, таким образом им была дарована вторая жизнь.

Культурная жизнь Арцаха породила славную плеяду таких известных средневековых авторов, как Давид сын Алавика, Ованнес Саркаваг, Мхитар Гош, Ванакан Вардапет, Вардан Аревелци, историографы Киракос Гандзакечи и Григор Акнерци, и др.

В данной книге представлены скриптории Арцаха, начиная с самой крупной области, Хачена, и его духовного центра, Гандзасара, затем монастыря св. Якова в Мецаранке (Мециранке), Хадаванка, Дадиванка, области Дизак и Гтчаванка, областей Варанд и Джраберд. Разделение на области в самом Арцахе, конечно, условное, так как в ходе истории менялись не только границы областей, но и их названия.

В книге представлены рукописные центры собственно Арцаха, а также прилегающих к нему с севера и востока областей – Утика и собственно Алуанка (Албании): Парисос, Гандзак, Закам, Шамхор, Шамахи и т.д., так как с точки зрения рукописной традиции они представляют единое целое. В этих областях также действовали важные скриптории.

Отдельные скриптории представлены следующим образом: исторический очерк, сведения о духовной и культурной жизни данного центра, о созданных в нем рукописях, об обстоятельствах, связанных с искусством письма и т.д., перечисляются также рукописи, которые в них хранились. В конце книги помещен полный список рукописей, скопированных и хранимых в скрипториях Арцаха и смежных территорий.

Итак, с использованием в основном рукописных материалов, а также литературных и лапидарных источников, представлены рукописные центры Арцаха и находящиеся в сфере его культурного влияния сопредельных областей, подытожено рукописное наследие известных писцов и иллюстраторов, охарактеризованы общие черты письма и живописного оформления созданных в одном месте рукописей, опубликовано множество данных кодикологического характера и сведений из памятных записей. Все это может быть полезным специалистам, интересующимся историей и культурой армянского народа.

Scriptoria of Arts'akh

Summary

An extremely important role in the Armenian cultural legacy belongs to manuscript books. In the Middle Ages they were produced mainly in scriptoria at major monasteries, whereas parallel to the spread of manuscript production, books were becoming available for wider circles, and copying manuscripts and the related works (smoothing paper, binding, etc.) were also being accomplished in various towns, fortresses and villages. Scriptoria were not only places for copying books; they were also centers of creation and preservation of spiritual culture. Thanks to this in spite of colossal losses in the past, tens of thousands of medieval Armenian manuscripts have come up to us.

The study of the history of scriptoria as a separate branch of Armenian studies has mainly developed in the Mashtots' Matenadaran, where during the recent decades a series of monographs about various scriptoria were written, their maps were made. In the course of the study of the Armenian manuscript tradition, manuscripts are usually examined in groups, according to the place of their origin, i.e. scriptoria. This concerns the history of single scriptoria and of the manuscript legacy of larger territorial units (provinces, regions) as well. This makes it possible to study the history of scriptoria systematically, revealing common features in the style of writing and illumination in manuscripts produced in the same place, to summarize the work of famous scribes and painters against the background of the historical and cultural realia of the given region.

A special place among Armenian manuscript production centers belongs to Arts'akh, the tenth province of Greater Armenia, a major political and administrative unit of Medieval Armenia, which played an important role in the history and culture of the Armenian people. Arts'akh was one of the oldest centers of Armenian writing and learning, where in the course of centuries Armenian written culture developed in harmony with the cultural life of the whole country; in its scriptoria the art of writing and miniature painting highly flourished.

Architecture developed in medieval Arts'akh, numerous churches and monasteries were built: Havaptuk (1163), Khadavank' (1204), Khoranashat (1211-1222), Dadivank' (1214), the Gandzasar monastery (1216-1238), Gtch'avank' (1241), the monastery of the Holy Virgin in Tsar (1301). Parallel to this rise of church construction, the art of writing and literature developed too. It is noteworthy that under the patronage and with the immediate aid of princes of Arts'akh, writing centers were founded at large monasteries, with their scriptoria, teachers and big collections of manuscripts. These libraries were enriched with manuscripts brought from other places. Information about scriptoria of Arts'akh, their doctors and teachers, scribes and illuminators, commissioners and donators can be found in lapidary inscriptions on the walls of churches and on khachkars, as well as in colophons of manuscripts.

In scriptoria at monasteries and churches, also in various towns and villages of Arts'akh, great number of manuscripts were copied and illuminated, containing works with historical, philosophic, grammatical contents, commentaries, writings pertaining to the ritual. Their colophons too have preserved notable information on the history and culture of Arts'akh. Famous were the scriptoria of Gandzasar, Khadavank', Gtch'avank', the nunnery (Kusanats' anapat) in the village Avetaranots', the T'argmanchats (Translators') monastery, Khoranashat. Manuscripts were copied in the St. Hakob (James) monastery in Metsarank', in the monasteries of Three youths and of Apostle Eliseus (Eghishe), in Gulistan, and in various localities of the province. Parallel to manuscript copying, other arts developed in Arts'akh: sculpture, mural painting, making khachkars, decorative and applied arts. A special place in applied arts belongs to book binding; leather and metal bindings were made for manuscripts. An important binding workshop was located in the scriptorium of the village K'arahat in

Gandzak, which had scribes and illuminators famous not only for their art of writing and painting, but also for their skill in binding. They decorated codexes with silver and gilded “dust jackets” (extra covers); each of them is a piece of art, admirable for the variety of its ornamentation.

The destructive invasions of Arabs, Seljuks and Mongols, and wars devastated Armenia, many churches and monasteries were ruined, precious manuscripts were burnt. Notwithstanding the hard political and economic situation, the destruction and plunder of many religious and cultural centers, and the spoiling of great heritage, the continuity of cultural life was not broken, which is witnessed by the survival of hundreds of manuscripts copied in Arts'akh and in the neighbouring districts, mainly during the 13-18th cc. The majority of them is now kept in the Mashtots' Matenadaran, others are scattered all over the world, the fate of some of them is still unknown.

Arts'akh has also been a center of preservation of spiritual culture; thanks to its impregnable geographic position and the long life of the Armenian princedoms, it became the place where many important manuscripts written in various locations of Armenia were preserved and saved. This is one of the reasons for which many of the oldest Armenian manuscripts survive till nowadays. Such unique manuscripts as the Gospels of the “Mother of Catholicos” (“Vehamor”) (M 10680) and of “Catholicos” (“Vehapar's”) (M 10780), of Haghbat (M 6288), of the “Translators” (M 2743), of “Mets-shen” (M 6202), the fragments of the Gospel “Begyunts” (M 10099), the parchment Red Gospel which belonged to Rafael Stora (Ms 949 in the University of Chicago Library, Goodspeed Manuscript Collection), the “Gospel of Karin or Thodosiopolis” (V 129), the Gospel written in 1166 by scribe Kosma (M 7347), the “Gospel of Keran and Hetum” (M 6764), the “Tonakans” (“Festal calendars”, the oldest name of Homiliaries) copied by scribe Nerses in 1227 in the monastery Avag in Erzinka (M 6196 and M 3779), and many other manu-

scripts were kept in the churches of Arts'akh and in private collections, thus gaining a second life.

The cultural life of Arts'akh brought forth a glorious pleiad of medieval authors: David son of Alavik, Hovhannes Sarkavag, Mkhitar Gosh, Vanakan Vardapet, Vardan Arevelts'i, historiographers Kirakos Gandzakets'i and Grigor Aknerts'i and others.

In the present book the scriptoria of Arts'akh are viewed according to regions, starting with the largest region Khachen and its spiritual center Gandzasar, then the scriptoria of Metsarank' (Metsirank'), the monastery of St. Hakob, Khadavank', Dadivank', the province Dizak and Gtch'avank', the regions Varanda and Jraberd. The division into regions in Arts'akh proper is conventional, since in the course of centuries both the borders and the names of regions changed.

The book presents the writing centers not only of Arts'akh proper, but also of the neighbouring northern and western territories, i.e. of Utik' and Aluank' (Albania) proper: P'arisos, Gandzak, Chakam, Shamk'or, Shmakhi etc., since they have common manuscript traditions. The mentioned regions too had famous scriptoria.

Each scriptorium is presented as follows: historical essay, information about the cultural life in the given center, the manuscripts copied in the scriptorium, its scribes, circumstances related to the art of writing, etc. The manuscripts which have been kept in the center are mentioned too. The last section of the book is a complete list of the manuscripts written and kept in the scriptoria of Arts'akh and the neighbouring regions.

So mainly with the use of manuscript materials, as well as literary and lapidary sources, the scriptoria of Arts'akh and of the neighbouring regions which bore its cultural influence, are presented, the manuscript legacy of famous scribes and illuminators, and the common features of writing and miniature painting of manuscripts produced in the same places are summarized, numerous codicological data and information from colophons are published, which may be useful for scholars interested in the history and culture of the Armenian people.

ՑԱՆԿԵՐ

Ա

ԱՐՑԱԽԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ստորև ըստ ստեղծման վայրերի ներկայացված են յուրաքանչյուր գրչության կենտրոնում ընդօրինակված ու պահպանված ձեռագրերը: Ցանկում նշվում են ձեռագրի բովանդակությունը, գրչության վայրը և ժամանակը, գրչի, ծաղկողի և ստացողի անունները, այն վայրը, որտեղ այժմ պահվում է ձեռագիրը: Իսկ տվյալ կենտրոնում պահված ձեռագրերի դեպքում, ձեռագրի անվանումից ու թվականից հետո նշվում է գրչության վայրը, այնուհետև մյուս տվյալները:

ԽԱՉԵՆ ԳԱՎԱՌԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

- Ավետարան, ԺԳ դ., գրիչ և ծաղկող՝ Թորոս, ստացող՝ Վախթանգ-Տանգիկ և Խորիշահ (ՄՄ ձեռ. 378)
- Ժողովածու, 1417թ., գրիչ՝ Մատթեոս Մոնոզոն, ստացող՝ Մանուել քին. (ՄՄ. ձեռ. 8689)
- Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, 1420 թ., գրիչ՝ Ռատակես, ստացող՝ տեր Սարգիս (ՄՄ ձեռ. 4004)
- Ավետարան, 1551 թ., գրիչ՝ Հայրապետ արք., ստացող՝ Ղազար քին. (ՄՄ ձեռ. 6513)
- Ժողովածու, 1576 թ., գրիչ՝ Կարապետ, ծաղկող՝ Աթանաս, ստացող՝ Հովհաննես կթղ. (ՄՄ ձեռ. 1923)
- Ավետարան, 1632 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
- Ավետարան, 1655 թ., ծաղկող՝ Գրիգոր քին. (ծաղկազարդված, ՄՄ ձեռ. 3196)
- Խորհրդատետր, 1657 թ., գրիչ և ծաղկող՝ Գրիգոր երեց, ստացող՝ Պետրոս կթղ. (Երուսաղեմ, ձեռ. 2273)
- Ժողովածու, 1659 թ., գրիչ և ստացող՝ Հովհաննես Ապահունեցի (ՄՄ ձեռ. 2277)
- Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, 1664 թ., գրիչ՝ Սիմոն, ստացող՝ Բարսեղ արք. (ՄՄ ձեռ. 2561)
- Ժողովածու, 1654 -1667 թթ., գրչ. վայր՝ Կաֆա (Ա), Գանձասար (Բ), գրիչ՝ Մկրտիչ արք. (ՄՄ ձեռ. 8504)
- Ժողովածու, 1713 թ., գրիչ՝ Հակոբ երեց (գտնվելու տեղն անհայտ)
- Ժողովածու, 1760 թ., գրիչ և ստացող՝ Դավիթ վրդ. Թիֆլիզեցի (ՄՄ ձեռ. 38)
- Մաշտոց, 1766 թ., գրիչ՝ Աբրահամ Շաքեցի, ստացող՝ Հովհաննես կթղ. (ՄՄ ձեռ. 3971)
- Դատաստանագիրք, 1778 թ., գրիչ՝ անանուն (Ա), Հովհաննես կթղ. (Բ) (ՄՄ ձեռ. 3497)
- Եսայի Հասան-Ջալալյան, Վիմական արձանագրություններ, 1822 թ., գրիչ՝ Հովհաննես Ղրիմեցի, ստացող՝ Եփրեմ կթղ. (ՄՄ ձեռ. 9923)

ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ ՊԱՀՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

- Ավետարան, 13-րդ դ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, ստացող՝ Գրիգոր և Վարդան (Բ), ծաղկող՝ Աբաս, Իզնատիոս, Հովսեփ (Զիկագո, ձեռ. 949)
- Ավետարան, 13-րդ դ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Դանիել, ստացող՝ Թամանի (ՄՄ ձեռ. 4185)
- Ավետարան, 13-րդ դ., նվիրատու Աթաբակ (գտնվելու տեղն անհայտ)
- Ժողովածու, 1303 թ., գրչ. վայր՝ Նոննից վանք, գրիչ՝ Թադեոս քին., Մխիթար վրդ., ստացող՝ Հովհաննես վրդ. (ՄՄ ձեռ. 3606)
- Հիշատակարան Ավետարանի, 1314 թ., գրչ. վայր՝ Գլաձոր, գրիչ՝ Պողոս, ստացող՝ Տարսայիճ Օրբելյան (ՄՄ ձեռ. 9150)
- Ժողովածու, 1351-1352 թթ., գրչ. վայր՝ Սուրդաթ, գրիչ՝ Գրիգոր քին. (ՄՄ ձեռ. 2825)
- Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, 1387 թ., գրչ. վայր՝ Շահապոնք ամրոց, գրիչ՝ Գրիգոր Տաթևացի (ՄՄ ձեռ. 3616)

Սարգիս Շնորհալի, Մեկնություն կաթողիկեցի, 14-րդ դ., գրչ. վայր՝ Ուռնկար, գրիչ՝ Մարտիրոս, ստացող՝ տեր Գրիգոր (ՄՄ ձեռ. 3780)

Ժողովածու, 1406 թ., գրչ. վայր՝ Տաթև, գրիչ՝ Սիմոն բանասեր (ՄՄ ձեռ. 4411)

Գանձարան, 1431 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, ստացող՝ Մանուել (ՄՄ ձեռ. 3555)

Ավետարան, 1477 թ., գրչ. վայր՝ Աղթամար, գրիչ և ստացող՝ Հովհաննես (գտնվելու տեղն անհայտ)

Ավետարան, 16-րդ դ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ տեր Մաղաքիա, ծաղկող՝ Գրիգոր Մալեզկերեցի, ստացող՝ Վրթանես քին. (ՄՄ ձեռ. 7767)

Ժողովածու, 15-րդ դ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Աթանես և Մաղաթել արք., ստացող՝ Հովհաննես կթղ. (ՄՄ ձեռ. 3140)

Ավետարան, 1599 թ., գրչ. վայր՝ Վասպուրական, գյուղ Ավանց, գրիչ՝ Կարապետ, ծաղկող՝ Չաքարիա Ավանցի (ՄՄ ձեռ. 5794)

Ավետարան, 1652 թ., գրչ. վայր՝ Վարանդա գավառ, գյուղ Լիզներ, գրիչ՝ Առաքել և Պետրոս երեցք (ՄՄ ձեռ. 4176)

Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Մատթեի, 1655 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (ՄՄ ձեռ. 4055)

Ավետարան, 1656 թ., գրչ. վայր՝ Ասպահան, գրիչ՝ Գասպար երեց, ստացող՝ Խոջայմալ (Ա), Մինաս (Բ) (ՄՄ ձեռ. 2399)

Դիոնիսիոս Արիոպագացի, Մատենագրութիւնք, 1664 թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ, Բարսեղ կրոնավոր (ՄՄ ձեռ. 3829)

Ժողովածու, 1665-1669 թթ., գրչ. վայր՝ Աստապատ, գրիչ՝ Ներսես քին., Գրիգոր երեց, ստացող՝ Մարիամ և Միքայել արք. (ՄՄ ձեռ. 3468)

Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց, 1673 թ., 1680 թ., գրչ. վայր՝ Շենհեր (Ա), գրիչ՝ Եղևտ (Ա), ստացող՝ Մովսես վրդ. (ՄՄ ձեռ. 4048)

Ժողովածու, 1689 թվականից առաջ, գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (Թավրիզ, ձեռ. 22)

Աղոթագիրք, 1690 թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Արիստակես (ՄՄ ձեռ. 2449)

Գևորգ Սյևոսացի, Լուծմունք Նարեկացւոյն, 17-րդ դ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (ՄՄ ձեռ. 4383)

Մաշտոց ձեռնադրության, 17-րդ դ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (ՄՄ ձեռ. 4051)

Ժողովածոյ, 17-րդ դ, գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (ՄՄ ձեռ. 3696)

ՄՄ Պ869, ՄՄ Պ1017

ՄԲ. ՀԱԿՈՒՄ ՎԱՆՔՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ավետարան, 1383 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (կազմված, գտնվելու տեղն անհայտ)

Ավետարան, 1577 թ., գրիչ՝ Մաղաթել արք., ծաղկող՝ Չաքարիա Ավանցի, ստացող՝ Սիմեոն արք. (ՄՄ ձեռ. 5507)

Գիրք տեսական փիլիսոփայության, 18-րդ դ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի (ՄՄ ձեռ. 2828)

Գիրք տեսական փիլիսոփայության, 1816 թ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի և աշակերտ (ՄՄ ձեռ. 2525)

Գիրք տեսական փիլիսոփայության, 1835 թ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի, ստացող՝ Բաղդասար արք. (ՄՄ ձեռ. 3619)

Գիրք տեսական փիլիսոփայության, 1835 թ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի, ստացող՝ Բաղդասար արք. (ՄՄ ձեռ. 2990)

Գիրք տեսական փիլիսոփայության, 19-րդ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի (ՄՄ ձեռ. 4038)

Քերականութիւն Հայկազեան լեզուի, 19-րդ դ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի (ՄՄ ձեռ. 3620)

Քերականութիւն Հայկազեան լեզուի, 1839 թ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի (ՄՄ ձեռ. 2563)

Հովհան Ոսկերեան, Մեկնութիւն Ավետարանին Մատթեոսի, 1817 թ., գրիչ՝ Հովսեփ Արցախեցի (ՄՄ ձեռ. 3618)

ՄԲ. ՀԱԿՈՒՄ ՎԱՆՔՈՒՄ ՊԱՀՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ավետարան, 1241 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, նվիրատու՝ Սմբատի որդի Գրիգոր (գտնվելու տեղն անհայտ)

Ավետարան, 1297 թ., գրչ. վայր՝ Եղեգյաց մայրաքաղաք, գրիչ՝ Հովհաննես, ստացող՝ Գրիգոր քին. (ՄՄ ձեռ. 7482)

ԽԱՆՁՔ ԳՅՈՒՂ

Մաշտոց, 1560 թ., գրիչ՝ Հովհաննես արք. (ՄՄ ձեռ. 9872)
Ավետարան, 1560 թ., գրիչ՝ Հովհաննես արք. (գտնվելու տեղն անհայտ)
Մաշտոց, 1566 թ., գրիչ՝ Առստակես երեց (ՄՄ ձեռ. 3427)
Ավետարան, 1569 թ., գրիչ՝ Հովհաննես արք. (Չմմառ)
Ավետարան, 1569 թ., գրիչ՝ Հովհաննես (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1571 թ., գրիչ՝ Հովհաննես (գտնվելու տեղն անհայտ)

ՀԱՎԱՊՏՈՒԿ ՎԱՆՔ

Ավետարան, 1232 թ., գրչ. վայր՝ Գետիկա վանք, գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Վանենի (գտնվելու տեղն անհայտ)

ԿՈՇԻԿ ԱՆԱՊԱՏ

Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ, նվիրատու՝ Վասակ իշխանի որդի Պռոշ, 1244 թ., (գտնվելու տեղն անհայտ)
Տոնապատճառ, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ, նվիրատու՝ Վասակ իշխանի որդի Պռոշ, 1244 թ., (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1493 թ., գրիչ՝ Սարգիս (գտնվելու տեղն անհայտ)

ՊՏԿԻ ՍԲ. ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔ

Ավետարան, 1490 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
Ժողովածու, 1760 թ., գրիչ՝ Հովհաննես արք. (ՄՄ ձեռ. 8508)

ԽԱՆԱԾԱԽ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1693 թ., գրիչ՝ Եփրեմ քին., ստացող՝ Մահիարի խաթուն (ՄՄ ձեռ. 7840)
Ճաշոց, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Գոմորանց վանք, գրիչ՝ Փիլիպոս (պահված, գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Դրազարկ, ստացող՝ Մանուել փիլիսոփա (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ԱՌԱՋԱԶՈՐ ԳՅՈՒՂ

Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրիչ՝ Վարդան եպս., ծաղկող՝ Հորդան եպս., ստացող՝ Ծնավին քին. (գտնվելու տեղն անհայտ)
Աստվածաշունչ, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրիչ՝ Խոսրով, ստացող՝ Մելքիսեդեկ, Հովհաննես, Մելիտեն (գտնվելու տեղն անհայտ)

ՆԵՐՔԻՆ ԽԱՉԵՆԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ավետարան, 1279 թ., գրիչ՝ Վարդան, ստացող՝ Ումեկի որդի Վախթանգ (ՄՄ ձեռ. 5669)
Մասունք Նոր կտակարանի, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրիչ՝ Վարդան, ստացող՝ Ումեկի որդի Վախթանգ (ՄՄ ձեռ. 155)
Ավետարան, 1326 թ., գրչ. վայր՝ Խաչենո երկիր, Բարիմարդկան անապատ, գրիչ՝ Թումա, ստացող՝ Վանական քին. (Երուսաղեմ, ձեռ. 1794)
Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, 15-րդ դ., գրչ. վայր՝ Խաչեն, գրիչ՝ Մատթեոս, ստացող՝ տեր Հովհաննես (ՄՄ ձեռ. 801)

ՀԱԹԵՐՔ

Դատաստանագիրք, 1184 թ., գրչ. վայր՝ Դասնո անապատ, գրիչ՝ Միսիթար Գոշ, ստացող՝ Վախթանգ և Արզուխաթուն (Վենետիկի ձեռ. 993)

ԽԱԴԱՎԱՆՔՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ավետարան, 1225 թ., գրիչ՝ անհայտ, ստացող՝ Դոփ (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1232 թ., Խաղավանք (Բ), գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր (Ա), Գրիգոր Արցախեցի (Բ),
ստացող՝ Հովհաննես (Ա), Գրիգոր Դոփյան և Ասիա (Բ) (ՄՄ ձեռ. 2743)

ԽԱԴԱՎԱՆՔՈՒՄ ՊԱՀՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ավետարան, 10-րդ դ., գրչ. վայր՝ Վանա լճի շրջակա՞, գրիչ՝ անհայտ, ստացող՝ Մանիկ և Թադեոս
Անտիկյաններ (Բ), Վազգեն Վեհափառ (Գ, 1978 թ.) (ՄՄ ձեռ. 10780)
Ավետարան, 1166 թ., գրչ. վայր՝ Հռոմկլա, գրիչ՝ Կոզմա, ստացող՝ Առաքել Անձտունյա եպս. (Ա), Գրի-
գոր Դոփյան (Բ) (ՄՄ ձեռ. 7347)
Հովհան Օձնեցի, Սակս Ժողովոց ու եղեն ի Հայս, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ, ստացող՝
Գրիգոր Դոփյան (Բ) (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1211 թ., գրչ. վայր՝ Հաղբատ, գրիչ՝ Հակոբ, ծաղկող՝ Մարգարե, ստացող՝ Մարգիս (Բ)
(ՄՄ ձեռ. 6288)
Ավագ տոնական, 1227 թ., գրչ. վայր՝ Երզնկայի Ավագ վանք, գրիչ՝ Ներսես, ստացող՝ Վարդան վրդ.
(Ա), Գրիգոր Դոփյան (Բ) (ՄՄ ձեռ. 6196)
Տոնական, 1227 թ., գրչ. վայր՝ Երզնկայի Ավագ վանք, գրիչ՝ Ներսես, ստացող՝ Տուրք (Ա), Գրիգոր
Դոփյան (Բ) (ՄՄ ձեռ. 3779)
Ավետարան, 1230թ., գրչ. վայր՝ Թեոդոպոլիս, գրիչ՝ Գրիգոր, ստացող՝ Գրիգոր Դոփյան (Բ) (Վենետիկ,
ձեռ. 129)

ԴԱԴԻՎԱՆՔՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Հովհաննեսիկ Ծարեցի, Ժամանակագրություն, 1334 թ. (Ա), 17-րդ դ. (Բ), գրիչ՝ Գրիգոր երեց (Ա), Հով-
հաննեսիկ Ծարեցի (Բ) ստացող՝ Եղիա արք. (Ա), Հովհաննեսիկ Ծարեցի (Բ) (ՄՄ ձեռ. 2776)
Ավետարան, 1671 թ., գրչ. վայր՝ Օղվերձ, գրիչ՝ Եփրեմ քին., ծաղկող՝ Բարսեղ, ստացող՝ Պետրոս վրդ.
(ծաղկագարդված, ՄՄ ձեռ. 7232)
Ավետարան, 1694 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
Ժողովածոյ, 1699 թ., գրիչ՝ Թովմա վրդ. (ՄՄ ձեռ. 8505)

ԴԱԴԻՎԱՆՔՈՒՄ ՊԱՀՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Վարդան Արևելցի, Մեկնութիւն Հնգամատեանին, 1381 թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Սարգիս քին.,
ստացող՝ Հովհաննեսիկ Ծարեցի (Բ) (ՄՄ ձեռ. 1136)
Ավետարան, 1411 թ., գրչ. վայր՝ Ապրակունյաց վանք, գրիչ՝ Մատթեոս Ջուղայեցի, ստացող՝ Հովհան-
նեսիկ Ծարեցի (Բ) (ՄՄ ձեռ. 2519)
Ժողովածոյ, 1451 թ., գրչ. վայր՝ Սևան, գրիչ՝ Դանիել արդ., ստացող՝ Հովհաննեսիկ Ծարեցի (Բ) (ՄՄ
ձեռ. 1301)
Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, 15-րդ դ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Պետրոս երեց, ստացող՝ Հով-
հաննեսիկ Ծարեցի (Բ) (Երուսաղեմ, ձեռ. 2208)
Վարդան Արևելցի, Երգ երգոց, 1588 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, ստացող՝ Հովհաննեսիկ Ծարեցի (Բ)
(գտնվելու տեղն անհայտ)

ՎԵՐԻՆ ԽԱԶԵՆԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

ԾԱՐ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔ

Ավետարան, 1387 թ., գրիչ՝ Սարգիս վրդ. (գտնվելու տեղն անհայտ)

ՔԱՐՎԱՃԱՌ ԳՅՈՒՂ

Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Ավետարանին Մատթեոսի, 1402 թ., գրիչ՝ Թումա Սյունեցի, ստացող՝
Հունան քին. (ՄՄ ձեռ. 3578)
Ավետարան, 1456 թ, գրիչ և ծաղկող՝ Թումա Սյունեցի (ՄՄ ձեռ. 8124)

ԳԵՏԱՄԻՋԻ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Ճաշոց, 1411 թ., գրիչ՝ Թովմա (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1456 թ., գրիչ՝ Թովմա, ստացող՝ Վրթանես քին. (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1661 թ., գրիչ՝ Հովհաննես երեց, ստացող՝ Խանում (ՄՄ ձեռ. 11204)

ԱՊԱՀԵՆ ԳՅՈՒՂ

Շարակնոց, 1652 թ., գրիչ և ծաղկող՝ Մովսես Գորիսեցի (ՄՄ ձեռ. 1626)

ՄՈՍ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1653 թ., գրիչ՝ Մարտիրոս Իսնծորեկցի, ծաղկող՝ Մովսես երեց, ստացող՝ տեր Թադեոս (ՄՄ ձեռ. 3647)

ԴԱԾՏԱԿ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1663 թ., գրիչ և ծաղկող՝ Եսայի երեց, ստացող՝ Միմեոն (ՄՄ ձեռ. 4053)
Մաշտոց, 1673 թ., գրիչ՝ Եսայի երեց, ստացող՝ տեր Բարսեղ (ՄՄ ձեռ. 3601)

ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏ

Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, 1684 թ., գրիչ՝ Վառվառե, ծաղկող՝ Բարսեղ, ստացող՝ Պետրոս րաբունապետ (ՄՄ ձեռ. 2067)

ԴԻՉԱԿ ԳԱՎԱՌԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

ԳՏՉԱՎԱՆՔ

Ավետարան, 1428 թ., գրիչ՝ Մանուել եպս., ստացող՝ Մելքիսեղ արք. (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1428 թ., գրիչ՝ Մանուել եպս., ստացող՝ Ալեքսիանոս եպս. (Բ) (պահված, ՄՄ ձեռ. 8211)
Ավետարան, 1464 թ., գրչ. վայր՝ Վայոց ձորի Էրերան վանք (Ա), Գտչավանք (Բ), գրիչ՝ Մաղաքիա, ստացող՝ Մուրատ և Դիլշատ (Ա), Ալեքսիանոս եպս. (Բ) (ՄՄ ձեռ. 3701)
Ավետարան, 1477 թ., գրչ. վայր՝ Ոմավանս անապատ (Ա), Գտչավանք (Բ), գրիչ՝ Չաքարիա, ստացող՝ Ալեքսիանոս եպս. (Բ) (պահված, ՄՄ ձեռ. 9792)
Մաշտոց, 1575 թ., գրիչ՝ Պետրոս, ստացող՝ Բեկի (ՄՄ ձեռ. 6834)
Ավետարան, 1668 թ., ստացող՝ Մատթեոս քին. (գտնվելու տեղն անհայտ)
Պատմություն Արցախի, 1858-1868 թթ., գրիչ՝ Առաքել Կոստանյանց (ՄՄ ձեռ. 7822)
Պատմություն Արցախի, 1870-1880 թթ., գրիչ՝ Առաքել Կոստանյանց (ՄՄ ձեռ. 7823)
Պատմություն Գտչա վանուց, 1884 թ., գրիչ՝ Առաքել Կոստանյանց (ՄՄ ձեռ. 3966)
Ժողովածոյ, 1886-1888 թթ., գրիչ՝ Առաքել Կոստանյանց (ՄՄ ձեռ. 3881)

ԴԻՉԱԿԻ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

ՏԱՔ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1563 թ., գրիչ՝ Նասիպ սարկավագ, ստացող՝ Հովհաննես երեց (ՄՄ ձեռ. 7571)

ԽԱՆՁԱԶՈՐ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1604 թ., գրիչ՝ Մարտիրոս քին., ստացող՝ մելիք Սուլջում (գտնվելու տեղն անհայտ)

ԹԱՂԱՍԵՌ ԳՅՈՒՂ

Մաշտոց, 1631 թ., գրիչ՝ Բաղդասար, ստացող՝ Շահավար (ՄՄ ձեռ. 3580)

Ավետարան, 1635 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
Մաշտոց, 1638 թ., գրիչ՝ Կիրակոս երեց, ստացող՝ տեր Հովհաննես (ՄՄ ձեռ. 5380)
Ավետարան, 17-րդ դ., գրիչ՝ Կիրակոս երեց և Մելքիսեթ (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, գրչ. վայր և գրիչ՝ անհայտ (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՓԱՐԱԶԱՆԱՅ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1574 թ., գրիչ՝ Աբրահամ արք. (Նոր Ջուղա, ձեռ. 88)

ՃԱԽԿԱԽ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1673 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1584 թ., գրիչ՝ Աբրահամ արք., ստացող՝ Հովհաննես երեց (Զմմառ, ձեռ. 20)

ՏՈՂ ԱՎԱՆ

Աստվածաշունչ, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Անի, գրիչ՝ Հովհաննես եպս., ստացող՝ Սիմեոն րաբունի (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՎԱՐԱՆԴԱ ԳԱՎԱՌԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ

Վասն ծագման Մելիք-Շահնազարեանց տոհմին, գրիչ՝ Միքայել Բեկ Լալաբեկյան-Մելիք-Շահնազարեանց (ՄՄ ձեռ. 7429)

ԱՎԵՏԱՐԱՆՈՅ ԱՎԱՆ

Մաշտոց, 1641 թ., գրիչ՝ Գայանե, ստացող՝ պարոն Ջանուս (ՄՄ ձեռ. 2404)
Ավետարան, 1650 թ., գրչ. վայր՝ Թաղավարդ, գրիչ՝ Կատարինե, ծաղկող՝ Գայանե, ստացող՝ Սարգիս քին. (ծաղկագարդված, Վիեննա ձեռ. 931)
Ավետարան, 1659 թ., գրչ. վայր՝ Քարահատ, գրիչ և ծաղկող՝ Գրիգոր երեց, ստացող՝ Եղիա (պահված, Նյու-Յորք)
Գրիգոր Ծերենց, Հայամավուրք, 1667 թ., գրիչ՝ Խոսրով, ստացող՝ մայրապետ Հռիփսիմե (ՄՄ ձեռ. 7421)
Ավետարան, 1671 թ., գրիչ՝ Գայանե (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1671 թ., գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1672 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան, ծաղկող՝ Գրիգոր Վանեցի, նվիրատու՝ Նանագյուլ (պահված, ՄՄ ձեռ. 9032)

ԹԱՂԱՎԱՐԴ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1650 թ., գրիչ՝ Կատարինե, ծաղկող՝ Գայանե, ստացող՝ Սարգիս քին. (Վիեննա ձեռ. 931)

ՎԵՐԻՆ ԹԱՂԱՎԱՐԴ ԳՅՈՒՂ

Առաքել Սյունեցի, Աղամագիրք, 1717թ., գրիչ՝ անհայտ (ՄՄ ձեռ. 3888)

ԼԻՉՆԵՐ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1652թ., գրիչ՝ Առաքել երեց և Պողոս (ՄՄ ձեռ. 4176)

ԽՆՈՒՇԻՆԱԿ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1672 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան, ծաղկող՝ Գրիգոր Վանեցի (պահված, ՄՄ ձեռ. 9032)
Մաշտոց, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ, նվիրատու՝ Անաստաս Տեր-Մկրտչյան (գտնվելու տեղն անհայտ)

ՂՈՒԼԻ ՃԱՐՏԱՐ ԳՅՈՒՂ

Ավետարան, գրչ. ժամանակ, վայր, գրիչ՝ անհայտ, ստացող՝ Հովհաննես (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ԱՇԱՆ ԳՅՈՒՂ

Ճաշոց, 1749 թ. գրչ. ժամանակ, վայր, գրիչ՝ անհայտ, ստացող՝ Բալու (Բ) (պահված, գտնվելու տեղն անհայտ)

Ավետարան (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՂԶՂԱԼԱ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1623 թ., գրչ. վայր՝ Հալեպ, գրիչ՝ Ավետիք (պահված, գտնվելու տեղն անհայտ)

Մաշտոց, 1671 թ., գրչ. ժամանակ, վայր, գրիչ՝ անհայտ, (գտնվելու տեղն անհայտ)

ՇՈՒՇՈՒ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1428 թ., գրիչ՝ Մանուել եպս., ստացող՝ Ալեքսիանոս եպս. (Բ) (ՄՄ ձեռ. 8211)

Ավետարան, 1575 թ., գրիչ՝ Հովհաննես քին., ստացող՝ Գրիգոր երեց (Բ) (ՄՄ ձեռ. 4375)

ՈՄԱՎԱՆՍ ԱՆԱՊԱՏ

Ավետարան, 1477 թ., գրչ. վայր՝ Ոմավանս անապատ (Ա), Գոչավանք (Բ), գրիչ՝ Չաքարիա, ստացող՝ Ալեքսիանոս եպս. (Բ) (ՄՄ ձեռ. 9792)

ԹԱՂԱՐ ԱՎԱՆ

Ավետարան, 1565 թ., գրչ. վայր՝ Երից մանկանց անապատ, գրիչ և ծաղկող՝ Աթանաս, ստացող՝ Ռատակես և Զարիմձիմ (պահված, ՄՄ ձեռ. 2928)

Շարակնոց, 1665 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, ստացող՝ ուստա Միրզա (Բ) (պահված, ՄՄ ձեռ. 2464)

Ավետարան, 1776 թ., գրչ. վայր՝ Լոր, գրիչ՝ Արիստակես սարկավազ, ստացող՝ տեր Վրդանես (պահված, գտնվելու տեղն անհայտ)

Մաշտոց, 1834 թ., գրիչ՝ Գասպար քին. (գտնվելու տեղն անհայտ)

ԱԶՈԽ ԳՅՈՒՂ

Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրիչ՝ Սարգիս քին. (գտնվելու տեղն անհայտ)

ԽԱԶՄԱԶ ԳՅՈՒՂ

Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրիչ՝ Աղեքսանդր եպս., ստացող՝ Թադեոս քին. (գտնվելու տեղն անհայտ)

Մաղմոսարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (պահված, գտնվելու տեղն անհայտ)

Մաղմոսարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՍԱՐՈՒՇԵՆ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1182 թ., գրիչ՝ Ռատակես, Վրդանես, Ստեփանոս, ծաղկող՝ Հակոբ (գտնվելու տեղն անհայտ)

ԿՂԱՐԾԻ ԳՅՈՒՂ

Ավետարան, 1477 թ., գրչ. վայր՝ Աղթամար, գրիչ՝ Հովհաննես (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՇՈՒՇԻՈՒՄ ԳՐՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐ

Ժողովածու, 1791-1792 թ., գրիչ՝ Միքայել Աստապատեցի (ՄՄ ձեռ. 7428)

Ժողովածու, 1822 թ., գրիչ՝ Մեսրոպ Թաղիադյանց (ՄՄ ձեռ. 8212)
 Ժողովածու, 1828 թ. (ՄՄ ձեռ. 3351)
 Պատմություն Սուրբ գրոց, 1828 թ., գրիչ-թարգմանիչ՝ Հարություն Դավթյան Ջուղայեցի (ՄՄ ձեռ. 9275)
 Ժողովածու, 1831 թ., գրիչ՝ Գրիգոր Տեր-Ավագյան Նախիջևանցի (ՄՄ ձեռ. 2835)
 Ռիչինալդ Պաղեստին, 1833 թ. (ՄՄ ձեռ. 3690)
 Ժողովածու, 1840 թ., գրիչ՝ Մովսես (ՄՄ ձեռ. 10166)
 Աղթազիրք, 1841 թ.-ից առաջ, գրիչ՝ Մովսես, ստացող՝ Հակոբ մահտեսի (ՄՄ ձեռ. 10160)
 Պողոս Ներսիսյան, Քերականություն, 1842թ., գրիչ՝ հեղինակը (ՄՄ ձեռ. 9688)
 Հարություն Ալամդարյանց, Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ, 1846թ., գրիչ՝ Հովաննես Մախմուրյանց (ՄՄ ձեռ. 10106)
 Ղուրան, 1848 թ., գրիչ՝ Մնացական Հովհաննիսյան-Հարությունյան (ՄՄ ձեռ. 2968)
 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, 1848թ., գրիչ՝ Ներսես Տեր-Բարսեղյան Աբովյանց Օձնեցի (ՄՄ ձեռ. 8035)
 Հարություն Մելքոնյանց, Սրբազան պատմություն հին և նոր օրինաց, 1851 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՄ ձեռ. 9133)
 Հարություն Մելքոնյանց, Քերականություն Հայկազեան լեզուի, 1851 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՄ ձեռ. 9132)
 Բառգիրք Հայկազեան լեզուի, 1852 թվականից առաջ, գրիչ՝ տիրացու Նահապետ Հովհաննիսյան (ՄՄ ձեռ. 9349)
 Ժողովածու, 1804-1856 թթ., վայր՝ Կապադովկա, Շուշի, Կ. Պոլիս, գրիչ՝ Գրիգոր Կոստանդնուպոլսեցի, Հովսեփ Արցախեցի, Հովհաննես Թագվորյան, Աբել Մխիթարյանց, Գրիգոր Շաքարճյան, ստացող՝ Մատթեոս վրդ., Բաղդասար Ջալալյան, Թադեոս Միրզախանյան, Դաթեոս աղա (ՄՄ ձեռ. 2622)
 Ժողովածու, 1863 թ.-ից առաջ (ՄՄ ձեռ. 3869)
 Ժողովածու, 1868 թ., գրիչ՝ Անդրեաս Մուսաեյան Շուշեցի (ՄՄ ձեռ. 10107)
 Հովսեփ Փինայանց, Քնար սրտի, 1883թ., գրիչ՝ հեղինակը (ՄՄ ձեռ. 3038)

ՇՈՒՇԻՈՒՄ ՊԱՀՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

ՂԱԶԱՆԶԵՑՈՑ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑԻ

Ավետարան, 1420 թ., գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1460 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1461 թ., գրչ. վայր՝ Վան, գրիչ՝ Վարդան, ստացող՝ Մուղալ խաթուն (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1656 թ., գրչ. վայր՝ Կոստանդնուպոլիս, գրիչ՝ Ղազար, ստացող՝ Ղուկաս (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1658 թ., գրչ. վայր՝ Կաֆա, գրիչ՝ Նիկողայոս (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Խաչմաչ, գրիչ՝ Աղեքսանդր եպս., ստացող՝ Թադեոս քին. (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ՝ անհայտ, գրչ. վայր՝ Հերմոնի վանք, գրիչ և ծաղկող՝ Եսայի (ՄՄ ձեռ. 9431)
 Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)
 Սաղմոսարան, գրչ. ժամանակ, վայր և գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)

ԱԳՈՒԼԵՑՈՑ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ավետարան, 1308 թ., գրչ. վայր՝ Ասպինսկա, գրիչ՝ Ղազար, ծաղկող՝ Ծերուն (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1641 թ., գրչ. վայր և գրիչ՝ անհայտ, նորոգված Չարեքա անապատում (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1645 թ., գրչ. վայր՝ Թովուզ, գրիչ՝ Եսայի, ստացող՝ Սարուխան (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 1680 թ., գրչ. վայր՝ Քարահատ, գրիչ և ծաղկող՝ Բարսեղ (գտնվելու տեղն անհայտ)
 Ավետարան, 17-րդ դ., գրչ. վայր՝ Թադասեռ, գրիչ՝ Կիրակոս երեց և Մելքիսեթ (գտնվելու տեղն անհայտ)

ՄԵՂՐԵՑՈՑ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ավետարան, 1414 թ., գրչ. վայր՝ Կտուց անապատ, գրիչ՝ Հովսեփ քին. (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1473 թ., գրչ. վայր՝ Մոկաց երկիր, գ. Փասավանք, գրիչ՝ Իսրայել (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, 1778թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ տեր Մեսրոպ (գտնվելու տեղն անհայտ)
Ավետարան, գրչ. ժամանակ և վայր՝ անհայտ, գրիչ՝ Հովհաննես աբղ., ստացող՝ Մարիամ (գտնվելու տեղն անհայտ)

ՆՈՐ ԹԱՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Ավետարան, գրչ. ժամանակ անհայտ, գրչ. վայր՝ Կից գյուղ, գրիչ՝ անհայտ (գտնվելու տեղն անհայտ)

ՇՈՒՇԻԻ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ

Ավետարան, 1485 թ., գրչ. վայր՝ Սալնանապատ, գրիչ՝ Մկրտիչ, ստացող՝ Վառվառե (Բ) (պահված, գտնվելու տեղն անհայտ)

ՋՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ

ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ

